Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

U. G. V
1439

1986

1999

*ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՔ*

# ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Ա.Շ
1439

# ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆՔ

# ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՑԱՑՏՆԵԱԼՔ

ԱՌ ՃԻՆԱԿԱՆՍ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Հ. ԱՂԵՔՍԱՆԴՐ Վ. ՊԱԼՃԵԱՆ

Ի ՄԽԻԹ. ՈՒԽՏԷ

ԾԱԽԻՒՔ Ս. ԺՈՂ. ՏԱՐԱԾՄԱՆ ՀԱՒԱՏՈՅ

Ի ՎԻԷՆՆԱ

Ի ՎԱՆՍ ՊԱՇՏՊԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

1866

2Ֆ-1447

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна

1939-81

# ԻՄ ԸՆԹԵՐՑՈՂՍ

ՀԱՍԱՐԱԿԱՑ հաճութիւնն եւ ընդունելութիւնը, որ գտաւ ազգին մէջ վերջին թարգմանութիւնս, զոր երկու տարի յառաջ հրատարակեցի "Գիւրիմաց պատասխաններ կրօնքի դէմ տահասարակ տարածուած ընդդիմութեանց,, անունով, ինծի քաջալեր յորդոր մ'եղաւ աս փոքր աշխատութեանս ալ ձեռք զարնելու, միանգամայն բարձրագոյն հրամանէ շարժեալ՝ որուն ամենայն հնազանդութիւն եւ հպատակութիւն պարտականք ենք։

Հաւատոյ Տարածման Ս. Ժողովքը արեւելեան եպիսկոպոսներէ շատանցուքնէ տեղեկացած էր բողոքականաց ամէն տեսակ հնարքներուն, որոնցմով

իրենց անկրօն աղանդը Արեւելք ալ տարածելու կը ջանան պատրանօք, կեղծաւորութեամբ եւ դրամով։ Վերջի ատենները մեր ազգային Մեծարեալ Եպիսկոպոսներն ալ աղաչանաց թղթ-թով խնդրած էին նոյն Տ. Հ. Սուրբ Ժողովքէն, որ իր Հայրական խնամքովը հոգ տանի առանձին մատենագրութեամբ ազգայիններն իրենց Կաթողիկէ հաւատքին մէջ աւելի եւս հաստատել, փարատելով միանգամայն Բողոքականաց կողմանէ տարածուած խաւարը, եւ պատռելով այն մթութեան առագաստը, զորն որ նոյն աղանդաւորները ստութեամբ եւ ճարտարութեամբ բանից՝ պարզամտաց աչքին առջեւը քաշած են, որ տեսնեն եւ զգուշանան մահաբեր որոգայթներէն, որուն մէջ կը ձգեն զիրենք խաբէութիւնն ու կեղծաւորութիւնը։ Այսպիսի սուրբ վախճանի մը ազգս միջոց տեսնելով՝ ազգին ծանօթ Հ. Սեկունդոս Փրանքոյ՝ հռչակաւոր մատենագրին Բողոքականաց մոլորութեան դէմ գրած մատենիկը, նոյն Ս. Ժողովքը հաճեցաւ հայերէն թարգմանել տալ, զորն որ այնչափ աւելի յօժարութեամբ յանձն առի՝ որչափ որ հնազանդութեան պարտաւորութիւնը եւ կաթողիկէ հաւատոյ եւ ուղղափառ կրօնից յառաջադիմութեան ու տարածման սէրը, ամէն Եկեղեցւոյ պաշտօնեաները կը պարտաւորեն գործակից ըլլալու Աստուծոյ շնորհացը ի փրկութիւն հոգւոց։ Ընդունէ ուրեմն այս գրքոյ-նուէրս ալ այնու հոգւով եւ մտօք եւ սիրով, որով քեզի կ՚ընծայեմ։

Հռոմ, յամսեան Յուլիսի 1866.

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

ՅԻՍՈՒՍ Քրիստոս Տէրն մեր խրատեց զմեզ, որ միշտ արթուն կենանք, հսկենք ու աղօթք ընենք, որ փորձութիւններէն չյաղթուինք. Ծանոյց մեզի որ աս փորձութիւնները շատ տեսակ են, եւ ասոնց մէջ հերետիկոսութիւններն ալ պակաս չեն: Հարկէ, ըսաւ, որ հերձուածներ ալ ըլլան, որպէսզի ընտիրները ձեր մէջէն երեւնան[1]: Իրաւ ալ՝ առաջին ժամանակներէն սկսելով՝ չպակսեցան Սիմոն Մոգ, Եբիոն, Կերինթոս, Գնոստիկեանք եւ ուրիշները, թոյներնին տարածելու. ուստի Սուրբ Առաքեալներն ու իրենց յաջորդները զգուշացուցին հաւատացեալներն, որ զգոյշ կենան ու չխաբուին այնպիսիներէն: Անոնցմէ ետքը ելան Արիոս, Նեստոր, Եւտիքէս, Մակեդոնիոս եւ ուրիշները, եւ ասոնք ալ Ս. Եկեղեցւոյ սիրտը հերձին, որպէս զի ճշմարիտ հաւատացեալները ամենուն աչքին ե-

[1] Ա. Կորն. ԺԱ. 19:

րեւնան։ Վերջին դարերու մէջ եղան Լուտեր, Կալվին, Զուինկլիոս, Հենրիկոս Ը. իրենց նմաններուն անթիւ բազմութեամբը, որոնք մինչեւ մեր օրերը կը հասնին, եւ Բողոքական կը կոչուին։ Արդ՝ ասոնք են, որոնց դէմ պէտք է պատերազմինք, եթէ կ'ուզենք Աստուծոյ հաւատարիմ մնալ։

Գուցէ պիտի՛ որ զարմանաք, թէ ինչպէս Աստուած թող տուած է, որ իր Եկեղեցւոյն մէջ միշտ այսպիսի հերձներ ըլլան, ու վտանգի մէջ ձգեն մեր հաւատքը, եւ հաւատքով մէկտեղ մեր յաւիտենական փրկութիւնը. բայց աս ալ նախախնամութեան մէկ խորունկ եւ ամէնիմաստ խորհուրդն է։

Յիսուս չ'ուզեր տալ իր սուրբ Արքայութիւնը դատարկներու, ծոյլերու եւ անոնց, որոնք իր պատուոյն համար չեն պատերազմիր եւ չեն յաղթեր իր շնորհքովը. ուստի թոյլ կու տայ որ աս պատերազմներն ըլլան, որպէս զի տեսնուի, թէ ուր կը հասնի մեր հաւատարմութիւնը եւ մեր իրեն ունեցած սէրը։ Ցորչափ որ ամէն բան խաղաղութեան ու հանդարտութեան մէջ է, մեծ արդիւնք մը չէ Եկեղեցւոյ

հաւատարիմ մնալնիս. արդիւնք ան ատեն է, երբ խռովութիւններ եւ հերետիկոսութիւններ ելած են, մոլորութիւն կը ցանեն, եւ կը ջանան խորամանկութեամբ, նենգութեամբ, մնասակար գրքերով եւ ուրիշ հնարքներով՝ զմեզ համոզելու որ նոյնն ընդունինք ու գրկենք։ Ան ատեն կը տեսնուի, որ աղէկ հիմ դրած ենք անշարժ քարին վրայ, որ է Սուրբ Եկեղեցին, եթէ անոր վրայ վստահութիւն կ'ունենանք, եւ մեծ քաջալերութեամբ դէմ կը դնենք աս ամէն թշնամիներուն, եւ զզուելով զիրենք մեզմէ կը հեռացընենք։ Ե՞րբ զինուորին քաջութիւնը կը տեսնուի։ Երբ որ բոլորովին խաղաղութիւն է՝ ոչ, հապա ստուգիւ՝ պատերազմի ժամանակ։ Ե՞րբ կ'երեւայ ղեկավարին աչալրջութիւնը որ նաւը կ'ուղղէ։ Երբ հովը հանդարտ է եւ ծովը խաղաղ է՝ ոչ, հապա ստուգիւ՝ երբ ծովն ալէկոծութեան մէջ է եւ մրրիկը սաստկացեր է։ Ե՞րբ գեղացին կը ցուցընէ իր երկրագործութեան արուեստը։ Ձմեռն երբոր ալ կարելի չէ գործելը՝ ոչ, հապա ստուգիւ՝ երբ կը հասնի տարւոյն այն եղանակը, ուր աշ-

խաւարութիւնները կը շատնան: Նոյնը դուն ալ ըրէ աս մեր դէպքին մէջ. Երբ քրիստոնեան կը ցուցնէ իր առաքինութիւնը, իր առ Աստուած հաւատարմութիւնն ու սէրը: Երբ բոլորովին խաղաղութիւն է՝ ոչ. հապա ստուգիւ երբ հերետիկոսներն ելած են՝ զինքը կը փորձեն, իրեն վրայ կը յարձակին, եւ վտանգի մէջ կը ձգեն հաւատքը կորսնցընելու:

Այսպէս մեր հաւատքը եւ մեր սէրը փորձուելէն ետքը, Յիսուս ինչ կ'ընէ: Նոյնը, ինչ որ դուք կ'ընէք ցորենը հասնելէդ ետքը: Ինչ որ հունձն առած տարած է, ծանրութիւն եւ հաստատութիւն չունենալուն համար, ինչպէս փոշիկը եւ յարդը, հովը կ'այրի. իսկ կալին վրայ մնացածները, ինչպէս ընտիր ցորենն է, դանձի պէս համբարանոց կը ժողվուին: Այսպէս Յիսուս անհաւատները դժոխքի հրոյն կը դատապարտէ, իսկ մեկալները իր յաւիտենական պարտէզը կը տանի կը տնկէ: Որպէս զի՝ աս կորսուելու դժբախտութիւնը գլուխնիդ չգայ, որ անդարմանելի է բովանդակ յաւիտենականութեան մէջ, կ'ուզեմ զգուշացընել զձեզ այն

մոլորութիւններէն, որոնց մէջ զձեզ ձգել կը ջանան, ցուցընելով ձեզի Բողոքականութեան ստութիւնը, ուր կը հրաւիրեն, իրենց խարէական հնարքները, որոնցմով նոյնը հաւատալի կ'երեւցընեն, այն բարիքները՝ որ ձեզմէ կ'ուզեն յափշտակել, եւ չարիքները՝ որոնց մէջ կ'ուզեն զձեզ գլորել, եթէ կարող ըլլան իրենց ամբարիշտ խորհուրդը վրանիդ յաջողցընել: Անկից ետքը, ձեզի ճամբան պիտ'որ սորվեցընեմ ինքզինքնիդ անոնց առջեւը պաշտպանելու, որպէսզի՝ ուր որ կը կարծեն ձեզի յաղթելու, անոնք ձեզմէ յաղթուին, եւ դուք ձեր հաւատարմութիւնը Աստուծոյ ցուցընելով, անոր աւելի եւս սիրելի ըլլաք այն ճամբով, որով անոնք զձեզ իր թշնամին ընել կ'ուզէին:

Ճշմարիտ է, որ աս գրութեանս մէջ շատ պատճառներ չեմ կրնար գործածել, որոնցմով Եկեղեցւոյ եւ ճըշմարտութեան օգտակար գաղափար կրնայ պաշտպանուիլ. ինչու որ՝ ասոնցմէ ոմանք տեսական խորհրդածութիւններու սորված հանճար մը, կամ հմուտ միտք մը, եւ կամ գոնէ խորհրդածելու երկայն ժամանակ կ'ուզեն:

Այսու ամենայնիւ յառաջ բերած պատճառներս իրենց թիւրիմացութեան ու պարզութեան հետ անանկ զօրութիւն եւ անանկ հաստատութիւն ունին, որ Աստուծոյ օգնութեամբը բաւական պիտ՚որ ըլլան միտքերնիդ լուսաւորելու առողջ վարդապետութեամբ, եւ սրտերնիդ բորբոքելու անոր սիրովը։

Որչափ կրնայի՝ ջանացի նաեւ նոյները ամենայն պայծառութեամբ առջեւնիդ դնել, եւ խօսքիս եղանակին ալ ձեր ըմբռնմանը յարմարցընել, նմանելով անոր, որ երբեք առանց առակի չէր խօսէր[1], որպէս զի ճշմարտութիւնը ամենուն ալ մերձենայ։ Յիսուս որ լոյսն է, որ կը լուսաւորէ ամէն մարդ որ աշխարհս կու գայ[2], հաճի նաեւ մեր լոյսն ըլլալ, եւ առաջնորդէ մեզի այնպէս, որ ամէն մոլորութենէ խոտորելով եւ ճշմարտութեան հետեւելով, ազատինք յաւիտենական խաւարէն, եւ հասնինք անգամ մը թագաւորելու երանելի յաւիտենականութեան պայծառ լուսաւորութեան մէջ։

[1] Մարկ. Դ. 34։ [2] Յովհ. Ա. 9։

# ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆՔ
# ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ստութիւն Բողոքականութեան։

### ԳԼՈՒԽ Ա.

Բողոքականութեան ստութիւնը կը ցուցուի իր հիմնադիրներուն անձանց որպիսութենէն։

ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, զորն որ ընդունելու կը հրաւիրեն զձեզ անօրէն մարդիկ, կրօնք մըն է, որ երկու մաս ունի, որոնց մէկը՝ արտաքուստ կը ցուցընէ, մէկալը ներքուստ կը պահէ։ Արտաքինը դիմակ մըն է, որով կը խաբէ. ներքինը դանակ մըն է, որ կը սպաննէ. ճշդիւ այնպէս է, ինչպէս տեսակ մը օձերն են, որոնց մորթը ոսկւոյ ու արծաթի պէս փայլուն է, բայց ներքուստ խիստ մահաբեր թոյն ունին։ Բողոքականութիւնը արտաքուստ մեծ սէր կը կեղծաւորի Աստուծոյ խօսքին վրայ, մեծ բաղձանք զԱստուած պատուելու հոգւով ու ճշմարտութեամբ, եւ մեծ ողորմածութիւն ընկերին նկատմամբ, եւ այլն. եւ այլն։ Ներքուստ՝ մեծ ապստամբու-

թիւն մը Աստուծոյ եւ Ս. Եկեղեցւոյ դէմ, մեծ արհամարհանք մը աստուածային պաշտաման վերաբերեալ բաներու, աղբիւր մը ցոփութեան ու գէշ վարուց, գործողութիւն մը սատանայական հպարտութեան։

Բայց որովհետեւ գոհ չեմ ըլլար' միայն աս ամէն բան հաստատելովս, ասոր համար կ'ուզեմ ասոնց ցուցերն առջեւնիդ դնել' սկսելով ան անձինքներէն, որոնք աս կրօնքին հիմը դրին։

Բողոքականները կը հաստատեն, թէ Աստուած դրգեր է զիրենք տասնուվեցերորդ դարուն մէջ Եկեղեցին նորոգելու, որ բոլորովին մոլորութեան մէջ ինկած էր։ Արդ կ'ուզե՞նք հաւատալ որ Աստուած Ս. Եկեղեցին նորոգելու համար ուզած ըլլայ ի գործ ածել աշխարհքիս վրայ երեւցած մարդիկներուն ամենէն ամբարիշտները։ Անոնք, զորոնք Աստուած ասկեր է, չէ թէ Եկեղեցին' հապա հաւատացեալները նորոգելու համար, ուզած ատենը խրկելու, միշտ բարութեամբ նշանաւոր մարդիկ էին։ Հին օրինաց մէջ կը խրկէր իր Մարգարէները, նոր օրինաց ատեն խրկեց իր Առաքեալները, իր Սուրբերը, եւ մինչեւ աս վերջին ատեններս հռչակաւոր եղան քրիստոնեայ ժողովրդեան մեծ եւ ճշմարիտ նորոգիչները, Ս. Անտոն Պատուացի, Ս. Բեռնարդինոս Սիենացի, Ս. Վինկենտիոս Ֆերրերի, Ս. Փրանկիսկոս Քսաւեր, Ս. Կարոլոս, Երանելին Լէոնարդոս, Ս. Ալփոնսոս Լիկուորի, եւ ուրիշ ասոնց առաքինութեան նմանողները։ Ինչու որ' առաքինութիւն, կատարելութիւն, սրբութիւն սորվեցնելու, եւ ժողովուրդները մոլորութենէ հեռացնելու համար, հարկաւոր է նախ' Սուրբ, լուսաւորեալ ըլլալ, եւ անմեղ կեանք ունենալ։ Արդ որո՞նք էին աս մեծ Բողոքական նորոգիչները։ Կ'ուզէ՞ք ճանչնալ։



Առաջինն ու գլխաւորն էր Լուտեր, հպարտութեամբ լեցուն մարդ մը, որ աշխարհքիս բոլոր Մեծերը կը թշնամանէր, եւ իր սատանայական ամբարտաւանութիւնը հոն հասաւ, որ ինք զինքը Եկեղեցւոյ ամենէն մեծ Սուրբերէն վեր կը դնէր. այնպիսի մարդ մը' որ ամէն անառակութեան ու գարշութեան մէջ թաթխուած ըլլալով' վանքի մը մէջէն ալ Յիսուսի Քրիստոսի մէկ հարսը գողցեր իրեն կինն ըրած էր. այնպէս խառնակնաց եւ գինեմոլ էր, որ բոլոր օրը գինովութեամբ ու շուայտութեամբ կ'անցընէր Սեւ Արծիւ բռուած պանդոկին մէջ' Վիդդեմպէրկ' իր հայրենիքը. ան աստիճանի հայհոյիչ էր, որ մինչեւ զՍատանան' մեր Իշխանը եւ Աստուածը կը կոչէր. այնպէս գայթակղեցուցիչ մը, որ բոլոր քրիստոնեայք բարի գործերէն ետ կը ձգէր։ Թող ուրանան նէ թէ կրնան Բողոքականները, որ այսպիսի մէկը չէր իրենց վարդապետն ու գլուխը։

Լուտերի նախանձաւորն էր Զուինկլիոս,

անոր պէս ամբարտաւան, եւ Սուրբ Գիր-քերու անանկ աշխարհածանօթ եղծիչ ու խանգարիչ էր, որ մինչեւ իրեն հետեւող Բողոքականներն ալ զինքը կ'անարգեն։ Բովանդակ իր կենաց մէջ՝ ամենեւին ինք զինքը աշխարհային ու երկրաւոր բաներու տուած էր, եւ իր վարդապետութիւնը զէնքով ալ կը տարածէր։ Թէպէտեւ քահանայ էր, այսու ամենայնիւ որբապղծութեամբ ամուսնացաւ հարուստ այրւոյ մը հետ, եւ այնպէս աղատ կեանք մը կ'անցընէր, որ իրեն զարմացողներն ալ, զինք մահացու մեղքի մէջ մեռած եւ դժոխքի որդի հրատարակեցին։

Բողոքականներուն ուրիշ մէկ մեծ ախոյեանն ալ Կալվինն էր, այնպէս հպարտ եւ բարկացոտ մարդ մը, որ իր հետեւողներն ալ կ'ըսէին թէ Ա՛լ լաւ է Թէոդորոս Պէզայի հետ դատապարտուիլ, քան թէ Կալվինի հետ Արքայութիւն երթալ. այնչափ անտանելի էր իր ժպրհութիւնն ու ժանտութիւնը։ Հպարտութեանը հետ միացուց նաեւ անառակութիւնը։ Իշխանաւարգութեան ատեն այնպիսի անօթալից յանցանք մը գործեր էր, որ հրապարակական ատեաններու հրամանաւ մէկ ուսին վրայ հրացած երկաթով խարան մ'ընդունեցաւ, եւ եղբէն սարկաւագութեան ատենն ալ Նոյելեատա անունով մէկը իրեն կին առաւ. այնչափ անգութ էր, որ Ժինեւրայէն պարոնց ու կենդանի կենդանի այրել



տուաւ զանոնք ամէնքն ալ, որ իրեն պէս չէին մտածեր, եւ վերջապէս այնպիսի յուսահատական մահուամբ մեռաւ, որ զամէնքն ալ կը սոսկացընէր։ Ինք իր աչքովը կը տեսնէր իր մարմնոյն զզուելի փտութիւնը, եւ կը զգար գարշահոտութիւնը, որուն ոչ ոք կրնար տանիլ, եւ այսպէս յուսահատութեան մէջ գարշուրելի հայհոյութիւններով կը փչէր հոգին։

Բողոքականներուն մէկ մեծ Վարդապետն ալ եղաւ Անգղիացւոց Հենրիկոս Ը. թագաւորը։ Ցորչափ որ բարի էր, նաեւ ուղղափառ էր։ Բայց երբոր ինք զինք անառակութեան տուաւ, ուղղափառ կրօնն ալ մերժեց. եւ իր յանցանքները կը ցուցընեն թէ իր կրօնքը ո՞րն էր։ Իր օրինաւոր կնոջը կենդանութեան ատեն, ամուսնացաւ ուրիշ կնոջ մը՝ Աննա Պոլէնայի հետ. ետքը զանիկայ սպաննել տուաւ, ուրիշ կին առաւ Սիմուր անունով. աս ալ սպաննել տալէն ետքը՝ կնութեան առաւ զԱննա Քլիվս, զորն որ վեց ամիս ետքը արձակեց, եւ անոր տեղն առաւ Կատարինէ Հաուըրտ. վերջապէս աս ալ սպաննեց եւ ամուսնացաւ Կատարինէ Փարի հետ, զորն որ սպաննելու չհասաւ. ինչպէս կը յօժարէր, վասն զի յառաջ ինք մեռաւ. այնպիսի յափշտակիչ մարդ մը, որ կողոպտեց Եկեղեցւոյ բոլոր ստացուածքները իր կիրքերը յագեցընելու համար, դաժան եւ անգութ ամենեւին, որ սպաննել

կու տար զամէնքը, որ իր հաճոյից հակառակ կ'ելլէին։

Եւ ինչպէս տեսնք, տեսանք են նաեւ Բողոքականութեան ամէն մէկալ գլուխները, Յուստոս Յոնաս, Ամստորֆ, Մելանքթոն, Կարլոստատիոս, Էկոլամպատիոս, եւայլն, ամէնքն ալ փառասէր, անգութ, անպարկեշտ, գինեսէր, ամէն մոլութիւններով լեցուն մարդիկ. ինչպէս որ իրենք զիրենք կը ցուցնեն իրենց մէջ ունեցած փոփոխակի եւ անվերջանալի խնդիրներուն մէջ։ Հարցուցէք հիմա Բողոքականներուն, թէ ճշմարի՞տ է թէ ոչ, որ ասոնք են իրենց գլխաւոր գլուխները։ Դեռ աս հրէշները չերեւցած՝ Բողոքականութիւն չկար աշխարհքիս վրայ. իրենք են, որ նոյնը ներս խոթեցին։ Կարելի բա՞ն է, որ այսպիսի ապականեալ մարդիկ Աստուծմէ լուսաւորուած ըլլան ճշմարտութիւնը ճանչնալու։ Եւ այսպիսիններն ըլլան Աստուծոյ գործիքները, Հոգւոյն Սրբոյ միջնորդները Եկեղեցին նորոգելու։ Եւ եթէ ասիկայ կարելի չէ, ինչ պէտք ենք գրուցել իրենցմէ հնարուած Բողոքականութեան վրայ, բայց՝ թէ աս է սատանայական գիւտ մը։



## ԳԼՈՒԽ Բ.

Բողոքականութեան [illegible] կը ցուցուի գոր-
ծերէն [illegible] անոնց [illegible]ութիւններէն։

Գուցէ պիտ'որ ըսէք, որ եթէ գէշ էին առաջին վարդապետները, գէշ չեն անոնք, որ հիմա Բողոքականութեան վրայ կը խօսին։ Իմ՝ սիրելիքս, եթէ բարի ալ ըլլային, դուք պէտք չէք իրենց ականջ դնել, ինչու որ՝ ուրիշ բան չեն ըսեր ասոնք, բայց եթէ՝ ինչ որ առջի նենգաւոր Բողոքականները գրուցեցին։ Բայց ճշմարիտն ան է, որ ասոնք ալ այնպիսիներ են, որոնց ետեւէն երթալը ամչնալու բան է։ Զգո՛յշ կեցէք, ոչխարի մորթը զիրենք կը ծածկէ, բայց ներքուստ գայլեր են։

Կ'ուզեմ զիրենք քիչ մը ծանուցանել ձեզի։ Նախ՝ շատ տգէտ են, ոմանք հպարտ են, ոմանք ագահ են, ոմանք պղտոր մարդիկ են, ոմանք անհանգիստ մարդիկ են։

Ո՞վ են ասոնք որ զձեզ կրթել՝ լուսաւորել կ'ուզեն. եթէ Ուսուցիչներ, Գրագէտներ, Փաստաբաններ, Բժիշկներ ալ ըլլային, ասոր համար Կրօնի վարդապետներ չէին ըլլար։ Գիտութիւն մը սորված ըլլալը, իրաւունք չտար ուրիշ գիտութիւն մը սորվեցընելու, զորն որ սորված չեն։ Ըսէք ինծի. կրնա՞յ մի կօշկակար մը՝ որովհետեւ կօշիկ շինել գիտէ, նաեւ դերձակութիւն ալ ընել եւ զգեստ կարել։ Ո՛չ. [illegible] չէ։ Ամէն մէկը իր արհեստն

ունի։ Ուրեմն ինչպէս կրնայ բժիշկ մը, փաստաբան մը, ջերմերը բժշկել, դատերը յառաջ տանել սորված ըլլալուն համար գիտութեամբ ու հիմնովին Կրօնքի վրայ ալ խօսիլ։ Պէտք է հարկաւոր ուսմունքները սորված ըլլալ։ Այս հարկաւոր ուսմունքները ծանր են, դժուարին են, շատ ժամանակ, շատ աշխատութիւն կ'ուզեն. այսու ամենայնիւ եթէ առնցմէ ալ քովերնիդ մտնեն ու ականջներնէդ վար շընչելու ըլլան սուրբ հաւատքի դէմ վարդապետութիւն մը, ամենեւին պէտք չէ որ մտիկ ընէք. ինչու որ՝ երբոր Քրիստոնէական վարդապետութիւնը գիտէք, աս բաներուս մէջ անանց շատ տգէտ էք։ Այս ուրեմն՝ եթէ որպիսի եւ իցէ գրագիտութեան տգէտ մարդն ալ, հարկաւոր ուսմունքը սորված չըլլալուն համար, աս բաներս չիկրնար սորվեցընել. ըսէք ինծի, ծաղրելու արժանի չե՞ն անոնք որ ձեզի ուսուցիչ կ'ուզեն ըլլալ աս մեծ գիտութեան մէջ, որուն երբեք աշակերտ եղած չեն։ Ինչու որ՝ յայտնի խօսինք, ո՞վ են անոնք որ առջեւնիդ կ'ելլեն ձեզի վարդապետ ըլլալու համար։ Կօշկակարներ են, դերձակներ են, վարսավիրաներ են, քարակոփներ են, որմնադիրներ են, գեղջուկներ են։ Ո՜հ. ասիկայ աշխարհքիս ամենէն ծաղրալից բանը չէ՞ մի։ Հարցուցէք մէյ մը աս մեծ վարդապետներուն, երբ Աստուածաբանութիւն սորվեցան, երբ որ կարուակի աթոռին վրայ



տուտանը կը քաշէին, կամ՝ երբ ածելի կը սրէին, կամ՝ երբոր կրկնոց մը կը կարէին, կամ՝ կրի անօթը կը տանէին։

Հարցուցէք իրենց, ե՞րբ սորվեցան Ս. Օգոստինոսի, Ս. Յերոնիմոսի, Ս. Գրիգորի, Ս. Ամբրոսիոսի, Ս. Յովհ. Ոսկեբերանի, Ս. Թովմասի, եւ ուրիշ այնչափ Ս. Եկեղեցւոյ մեծ սուրբերու մեծամեծ գրքերը։ Կը կարծեն թէ Կրօնքի վրայ վիճելը՝ մօրուք սափրելու համար օճառը փըրփրեցընե՞լ մին է, կամ՝ պատուհան մը որմով գոցե՞լ մին է, կամ՝ կօշկի կրունները նորոգե՞լ մին է։ Ո՞վ յանդուգն եւ հպարտ մարդիկ։ Գիտէ՞ք, ու՞ր իրենց ուսմունքը կատարեցին։ Կարդացեր են խանգարուած ու ապականած աստուածաշունչի մէջէն քանի մը կտորներ, առանց կարդալ գիտնալու, առանց հասկընալու. լսեր են իրենց նման ննդաւորներու բերնէն քանի մը մոլորութիւններ, եւ եկեր ձեզի վարդապետ կ'ըլլան, ու կը դատապարտեն Հռոմայ Քահանայապետը, Եպիսկոպոսները, Աստուածաբանները, եւ այն ամէն մեծ մարգիկները, որոնք այնչափ դարերով Եկեղեցւոյ մէջ ծաղկեցան, որոնք իրենց իմաստուն գրքերովը գրատուններ լեցուցին, որոնք իրենց քարոզութեամբը Հաւատքը տարածեցին, հրաշքներով նոյնը վաւերացուցին, եւ իրենց արեամբը հաստատեցին։ Ո՞վ. իրաւցընէ՜ սատանայական յանդգնութիւն։ Ասկից կրնաք տեսնել

թէ ինչ է իրենց հպարտութիւնն ալ․ Իրենք զիրենք ամէն մեծ Սուրբերէն վեր դնելնին, ձեզի ասոր վրայ գաղափար մը կրնայ տալ․ Իրենց յանդգնութիւնը որով կը հակառակին Եկեղեցւոյ մէջ գտնուող բոլոր իմաստութիւններուն, ամէն օրինաւոր հաւատքներու, ամէն քահանաներու դէմ, նոյնը ձեզի աւելի եւս աղէկ կրնայ հասկը-ցընել․ Բան չ'արժեր զիրենք անմեղադիր ընելու այն յիմարական պատճառը, որ յա-ռաջ կը բերեն, թէ իրենք զուտ Աւետա-րանի կը հետեւին, թէ Յիսուսի Քրիս-տոսի ետեւէն կ'երթան, եւ թէ այսու ա-մենայնիւ չեն ալ հպարտանար․ Ոչ, աս պատճառը չ'արժեր, որովհետեւ սա բանս միշտ ճշմարիտ է, եւ պիտ'որ ըլլայ, որ կը պնդեն միշտ, թէ իրենք իրենցմէ մինակ աւելի աղէկ կը ճանչնան զուտ Աւետարա-նը քան զքահանաները, որ սորվեր են, աւելի աղէկ քան զՍուրբ Եկեղեցին, որն որ իրենց ուզածին պէս չ'իմանար․ Եթէ անիկայ դժոխային հպարտութիւն չէ, աշ-խարհքիս վրայ ալ հպարտութիւն չէ՛ մնա-ցեր․

Այսու ամենայնիւ՝ բոլորովին համոզուե-լու համար, ըրէք ինչ որ կ'ըսեմ․ դիտեցէք քիչ մը այս նոր վարդապետները, դիտեցէք զիրենք՝ իրենց վրայ ունեցած համոզմանը կողմանէ, դիտեցէք սորվեցընելու եղանակ-նին, թէ ինչպէս ամէն՝ նաեւ ամենաբարձր եւ ամենադժուարին խնդիրներու վրայ



բարձրամտութեամբ վճիռներ կը կտրեն, ինչպէս կը պարծին, թէ ամէն բան կը հասկընան, թէ ամենուն վարդապետ կրնան ըլլալ․ ինչպէս կը հպարտանան իրենց գի-տութեան վրայ, ինչպէս ուռած կուրծքով՝ բարձրավիզ կ'երթան կու գան, երբ այն-պիսիներու հետ է գործերնին, որոնք չեն սորված այն նիւթերը, որոնց վրայ կը խօ-սին․ անանկ կ'երեւայ, իբր թէ իմաստու-թեան երեքոտանիին վրաներնին կը կրեն, այնչափ ունայնասէր այնչափ ամբարտաւան են․ Իրաւցընէ այն մոլորութեան վարդա-պետներն են, որոնցմէ փախչիլը Յիսուս Քրիստոս յանձնեց մեզի․

Բայց իրենց վրայ ուրիշ բան մ'ալ կայ․ Կ'ուզէ՞ք որ յայտնեմ․ Շահասիրութեան ա-ղէկ բաժին մը կը տեսնուի այս մոլորու-թեան առաքեալներուն վրայ․ Քովերնին կը մտնեն ծռած վզով եւ կեղծաւորելով, իբրեւ թէ ճշմարտութիւնը կ'ուզեն սորվե-ցընել միայն ձեր հոգւոյն փրկութեան սի-րոյն համար․ բայց դուք մի հաւատաք ա-սոնց․ ձեր հոգւոյն փրկութենէն աւելի՝ ա-սոնք իրենց մարմինը կը հոգան, եւ ձեր ոսկեն աւելի իրենց քսակին շահը կը փըն-տռեն․ Գիտենք որ Բողոքականները իրենց երկիրներուն մէջ ընկերութիւններ հաս-տատած են իրենց աղանդին մոլորութիւն-ները տարածելու համար, եւ աս պատճա-ռաւ շատ ստակ կու տան ու կը ժողվեն․ Արդ՝ աս ստակով կ'ապրին այդ վարդա-

պետիկները, որ քաղքէ քաղաք գեղէ գեղ կը պտըտին, եւ առնց աւուրչէքով հագիներ կը գնուին, թէ դուք աս բաները իրենց երեսին զարնելու ըլլաք, բարկանալ վրդովիլ մը կը ցուցընեն. բայց ապահով եղէք որ կը բարկանան ստուգիւ, վասնզի վէրքերնին կը կսկծայ: Հազարաւոր փորձերն ունինք Ջենովայի, Սաւոյայի, Իրլանտայի եւ նոյն իսկ Փիորենցայի մէջ, ուր շատերն, որ ողորմելաբար խաբուած էին, նորէն դարձի գալէն ետքը հրապարակաւ յայտնեցին, որ օրը մէկ, երկու, երեք փրանք կ'ընդունէին իբրեւ գին իրենց ուրացութեանը, եւ իբրեւ թոշակ մը ուրիշներն ալ դաւանափոխութեան որոգայթին մէջ ձգելու: Վա՜տ հոգիներ, որ անարգ ստակի համար Քրիստոսի անգին արեամբը առուտուր կ'ընեն. ինչպէս Յուդայ իրենցմէ յառաջ ըրած էր:

Բայց ի՞նչ է Բողոքական երկիրներու շահը, որ այնչափ դրամ կը ծախեն մեր հոգիները ապականելու համար: Որովհետեւ աս ալ կ'ուզէք գիտնալ, ահաւասիկ ձեզի կ'ըսեմ. եւ այնչափ մեծագոյն ստուգութեամբ, որչափ որ իրենցմէ ոմանք անխոհեմութեամբ մը յայտնի եւ համարձակ զրուցեցին: Աս պարոնները կը տեսնեն մեր գեղեցիկ երկիրները, մեր գեղեցիկ դաշտերը լի ամէն Աստուծոյ բարիքներովը. կը տեսնեն այնչափ գեղեցիկ արտեր՝ կենդանեաց համար, կը տեսնեն այնչափ ար-



տորաներ ցորենով եւ ուրիշ ընդեղէններով լի. կը տեսնեն մեր գեղեցիկ այգիները ամէն տեսակ խաղողով զարդարուած, կը տեսնեն մեր ձիթաստանները որ այնչափ առատութիւն ձիթոյ ունին, կը տեսնեն մեր թթենիները, որ բաւական են այնչափ բազմութիւն շերամներու սնուցանելու, կը տեսնեն այնչափ տեսակ պտուղներ, որ ամէն եղանակներու մէջ առատութեամբ կը գտնուին. եւ որովհետեւ իրենց ցուրտ երկիրներուն մէջ աս ամէն բարիքը չունին, աչքերնին ձգած են մեր դաշտերուն ու քաղաքներուն վրայ: Կը բաղձան ճանկերնուն տակ ձգել, որ իրենք վայելեն մեզմէ գողնալով: Աս վախճանիս հասնելու համար, առջի ընելու բաներնին, մեզի հետ ընտանենալը, մեզի հետ կապուիլն է. բայց որովհետեւ, ինչպէս կը տեսնեն, անոր մեծ արգելք է կրօնքի տարբերութիւնը, կը ջանան նախ զմեզ Բողոքական ընել: Աս առջին քայլն ընելէն ետքը, եւ իրենց հետեւողներուն թիւը շատցած տեսնելէն ետքը, կը յուսան ուրիշ բան մ'ալ ընել: Այն բարեկամութիւնը կը կապեն, զորն որ գայլը ոչխարի հետ կը կապէ. տուներնիս կը մտնեն առուտուրի պատճառաւ, եւ կ'ելլեն կ'երթան մերկացընելով զմեզ ամէն գեղեցիկ եւ ամէն աղէկ բաներէն, ինչպէս ուրիշ երկիրներ ըրած են. եւ եթէ բաւական չըլլար մերձաւորութեամբ գողնալը, եւ առիթ մ'ալ առջեւ-

նին կ'ելլէ աւելի բան մ'ալ ընելու, ինչ-
պէս ըսեմ, քիչ մը ազատամտութիւն...
իշխանին մէկը տնէն վռնտել... մէկալը
կանչել...., ատ ալ կ'ընեն։ Դիտած էք ինչ-
պէս կ'ընեն տեսակ մը բարեձեւ կանայք
երբ որ եկեղեցւոյ մէջ կը խնդրեն ձեզմէ
նստարանին մէկ անկիւնը. խեղճուկ բա-
ւական է իրենց ափ մը տեղ, բայց կամաց
կամաց անանկ աղէկ կը տեղաւորուին, որ
ձեզի բոլոր նստարանը ձգել երթալ կ'իյ-
նայ։ Վերջապէս խօսքս լմնցընելու համար,
ապահով եղէք, որ Բողոքականութեան աս
ամէն փորձունքը ուրիշ բան չէ, բայց ե-
թէ անարգ շահախնդրութիւն, որ կը շար-
ժէ թէ զանոնք որ կը քարոզեն եւ թէ
զանոնք որ զիրենք կը լսեն, ասոր հա-
մար ալ խեղճուկ քիչ մը տեղ կը ներեն,
ինչպէս դուք սերմը կը ցանէք, յուսալով
իր ժամանակին շատ աւելին քաղելու։

Ասոնք ձեզմէ ուրիշ բան կ'ուզեն. եւ
ի՞նչ է ուզածնին։ Քիչ մը ազատամտու-
թիւն հանել, եւ շագանակը կրակին վրայէն
ձեր մատուըներովն առնուլ, որպէս զի
իրենցը չայրի։ Կը յիշէք այն ամէն գե-
ղեցիկ վարդապետութիւնները, որ 1848ին
կը հրատարակէին։ Իտալիայի միութիւնը,
Իտալիայի անկախութիւնը, եւ այնչափ
խոշոր խոշոր խօսքերը, որոնցմով ոսկին
քանակներով կը խոստանային, անաշխատ
վայելելու համար։ Այս ամէն բարեկեցու-
թիւնները կ'ուզեն ի գործ դնել, ոչ ձեր,



այլ իրենց օգտին համար։ Բայց ի՞նչ պէտք
է ընել։ Կառավարութիւնները աչքերնին
բացեր են, եւ նաեւ ժողովուրդներն ալ
սթափեր են այն գեղեցիկ երազներէն, ո-
րոգայթի մէջ չեն իյնար։ Արգելուած են
ժողովքները, ուր քաղաքականութեան վրայ
կը խօսուին։ Ուրեմն ի՞նչ կ'ընեն. կառա-
վարութեան վերաբերած բաները մէկդի կը
ձգեն, եւ կը կեղծաւորին մինակ կրօնքի
վրայ խօսելու։ Կը ջանան զձեզ իբրեւ Բո-
ղոքական իրենց դրօշներուն տակն առնուլ,
որպէս զի ազատամտութեան օրը ազատամի-
ներուն եւ յեղափոխականներուն կարգն
անցնին. որով թէ ձեզի եւ թէ ձեր ընտա-
նեաց դառն մտմտութիւն կ'ընեն, եւ զձեզ
այն ամէն վտանգներուն մէջ կը ձգեն, որոնց
մէջ կ'իյնան ընկերութեան թշնամիները։

Մէկ խօսքով Կրօնքի ուսուցիչ կը կեղ-
ծաւորին, եւ յեղափոխութեան պաշտօ-
նեաներ են։ Ասոնք նոր բաներ չեն։ Ասանկ
ըրին Գերմանիա, ասանկ ըրին Գաղղիայի
մէջ Բողոքականները. երբեմն Կրկնակնունք-
ներու, երբեմն Իւկընոներու անուամբ, եւ
տակն ու վրայ ըրին ամէն թագաւորու-
թիւն։ Նոյն հնարքն է, որ մեր օրերն ալ
կ'ընեն, մինակ փոխուած է երկիրը՝ ուր կը
գործեն, եւ պատրուակը՝ որով կ'աշխա-
տին. նպատակը միշտ մի եւ նոյն է, ամէն
կառավարութիւն քնջել, եւ հասնիլ ան-
սանձ ազատութեան մը։

Ունէի քանի մը փոքր բաներ ալ վստա-

հութեամբ ձեզի յայտնելու աս հերետի-
կոսութեան վարդապետներուն եւ գործիչ-
ներու վրայօք. բայց քիչ մը ետքը ի ծա-
ծուկ կը զրուցեմ։

## ԳԼՈՒԽ Գ.

ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՍԽԱԼՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՑՈՒՑՈՒԻ, ՆՈՅՆԸ ԸՆԴՈՒՆՈՂՆԵՐՈՒՆ ԵՒ ՆՈՅՆԸ ՄԵՐԺՈՂՆԵՐՈՒՆ ԱՆՁԱՆՑ ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ։

Դատի մը աղէկութիւնը ճանչնալու մեծ նշան մըն է գիտել եւ իմանալ թէ որոնք են որ կը վազեն կ'երթան նոյնը ընդունելու ու գրկելու, եւ որոնք են որ կը թողուն կը հեռանան։ Բարիները չեն մերժեներ, բայց եթէ բարւոյն, չարերը՝ բայց եթէ չարին։ Արդ՝ Ուղղափառներուն մէջէն, որո՞նք են որ Բողոքականութիւնը կ'ընդունին։ Անոնք ամէնքը, որ բոլորովին ապականած են, բոլորովին թիւրած են, բոլորովին աղտեղած են։ Միտ դիր խօսքիս, չեմ՝ ուզեր ըսել թէ ամէն Բողոքականներն ալ խառնագնաց ու չար են. ո՛չ, ինչու որ անոնցմէ շատերը, որոնք որ այն աղանդներուն մէջ ծնած են եւ անոնց մէջ կը գտնուին, չէ թէ իրենց յանցանքովը, այլ ճշմարտութիւնը դժբախտութեամբ չճանչնալով, են ի բարի հաւատս, ինչպէս կ'ըսուի։ Անոնք՝ քիչն ալ կրցածնուն չափ ընելով շատ անգամ՝ համեստութեամբ կ'ապրին։ Անոնց վրայ կը



խօսիմ. որոնք որ ճշմարտութիւնը ճանչցած են, եւ նոյնը կը մերժեն, որպէս զի կամովին մոլորութեան գիրկը նետուին։ Անոնք այսպիսի չարութեան չեն հասնիր, եթէ նախ ներքուստ բոլորովին ապականած չեն։ Արդէն Բողոքականութեան սկիզբէն գիտուած է, թէ նոյնը ընդունելու պատրաստականութիւնը անոնք ունէին, որոնք որ միշտ ամենէն աւելի մոլութեանց մէջ թաթխուած էին. այնչափ որ՝ նոյն ատեններն առակ եղած էր, երբոր մէկը ինք զինքն անառակութեան, զեղխութեան եւ անպարկեշտութեան տուած կ'երեւար, ըսելու թէ մօտ է բողոքական ըլլալու։ Բայց թողունք հիները, նորերուն գանք։

Որո՞նք են, որ աս աղանդին կը գրուին։ Ճշդիւ անոնք որ գէշ կեանք կ'անցընեն։ Փորձը ձեռքով շօշափել տուաւ, որ Բողոքականաց դաւանանքներն ընդունելու ամենէն աւելի պատրաստ անոնք են որ շահ մը ունին. անոնք են, որոնք որ արդէն Բողոքականի պէս կը մտածեն ու կ'ապրին, որոնք որ չեն խոստովանիր, չեն հաղորդուիր, չեն յարգեր Եկեղեցւոյ սուրբ օրէնքները, կը սիրեն մեղանչել առանց պարտաւորութեան ապաշխարութեան ատեանին մէջ բրածնուն համարը տալու։ Անոնք են մէկ խօսքով, որոնք որ աստուածային բաներու բոլորովին օտար եւ ամենայն անօրէնութեամբ լեցուած ըլլալով, բովանդակ կրօնքը՝ տանի օրէք՝ քիչ մը

(ան ալ շատ անկարգութեամբ) Պատարագ-տեանելու վրայ կապեցին ։ Ըստ մեծի մասին առանք են կաթողիկէ հաւատոյ դէմ առջի աղաղակողները, եւ Բողոքականաց կրօնքը գրկողները ։ Չեն ուզեր պատարագ տեսնել, ուստի պատարագը կը դատապարտեն. չեն ուզեր խոստովանիլ, ուստի եւ խոստովանանքը կը դատապարտեն. կամք չունին պահք եւ ծոմով իրենք զիրենք մահացուցանել, ուստի թէ պահքը թէ ծոմը կը դատապարտեն ։ Որպէս զի օրէնքէն չդատապարտուին, օրինաց դատապարտիչ կ՚ըլլան ։ Որո՞նք են, որ ամենէն աւելի ոստիկաններու եւ ատեաններու դէմ աղմուկ կը հանեն ։ Անոնք՝ որոնք որ կը վախնան բռնուելու եւ դատապարտուելու. այսպէս Եկեղեցւոյ դէմ աղաղակողները անոնք են, որոնք որ գիտնալով թէ Եկեղեցին իրենց անառակութիւններուն երբեք պիտ՚որ չհաւնի, կը վախնան որ չըլլայ թէ անկից յանդիմանուին ու դատապարտուին. ուստի՝ որպէս զի Եկեղեցիէն չդատապարտուին, կը յանդգնին զինքը դատապարտելու ։ Թէ որ ասոր մէկ փորձը կ՚ուզես, կը տեսնես քանի մը ուրացողներու վրայ, որոնք այնչափ աղմուկ հանեցին աս վերջի տարիները ։ Հռչակաւոր Աքիլլի, Ե՞րբ Բողոքական եղաւ ։ Երբոր հակառակ ամէն եկեղեցական օրինաց, որ իրեն իբրեւ քահանայի եւ իբրեւ կրօնաւորի կ՚արգելուին, ուզեց իր ամօթալից կրքերը յագե-



ցընել ։ Ե՞րբ վատանուն Տէ-Սանքթիս Բողոքականութիւնը ճշմարիտ գտաւ ։ Երբոր նոյն աղանդը բաները դիւրացուց եւ իրաւունք տուաւ աղջիկ մը յափշտակելու եւ սրբապղծութեամբ անոր հետ կարգուելու ։ Ե՞րբ ուրիշ մէկ քանիներն ալ (օրինաւոր պատճառի համար հիմակու հիմա անուննին չեմ ուզեր տալ) փախան Անգղիա գացին եւ Բողոքական եղան ։ Երբոր կարծեցին թէ անգղիական ոսկեով կրնան հանգիստ ապրիլ, ուխտերնին ոտքի տակ առնելով եւ բոլորովին գերի ըլլալով ամէն տեսակ աղտեղութեան եւ անպարկեշտութեան ։ Աւելի՞ն կ՚ուզես ։ Աս գժբախտ ուրացողներէն մէկ քանին, որոնք զղջման գալով նորէն Ս. Եկեղեցւոյ գիրկը դարձան, հրապարակաւ խոստովանեցան, որ իրենց ուրացութեան պատճառ ամօթալից կրքերնին եղած էին ։ Եւ իրաք ալ այսպիսիները այնպէս գայթակղեցուցիչ կ՚ըլլան, որ նոյն իսկ՝ քիչ մը պարկեշտութիւն ունող Բողոքականներն իրենցմէ կը գարշին, եւ կ՚ըսեն, թէ երբոր Քահանայապետը Ս. Եկեղեցւոյ պարտէզը մաքրել կ՚ուզէ, գէշ խոտն իրենց մէջ կը նետէ ։ Արդ՝ թէ կայ մէկը, որ չամչնայ աս վատանուն մարդիկներու գնդին մէջ մտնելու, թող ուրանայ Աստուածային Եկեղեցին, որն որ եթէ իրենց կորստեան ցաւը կը զգայ, փոխարէնն ալ կ՚ունենայ, այսպէս միշտ իր անդամները մաքրելու ։

Մենք ասոր հակառակ միշտ սիրով պիտ՚որ ընդունինք զանոնք, որ Բողոքականութենէ մեզի կը դիմեն անդադար, մեր Մօրը ծոցը ապաստանարան գտնելով։ Ինչու որ ո՞վ են աս եկողները։ Բողոքականաց մէջէն ամենէն արժանաւոր, ամենէն յարգելի, ամենէն իմաստուն եւ ամենէն անարատ եւ զգաստ անձինք։ Ի՛մ սիրելիքս, ասիկայ անանկ գեղեցիկ ցոյց մըն է, ի նպաստ Եկեղեցւոյ, որ չեմ՝ կրնար աչքերնուդ առջեւը չդնել գոնէ քանի մը դարձերու պայծառ ու լուսաւոր օրինակները, որ պատահեցան հարիւր տարիէ ի վեր, եւ մեր օրերը։ Միայն անուննին լսելով պիտի տեսնէք այն մեծ տարբերութիւնը, որ կայ մեզմէ անոնց դարձողներուն մէջ։

Արդէն 1785ին՝ Ադոլֆ Փրեդերիկոս Մեքլենպուրկի եւ Սաքսէն-կոթայի դուքսը, յաղթելով մեծամեծ դժուարութիւններու որ հօրը կողմանէ առջեւը կ'ելլէին, թողուց խորշեցաւ Բողոքականութենէ։ Ասոր օրինակին հետեւեցաւ երեք տարի ետքը Փրեդերիկոս Օգոստոս Կարոլոս Իշխանը Հեսսէն-Տարմշթատի Մեծ Դքսին երրորդ որդին. ասոր ետեւէն եկաւ Գառլոթթա-Ֆետերիգա Իշխանուհին Ադոլֆ Փրեդերիկոս Մեքլենպուրկի Իշխանին քոյրը, հռչակաւոր իր այնչափ եւ ամէն տեսակ բարեգործութիւններովը։ 1817ին ուղղափառութեան դարձաւ Սաքսէն-կոթայի դուքսը, եւ իր հաղուագիւտ աստուածպաշտութեամբը շինութիւն կու տար Եկեղեցւոյ։ 1821ին Ֆետերիգա Վիլհելմին Սոֆի Պայրայթ կոմսուհին նոյնը ըրաւ, եւ մայր եւ ապաստանարան եղաւ ամէն աղքատներու։ 1825ին Անհալթ Քէօթէնի Դուքսն ու Դքսուհին ուրանալով հերետիկոսութիւնը, հրապարակաւ իրենք զիրենք կաթողիկեայ հրատարակեցին։ 1826ին Ինկելհայմի կոմսը վերջին Պրուշի թագաւորին եղբայրը, նոյնպէս ըրաւ։ 1837ին պատահեցաւ Հենրիկոս Էդուարդ՝ Շէօնպուրկի Իշխանին դարձը. եւ մեր օրերը նշանաւոր են Քամմէն ու Ֆիլտինկ Ազնուական Լորտերը իրենց ամուսիններով մէկտեղ. Լորտ Սփենչեր, որն որ եռանդուն կրօնաւոր եղաւ. Հիւկըլի Պարոնուհին՝ հայելի գեղեցիկ առաքինութիւններու, եւ ուրիշ այնչափ այնչափ անձինք, զորոնք յիշելը շատ երկայն կ'ըլլայ։ Արդ՝ ի՞նչ պատճառ կրնայ շարժած ըլլալ աս ամէն մեծանուն անձինքը այսպիսի որոշում մ'ընելու։ Հօս անկարելի է կասկածելը, ոչ կերը, ոչ շահ եւ ոչ ուրիշ մարդկային շարժառիթ մը, ինչու որ՝ մինաւանդ աս շարժառիթները աւելի եւս պէտք էին զիրենք դանդաղեցընել, որովհետեւ մարդկային սրտի միշտ խիստ բան է, իր մոլորութեան մէջ ըլլալը խոստովանիլը։ Ուրեմն միայն ճշմարտութիւնն էր, որ յաղթեց, եւ առաքինութիւնը, որ զիրենք այնչափ մեծամեծ ըրաւ ամէն մարդկային նկատմունքը զոհելու։ Թող Բողո-

քաղաքներն ալ այսպիսի գործեր ցուցընեն։

Բայց չկարծէք որ մեզի եկողները միայն իշխանական ու զգաստասէր անձինքներն են։ Մեր դարուն ամենէն լուսաւոր հանճարներն ալ նոյնը ըրին։ Ասոր ցոյցն է մեծիմաստ Հալլէր, քաղաքագիտական ուսման հիմնադիրը. Շթօլպէրկ հռչակաւոր մատենագիրը Վարուց Յիսուսի Քրիստոսի եւ Քրիստոնէական Եկեղեցւոյ 14 հատոր պատմութեանը. մեծանուն Վեռնէր, որ երեւելի էր իր գրութիւններովը եւ ունեցած պաշտօններովը. Պարոն Շթարք՝ Խր—խ—բէ—ն Թէ————լխոյ բռնած, եւ ուրիշ գրքերու մատենագիրը. Շլէկէլ բազմահմուտ իմաստունը ամէն տեսակ գիտութեան ու գրագիտութեան մէջ, մեծահանճար գրագէտները Կղէմէս Պրէնթանօյ, Պարոն Էյխէնտօրֆ, Կէօրրէս, Արքունի խորհրդական Ադամ Միւլլէր, Էպլինկէր, Պեռոսոտը Ֆոս, Կֆրէօրէր, Ֆիլիփփս, Շլօսէր, եւ վերջապէս պայծառանուն Փրեդերիկոս Հուրթէր Շաֆհաուզէնի ժողովոյն նախագահը. ամէնքն ալ հոյակապ ու համբաւաւոր մարդիկ իրենց հանճարովը, իմաստուն գրութիւններովը, որ աշխարհքիս վրայ թողուցին։

Ինչ որ Գերմանիայի մէջ պատահեցաւ, նոյնը նաեւ Անգղիայի մէջն ալ երեւցաւ։ Քանի մը տարի է, Օքսֆորթի բողոքական համալսարանին մէջ բազմաթիւ մը արթընցաւ, եկեղեցական հնութիւններն ա-



գէկ մը ճանչնալու. ասոր այն ուսուցիչները սկսան իրենց ուսմունքը տարածել Սուրբ գրոց եւ սրբոց Հարց մատենագրութիւններուն վրայ, որ զանոնք կը մեկնեն։ Ինչ եղաւ աս ուսմունքներուն արդիւնքը։ Մէկը՝ մէկալը՝ համոզուեցան Բողոքականութեան սուտութեան վրայ, եւ եկան գրկեցին Ուղղափառ կրօնքը։ Աս միայն մէկ քանիներուն անունները հոս տեղս քեզի կը ծանուցանեմ, որոնք հազարներու տեղը կը բռնեն, եւ են Ուօրտ, Օքլիները, Ֆէպէր, Մորրիս, Պրաուն, Նէուման, Մանինկ, Լիտտ, Ֆորպս, Ալլիս, Պէրէր, ամէնքն ալ հռչակաւոր իրենց ուսմամբն ու մատենագրութիւններովը, որ հրատարակեցին. ասոնց շատերը նշանաւոր էին իրենց համեստութեամբը, որով մեծ անուն ունէին Բողոքականաց եւ նաեւ Ուղղափառաց մէջ։ Իսկ այս գիտուններուն թիւը այնչափ շատ է, որ մէկ քանի տարիներու մէջ երեսունը անցաւ միայն Անգղիայի մէջ։ Արդ՝ նորէն կը հարցընեմ ձեզի, ինչ շարժառիթ կրնար ստիպել այս ամէնքը Բողոքականութիւնը մերժելու՝ Կաթողիկեայ ըլլալու համար։ Տգիտութիւնը չէր, վասնզի գիտութեամբ հռչակուած էին. գուցէ շահախնդրութիւնը. բայց՝ ասոնցմէ շատերը հարկադրեցան իրենց հարուստ եկամուտները թողուլ, եւ բոլորովին աղքատանալ։ Գուցէ կիները. բայց՝ իրենք աւելի եւս հեշտութեամբ կրնային նոյները

յարգելընել Բողոքական հաւատով, եւ շատերը այնպէս քաջութեամբ յաղթեցին, մինչեւ նաեւ աշխարհական հանգստութիւնը ձգելով՝ քաղաքայնութեան կամ կրօնաւորութեան մէջ ազատութիւնը գրկեցին: Ո՞վ ուրեմն շարժեց զանոնք այսպիսի զոհեր ընելու. Յիսուսի Քրիստոսի շնորհքը, որ զիրենք լուսաւորեց, ճշմարտութիւնը, որ զիրենք ազատութեամբ նուաճեց. ահաւասիկ այն է որ շարժեց զիրենք:

Համեմատեցէք ուրեմն աս մեծամեծ մարդիկները, որ մեզի Ուղղափառաց կու գան, անոնց հետ, որ մեզմէ կ'երթան բողոքական ըլլալու, եւ շուտով կը տեսնէք, թէ ո՛ւր է ճշմարտութիւնը: Մեզի եկողները ամենէն իմաստուններն, ամենէն համեստներն, ամենէն բարեկիրթներն են. իսկ անկեղծները կու գան մեզի՝ նաեւ իրենց անձնասիրութիւնը, եւ շատ անգամ՝ իրենց պատիւն ու անձնական շահը զոհելով, եւ ամէն տեսակ դժուարութիւնները յաղթելով, որ իրենց առջեւը կը հանեն ազգականք եւ բարեկամք: Ասոր ներհակ՝ անոնք որ մեզմէ կ'երթան, ամենեւին գիտութիւն չունին եւ ամէն մոլութեամբ լեցուած են: Հապա թէ կը թողուն Ուղղափառ Եկեղեցին՝ անմիջապէս անոնց վարուց ետեւէ կ'երթան: Իրաւցընէ ճշմարիտ է այն որ ուղղափառ մը կ'ըլլայ Բողոքական մը. [illegible] Ո՞ւր



է ուրեմն ճշմարտութիւնը: Եթէ աս աշխարհքս այսպէս նիւթական բաներու եւ զգայական վայելմանց մէջ ընկղմած չըլլար, այս տեսարանը տեսնելը միայն զինքը զարմանքով կ'ապշեցընէր, եւ աւելի եւս սիրով Ուղղափառ Եկեղեցւոյ հետ կը կապէր: Բայց վա՜յ անոր, որ այսչափ փորձերէն ետքը, զորոնք Աստուած իր աչքին առջեւը կը դնէ, կամ կը դեգեւի, կամ կը կործանի, որուն համար որ ամենեւին անպատիժ չիկրնար ըլլալ:

## ԳԼՈՒԽ Դ.

Բողոքականութեան ստութիւնը անկէ կը ճանչցուի, որ Բողոքականները ամենեւին առաքելութիւն չունին:

Պէտք էր գիտնալ, որ ճշմարիտ Եկեղեցւոյ մէջ ոչ որ կրնայ քարոզել, եթէ քարոզելու օրինաւոր առաքելութիւնն ընդունած չէ: Աս առաքելութիւնը երկու տեսակ է. կարգաւորեալ առաքելութիւնն է երբոր մէկը առաքուած կամ խրկուած է անկից, որ իշխանութիւն ունի Աստուծմէ, ըստ հասարակ կարգի որ դրուած է Եկեղեցւոյ մէջ: Այսպէս օրինակի համար՝ Ս. Դիոնիսիոս Պապը խրկուեցաւ Ս. Կղեմէս Քահանայապետէն, եւ Տիմոթէոս Ս. Պօղոսէ: Արտաքոյ կարգի առաքելութիւն կ'ըսուի, երբոր Աստուած ինք իրմէ

իր կարողութիւնը կը հաղորդէ մէկու մը, եւ անսովորական նշաններով, ինչպէս են հրաշքներն ու մարգարէութիւնները, կը յայտնէ, թէ ինքն է որ զանիկայ կ՚առաքէ։ Այսպէս Յիսուս Քրիստոս խրկեց Առաքեալները ըսելով. Գնացէք ու քարոզեցէք Աւետարանը ամէն Արարածներուն[1]։

Պէտք է գիտնալ նաեւ թէ չ՚ընդունուիր իբրեւ քարոզիչ մը, ով որ աս առաքելութիւնը չունի. վասն զի որոնք որ Եկեղեցւոյ մէջ ուսուցանելու կ՚ընծայուին, դեսպանութեամբ կը ներկայանան, իսկ դեսպանները չեն ընդունուիր եթէ իրենց դեսպանութեան եւ յանձնարարական թղթերը չեն ցուցըներ։ Ի՞նչպէս քարոզեն, թէ չի՛ն ղրկուիր. կը հարցընէ Ս. Պօղոս[2]։ Մենք նոյն իսկ երկրաւոր գործքերու մէջ ամէն անծանօթ անձի՝ որ մեզի կը ներկայանայ, չենք հաւատար, կրնա՞նք հաւատալ անծանօթ անձի մը այսպէս մեծ գործքի մէջ, ինչպէս է Կրօնքի գործքը։ Հարկ է որ ընծայուին իշխանութիւն ունեցող մէկէ մը։

Ինչո՞ւ արդէն կը հաւատանք մենք Եպիսկոպոսներու եւ Քահանաներու Ուղղափառ Եկեղեցւոյ մէջ, երբ մեզի կը սորվեցընեն։ Ահաւասիկ պատճառը։ Գիտենք, որ Յիսուս Քրիստոս խրկուած է իր Հօրմէն, ինչպէս ինք մեզի ապահովցուց ըսելով. Հայր առաքեաց զիս[3]։ Իբրեւ ցոյց իրեն առա-

[1] Մարկ. ԺԶ. 15։ [3] Յովհ. Ի. 21։
[2] Հռոմ. Ժ. 15։



քելութեանը առջեւնիս բերաւ իր գործքերը որ գործեց, կաղերն՝ որ շտկեց, կոյրերը՝ որ լուսաւորեց, խուլերն՝ որոնց լսել շնորհեց, համրներն՝ որոնց լեզուն արձակեց, մեռեալներն՝ որ կենդանացուց, ամէն տեսակ զարմանալի հրաշքներն, որ ըրաւ։ Թէ ինծի չէք հաւատար, ըսաւ, իմ գործերուս հաւատացէք[1]։ Իմ գործերս են, որ ինծի համար կը վկայեն։ Արդէն՝ Յիսուսի Աստուծմէ խրկուելուն հաւատալը, իրաւցընէ անխոհեմութիւն չէր։

Բայց ինք՝ իր աստուածային առաքելութիւնը կատարելէն ետքը, նոյնը վաւերացուց նաեւ իր Առաքելոց վրայ, որոնք նոյնպէս Յիսուսի առաքելովը տարածուեցան բոլոր երկրիս երեսը. Ահաւասիկ ես առաքեմ զձեզ. ըսաւ Յիսուս, ահաւասիկ ես զձեզ կը ղրկեմ[2], իսկ Առաքեալները հետզհետէ ուրիշները խրկեցին, եւ այսպէս անդադար յաջորդութեամբ առաքեալները մինչեւ մեզի հասան. որովհետեւ Եկեղեցին Պետրոսի եւ իր յաջորդներուն վրայ հիմնուած ըլլալով, կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ չիգտնուիր ո՛չ Եպիսկոպոս եւ ո՛չ Քահանայ մը որ Ս. Պետրոսի յաջորդներէն յառաջ եկած չըլլայ, ուստի եւ օրինաւոր առաքելութիւն ունեցած չըլլայ։

Բողոքականաց մէջն ալ սա՞նկ է։ Ոչ երբեք։ Անոնք ամենեւին մէկէ մը առաքելութիւն ընդունած չեն, ոչ կարգաւո-

[1] Յովհ. Ժ. 38։ [2] Յովհ. Ի. 21։

բեւալը եւ ոչ արտաքոյ կարգին։ Ոչ որ մեզի կ'ապահովցընէ, թէ իրենք օրինաւոր Հովիւներ են, եւ այդպիսի պաշտօն մը առած են մեր մէջը ի գործ դնելու։

Կարգաւորեալ առաքելութիւն չունին, վասնզի ամէնքն ալ պէտք է ընդունին Եպիսկոպոսներէն, որոնք կապուած են Ս. Պետրոսի Աթոռին հետ։ Արդ Լուտեր, Կալվին, եւ ամէն առաջին նորոգողները, առուգիւ իրենց մեծաւորներէն չէին խրկուած նոր վարդապետութիւն մը քարոզելու։ Բոլորովին ասոր հակառակ. հազիւ թէ համարձակեցան նոյնը առաջարկելու, անմիջապէս յանդիմանուեցան, հակառակութիւն կրեցին, դատապարտուեցան եւ նզովուեցան. եւ ամէն հաւատացեալներու ազդարարութիւն տրուեցաւ, որ անոնցմէ իբրեւ ճշմարիտ ժանտախտէ մը զգուշանան։ Արդ՝ որո՞վ իրաւամբ կու գան Աստուծոյ Եկեղեցւոյն մէջ ուսուցանելու, եւ անոր վարդապետութիւնը փոխելու, Ո՞վ է, որ խրկեց զանոնք. ո՞վ է, որ տուաւ անոնց իշխանութիւն։ Իսկ եթէ նոյն ինքն Յիսուս Քրիստոս, որ յաւիտենական ճշմարտութիւնն էր, ըսաւ. Եթէ ես կը փառաւորեմ իմ անձս, իմ փառքս ոչինչ է[1]; Հայրն է որ ինծի համար կը վկայէ[2]. եւ ուրիշ տեղ կը զրուցէ, թէ Հայրն էր, որ զինքն ղրկեց. ո՞վ են ուրեմն ասոնք, որոնք առանց վկայութեան մը կը պահանջեն, որ իրենց

[1] Յովհ. Ը. 54. [2] Յովհ. Ե. 32.



հաւատք ընծայուի։ Ասոնք կ'ըսեմ, որոնք այսպիսի վկայութեան շատ կարօտութիւն ունին, իրենց ապականութեան, ունայնութեան, հպարտութեան եւ պղծութեան համար։

Չունին եւ ոչ արտաքոյ կարգի առաքելութիւն, այսինքն է՝ որ Աստուած զիրենք նշանաւոր չըրաւ ո՛չ հրաշագործութեամբ, ո՛չ մարգարէութեամբ, եւ ո՛չ սրբութեան ուրիշ նշաններով։ Բոլորովին հակառակ։ Հրաշքներու նկատմամբ իրենք իրենցմէ ըսին, թէ հարկաւոր չեն, վասնզի կարողութիւն ալ չունէին գործելու, ինչպէս հռչակաւոր առակը կը զրուցէ, թէ գայլը խաղողը չկրնալով փրցընել բարձրէն կախուած ըլլալուն համար, կ'ըսէր թէ չէր ախորժեր վասնզի թթու էր։ Մարգարէութիւն չունին. մանաւանդ թէ՝ իրենց յիմարական մարգարէութիւնն ալ յայտնապէս սուտ ճանչցուեցաւ, որով կը պարծէին, թէ Հռոմայ քահանայապետութիւնը Լուտերի ձեռքով պիտ'որ վերջանար, եւ թէ Կաթողիկէ Եկեղեցին պիտ'որ կործանէր։ Արտաքոյ կարգի սրբութեան ուրիշ նշաններն երբեք իրենց վրայ չտեսնուեցաւ, եւ իրենք ալ երբեք չկրցան նոյնը ցուցընել։ Ուրեմն ասկից ի՞նչ կը հետեւցընենք. ան որ՝ Յիսուսի Քրիստոսի ճշմարիտ պատգամաւորներն ըլլալու տեղ, խաբեբաներ են, կը կեղծաւորին առաքելութիւն մը՝ որ չունին։

Բողոքականներէն ոմանք, աս պատճառէս նեղ մնալով՝ պատասխան մը հնարեցին. բայց իրենց աւելի օգտակար էր, գոնէ իրենց ամօթը դադրեցընելու համար, թէ բոլորովին լռէին, այնչափ ծիծաղական եւ այլանդակ է այն պատասխանը: Կ՚ըսեն թէ կար Յիսուսի Քրիստոսի ճշմարիտ եկեղեցին, որմէ առաքելութիւնն առին, բայց անտեսանելի էր, եւ թէ իրենք իրկուած էին աս անտեսանելի եկեղեցիէն: Ասկից աւելի ապուշ բան մը կրնայ՞ն ըսել: Իբրեւ թէ մէկը ըսէր, թէ յիսուն դահեկան ընդունած է, բայց անտեսանելի են. ան ատեն մենք ալ իրեն կ՚ըսէինք՝ ի՞նչ բանի կը ծառայէին ան դահեկանները, եթէ չէին կրնար շօշափուիլ կամ գործածուիլ: Եւ եթէ այս եկեղեցին անտեսանելի էր, իրենք ի՞նչպէս ըրին որ առնան եւ անոր հետ միացան:

Ո՜վ, ի՜նչ մեծ առանձնաշնորհութիւն է որ ունին ասոնք, որովհետեւ տեսեր են անտեսանելին. ի՞նչ աչքերով եւ որպիսի՞ դիտակ իրենց տեսութեանը գործածեցին: Թէ աս դիտակը աղէկ կը ցուցնէ, ամէն գալի հերետիկոսները պատրաստ պիտի՛ որ ունենան իրենց առանձին ջատագովութիւն մը, թէ անտեսանելի եկեղեցւոյն կը վերաբերին, եւ աս միակ բաւական է վաւերացընելու Արիոսի, Նեստորի, Եւտիքէսի, Պելագիոսի եւ ուրիշ հերետիկոսապետներուն ամէն մոլորութիւնները. ասիկայ անանկ բան մըն է, որ Բողոքականներն ալ չէին կրնար ընդունիլ: Ինչու որ՝ եթէ իրենց բաւական է ըսելը, թէ անտեսանելի եկեղեցւոյ մը կը վերաբերին, ինչո՞ւ ասիկայ ամէն հերետիկոսներու ալ բաւական պիտի՛ որ չըլլայ:



Վերջապէս՝ եթէ այս եկեղեցին, որմէ առաքելութիւնն առին, անտեսանելի էր, ուրեմն Յիսուսի Քրիստոսի ճշմարիտ եկեղեցին չէր, ինչու որ՝ Յիսուս յայտնի ըսաւ իր Մարգարէներուն բերնովը, թէ իր եկեղեցին տեսանելի պիտի՛ որ ըլլար ամէն ազգերու, թէ ամէնքն ալ զանիկայ պիտի՛ որ ճանչնային, թէ իբրեւ լեռ մը պիտի՛ որ ըլլար, ամէն լեռներէ բարձր[1]. ասոր համար պէտք է հետեւցընել, թէ այն մեկնութեան գիւտը խոստովանիլ մըն է, որ աս Բողոքականները ամենեւին առաքելութիւն չունին ուսուցանելու:

Եւ եթէ առաքելութիւն չունին, գոհ ըլլան որ մենք կաթողիկէ եկեղեցիէն չենք հեռանար, որ յայտնի, անխախտելի եւ ստոյգ Յիսուսի Քրիստոսի առաքելութիւնն ունի, եւ կը մերժենք այդ յանդուգներուն ուսմունքները, որոնք առանց կանչուելու իրենցմէ մոլորութիւններ ու սուտութիւններ սորվեցընելու կը նստին:

Եթէ անծանօթ մէկը քովերնիդ մերձենար ու ըսելու ըլլար, թէ ձեր տէրը զինք խրկած էր հարիւր դահեկանները պահանջելու, որ պարտական էք, այնչափ ան-

[1] Ես. Բ. 2.

միտ պիտի՛ որ ըլլայիք, որ միամտութեամբ նոյն դրամները հանէիք անոր ձեռքը յանձնէիք: Անիկայ կրնար ճշմարիտ կամ սուտ երդմամբ հաստատել, թէ իրաւցընէ ձեր պարտատէրը զինք խրկած է. բայց ատուցիւ ձեռքերնիդ ստակ մը չէիք հաներ, մինչեւ որ դուք զինք աղէկ մը չճանչնայիք: Արդ հիմա հաւա՞տք պիտի՛ որ ընծայէք այս անծանօթներուն, որոնք ձեզմէ կը պահանջեն, չէ թէ հարիւր դահեկան, այլ հոգինիդ հաւատք եւ յաւիտենականութիւն, առանց ձեզի ապահովութիւն՝ երաշխաւորութիւն մը տալու՝ իրենց եւ անոր ուղղախոհութեանը վրայ, որ զիրենք խրկած է:

## ԳԼՈՒԽ Է.

### Բողոքականութիւնը սուտ է, հին չէ նոր է:

Անձինքներէն որ գիտեցինք՝ անցնինք իրերու վրայ, եւ տեսնենք թէ մինչեւ ո՛ւր կ'ուզեն զձեզ քշքշել: Կը տանին կը նետեն զձեզ, թէ զգոյշ չէք կենար, ամէն մոլորութիւններու անդունդը: Ահաւասիկ ձեզի քանի մը գեղեցիկ ու պայծառ փորձեր: Ճշմարիտ Կրօնքը ան է, որ սկիզբն առաւ Յիսուսէ Քրիստոսէ, որ անարատ պահուելով ամէն դարերու մէջ հասաւ մինչեւ մեր օրերը, եւ անոր համար ալ Քրիստոնէական Կրօնք կը կոչուի, վասն զի յառաջ կու գայ Յիսուս Քրիստոսէ: Ուրեմն յայտնի է որ ճշմարիտ Եկեղեցին



այնչափ հին պէտք է ըլլայ, որչափ հին է իր հիմնադիրը: Բայց Բողոքականութիւնը նոր է, ուրեմն ճշմարիտ Եկեղեցին չէ: Արդ՝ թէ Բողոքական աղանդները հին չեն, եւ թէ ըստ հետեւորդի Յիսուս Քրիստոսէ չեն ծագիր, ասիկայ յայտնի բան է, ինչու որ՝ գիտենք տարին, ամիսն եւ օրը, երբ աշխարհքիս վրայ երեւցան: Ոմանց հայրն եղաւ Լութեր, ոմանց՝ Կալուին, Զուինկլեան աղանդը՝ Զուինկլիոսէ յառաջ եկաւ, Անգղիականը՝ Հենրիկոս Ը. եւ Եղիսաբեթէն, Գուակերները Գէորգ Ֆոքսէն, Մորմոնները Յովսէփ Սմիթէն, այսպէս ալ մեկայինքը: Այս ամէն աղանդաւորաց գլուխները, ամենեւին կապ մը չունին նախընթաց անձինքներուն հետ, ոչ ալ անոնց վարդապետութիւնն ունին, վասնզի թէ որ ունենային՝ անոնցմէ չէին զատուեր. ուրեմն չեն կրնար պարծիլ, որ Յիսուս Քրիստոսէ յառաջ եկած են, ուրեմն ճշմարիտ հովիւներ չեն, ուրեմն յափշտակիչ գայլեր են: Աս պատճառաւ միայն ծեր գեղացի մը պապանձեցուց Անգղիայի ուխտանենք Եղիսաբեթ թագուհին:

Աս թագուհին անգամ մը որսի գացած էր իր ստացուածքներուն մէջ, եւ հանդիպեցաւ բարի ծերի մը, եւ սկսաւ յորդորել որ բողոքական ըլլայ: Ծերը լուռ կեցած մտիկ կ'ընէր եւ մէկ ձեռքովը ճերմակ մօրուքը կը շոյէր: Թագուհին խօսքը լմընցուց եւ ըսաւ, հապա ինչ կ'ըսես ես, ո-

բողեցի՞ր զքեզ մերիններուն կարգն անցնե-
լու ։ Ի՞նչպէս կրնամ, ըսաւ իմաստուն ա-
լեւորը, ընդունիլ Կրօնք մը, որ իմ մօ-
րուքէս նորը ծներ է ։ Աս գեղեցիկ պա-
տասխանովը ուզեց հասկըցնել, որ Քրիս-
տոնէական Կրօնքը չիկրնար ճշմարիտ ըլլալ՝
եթէ հին չէ, եթէ մինչեւ Յիսուս Քրիս-
տոս չ'երթար, որն որ անոր հիմնադիրն է ։

Իրաւցընէ՛ աս է Կաթողիկէ Կրօնքին ներդաշնական գեղեցկութիւնը, որ դարագլխէ դարագլուխ, դարէ դար վեր ելլելով, գեղեցիկ եւ վեհ գետի մը պէս մինչեւ իր ակունքը կը հասնի, որ է Յիսուս Քրիստոս, Մենք աս դարուս մէջ նոյն վարդապետութիւնն ունինք, զորն որ ունեցան նախընթաց դարուն մէջ, նախընթաց դարուններն ալ պահեցին իրենց նախորդներունը, այսպէս յառաջ գնա ըսելով ։

Այսօրուան օրս Պիոս Թ. Քահանայապետ եւ փոխանորդ Յիսուսի Քրիստոսի, կը նստի առաքելական Աթոռին վրայ, անիկայ սորվեցուց ան բանը ինչ որ սորվեցուց Գրիգոր ԺԶ ։ Անիկայ սորվեցուց, ինչ որ սորվեցուցին Պիոս Ը. Լեւոն ԺԲ. Պիոս Է. Պիոս Զ. եւ ուրիշ ամէն Հռոմայ Քահանայապետք մինչեւ Ս. Պետրոս, եւ մինչեւ Յիսուս Քրիստոս ։

Պիտ'որ ըսես. ինչպէս կը գիտցուի՝ որ միշտ մի եւ նոյնը վարդապետեցին ։ Ամենայն ստուգութեամբ եւ շատ կերպով կը գիտցուի ։ Կը գիտցուի ասկից՝ որ կը տես-



նենք թէ ամէն անգամուն որ մէկը ելեր եւ նոր վարդապետութիւն մը սորվեցուցեր է, ինչպէս հերետիկոսներն բոլոր առաջին ժամանակներէն ի վեր, շուտ մը Եկեղեցւոյ մարմնէն կտրուեր է ։ Անիկայ կը պարտաւորին խոստովանիլ նաեւ Բողոքականները, երբոր առաջին հերետիկոսութիւններուն վրայ կը խօսին, զորոնք իրենք ալ կը դատապարտեն, թէպէտ եւ նոյնը չեն ուզեր մերժեցընել վերջին եւ իրենց հերետիկոսութիւններուն, վասնզի չեն ուզեր խոստովանիլ իրենց իրաւունք չունենալը ։ Կը գիտցուի նոյն իսկ Բողոքականներուն վկայութենէն, որոնք երբ կը հարցուի իրենց, թէ երբ արդեօք Եկեղեցին փոխած է իր վարդապետութիւնները, կը տարուբին հազար ու մէկ սխալներ գրուցել եւ իրենք իրենց դէմ հակառակ խօսիլ. ոմանք երրորդ դարու, ոմանք չորրորդ դարու, ոմանք վեցերորդ եւ ոմանք ալ երկոտասաներորդ դարու մէջ դնել ուզելով ։ Ասով կը ցուցընեն յայտնապէս, թէ չեն գիտեր ինչ է ըսածնին ։ Կը գիտցուի նաեւ անկից՝ որ աս Բողոքականները, երբոր փոփոխուած վարդապետութիւնները նշանակելու կու գան, երբեք իրենց մէջ միաբան չեն, եւ Եկեղեցւոյ Վարդապետութիւններէն որ մասն իբրեւ նորէն ներս մտած ցուցընել ուզած են, անմիջապէս յայտնուած է, որ այն նոր վարդապետութիւն մը չէր, այլ հնուցմէ պահուած վճիռ մը ։

Կը ցուցուի վերջապէս անկից, որ անկարելի էր թէ Հաւատքի մէջ փոփոխութիւն եղած ըլլար եւ ամէն հաւատացեալք անմիջապէս դէմ դարձած չըլլային։ Առաջին դարերու մէջ ամէն Բողոքականներուն վկայութեամբը Հաւատքը մաքուր էր. եւ Հռոմայ Քահանայապետները որ Եկեղեցին կը կառավարէին, ճշմարտութեան ճամբուն մէջն էին։ Ե՞րբ եղաւ ուրեմն, կը հարցընէ իրենց Ս. Փրանկիսկոս Սալեզացի, որ Հռոմ այս մաքուր եւ երկնային Հաւատքը կորսնցուց։ Ե՞րբ դադրեցաւ իր առաջին որպիսութենէն։ Ո՞ր ժամանակ, ո՞ր Քահանայապետի ատեն։ Ո՞ր միջոցով, եւ որո՞ւն զօրութեամբը։ Ո՞ր օտար կրօնքն էր, որ յարձակեցաւ տիրեց յաւիտենական քաղքին վրայ։ Այս ի ճշմարտութենէ օտարանալը, ամենեւին եւ ոչ հաւատացելոյ մը բողոքը, աղաղակը, տժգոհութիւնը լսել չտուաւ։ Ո՛հ. քնացե՞ր էին արդեօք անոնք ամէնքն ալ, որոնց համար դուք ալ կը վկայէք, թէ հաւատարիմ մնացեր էին հաւատքներնուն մէջ, երբոր Հռոմ նոր խորհուրդներ, նոր զոհեր, նոր վարդապետութիւն կը ձեւէր։ Ի՞նչպէս ասոր վրայ գոնէ մէկ յիշատակութիւն մը, ակնարկութիւն մը, խօսք մը չըրաւ, ո՛չ Յոյն, ո՛չ Լատին, ո՛չ Ներքին, եւ ո՛չ արտաքին պատմիչ մը։

Ստուգիւ աշխարհքիս ամենէն զարմանալի նորութիւնն աս է, որ հարիւր ու



մէկ քաղքի եւ ժողովրդեան վերաբերած չնչին բաները մանրամասն պատմողները, անոնք մէկանց լռութեամբ՝ առանց դիտողութեան մը անցած են մահկանացուաց մէջ ամենէն մեծ գործքի մը վրայէն, ինչպէս են կրօնական գործքերը։ Եթէ հիմա ելլէր հաւատացեալ մը, եւ ուզէր փոխե՛լ Ս. Հաւատքի մէկ ճշմարտութիւն մը, կը լռէի՞ն արդեօք ամէն քահանայք, ամէն Եպիսկոպոսք եւ ամէն պատրիարքունք Կաթողիկէ Եկեղեցւոյ։ Ամենեւին ասոր հակառակ։ Ամէնքն ալ ոտք կ'ելլէին աղաղակելու, ձայներնին բարձրացընելու եւ դատապարտելու, ճշդիւ այնպէս՝ ինչպէս կ'ընեն թէ որ մէկը նորութիւն մը խոթելու ելնի. այսպէս կ'ընէին անցած ատեններն ալ, այնպէս որ երբեք կարելի չէր փոփոխութիւն մ'ընել առանց մեծ աղմուկ մը դրդուելու։ Կը տեսնես ուրեմն, որ Կաթողիկէ Եկեղեցին, երբեք վարդապետութիւն չէ փոխեր։

Բայց Բողոքականները, որպէս զի ցուցընեն թէ Եկեղեցին իր վարդապետութիւնը փոխած է, միշտ այն վճիռը յառաջ կը բերեն, զոր տուաւ Ս. Քահանայապետը Պիոս Թ. Մարիամ Կուսին Անարատ Յղութեանը վրայ։ Լաւ է, եւ ես կ'ուզեմ, որ դուն ալ դիտես ու ճանչնաս անոնց տգիտութիւնն ու չարութիւնը, որոնք աս դժուարութիւնները յառաջ կը բերեն։ Ահաւասիկ բանը ինչպէս գնաց։

Ոմանք կը տարակուսէին, թէ ամենասուրբ Կոյսը ի մե՞ղս յղացեալ էր, թէ չէ։ Աղէկ միտ դիր, խնդիրն ան չէր, ինչպէս կ'երազեն անմիտները, թէ սուրբ Աստուածածինը Կոյս մնացե՞ր էր, թէ չէ. ինչու որ՝ երբեք մէկու մը մտքէն չանցաւ, թէ Ս. Կոյս Աստուածածին այս առանձնաշնորհութիւնն ունեցած չըլլայ. տարակոյսնին սա էր, թէ Ս. Աստուածածինը սկզբնական մեղքը ազատուած էր, թէ չէ։ Ի՞նչ ըրաւ ան ատեն Ս. Եկեղեցին, որ չուզեր նոր նոր վարդապետութիւններու բանալ, այլ հաստատուն եւ անփոփոխ կը պահէ միշտ այն վարդապետութիւնը, զոր Յիսուս Քրիստոս յայտնած է։ Մանր քննութիւններ ըրել տուաւ ամէն եկեղեցիներու, մանաւանդ Ս. Առաքեալներէն հիմնուած եկեղեցիներուն աւանդութեանց մէջ, որպէսզի տեսնուի եւ ճանչցուի այն վարդապետութիւնը, զոր Յիսուս Քրիստոս աւանդած է իր Եկեղեցւոյն. եւ այսպէս Հոգւոյն սրբոյ առաջնորդութեամբը, որն որ Յիսուսի Քրիստոսի խոստմանը համեմայն, երբեք իրմէ պիտ'որ չպակսի, տեսնելով որ ամէն հնագոյն Եկեղեցիներու մէջ սովորական եւ հաստատուն էր Մարիամու Անարատ Յղութեան վարդապետութիւնը, վաւերական վճռով հրատարակեց Ս. Քահանայապետին բերնովը, թէ ճշմարիտ եւ հին վարդապետութիւնն սա էր, որ Աստուծոյ մեծապանծ Մայրը



ազատ եւ սուրբ էր սկզբնական մեղաց ամէն արատէն։ Կը տեսնես ուրեմն, որ Ս. Եկեղեցին չէ թէ միայն չհնարեց նոր վարդապետութիւն մը, այլ սորվեցուց հին վարդապետութիւնը ամէն տարակոյս վրայէն վերցընելով։ Ուրեմն կամ տգէտ են անոնք, որ սա բաները չեն իմանար, եւ ան ատեն լաւ կ'ընէին թէ բոլորովին լռէին, եւ կամ չար չարամիտ են, եւ ան ատեն խօսքերնին հաւատալու արժանի չեն։

Այսու ամենայնիւ գիտեն հմուտ Բողոքականները, որ Եկեղեցւոյ մէջ հաւատոյ խնդիր մը սահմանելու համար միշտ այս միջոցը ի գործ դրուած է, ամէն անգամուն որ երկբայութիւն կամ մոլորութիւն մը ելած է. եւ կը ստիպուին նոյնը իբրեւ օրինաւոր ընդունելու, երբոր խօսք կ'ըլլայ Նեստորի, Եւտիքէսի եւ ուրիշներու վրայ որոշուած մոլորութիւններու համար, զորոնք իրենք ալ իբրեւ մոլորութիւն կը ճանչնան։ Ի՞նչ է ուրեմն պատճառը, որ այս միջոցը անպատեհ կը համարին երբոր սուրբ Աստուածածնայ վրայ է խօսքը։ Միշտ այն չարամտութիւնն է, որ բիւրաւոր մեղքներով հեռուէն կ'երեւայ։ Կ'ուրանան ու կ'ընդունին ըստ քմաց, ինչպէս անոնք որ սուտ կը խօսին. մէկ սուտը պաշտպանելու համար ստիպուած են հարիւր ուրիշ ստեր զրուցելու։

## ԳԼՈՒԽ Զ.

### Սուտ է Բողոքականութիւնը, կամ չէ նորութեան ըլլալէն:

Ոչ միայն նոր է Բողոքականութիւնը, որ ստութեան մեծ նշան մըն է, այլ նաեւ այնպիսի կրօնք մըն է որ յանրաւս կը փոփոխուի. անտարակուսելի ցոյց մը մարդկային գիւտ ըլլալուն: Ինչու որ՝ Յիսուս Քրիստոս իր կրօնքը ի՞նչպէս հաստատեց: Սորվեցուց մեզի քաղցրութիւ եւ անգին ճշմարտութիւններ, որ կը վերաբերին մի եւ երեքանձն Աստուծոյ մեծութեանը եւ փառաց, Յիսուսի Քրիստոսի կատարած մեծագործ փրկութեանը, Եկեղեցւոյ ընութեանը, Սուրբ խորհուրդներուն, որ շնորհաց աղբիւրներն են, եւ միանգամայն աստուածային Պատուիրանքին՝ որպէս զի կատարելագոյն պատիւ Աստուծոյ ընծայուի, այսպէս ըսէ նաեւ այն ամէն բաներու վրայ, որոնց պէտք ենք հաւատալ, գործել, յուսալ, երկնչել ու սիրել: Այս ամենայն սահմանեց Յիսուս, եւ սուրեց իր յայտնութեամբը: Բայց ուզեց միանգամայն, որ այս ամէն ճշմարտութիւնները հաւատալու մէջ՝ ամէնքնիս ալ կատարելապէս միաբան ըլլանք մէջերնիս: Ս. Պօղոս կը պատուիրէր, որ ամէնքս ալ մէկ եղանակով խորհինք ու զգանք[1], քանզի Աստուած՝ խառնակութեան տէ-

[1] Բ. Կորնթ. ԺԳ. 11.



րը չէ, այլ խաղաղութեան[1]: Քանզի մի է Տէր, մի մկրտութիւն, մի հաւատք, մի Աստուած եւ Հայր ամենուն[2]: Յիսուս Քրիստոս աղաչեց միշտ, որ իրարու հետ միաբան ըլլանք, եւ միութիւնը պահենք[3]: Մեզի ազդ ըրաւ, որ ամէն թագաւորութիւն՝ որ իր մէջը բաժնուած է՝ կը կործանի[4]: Թէ վերջապէս ամէնքս ալ կը պարտաւորինք մէկ հօտ եւ մէկ հովիւ մը[5] կացուցանել: Այս ամենայն անտարակուսելի է Սուրբ Գիրքէն: Այսպէս նաեւ անտարակուսելի է, թէ այն կրօնքը մինակ ճշմարիտ է, որ այս ամէն ճշմարտութիւնները միշտ ունեցաւ եւ ունի, եւ նոյնները կը պահէ կատարեալ միաձայնութեամբ եւ միութեամբ: Ով որ անգամ մ'ալ վարդապետութիւն փոխած ըլլալը կը խոստովանի, այնպիսին պէտք է նաեւ խոստովանիլ որ գուցէ՝ թէ՛ մէկ եւ թէ՛ մէկալ փոփոխութեան մէջ, եւ ստուգիւ երկուքէն մէկուն մէջ ճշմարտութիւնն ունեցած չէ:

Չկրնար ճշմարիտ ըլլալ մէկ առեննուան մէջ այոն եւ ոչը. չկրնար մէկ բանը նոյն առեննուան մէջ թէ՛ ճերմակ եւ թէ՛ սեւ ըլլալ. եւ այսպէս Յիսուս Քրիստոս կամ յայտնեց եւ կամ չյայտնեց ճշմարտութիւն մը. եւ այս ճշմարտութիւնը կամ այս եւ կամ այն եղանակ յայտնած է: Ասիկայ ճշմարիտ չէ՞: Ուրեմն Բողոքականութիւնը

[1] Ա. Կորնթ. ԺԴ. 33.
[2] Եփես. Դ. 6.
[3] Եփես. Դ. 4.
[4] Ղուկ. ԺԱ. 17.
[5] Յովհ. Ժ. 16.

որ կ՚ընդունի եւ կը մերժէ մի եւ նոյն բանը, որ այսօր կը պաշտպանէ այն բանը, որուն որ վաղը պիտ՚որ հակառակի, որ կը հաստատէ եւ կ՚ուրանայ ամէն առաջարկութիւն, որ կը փոփոխէ Քրիստոնէականը, ծէսերը, եւ հոգեւոր կրթութիւնները մշտնջենաւոր շարժմամբ ու փոփոխութեամբ, ճշմարտութիւն չէ, եւ ոչ ալ կրնայ ըլլալ։

Արդ՝ ասկից երկու գեղեցիկ հետեւութիւններ կը բխին։ Աղէկ միտ դրէք։ Մէկն աս է, որ ճշմարտութիւնն ստացած ըլլալու ամենայն նշանները մեր Կաթողիկէ ուղղափառաց կողմն է, որ ունինք մի եւ նոյն հաւատոյ դաւանութիւնը, որ բոլոր տիեզերաց հասարակ է, եւ դարէ ի դար նախկինէն միշտ կը տեւէ, ինչպէս վերը տեսանք։ Ո՛վ, թէ կարող ըլլայիք իմանալ, թէ ի՞նչ գեղեցիկ տեսարան մըն է ասիկայ։ Բովանդակ երկրիս վրայ Ուղղափառք մէնոյն եղանակաւ կը խօսին, եւ նոյն ճըշմարտութիւններու կը հաւատան, եւ իրենց գլուխը մի եւ նոյն գերագոյն հովուին հրամանին կը խոնարհեցընեն։ Ամերիկայի նորսերը նոյն իսկ խեղճ վայրենիները որ Ուղղափառ հաւատքն ընդունած են, այնպէս կը հաւատան ինչպէս Հռոմայի մէջ կը հաւատանք. ինչ որ Գաղղիայի Կաթողիկեաները կը հաւատան, նոյնը Իտալիայի, Բեղգիայի, Աւստրիայի, Գերմանիայի, Անգղիայի Ուղղափառներն ալ կը հաւա-



տան։ Ամէն նաւահանգիստներու, ամէն կղզիներու, ամէն նաեւ ամենաբարբարոս երկիրներու մէջ, բաւական է, որ մէկ Ուղղափառ մը գտնուի, բոլորովին այնպէս կը հաւատայ, ինչպէս մենք կը հաւատանք։ Մեզի հետ են Ծայրագոյն Քահանայապետները, մեզի հետ այնչափ Եպիսկոպոսներ, մեզի հետ այնչափ քահանաներ, մեզի հետ այն մեծ Կաթողիկէականաց մարմինը, որոնք որ երկու հարիւր միլիոնէն աւելի կ՚ելլեն։ Աս է ճշմարիտ եղբայրութիւնը, ճշմարիտ միութիւնը։ Հոս ստուգուած կ՚երեւայ, ինչ որ Յիսուս Քրիստոս այնչափ յանձնեց, որ ամէնքնիս ալ մէկ ըլլանք իրեն հետ. ինչ որ Ս. Պօղոս Առաքեալ այնչափ սաստիկ յորդորելով կը գրուցէր, որ ամէնքս ալ նոյն եղանակաւ զգանք, եւ բաժնուած չըլլանք մէջերնիս. ինչ որ Յիսուս Քրիստոս մահուան մօտ իր աստուածային Հօրմէն կը խնդրէր, որ իրեն հետ մէկ բան ըլլանք. ինչ որ մեծ գովեստով մեզի համար ըսաւ Ս. Պօղոս Առաքեալ, թէ միայն մէկ մարմին եւ մէկ հոգի ենք, թէ մէկ Աստուած միայն կայ, մէկ հաւատք, մէկ մկրտութիւն միայն, վասն զի ամենուն մէկ Հայր միայն կայ եւ մէկ Տէր։ Աս գեղեցիկ տեսարանին վրայ եթէ աւելցընենք ան որ վերն ըսինք, թէ նոյն ճշմարտութիւնները, զորոնք մենք հիմայ ունինք, արդէն Քրիստոսի ատենէն մինչեւ հիմայ ամէն Կաթողիկէ ազգերէ

պահուած ընդունուած էին, երբեք չէր կրնար բոլոր բաւականին զարմանալ ու շնորհակալ ըլլալ Աստուծոյ բարութեանը, որ զինք Ս. Կաթողիկէ Առաքելական Եկեղեցւոյ մէջ ծնանելու արժանի ըրած է, որն որ այնչափ ստոյգ ցոյցեր ունի ճշմարտութեան։

Մէկալ հետեւութիւնն, որ պէտք էր հանել, աս է, թէ ուրիշ Բողոքականները մոլորութեան մէջ են, վասն զի միշտ մէջերնին բաժնուած են։ Դուք աս իրենց բաժանմունքը չէք իմանար, վասնզի ուրիշ մէկը չէք ճանչնար՝ բայց եթէ այն գժբախտ եւ ողորմելի ուսուցիչները որ ձեզի հետ կը խօսին. բայց թէ ճանչնալու ըլլայիք իրենց ներքին անմիաբանութիւններն ու հակառակութիւնները, կ'անարգէիք ու կը զայրանայիք արդեօք անոնց ամենուն վրայ։ Միտ դրէք. Մարտինոս Լուտեր առաջինն եղաւ Բողոքականութիւնը տնկելու, բայց շուտ մը սաստիկ պատերազմ կրեց իր առաջին հետեւողներէն, որ զինք դատապարտեցին։ Զուինկլիոս, Կարլոստադիոս, եւ այլն, նոյնպէս դառնութեամբ իրեն դէմ ելան։ Գրեթէ նոյն ատեն գլուխ վերցուց Կալվին, եւ պատերազմ գրգռեց առջինին դէմ, բայց ինքն ալ իր հետեւողները հակառակորդ ունեցաւ, որ իրեն դէմ կը կռուէին։ Անոնցմէ ետքն եկաւ Հէնրիկոս Ը. աս ալ անմիաբանութիւն եւ բաժանում սերմանեց։ Այս մոլորութեան վարդապետներուն առաջնորդութե-



նէն ելան ուրիշները, եւ դարձեալ ուրիշները. եւ ամէն մէկը իրեն ախորժակին համաձայն նոր դաւանութիւն մը կը շինէր։ Անկից սկսան Բողոքականները այնչափ մէկ մէկու հակառակ աղանդներու բաժնուիլ. այնպէս որ մէկը կը դատապարտէր ինչ որ մէկալը ընդունած էր, մէկզմէկ կը նզովէին, իրարու փոխադարձ հերետիկոսի անուն կուտային, մէկզմէկ կը հալածէին, կը վիրաւորէին, մինչեւ նաեւ կ'այրէին եւ կը սպաննէին երբոր կրնային։ Ամէն մէկ նիւթերու վրայ զատ զատ վարդապետութիւններ ունէին, եւ ամէն տարի նորէն կը փոխէին։

Ինչ որ առջի տարիները կ'ընէին նոյնը հիմայ ալ կ'ընեն։ Եթէ Բողոքականաց երկիրները ճամբորդութիւն ըրած էք, տեսած պիտ'որ ըլլաք, որ անոնց մէջ կը ծնանին կրօնքները ինչպէս կը ծնանին սունկերը։ Ամէն թեթեւսոլիկ եւ հպարտ գլուխներ իրենք զիրենք վարդապետներու տեղ դրած են, եւ իրենցմէ զատ զամէնքն ալ աշակերտ կը համարին։ Դերձակներ, կօշկակարներ, մինչեւ նաեւ գձուձ կանայք նոր նոր կրօնքներ կը հնարեն։ Ուստի շատ անգամ կը պատահի, որ վեց կամ եօթը անձինքներէ բաղկացած ընտանիքի մը մէջ վեց կամ եօթը զանազան կրօնքներ կը գըտնուին։ Աս պատահմունքը Ամերիկայի Միաբանեալ նահանգներու Բողոքականաց մէջ շատ սովորական բան է։ Իսկ հիմայ եկէք աս Բաբելոնը, աս անկարգութիւնը, աս

խառնակութիւնը, աս մոլորութեանց չեղջակոյտը, իբրեւ Յիսուսի Քրիստոսի ճըշմարիտ կրօնքը մեզի ծախել կ'ուզեն։ Իրաւ որ անզգայ անպատկառ երես մը կ'ուզէ, այսպիսի հրաւէր մը ընելու։ Գիտէ՞ք ինչ պատասխան տուաւ իմաստուն մարդ մը, երբ անգամ՝ մը անզգամին մէկը զինք Բողոքական ըլլալու կը հրաւիրէր։ Ես Բողոքական կ'ըլլամ՝ ան ատենը, ըսաւ, երբոր դուք ինծի աղանդներուն ճիշդ թիւը կը յայտնէք, որոնց մէջ բաժնուած էք, եւ պատճառը կու տաք, որուն համար աւելի՛ ձեզի, քան թէ ձեր հակառակորդներուն պէտք եմ՝ հաւատալ։

## ԳԼՈՒԽ Է.

Բողոքականութիւնը սուտ է, վասնզի կը համարի, թէ ճշմարիտ Եկեղեցին կրնայ սխալիլ։

Ամենէն զօրաւոր պատճառը, որ զձեզ Ս. Կաթողիկէ Եկեղեցիէն հեռացընելու համար յառաջ կը բերեն Բողոքականները, միշտ աս է, թէ Ուղղափառ Եկեղեցին պակսած է, թէ Հաւատքը փոխած է, թէ ճշմարտութիւնը կորսընցուցած է, զորն որ Յիսուս Քրիստոս իրեն աւանդեր էր։ Բայց արդ՝ ես ձեզի արդէն ցուցուցի, թէ աներկբայելի բան է, որ հաւատքը կորսընցուցած չէ, վասն զի ամենեւին փոփոխութիւն մ'ըրած չէ. բայց հիմա ձեզի քիչ մ'ալ աւելին ըսեմ, որ եթէ անկարելի



ենթադրութեամբ ուզելու ալ ըլլար ճըշմարիտ վարդապետութիւններէն նոր զանգուած մը ձուլել, աս բանս չէր կրնար ընել։ Եւ եթէ ասիկայ ճշմարիտ է, ինչո՞ւ ուրեմն ճշմարիտ պիտ'որ չըլլայ, թէ Բողոքականները անհնարին մոլորութեան մէջ են, երբոր բոլորովին իրենց հիմը վերը յիշուած ենթադրութեան վրայ կը դնեն, թէ Եկեղեցին պակսեր նուազեր է։

Բայց՝ աղէկ միտ դրէք։ Ո՞վ հաստատեց Ս. Եկեղեցին. Յիսուս Քրիստոս. ասիկայ ամէնքն ալ կ'ընդունին։ Ո՞վ է Յիսուս Քրիստոս. Աստուած է։ Արդ՝ եթէ Յիսուս Քրիստոս խոստացած է, որ կ'ուզէ այնպէս կառավարել, այնպէս կարգաւորել, այնպիսի օգնութիւններով եւ այնպիսի ապահովութիւններով ամրացած եկեղեցի մը հիմնել, որ անկարելի է զանիկայ կործանելը կամ՝ տկարացընելը. եթէ Յիսուս Քրիստոս այսպէս խօսք տուած է, կրնա՞նք հաւատալ որ Եկեղեցին իրաւցընէ անպակասելի է։ Այո, անտարակոյս, թէ չէնք հասած այնպիսի յանդգնութեան եւ անզգամութեան՝ որ ըսենք թէ Յիսուս կամ՝ չգիտցաւ, կամ՝ չկրցաւ, կամ՝ չուզեց իր խօսքը բռնել, որ զարհուրելի հայհոյութիւն է։

Ուրեմն ամէն բան հոս կու գայ կը կենայ թէ արդեօք Յիսուս Քրիստոս ստուգիւ խօսք տուած է այսպիսի Եկեղեցի մը հիմնելու, որ չկարենայ սխալիլ՝ Աս բանս

ստուգելու համար շատ է կարդալ գիտնալը։ Յիսուս Քրիստոս յայտնի կը զրուցէ թէ Եկեղեցին այնպէս հաստատուած է, որ դժոխոց դռները երբեք չեն պիտ՛որ յաղթահարեն[1]։ Ասիկայ արեւելեան խօսելու եղանակ մըն է, որ շատ մեծ նշանակութիւն ունի, եւ համառօտ է սա խօսքիս, թէ ըսէր, որ կարող պիտ՛որ չըլլան Եկեղեցին ջնջել ոչ մարդկան ամէն ջանքը, ոչ խաբեբաներուն ամէն նենգութիւնը, ոչ հալածիչներուն ամէն բռնութիւնը, եւ ոչ իսկ սատանաներուն մոլեգնութիւնը։

Արդ Եկեղեցին, որուն կեանքը իր վարդապետութեան եւ իր ուսմանը վրայ է, եթէ սանց մէջ մոլորելու ըլլայ, բոլորովին ջնջուած՝ եւ իր ճշմարիտ ժառանգական ստացուածքը, եւ երկրիս վրայ իր մեծ նպատակը կորսնցուցած չ՚ըլլար։ Ուրեմն՝ եթէ Յիսուսի խօսքը ճշմարիտ է, Եկեղեցին ամենեւին եւ երբեք չկրնար մոլորիլ։ Աւելցուր նաեւ, որ Յիսուս նոյն Եկեղեցին ճշմարտութեան ճամբուն մէջ պահելու համար խոստացաւ Հոգւոյն Սրբոյ ներկայութիւնն ալ, եւ ասիկայ չէ թէ քիչ մը ատենուան համար, հապա մինչեւ աշխարհքիս կատարածը։ Ուրեմն այսպիսի ներկայութեամբ մինչեւ ի կատարած աշխարհի պիտ՛որ պահպանուի։

Բայց աւելից՝ Պօղոս Առաքեալ ճշմարտութեան սիւն եւ հաստատութիւն[2] չէ՞ կոչեր

[1] Մատթ. ԺԶ. 18։ [2] Ա. Տիմ. Գ. 15։



սա Եկեղեցին։ Ինչպէս ուրեմն ճշմարիտ կրնայ ըլլալ սա կոչումը, եթէ՝ ոչ միայն շինուածքին հաստատութիւն չէ, այլ նաեւ կործանման առիթ։ Աւելի եւս. Եկեղեցին հիմնուած չէ՞ Պետրոսի վրայ, որ պիտ՛որ հաստատէ իր եղբայրները հաւատոյ մէջ, որովհետեւ իր հաւատքը, Յիսուսի աղաչանքին համեմատ, երբեք պիտ՛որ չպակսի[1]։ Աւելցուր նաեւ՝ Յիսուսի Քրիստոսի հաստատուն խոստմունքը թէ, երբ որ երկրէն վեր բարձրանալու ըլլայ, այսինքն է խաչուելու ըլլայ, ամենքն ալ իրեն պիտ՛որ քաշէ[2]։ Արդ՝ կ՚ուզե՞ս որ Յիսուս քանի մը տարուան համար մարդիկ իրեն քաշած ըլլայ, եւ շուտ մը ետքը զամէնքն ալ թող տուած ըլլայ որ այնչափ դարերով երթան կորսուին։ Ասիկայ Յիսուսի պատիւ մըն է, որ եւ ոչ այնչափ կրցեր է ընել, որչափ բրաւ Մովսէս, որ այնչափ տարիներով պահեց Հրէից ժողովրդեանը (Սինակոգան)։

Ասիկայ Քրիստոսի խաչին բովանդակ զօրութիւնը ուրանալ չէ՞ մի։ Սատանան Քրիստոսէ աւելի զօրաւոր չէ՞ր երեւար, բոլոր Եկեղեցին այնպէս շուտով մը Անոր ձեռքէն յափշտակելովը, որն որ զանիկայ իրեն հարսնացուցեր էր, եւ իր արեանը եւ իրեն հետ միացուցեր էր։ Յիսուս տուաւ աշխարհքիս Առաքեալներ, Մարգարէներ, Աւետարանիչներ, Հովիւներ, Սրբոց հաստատութեանը, պաշտաման գործերուն, եւ Յի-

[1] Ղուկ. ԻԲ. 32։ [2] Յովհ. ԺԲ. 32։

տալու վերջապէս մարմնոյն շինութեանը համար, կ'ըսէ Ս. Պօղոս[1]: Արդ՝ Սուրբերուն թիւը ալ լցուե՞ր է, առատութեամբ գալէ վեր ամենքս ալ փրկութենէ դո՞ւրս ենք. որովհետեւ ճշմարիտ Եկեղեցիէն դուրս փրկութիւն չկայ:

Եւ ինչպէս ուրեմն, Աստուած՝ որ այնչափ խնամք ունի օդի թռչուններուն վրայ, այնչափ հոգաբարձութիւն ունեցաւ Հրէից ժողովրդեան, թո՛ղ տուաւ որ իր հարսը՝ Ս. Եկեղեցին՝ այնչափ դարերով անհաւատութեան մէջ փտտի: Ինչո՞ւ ուրեմն Սաղմոսի[2] մէջ Եկեղեցւոյ համար ըսել տուաւ, թէ Աստուած [illegible] է յաւիտեան [illegible], եւ թէ իր [illegible] է: Ինչո՞ւ ըսաւ թէ Ս. Եկեղեցին պիտի՛ որ ըլլայ [illegible]: Ուրեմն ամենեւին անտարակուսելի է որ Յիսուս Քրիստոս անսխալութիւն խոստացաւ իր Եկեղեցւոյն: Եւ եթէ խոստացաւ, անկարելի է որ պակսի. որովհետեւ երկինք ու երկիր պիտի՛ որ անցնին, բայց Աստուծոյ խօսքը պիտի՛ որ չանցնի: Ի՞նչ ըսելու է ուրեմն այն Բողոքականներուն համար, որոնք աս խոստմունքը չեն իմանար, եւ կ'ելլեն կը հաստատեն թէ բովանդակ Եկեղեցին մոլորութեան մէջ էր, եւ թէ իրենք կոչուեցան զանիկայ նորոգելու: Ահաւասիկ ըսելու բանը, թէ իրենք Եկեղեցին նորոգելու ձեւը զարնելով՝ Յիսուս Քրիստոսը խաբեբայի եւ նենգաւորի տեղ կը դնեն, իբրեւ թէ զմեզ խաբեց, երբոր խոստացաւ իր օգնութիւնը, եւ ետքէն՝ կամ չգիտցաւ, կամ չկրցաւ եւ կամ չուզեց խօսքը բռնել:

[1] Եփես. Դ. 12:

[2] Սաղմ. ՁԸ. ԽԷ:



Ո՛վ, որչափ՝ զզուելի հայհոյութիւն:

Բայց՝ պիտի՛ որ ըսէք, երբեմն զեղծմունքներ եւ գայթակղութիւններ չե՞ն տեսնուիր արդեօք Եկեղեցւոյ մէջ: Ի՛մ սիրելիքս, քիչ մը համբերեցէք: Այո՛, կը տեսնէք զեղծմունքներ եւ գայթակղութիւններ անանց վրայ, որոնք Եկեղեցւոյ կը վերաբերին, բայց ոչ երբեք վարդապետութեան մէջ, զորն որ Ս. Եկեղեցին կը սորվեցընէ: Արդ՝ հոս է Բողոքականներուն պատրանքը: Եթէ գոհ ըլլային միայն ըսելով, թէ Ուղղափառներուն մէջ շատ բաւականին կը գտնուին այնպիսիներ, որ խոստովանելով իրենց բարեգութ մօրը վարդապետութենէն, շատ անօրէնութիւններու մէջ կը գլորին. շատ ստոյգ բան մը կ'ըսէին, զորն որ մենք կաթողիկեայքս ալ արտասուալից աչքով կու լանք ու կ'ողբանք. բայց իրենց բանը աս չէ: Փոխանակ ասոր՝ կ'ըսեն թէ նոյն իսկ Եկեղեցին մեր մայրը օրինազանց եղած է, թէ ինքն իր որդւոցը մոլորութիւններ, աւելորդապաշտութիւններ, կռապաշտութիւններ սորվեցուցեր է, եւ աս է իրենց զարհուրելի ամբարշտութիւնը:

Ինչու որ՝ Ուղղափառ մը կրնայ ստուգիւ մոլորիլ, երբոր իր մօրը վարդապետութիւնէն կը հեռանայ. բայց մայրը չի կրնար մոլորիլ, երբոր իր որդիքը կ'ուսուցանէ։ Այսու ամենայնիւ՝ Ս. Եկեղեցին մոլորած հատուածները, ամէն բանէ յառաջ Յիսուսի նախատինք մըն է. ինչու որ նոյն բան է թէ ըսէին, որ Յիսուս իր հարսը Եկեղեցին երեսէ ձգեր է, որուն խոստացաւ ի յաւիտեան զինք երեսի վրայ չձգել. բաց աստի նաեւ Եկեղեցւոյ ալ թշնամանք մըն է, վասն զի ասով անհաւատարիմ եւ շնացեալ կը հրատարակուի, իբրեւ թէ զՅիսուս մերժեր արտաքսեր է, որպէս զի մոլորութեան եւ սատանայի որս ըլլայ։ Կրնա՞յ Ուղղափառ մը այսպէս մտածել։ Ո՛հ, ասոր ներհակ մենք կը մխիթարուինք այնպիսի Եկեղեցւոյ մը վերաբերած ըլլանուս վրայ, որն որ երբեք չի կրնար պակսիլ, եւ բոլոր սրտէ կը զզուինք այն մասնիկներէն, որոնք ամբարշտութեամբ Եկեղեցիէն բաժնուած ըլլալով, որպէս զի ծածկեն իրենց մասնութիւնը, բոլոր յանցանքը այն անկարգութիւններուն վրայ կը ձգեն, զորոնք զրպարտութեամբ մօրերնուն վրայ կը նետեն։



## ԳԼՈՒԽ Ը.

Ուղղափառ Եկեղեցին սուրբ է ըստ ամենայնի, վասնզի
կաթողիկէ է՝ ընդհանրական է։

Յիսուսէ հիմնուած ճշմարիտ Եկեղեցին ի հարկէ միշտ աշխարհքիս վրայ գտնուեցաւ եւ ի հարկէ այնպէս ալ միշտ երեւելի եղաւ որ ամէն ազգ եւ ժողովուրդ կարող էին նշմարել եւ միւսներէն զանազանել։ Հարկաւոր չէր որ ամէն ազգերն ալ միանգամայն մէկ առնուած մէջ Աւետարանին լոյսն ընդունէին, այլ յաջորդաբար իրենց պիտ'որ առնուէր, այնպէս որ քանի մը տեղուանք միշտ աւելի պայծառ պիտ'որ երեւար, որպէս զի տեսնուի իր մեծութիւնը եւ ճանչցուի որ մի եւ նոյն կրօնն էր, որ տարածուեցաւ բոլոր աշխարհքիս երեսը եւ ամէն ազգերէ ընդունուեցաւ։ Այսպէս պատշաճ էր որ ըլլար այն խոստմունքներուն համեմայն, զորոնք Ս. Եկեղեցին ընդունեցաւ իր աստուածային փեսայէն Յիսուսէ Քրիստոսէ։ Լսեցէք ասոնցմէ մէկ քանին ձեր մխիթարութեանը համար։ Յիսուս Քրիստոս իր Եկեղեցւոյն միջոցով, կ'ըսէ Սաղմոսերգուն, պիտ'որ տիրէ ծովէ մինչեւ ծով, գետերէն մինչեւ աշխարհքի ծայրը[1]։ Վերջին ատենները, այսինքն Եկեղեցւոյ ատենները, յայտնէ՝ պիտ'որ ըլլայ Աստուծոյ տանը լեռը ամէն լեռներու գլուխներուն վրայ։ Ամէնը պիտ'որ գան անոր հնազանդելու, ի-

[1] Սաղմ. ՀԱ. 8։

Ընկէն պիտ'որ քալեն մէջ իր ճամբաները[1]։ Ուրիշ տեղ մ'ալ՝ [illegible] [illegible] պիտ'որ գտնէ, կ'ըսէ. [illegible] մէկ [illegible] [illegible] պիտ'որ [illegible]. եւ [illegible] [illegible] [illegible] մէկ պիտ'որ ըլլայ. [illegible] [illegible] պիտ'որ հաննան որ [illegible] Աստուծոյ [illegible] [illegible] են[2]։ խնդրէ՛ ինծմէ. (կ'ըսէ Աստուած Սաղմոսերգուին բերնովը իր աստուածային Որդւոյն) եւ ես քեզի ժառանգութիւն [illegible] տամ հեթանոսները, եւ քու իշխանութեանդ՝ երկրի ծայրէն սահմանները[3]։

Տեսէք ուրեմն, թէ որքան հարկ էր Յիսուսի ճշմարիտ Եկեղեցւոյն բովանդակ տիեզերաց վրայ տարածուիլը. Բաց աստի՝ Յիսուս այս ամէն մարգարէութիւնները կը հաստատէ ըսելով՝ Թէ Աւետարանը պիտ'որ քարոզուի բոլոր ազգերուն[4]. Թէ իր անունովը ապաշխարութեան եւ մեղաց թողութեան քարոզութիւն պիտ'որ ըլլայ ամենայն ազգաց մէջ Երուսաղէմէն սկսելով[5]։ Ինծի վկայ պիտ'որ ըլլաք, ըսաւ Յիսուս Առաքեալներուն եւ իր աշակերտացը, Երուսաղէմ, բոլոր Հրէաստան, Սամարիայի մէջ եւ մինչեւ երկրի վերջի ծայրերը[6]։

Արդ՝ ըսէ ինծի անկեղծութեամբ. ո՞ր կրօնն եղաւ, որ այս ամէն՝ թէ հին եւ թէ նոր կտակարանին՝ մարգարէութիւնները կատարեց։ Յայտնի եւ պայծառ չ'ե՞րեւար,

[1] Եսայ. Բ. 2. 3։
[2] Եսայ. ԿԱ. 8. 9։
[3] Սաղմ. Բ. 8։
[4] Մարկ. ԺԳ. 10։
[5] Ղուկ. ԻԴ. 47։
[6] Գործ. Ա. 8։



որ միայն Կաթողիկէ, Առաքելական, Հռոմէական Եկեղեցին է։

Եթէ մտածելու ըլլաս Կաթողիկէ Եկեղեցւոյ այս գեղեցիկ գիւտը, կը տեսնես ահաւասիկ, որ ամէն ժամանակէ ժամանակ՝ դարէ դար հետզհետէ միշտ տարածեցաւ ամէն երկիրներու մէջ, որ աս աշխարհքիս երեսն են. Իր սկիզբները աշխարհակալեց բովանդակ Արեւելք. Եգիպտոս, Ասիա, Հնդկաստան, Յունաստան եւ Իտալիայի մեծ մասը, եւ կամաց կամաց Հռոմայ Քահանայապետները՝ Ս. Պետրոսի յաջորդները նուաճեցին աշխարհքիս մէկալ մասերը ամէն կողմ առաքեալներ խրկելով։

Առաջին դարու մէջ Ս. Կրեսկենտիոսի աշխատութեամբը դարձան Մոգունտացիք, Ս. Մատեռնոսի եւ Եւքարիոսի գործքովը Կողոնիացիք եւ Տրեւիրեցիք. Ս. Ղազարոսի ջանքովը Մարսիլեայի ժողովուրդները, եւ Ս. Իրենէոսի գործքովը Լիոնի, Վիեննայի եւ ուրիշ տեղերու ժողովուրդները։

Երկրորդ դարու մէջ Ս. Ղուկիոս խըրկուեցաւ Բրետոնիայի ժողովրդոց, Ս. Կիղիանոս Փրանկոնիացւոց, եւ Ս. Ռոբերտոս Պաւիերացւոց։

Երրորդ, չորրորդ, եւ հինգերորդ դարերուն մէջ Եկեղեցին տարածուեցաւ Ափրիկէի, Յունաստանի եւ Գաղղիայի մէջ. Վեցերորդ դարուն վերջերը Անգղիայի մէջ Ս. Օգոստինոսի ջանքովը. Ս. Բոնիֆակիոս եօթներորդ դարուն մէջ նոյնը տա-

բանեց Գերմանիայի շատ կողմերը։ Ս. Փիր-մինոս դարձուց Ալզատիայի եւ Սուեւիայի ժողովուրդները։ Ս. Ղուդգերոս ստորին Սաքսոնիա։ Հետեւեալ դարերուն մէջ այլեւայլ ժողովուրդները Եկեղեցւոյ մէջ մտան, մինչեւ այն վայրկեանը, որ Բողո-քականները դուրս ցատքեցին, ճշդիւ այն ատենը, երբոր Աստուած զերենք խայտա-ռակելու համար ցուցուց թէ որչափ զօ-րութիւն ունի Կաթողիկէ Եկեղեցին, որ Ս. Փրանկիսկոս Քսաւերի ձեռքովը տարա-ծեց Հաւատքը Հնդկաստանի մէջ, բացաւ Ճափոնի եւ Չինաց դռները, որ մինչեւ ան ատենը գոցուած էին, եւ հոն ծաղկեցուց ազնուական Քրիստոնէից հասարակու-թիւններ եւ նոյն Եկեղեցին մինչեւ այս մեր օրերը չիդադրիր Սիամի, Թոնքինի, Քոչինչինայի եւ Նոր Հոլանդիայի թագաւո-րութեանց եւ այնչափ այնչափ կղզինե-րու մէջ, որ Ովկիանոսին մէջ ծածկուած են, Աւետարանին սերմունքը ցանելու, որ-պէս զի աճին եւ պտղաբեր ըլլան անթիւ անհամար հոգիներուն վրայ։

Արդ՝ այս ամէն բաներէն յայտնի չե՞-րեւար, որ Հռոմէական Եկեղեցին է ճըշ-մարտապէս Կաթողիկէ, այսինքն է՝ տիե-զերական՝ եւ տարածուած ամենայն ազգաց մէջ. ասով կը կատարուին ամէն Մարգա-րէութիւնները, որոնք ճշմարիտ Եկեղեցւոյ վրայ եղած էին։

Ուրիշ կողմանէ՝ կրնայ ըսուիլ արդեօք



որ աս Մարգարէութիւնները Բողոքական-ներուն վրայ ալ կը յարմարին ու կը պատ-շաճին։ Ո՛չ ըսեմ. ինչու որ Նորոգութեան ժամանակէն յառաջ՝ այնչափ դարերու մէջ ո՞ւր էին աս Բողոքականները։

Հազար հինգ հարիւր տարի անցեր էր, եւ մէկը չէր գտնուած, որ իրենց վարդա-պետութիւնն ունենար, կամ՝ անոր խօսքն ըլլալը լսեր։ Ինք Լուտեր կը հաստատէր՝ թէ իր ժամանակը ոչ ոք կը ճանչնար այն մեծամեծ բաները, որ ինք սորվեցընելու վրայ էր։ Ուրեմն իրենց աղանդը Կաթո-ղիկէ չէ՛, վասնզի ամէն ժամանակներու վրայ չտարածիր։ Բայց՝ ծնանելէն ետքն ալ այս աղանդը Կաթողիկէ չկրնար ը-սուիլ, վասն զի ամէն տեղ չտարածիր. ինչու որ՝ թէպէտեւ այլեւայլ երկիրներու մէջ շատերը կը գտնուին, որոնք իրենց Բողոքական անունն առած են, բայց այն-չափ աղանդներուն մէջէն ո՞րն է որ կարող է պարծիլ Կաթողիկէ կամ տիեզերական ըլլալուն վրայ։ Գուցէ Անգղիականը՞ն է։ Բայց անիկայ եւ ոչ Անգղիայի մէջ տիե-զերական է, վասն զի բոլոր աշխարհքիս նկատմամբ մէկ փոքր մաս մըն է, եւ վասն զի՝ շատ հակառակ են Անմիաբանները, Ե-րիցականները, Քուէքըրները, Մեթոտիստ-ները, Ուեսլիէնները, Սկովտականները, եւ հարիւր ուրիշ աղանդներ, որ նոյնը կը դատապարտեն։ Գուցէ Լուտերականը՞ն է։ Բայց՝ թէ որ անիկայ Սուեւիայի եւ Տա-

նիմարքայի մէջ դեռ քանի մը հետեւողներ ունի, Գերմանիայի մեծ մասը նոյնը մնացած է, եւ հարիւրաւոր զանազան աղանդներ հնարած է։ Գուցէ կալվինականութիւնն է։ Բայց ասիկայ ալ, որուն գլխաւոր աթոռը Ժընեւրայի մէջ էր, հոն ապաստարել մը բացեր է ամէն տեսակ կարելի աղանդներու, այնպէս՝ որ այնչափ անթիւ կրօնքներէն զատ նոյն քաղքին մէջ ի պատիւ Սատանայի կրօնք մ՚ալ կը գտնուի։ Ամերիկայի Միացեալ Նահանգներու վրայ չեմ խօսիր ուր Բողոքականներն են, որովհետեւ հոն կարելի բան չէ համրել այն ամէն տեսակ տեսակ դաւանութիւնները որ կը տիրեն, ինչպէս կը խոստովանին նոյն իսկ Բողոքականները։

Ո՜վ, այսչափ աղանդներուն մէջէն ո՞րն է ուրեմն, որ կարող է պարծիլ իր կաթողիկէ կամ տիեզերական ըլլալուն վրայ։ Տասը գլուխ մէկ տեղ իրարու համաձայն չեն գտնուիր, այսու ամենայնիւ այնչափ հպարտ են, որ կաթողիկեայ կոչուիլ, եւ ջահ մը ըլլալ կը պահանջեն, բոլոր աշխարհք լուսաւորելու։

Երբեք կարդացե՞ր էք գորտին ու եզին առակը։ Անգամ մը գորտ մը սաստիկ նախանձէն կ՚այրէր կը տոչորէր, երբ կը տեսնէր աղուոր ու խոշոր եզի մը դաշտին վրայ արածուիլը, եւ կ՚ուզէր անոր մեծութեանը հաւասարիլ։ Ի՞նչ ըրաւ։ Սկսաւ ուռիլ այնպիսի սաստկութեամբ, մինչեւ



ի վախճանի ճաթեցաւ. աս եղաւ համած օգուտը։ Ասիկայ մերձեցուցէք դուք ալ այն Բողոքականներուն, որոնք աշխարհքիս չորս կողմը կը պտըտին իրենց աղանդը կաթողիկէ Եկեղեցի անուանելով։

Այսու ամենայնիւ իրենք ալ այնչափ համոզուած են ասոր իրենց սրտերնուն մէջ, թէ իրենք չեն ճշմարիտ կաթողիկեայները, որ եթէ Ս. Օգոստինոսի խորհրդածութեանը համեմատ, հերետիկոսաց երկրի մէջ երթաք հարցընելու ըլլաք թէ ո՞ւր է կաթողիկէ Եկեղեցին, իրենք առաջինները կ՚ըլլան ձեզի մեր Եկեղեցին եւ ոչ թէ իրենցը ցուցընելու։ Ի՞նչ նշան է ասիկայ։ Նշան է թէ ճշմարտութիւնը ինք իրմէ յաղթող է, նաեւ ի նախատինս անանց՝ որ նոյնը չեն ուզեր։

## ԳԼՈՒԽ Թ.

Բողոքականութիւնը սուրբ չէ [illegible] [illegible], որ հրաշքներու մէջ ճշմարիտ սրբութիւն չունի։

Յիսուսի Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցւոյն մէջ սրբութիւն պէտք է ըլլայ։ Արդ աս սրբութիւնը միայն Ուղղափառաց մէջն է եւ ոչ թէ Բողոքականաց. ուրեմն ճշմարիտ Եկեղեցին միայն մեզի հետ է։

Մենք ասով չենք ուզեր ըսել թէ ամէն կաթողիկեայները Սուրբ են, վասնզի նոյն ինքն Յիսուս Քրիստոս մեզի ազդ ըրաւ թէ՝ մեղաւորներ ալ պիտ՚որ ըլլան

եւ անոր համար ալ Սուրբ Խորհուրդները դրաւ, անոնց դարձին եւ արդարացուցման համար. կ՚ուզենք ըսել միայն՝ թէ Ճշմարիտ կրօնքը այնպէս բարի, այնպէս սուրբ, այնպէս մաքուր պէտք է ըլլայ, որ՝ ով որ անոր օրինադրութիւնները պահելու ըլլայ կարող ըլլայ սուրբ ըլլալ. եւ Ճշմարտապէս շատերն ալ սուրբ ըլլան Աստուծոյ օգնութեամբը եւ գործքով եւ հրաշքով ալ իրենց Սրբութիւնը ցուցընեն։

Արդ՝ այս ամենայն կատարելապէս ստուգուած է Ս. Կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ. Ըսէք ինծի. եթէ մէկը իրաւցընէ պահելու ըլլայ այն ամէն բան որ Ս. Եկեղեցին կ՚օրինադրէ, Սուրբ կ՚ըլլա՞յ թէ չէ. Եթէ պահելու ըլլայ բոլոր աստուածային պատուիրանները, բոլոր հրամանները, բոլոր օրէնքները որ նոյն Եկեղեցին առջեւնիս կը դնէ, եւ եթէ ի գործ դնելու ըլլայ ամէն միջոցները, որ ինք մեզի կը մատուցանէ աղօթքի եւ խորհուրդներու մէջ Սուրբ կ՚ըլլա՞յ թէ չէ.

Երբեք առջեւնիս կը դնէ՞ բան մը որ գէշ ըլլայ. Ս. Կաթողիկէ Եկեղեցին երբեք ձեզի խորհուրդ մը տուա՞ւ, համոզե՞ց, սորվեցո՞ւց չար բան մը. Քա՛ւ լիցի. եւ ոչ տուաւ. Մանաւանդ թէ՝ բոլորովին անոր հակառակ զմեզ միշտ խրատով, օրինակաւ, սպառնալիքներով, խոստմունքներով, եւ մինչեւ նաեւ մայրական պատիժներով չարէն հեռացուց. միշտ մեզի ամէն առաքինութիւն-



ներն, առիթներէ փախչիլ անդադար սորվեցուց, ինչպէս գիտէք։ Ո՛վ ինչչափ մաքուր է բովանդակ Կաթողիկէ օրէնքը։

Եւ իրօք ալ այս ամէն աստուածային վարդապետութիւններով որչափ մեծամեծ Սուրբեր չհանեց։

Թէ այսպէս ամէնքն ալ Եկեղեցւոյ ձայնին լսէին եւ հետեւէին, որպիսի՛ դիւցազնական սրբութեան կը հասնէին։ Բայց ո՞վ չիզարմանար այն քաջալերութեան վրայ, որով Կաթողիկէ Եկեղեցին այնչափ այնչափ անձինք զօրացուց, որոնք մեզի պէս տկար էին եւ Եկեղեցւոյ մէջ կարող եղան ի գործ դնել բարձրագոյն առաքինութիւններ՝ մինչեւ մեծամեծ Սուրբեր եղան։ Ամէն դարերու մէջ ալ ասոնք այնչափ բազմաթիւ եւ զարմանալի եղան, որ մինչեւ իրենց անունները միայն ժողվելը շատ հատորներու գործք է։ Ոմանք գիտցան ի գործ դնել խիստ ապաշխարութիւն մը հաղուագիւտ անմեղութեամբ մինչեւ արքունեաց մէջն ալ, ինչպէս Հենրիկոսները, Փերդինանդները, Լուդովիկոսները, Կունեկոնտաները, Քլոդիլտէները։ Ոմանք գիտցան իրենց թշնամեացը ներել, եւ ամենայն եղանակաւ բարերարել, ինչպէս Ս. Յովհ. Գուալբերտոս, Ս. Իգնատիոս, Ս. Փրանկիսկոս Սալեզացի, Ս. Ալփոնսոս Լիգուորի։ Շատերը երկնային քաջալերութեամբ անտանելի ճիգն ու աշխատութիւն յանձն առին ընկերաց օգնելու համար, ինչպէս Ս. Անտոն Պա-

տուացի, Ս. Բեռնարդինոս Սիենացի, Ս. Փրանկիսկոս Քսաւեր, Ս. Փրանկիսկոս Բորճիա, Ս. Վինկենտիոս տէ Փաւլի: Շատերն ալ մարդկային մարմնով երկնից հրեշտակներու պէս ապրեցան, ինչպէս (մեր մէջը Ս. Գրիգոր Նարեկացի) Ս. Ալոյիսիոս Կոնզագա, Ս. Ստանիսլաւոս, Սրբուհի Թերեզիա, Ս. Կատարինէ, մինչեւ Երանուհին Մարիամ Աննա Յիսուսի, որ մեր օրերը Երանելեաց կարգը գրուեցաւ: Երբեք չէի կրնար խօսքս լմնցընել, թէ ուզէի աչքի առջեւ բերել այն գեղեցիկ եւ դիւցազնական առաքինութիւնները, որ պայծառ լուսաւորութեամբ ծագեցան ամէն ժամանակ մինչեւ մեր օրերը Ս. Եկեղեցւոյ մէջ. բաւական է ձեզի գիտնալը, որ ասոնց մէջ թէ այր եւ թէ կանայք կը գտնուին, ամէն հասակէ, ամէն վիճակէ, ամէն աշխարհքներէ, եւ այնչափ բազմութեամբ, որ նուիրական ատեանները եւ ոչ իսկ իրենց սրբացուցման դատաստանական քննութեանը կը հանեն:

Ասկէ զատ. ասոնցմէ շատերը նաեւ հրաշքներ գործելու շնորհքն ալ ունէին. առիկայ անժխտելի առանձնաշնորհութիւն մըն է եւ հաստատութիւն մեր սուրբ Հաւատքին: Յիսուս Քրիստոս խոստացաւ եւ ըսաւ, որ իրեն վրայ հաւատք ունեցողները մեծամեծ նշաններ ու հրաշքներ պիտի որ գործեն, ինչպէս ինք գործած էր. մանաւանդ թէ անոնք իրմէ աւելի մեծ հրաշքներ պիտի որ գործեն[1]:

[1] Յովհ. ԺԴ. 10.



Արդ՝ հարցուցէք մէյմը ամէն Բողոքականներուն, երեք հարիւր տարիէ վեր, որ աշխարհքիս վրայ երեւցած են, իրենցմէ մէկը գոնէ ամենափոքր հրաշք մը գործած ունի՞, չէ՞մ ըսեր մեռեալ մը կենդանացուցեր է, հապա գոնէ չնչին ջերմ մը առողջացուցե՞ր է: Ամէնքն ալ կը ստիպուին ըսելու, ո՛չ: Բայց Ս. Կաթողիկէ Եկեղեցին նաեւ աս վերջին երեք դարերու մէջ գեղեցիկ շարք մը հրաշքներու ունեցաւ: Բողոքականները որ աստ չեն կրնար պարծիլ, յամառութեամբ մը մեր ճշմարիտ հրաշքներ ունենալը կ'ուրանան. սակայն այս իրենց յամառութիւնը ասոր միայն օգնեց, որ նոյն հրաշքները մեծագոյն եւս լուսաւորութեամբ պայծառացան: Ս. Փրանկիսկոս Քսաւեր մինակ այնպիսի մեծամեծ եւ նորանշան հրաշքներ գործեց այնպիսի եւ այնչափ բազմութեան առջեւ, որ նոյն իսկ Հոլանդիացի հերետիկոսները չկրցան ուրանալ: Ս. Փիլիպպոս Ների ասոնցմով լեցուց Հռոմ քաղաքը: Ս. Ալոյիսիոս Կոնզագա անթիւ բազմութեամբ գործեց բովանդակ Իտալիայի մէջ: Ս. Իսիդորոս բարի գիւղականը Սպանիայի մէջ մեծ հրաշագործ սուրբն եղաւ:

Աս հրաշքներէն շատերը քննուեցան մանր դատաստանական հարցափորձով, վաւերացան ամէն տեսակ վկաներէն, եւ ստուգուեցան նոյն իսկ Բողոքականներէն եւ այնչափ ստոյգ են, որ մնաց հանճար ունեցողը չիկրնար տարակուսիլ: Արդ՝ ինչո՞ւ ու-

րեմն Կաթոլիկէ Կրօնքէն դուրս երբեք հրաշքներ չեն տեսնուիր։ Ինչու՞ գոնէ Բողոքական աղանդներէն մէկը ատով չի պարծիր։ Գոնէ մէկ հրաշք մը միայն ունենային երեք հարիւր տարուան մէջ։ Բայց բանն ան է, որ մենք միայն այս պարծանքն ունինք. ինչու որ մենք միայն ունինք ճըշմարտութիւնը։ Ասիկայ գեղեցիկ ցոյց մը չէ՞ ի նպաստ Կաթոլիկէ Եկեղեցւոյ։

Ասոր ամենայնիւ դեռ շատ բան կայ աւելցնելու. այս ինքն է որչափ Կաթոլիկէ Եկեղեցին իր վարդապետութեան եւ իր օրինաց մէջ սուրբ է, այնչափ Բողոքականութիւնը թէ՛ մէկուն եւ թէ՛ մէկալին մէջ ամբարիշտ է։ Դուք որ միայն այն թշուառականները կը լսէք, որ ձեր առջեւը հովուի մորթի տակ ծածկուելով, Յիսուսի, եղբայրական սիրոյ եւ հաւատքի վրայ խօսիլ մը կը կեղծաւորին, ասիկայ դիւրաւ չէք տեսներ, եւ ոչ կ'իմանաք. բայց թէ գիտնայիք այն ամէն զարհուրելի վարդապետութիւնները, որ աշխարհքիս սորվեցուցին, ստուգիւ կը սոսկայիք։ Մէկ քանին յիշատակեմ ձեզի, մէկ դի ձգելով աւելի վերացեալները, որոնք թէպէտ աւելի ամբարշտական են, սակայն գուցէ դուք եւ ոչ կարող էք ըմբռնել։ Այս անզգամները կը սորվեցընեն որ Աստուած մարդկան անկարելի բաներ կը հրամայէ. թէ իրենց բաւական շնորհք չի տար նոյները կատարելու, եւ ասկէն զիրենք դժոխք կը խրկէ,



վասնզի այն հրամանները չկատարեցին. ասիկայ զարհուրելի հայհոյութիւն մըն է, վասնզի զԱստուած անգութ, անիրաւ եւ բռնաւոր կը ցուցընէ. ուր որ ինքն է հայր ողորմութեան եւ բարութեան, որն որ չի հրամայեր, բայց եթէ ան բանը որ կարելի է գործել իր աստուածային օգնութեամբը, որ մեզմէ չի պակսեցըներ։ Կը սորվեցընեն թէ փրկուելու համար բաւական է հաւատք ունենալը, եւ թէ հարկաւոր չեն բարի գործքերը, որով կ'եղծանեն մարդկան արդիւնաւորութիւնը, եւ ճամբայ կը բանան ամենայն անօրէնութիւն գործելու։ Մինչեւ ըսելու կը հասնին, (խցէ՛ ականջներդ որ չլսես այս հայհոյութիւնները) թէ Աստուած պատճառ է չարեաց եւ թէ Աստուած է, որ զմեզ կը մղէ մեղք գործելու. ասիկայ ուրիշ բան չէ, բայց եթէ զԱստուած անօրէնի տեղ դնել։ Կը սորվեցընեն նաեւ՝ թէ անկարելի է Աստուածային պատուիրանները պահելը, որն որ ամէն անօրէնութիւն վաւերացընել է. թէ պէտք չէ մեղքերնիս յայտնել խոստովանահօր, աս ալ մոլութեան ամէն սանձը կը վերցընէ։

Կ'անարգեն աղքատութեան, ողջախոհութեան եւ հնազանդութեան ուխտերը, որ կ'ընենք Աստուծոյ, եւ կը սորվեցընեն թէ այս ուխտերը պահելու բաներ չեն եւ այսպէս զմարդիկ որբապղծութեան կը ձգեն։ Կը պնդեն թէ մարդ իր բարի գործքերովը արդիւնք մը չի վաստըկիր եւ այսպէս

անտարբերութեան մէջ կ՚ընկղմեն զմարդ, եւ կը ջնջեն ամէն առաքինութիւն. չեն ուզեր լսել ոչ ծոմ, ոչ մահացուցում, ոչ ապաշխարութիւն, եւ այսպէս կը բորբոքեն մարմնոյ մոլութիւնները. եւ փորձութիւնները կ՚աճեցընեն։ Կ՚անարգեն Սրբոց պաշտօն ընծայելը եւ օգնութեան կանչելը, եւ այսպէս սուրբերէն կը վերցընեն իրենց պատիւը. մեզմէ անոնց օգնութիւնը։ Չեն ուզեր որ ննջեցելոց համար աղօթք ըլլայ. եւ զմեզ անգութ անողորմ կ՚ընեն խեղճ ննջեցելոց։ Կ՚ուզեն որ ամէնքն ալ ի հարկէ աշխարհք մնան, եւ այսպէս կ՚ոչնչացընեն Յիսուսի Քրիստոսի եւ այնչափ Սուրբերու օրինակը, որոնք որ առաքինութեան համար անկէն մնացին։ Անոնք մինակ մէկ քանիներն են այնչափ սոսկալի անօրէնութիւններէն, որ կը սորվեցընեն այնպիսի կրօնքի մը վարդապետները, եւ կ՚ուզեն որ դուք ալ նոյնը գրէք. ասիկայ միայն բաւական չէ՞ ցուցընելու ձեզի անոր սուտութիւնը եւ զձեզ զարհուրեցընելու։ Մի՛ յուսար անցմէ սրբութիւն, մի յուսար ոչ Առաքեալներ, ոչ Մարտիրոսներ, ոչ Խոստովանողներ, ոչ Կուսանք, ոչ ուրիշ Սուրբեր, վասնզի այսպիսի զարհուրելի վարդապետութիւններով Սրբութիւնն անկարելի է։

Ինծի պիտ՚որ ըսէք թէ այնչափ Բողոքականներ ալ կան, որոնք այսպիսի գէշութիւն չունին, մանաւանդ թէ բարի օրինակներ ալ կու տան, ողորմու-



թիւն կ՚ընեն, պարկեշտութեամբ կ՚ապրին, եւ չեն կրնար այն ամէն անօրէն սկզբունքներն ունենալ։ Այդ իմ սիրելիքս, ասիկայ ճշմարիտ է. բայց աղէկ միտ դրէք պատասխանւոյս որ պիտ՚որ տամ։ Բողոքականներուն մէջ կը գտնուին այնպիսիներ ալ, որոնք աղէկ կրթութիւն մ՚առած ըլլալով եւ աղէկ զգածման եւ բնական պարկեշտութեան ձիրքն ունենալով, համեստութեամբ կ՚ապրին եւ բարի գործք ալ կ՚ընեն. բայց կ՚ընեն ասոնք վասնզի շատ բաներու մէջ կ՚ուրանան իրենց կրօնքը, որպէս զի մերինին պէս ապրին։ Եթէ կուրօրէն հնազանդելու ըլլային իրենց վարդապետներուն, իրենք ալ ամբարիշտ անօրէն կ՚ըլլային. բայց որովհետեւ անոնց չեն հնազանդիր, եւ մանաւանդ թէ սրտի բարութեամբ՝ բնական ուղղութեամբ կ՚ընեն ինչ որ Կաթոլիկէ կրօնքը կը սորվեցընէ. աս պատճառաւ է որ իրենց մէջն ալ օրինակներ կը գտնուին։ Մէկ խօսքով՝ այս է մեր տարբերութիւնը սրբութեան նկատմամբ, որ մենք երբոր կատարելապէս կը պահենք մեր օրէնքը, Սուրբ կ՚ըլլանք. անոնք թէ որ իրենցը պահելու ըլլան ամբարիշտ կ՚ըլլան. եւ միայն անոր համար, որ իրենց կրօնքը չեն պահեր եւ մեր կրօնքին կը մերձենան, բարի կ՚ըլլան։ Եւ այս կը ցուցընէ որ մենք բարեբախտութեամբ ստացեր ենք Սրբութեան պարգեւը, որն որ մինակ Յիսուսի Քրիստոսի կրօնքին կը վերաբերի։

Բայց եւ ոչ ալ կը խօսիմ Բողոքականաց մէջ Հրաշքներու բոլորովին պակսելուն վրայ. վասն զի իրենք իրենցմէ կը պարտաւորին խոստովանիլ որ անոնցմէ ամենեւին զրկուած են, որն որ կ'ուզէ ըսել, թէ չունին այն ամենէն գեղեցիկ ցոյցը, զորն որ Յիսուս Քրիստոս տուաւ աշխարհքիս. իրենները ճանչնալու համար։ Չեմ խօսիր նմանապէս Լուտերի մէկ գեղեցիկ գործքին վրայ ալ, որ ուզեց կատարել, կենդանի մարդ մը գազաղի մէջ դնել տալով՝ որպէսզի յառնէ երբ ինք հրամայելու ըլլայ. իրեն մեծ խայտառակութեամբը իբուցընէ մեռած գտնուեցաւ մարդը, որ ատակի համար գործակից եղած էր այնպիսի որոգայթի հնարքի մը։ Աւստի այս ամէն բաներէն պէտք ենք հաստատուիլ միշտ Ս. Հաւատքներնուս սիրոյն մէջ, եւ օրէ օր աւելի եւս պէտք ենք կապուիլ Կաթողիկէ Եկեղեցւոյ հետ, որն որ միայն Սրբութեան եւ Հրաշքներու առանձնաշնորհութիւնն ունի։

## ԳԼՈՒԽ Ժ.

Սուրբ է Բողոքականութիւնը, վասն զի իր մէջ
[illegible] [illegible] [illegible] [illegible]։

Յիսուս Քրիստոս աշխարհք եկաւ, որպէսզի մարդիկ փրկութիւն ստանան, սակկայ անտարակուսելի է, եւ իր աստուածային քարոզութեամբն ալ երկնից ճամ-



բան շատ եղանակաւ դիւրացուց ու հարթեց. Հարթեց ընդարձակ ծանօթութեամբ հարկաւոր ճշմարտութիւններու, զորոնք աշխարհք բերաւ. Հարթեց վարդապետական ճոխութեամբ, զորն որ ի մշտնջենաւորս թողուց Եկեղեցւոյ մէջ, որով զամենքն ալ դիւրաւ փրկութեան կը հասցընէ. Հարթեց շնորհաց առատութեամբ, զորն որ շնորհեց մեզի ի նեցուկ. Հարթեց Ս. Խորհուրդներու միջոցով, որոնք ընդարձակ խողովակներու պէս առատութեամբ շնորհքները սրտերնուս մէջ կը հեղուն. Հարթեց իր օրինակներովը, որ զմեզ սաստիկ կը շարժեն. Հարթեց նոր առաքինութիւններով, զորոնք մարդկան ծանօթ ըրաւ։ Բայց տեսնուեցաւ որ Բողոքականները նախանձէր էին այնչափ բարիքներուն, որ Յիսուս մեզի հոգացեր էր։ Ի՞նչ ըրին ուրեմն։ Գոցեցին անթիւ անհամար հոգւոց առջեւը երկնից ճամբան։ Դուք չէք հաւատար դիւրաւ այսչափ անօրէնութեան. բայց միտ դրէք որ ես ձեզի յայտնի ցուցընեմ։

Մենք Ա[illegible] ճշմարտութիւնը առողջ ճանչնալու եւ նոյնն ի գործ դնելու համար ունինք ամենապարզ միջոց մը, որ ամենուն համար ալ դիւրին է, այսինքն է աստուածաշնորհ Հովիւներու կենդանի վարդապետութիւնը։ Յիսուս Քրիստոս հաստատեց եպիսկոպոսներ, եւ նոյները ծայրագոյն Քահանայապետին հրամանին

տակ դրաւ։ Եպիսկոպոսները կը խրկէին քահանաները, քահանաները մեզի կը սորվեցնէին ինչ որ պէտք էնք հաւատալ եւ պէտք էնք գործել։ Աս եղանակաւ գիտենք ճշդիւ թէ ո՛ր ճշմարտութիւններու եւ ո՛ր խորհուրդներու պէտք է հաւատալ, ո՛ր խորհուրդները եւ որպիսի պատրաստութեամբ պէտք է ընդունել, ո՛ր աղօթքները պէտք է ընել, որոնք են ամէն մէկուն պարտաւորութիւնները եւ ո՛ր մեղքերէն պէտք է զգուշանալ դժոխքի հրոյն մէջ չիյնալու համար։

Աս ամենապարզ միջոցը միանգամայն խիստ ապահով է. ինչու որ Ս. Եկեղեցին անսխալ ըլլալով եւ քահանաները Եպիսկոպոսներուն՝ Եպիսկոպոսներն ալ Ծայրագոյն Քահանայապետին հսկողութեան տակ ուրիշ բան չկրնալով սորվեցնել, բայց եթէ ինչ որ բոլոր Եկեղեցին կ՚ընդունի, պարզ հաւատացեալները ամենեւին ստոյգ են որ աս միջոցով ճշմարտութիւնն առած են։ Զարմանալի՜ գիւտ Աստուծոյ իմաստութեանը, որ ամէն բան իր դրած վախճաններուն համեմատ կը կարգաւորէ աստուածային պարզութեամբ եւ գործունէութեամբ։

Իսկ Բողոքականները աս գեղեցիկ կարգը տակնուվրայ ընելով պահանջեցին որ ամենեւին ո՛չ քահանաներուն, ո՛չ Եպիսկոպոսներուն, ո՛չ Քահանայապետին եւ ո՛չ բովանդակ Եկեղեցւոյ վճռութեանը հնազանդելու պարտաւորութիւն մ՚ըլլայ. իրբեւ սկիզբ հաստատեցին որ ամէն մարդ պէտք է ինք իրմէ Ս. Գիրքը կարդայ, ինք իրմէ իմանայ ու մեկնէ, ինք իրմէ հաւատալու ճշմարտութիւնները դուրս հանէ, ինք իրմէ գործքերուն մերձեցընէ եւ ամենեւին ուրիշին վարդապետութեանը չկապուի. աս բանս թէ որ ճշմարիտ ըլլար (ինչպէս որ Աստուծոյ շնորհքովը ճշմարիտ չէ), ան ատեն հարկ էր որ բովանդակ մարդկային ազգը յանձն առնուր դժոխք երթալ։

Եւ յայտնի է, ինչու որ ամէն բանէ յառաջ քրիստոնէից շատերը ինչպէս կարող պիտի՛ որ ըլլային Ս. Գիրքը կարդալ։ Առջի ատենները՝ տպագրութիւն գտնուելէն յառաջ, կարելի բան չէր եւ ոչ մէկ օրինակ մը ունենալ առանց մեծ ծախքի եւ մեծ մասը՝ չէին կրնար ալ հոգալ։ Բաց ասկից՝ շատերը եւ ոչ կարդալ գիտէին, ինչու որ ան ատենները չէ թէ միայն աղքատներն ու աշխատաւորները չէին գիտեր, հապա շատ անգամ՝ տէրերն ալ սորված չէին։ Հարկաւոր էր դարձեալ որ ամէնքն ալ այս պատուիրանը գիտնային, բայց ոչ ոք կը ճանչնար, եւ իրաւցընէ այն մեծ մեծ խօսող ուսուցիչները, որոնց բերնէն միշտ Ս. Գիրք Ս. Գիրք կը լսուի. կարո՞ղ են արդեօք ցուցընել մեզի Ս. Գրոց մէջէն գլուխ մը, ուր այսպիսի պատուիրան մը գտնուի։ Հիմակուան ատենս ալ գիւղականներու,

աշխատաւորներու․ արուեստաւորներու, կանանց մեծ մասը կարդալ չի գիտեր։ Հարկ էր ըսել թէ ինչպէս անցած ժամանակները, այսպէս ալ հիմայ ազգաններու մեծ մասը պէտք էր դաստիարակուիլ․ այսու ամենայնիւ Յիսուս Քրիստոս ասոր բոլորովին հակառակը սորվեցուց․ ըսելով՝ թէ երկնից սուրբ Արքայութիւնը գլխաւորաբար աղքատաց համար է։ Ուրեմն սուտ է Բողոքականութիւնը՝ որ իր սկզբունքովը զիրենք առանց յանցանաց Աստուծոյ արքայութենէն դուրս կը ձգէ։

Բայց գտնենք որ ամէնքն ալ կարդալ գիտնան, կամ թէ կարող ըլլան անոր տեղը լեցընել միտ դնելով Ս․ Գիրքը կարդացողի մը․ ուրեմն գոնէ ասով կրնային փրկութեան հասնիլ․ ոչ․ իմ սիրելիքս, եթէ ճշմարիտ էր Բողոքականներուն սկզբունքը՝ Քրիստոնէից մեծագոյն մասը եւ ոչ ասով փրկուելու միջոց մը կ'ունենար։ Ինչու որ ինչ օգուտ կ'ընէ մէկու մը Ս․ Գիրքը կարդալը, եթէ զանիկայ չի հասկընար կամ հակառակը կը հասկընայ։ Փոխանակ կեանք ստանալու՝ մահ կը ժառանգէ։ Եթէ ես հաւատալու ըլլամ բանի մը, իբր թէ Աստուած պատուիրեր է, երբոր Աստուած անոր տեղ ուրիշ բան մը կը պատուիրէ, եթէ իբրեւ ճշմարտութիւն հաւատալու ըլլամ այն բանը՝ որն որ միայն իմ երեւակայութիւնս է, ստուգիւ անիկայ ինծի թոյն չ'ը՞լլար առողջութիւն ըլլալու տեղ։



Արդ՝ հոս է միտ դնելու բանը։ Ս․ Գիրքը շատ մութ է եւ շատ դժուարին, եւ անիկայ այլեւայլ պատճառներու համար։ Հին Կտակարանը 40 դարերու պատմութիւնը կը պարունակէ, որուն գլխաւոր գործքերը սաստիկ համառօտութեամբ կը յիշատակէ, բովանդակը առակ եւ նմանութիւն մըն է Քրիստոնէութեան առեններուն, որուն որ դէպքերը քիչ շատ պայծառութեամբ Մարգարէները կը նշանակեն, խառնելով ան առենները պատահած գործքերուն հետ․ ուստի սաստիկ սրութիւն մտաց եւ խելամտութիւն կը պահանջէ աղէկ իմացուելու համար։ Պէտք է ունենալ ընդարձակ տեղեկութիւն պատմութեան, բանագատութեան, աշխարհագրութեան, հին լեզուներու, գլխաւորաբար ան առեններուն սովորութեանց, եւ մարդկան բարուց, այլազգ՝ կամ ամենեւին բան մը չ'իմացուիր եւ կամ հակառակը՝ ինչպէս շատ անգամ կը հանդիպի։ Իսկ Նոր Կտակարանը առջինին դժուարութիւններէն զատ, իրեն սեպհական մթութիւնն ունի, Խորհուրդներուն եւ ճշմարտութիւններուն խորունկութեանը համար, որոնց վրայ կը ճառէ․ ինչպէս են ամենասուրբ Երրորդութիւնը, Մարդեղութիւնը, Շնորհք, Խորհուրդներն եւ այլն։ Բաց աստի՝ այն աստուածային թղթերուն մէջ այս Խորհուրդները շատ անգամ հազիւ թէ ստուերագրուած են, վասն զի Ս․ Եկեղեցւոյ մէջ եղէն կեն-

ղանի բարբառով պիտի աւանդուէին, սոր համար մեծապէս դժուարին է իմանալը։ Ի՞նչ պիտ՚որ ընէր ուրեմն Քրիստոնէից մեծ մասը այս ամէն խորունկութիւնները ինք իրմէ իմանալու համար։ Ըս Բողոքականները կ՚ուզեն անոնց թիկանց վրայ այնպիսի ծանրութիւն մը դնել, զորն որ տանիլը բոլորովին անկարելի է։ Երիտասարդութեան ատեն շատերը տուգին չկրցան այսպիսի ուսմունքներու զբաղիլ իրենց վիճակին նայելով։ Հիմայ մէկը կին ու որդիք ունի, որոնք ուտելու հաց կ՚ուզեն, մէկալը առուտուրի ու գործքի մէջ է, մէկը արուեստ ունի՝ մէկալը զբաղմունք, եւ իրաւ է որ կարելի բան չէ Ս. Գրոց ուսմանը զբաղիլը։ Նաեւ կանայք՝ որ մարդկային ազգին մէկ կէսն են, անոնք ալ ի՞նչ պիտ՚որ ընէին։ Ի՞նչպէս պիտ՚որ ընէին խեղճ գեղացի կանայքը, ի՞նչպէս ծառայութեան մէջ եղող անձինքը, ի՞նչպէս ամուսնացեալները։ Իրաւցընէ՝ եթէ բաւական չէ որբազան հովիւներու հրահանգը, եթէ բաւական չէ Եկեղեցւոյ մէջ ճշմարտութիւնները իմանալը, եթէ հարկաւոր բան է ինք իրմէ Ս. Գիրքը իմանալը, ամէնքն ալ միանգամ եւ միշտ կրնան յաւիտենական փրկութենէ հրաժարիլ։ Արդ՝ ի՞նչ պղնդակութիւն, ի՞նչ անգթութիւն է ասիկայ։

Այսպիսի յայտնի պատճառներուն գիտէ՞ք ինչ պատասխան կու տան Բողոքա-



կանները։ Նախ՝ կը բարկանան որ մենք Ս. Գիրքը մթին եւ դժուարին է կը զրուցենք. ետքը կը հաստատեն թէ Հոգին Սուրբ զմեզ կը լուսաւորէ իմանալու այն բաները, որ հարկաւոր են փրկութեան։ Բայց՝ թէ որ բարկանալը բաւական է իրաւունք ունենալու համար, շա՜տ աղէկ. սակայն՝ որովհետեւ բաւական չէ, ո՛չ իրենց զայրանալը եւ ո՛չ իրենց պահանջմունքը Հոգւոյն սրբոյ նկատմամբ, ամենեւին չեն զօրեր դժուարութիւնները լուծելու։ Ինչու որ՝ թէ Ս. Գիրքը մթին է՝ ամենապայծառ բան է, եւ նոյնը կը հաստատէ Աստուածաշունչ Գիրքը։ Ս. Պետրոս Առաքեալ Պօղոս առաքելոյն թղթերուն վրայ խօսելով յայտնապէս կը զրուցէ թէ՝ անոնց մէջ իմանալու դժուարին բաներ կան. ուստի եւ ումանք, կ՚ըսէ, զանոնք կ՚եղծանեն՝ ինչպէս որ ուրիշ ամէն սուրբ գրուածները։ Նոյնը կը ցուցընեն նաեւ Եկեղեցւոյ Ս. Հարք, որոնք թէպէտեւ շատ գիտուն եւ լի էին Աստուծոյ լուսովը, այսու ամենայնիւ տասնեակ ուսմամբ աշխատեցան եւ մեծամեծ հատորներ գրեցին Ս. Գիրքը մեկնելու։ Բայց՝ աւելի եւս յայտնութեամբ կը ցուցընէ նոյն իսկ Բողոքականաց փորձը։ Ինչու որ՝ եթէ Ս. Գիրքը այնչափ պայծառ է, ինչպէս իրենք կը զրուցեն, ինչո՞ւ իրենք ալ այնչափ այնչափ մեկնութեան հատորներ գրեցին եւ ծախեցին, ինչո՞ւ այս մեկնութիւններուն մէջ մէկը չկայ իրենցմէ որ

մեկալին համաձայն ըլլայ։ Ինչո՞ւ այս մեկնութիւններու վրայ հիմնած դաւանութիւններնին այնչափ մէկմէկու աննման են։ Այնչափ աղանդներու բաժնուած են, որչափ գլուխներ կան, եւ ետքէն կ'ելլեն ու կ'ըսեն թէ Ս. Գիրքը յայտնի է։ Օր մ'ալ կարող են ջանալ զմեզ համոզցընել թէ էշերը կը թռչին, եթէ զմեզ այնչափ ապուշ գտնելու ըլլան, որ հաւատանք իրենց այլանդակ կարծիքներուն։

Աս հակառակախօսութիւնները որոնց մէջ կը գլորին, յայտնի եւ պայծառ կը ցուցընեն թէ ինչ ստուգութիւն ունի մեկալ բաժնին Հոգւոյ Սրբոյ ներկայութեանը վրայ։ Ինչու որ՝ թէ ամէնքն ալ այդ ներկայութիւնը ունենային, երբեք կարելի՞ էր որ իրար ալ մէկմէկու հակառակ խօսէին։ Հոգին Սուրբ ուրիշ բան չի կրնար սորվեցընել, բայց եթէ ճշմարտութիւն. եւ որովհետեւ ճշմարտութիւնը մի միայն է, այսպէս պէտք էր ամենուն ալ մի եւ նոյն բանը սորվեցընէր։ Ուրեմն երբ որ իրարու կը հակառակին, մէկզմէկ կը թշնամանեն, իրար կը խածնեն կը բզքտեն եւ փոխադարձ մէկզմէկ կը նզովեն, յայտնի է իրբեւ արեւին լոյսը թէ առասպել մըն է իրենց ըսած Հոգւոյն Սրբոյ այն ներկայութիւնը՝ որով կը պարծին։ Ասոր ուրեմն աս հաստատուն կը մնայ որ եթէ քրիստոնէական հաւատքը ուրիշ եղանակաւ չի կերպաւորուիր, բայց եթէ Աստուածա-



շունչի մեկնութեամբ, որ ամէն մէկ կարդացողը ինք իրեն կու տայ, ալ հաւատքը անկարելի է մարդկան մեծագոյն մասին։ Ուրեմն Յիսուս Քրիստոս՝ որ աշխարհք եկաւ ամէն մարդկան փրկութեան միջոցը շնորհելու, մարդկան մեծագոյն մասը դրաւ (զարհուրելի՜ հայհոյութիւն) այնպիսի միճակի մէջ որ կարող չըլլայ փրկութեան հասնիլ։

Թէ այս ասանկ է՝ կ'ուզեմ որ նոյն իսկ իրենց գործքերէն ու բաժններէն համոզուիք։ Աղէկ միտ դրէք։ Կը սորվեցընեն թէ ուրիշ բանի պէտք չէ հաւատալ, բայց եթէ Ս. Գրքին, եւ ինչ կ'ընեն այս վարդապետութիւնը սորվեցընելէն ետքը։ Իրենք առաջինը կ'ըլլան անոր դէմ ելլել, եւ Ս. Գրքին վարդապետութիւնը սորվեցընելու տեղ՝ իրենցը քարոզել։ Ոմանք կ'ելլեն, Ս. Գիրք կը կարդան եւ ետքէն կը սկսին մեկնել։ Կ'ուզեն որ դուն ալ նոյնը այսպէս եւ այնպէս իմանաս եւ չընդունիս այն մեկնութիւնը, որ կու տայ Ս. Կաթողիկէ Եկեղեցին եւ հաւատաս որ մինակ իրենց մեկնութիւնն է աղէկը։ Արդ՝ ինչ է այս ամենայն։ Եթէ Ս. Գիրքը այնպէս յայտնի է, ինչո՞ւ կը մեկնեն։ Եթէ Հոգին Սուրբ ամէն ընթերցողներուն ալ ներկայ է, ինչո՞ւ կ'ելլեն եւ Հոգւոյն Սրբոյ գործքը՝ Ս. Գիրքը կ'աւրեն։ Եթէ պէտք չէ անսալ եւ ոչ Եկեղեցւոյ ձայնութեանը, ինչո՞ւ կը պահանջեն որ իրենց խօսքին անսացուի։

Գիտէ՞ք ինչ է ։ իրենք ալ կը տեսնեն որ միայն Ս. Գրքով բանը չի լմննար ։ Հաւատացեալները երբեք չեն կրնար գիտնալ թէ ինչ պէտք է հաւատան, ինչ պէտք է գործեն, ուստի ստիպուած են եթէ կ՚ուզեն աղանդնին ոտքի վրայ պահել, կենդանի խօսքով բան մը աւելցընել ։ Եւ ասիկայ ամենայն պայծառութեամբ կը ցուցընէ, ինչպէս զրուցեցինք, թէ միայն Ս. Գրքով հաւատք անկարելի է ։

Բայց որովհետեւ մէյմը աւելցընելու սկսեր են, մեզի շատ հաճոյական էր մեր քննասիրութիւնը յագեցընելու համար, եթէ քիչ մը յայտնէին մեզի, ինչ անունով եւ ինչ ճոխութեամբ կը աւելցընեն ։ Այս բանս ճանչնալը՝ ամենեւին մի տարակուսիք, ձեզի շինութիւն պիտ՚որ ըլլայ ։ Այս Բողոքականները Ս. Եկեղեցւոյ ուսուցանելը մերժեցին սա պատճառանքով, որ մարդիկներէ բաղկացեալ է եւ մարդիկ միշտ մոլորական են. հապա իրենք ինչպէս կ՚ուսուցանեն, իրենք ալ մարդիկ չե՞ն. մոլորական չե՞ն. ի՞նչ առանձնաշնորհութիւն ունեցեր են ։ Գուցէ գիտութի՞ւն, հմտութի՞ւն, քննադատութի՞ւն, լեզուաց ծանօթութի՞ւն, պատմութի՞ւն, ժամանակագրութի՞ւն, հնութեանց տեղեկութի՞ւն ունի՞ն ։ Թողունք ան, որ այս ամենայն Եկեղեցւոյ մէջ մէկու մը ճոխութիւն չի տար. Թողունք նաեւ որ այս Ս. Գիրքը տարածողները իրենց գիտութիւնը եթէ սրճա-



նոցներու ։ գինետուններու ։ պանդոկներու, Պէյ-օղլուի— մէջ ստացած չեն, չի գիտցուիր ուստի՞ խելքերնուն մէջ մնած է, դնենք որ գիտուն եւ իմաստուն ալ ըլլան, սակայն թո՛ղ շնորհք ընեն եւ մեզի ըսեն, թէ արդեօք բոլոր գիտութիւնը գացեր իրենց մէջ ապաւիներ է, այնպէս որ ամենեւին փշրանքն ալ մնացած չըլլայ Քահանաներուն, Եպիսկոպոսներուն, Առաջնորդներուն եւ Ուղղափառ ուսուցիչներուն ։ Գուցէ՞ օրինաւոր իշխանութենէ մը յանձնուած է իրենց առաքելութիւնը ։ Ա՛յո ։ ունին այն առաքելութիւնը, զորն որ ամէն մէկերնին իրենք իրենցմէ առած են, իրենք զիրենք Ս. Գրոց տարածող եւ ոմանք մեկնիչ ըրած են, մինչեւ ոմանք ալ (ծիծաղդ բռնէ՛ թէ կրնաս) իրենք իրենցմէ գլուխնին թագ դրեր եպիսկոպոսներ եղեր են ։ Գուցէ թէ վարուց սրբութի՞ւն ունին, որ զիրենք նշանաւոր կ՚ընէ ։ Թող ուրեմն քանի մը հրաշքներ գործեն իրենց առաքելութիւնը մեզի ցուցընելու համար, որպէսզի մենք ալ իրենց հաւատանք ։

Լսած եմ՝ որ ոմանք այսպիսի առիթներու մէջ կ՚ըսեն թէ անոր համար կ՚ուսուցանեն վասն զի Հոգին Սուրբ խոնարհներուն եւ անարգներուն յայտնուելով, իրենք .... բայց չէին կրնար պարկեշտութեան համար խօսքերնին լմնցընել, կ՚ուզեն ըսել թէ իրաւցընէ Հոգւոյն Սրբոյ ընտրեալներն են, վասնզի խոնարհ եւ

միամիտ էին։ Գոհութիւն Աստուծոյ որ Աւետարաններու վրայ քիչ մը խոնարհութիւն գտնուիլը միշտ աղէկ է եղեր․ միայն թէ քանի մը խորհրդածութիւններ ունինք ընելու այս խոնարհներուն եւ հլուներուն, այսինքն է թէ ամէն անգամուն որ Աստուած միամիտներուն յայտնուեր է, միշտ եւ տեղ տեղ պատուէր ու յորդոր տուեր է, որ իրենց հպարտութիւնը ճնշեն եւ հպատակին ամէն բանի մէջ Ս. Եկեղեցւոյ պաշտօնեաներուն, որ իրենք զիրենք մէկէ մը վեր չբռնեն, մանաւանդ թէ ամենէն ալ նուաստ համարին։ Աստ ներհակ այս երեկուան նորաբոյս խոնարհներն ու հլուները, խոնարհութեան համար կը պարծին, թէ իրենք միայն Ս. Գիրքը կ'իմանան, խոնարհութեան համար նոյնը կը զլանան Ս. Եկեղեցւոյ, խոնարհութեան համար ամէն սրբազան Հայրերը խաբուած կը կարծեն, խոնարհութեան համար՝ կ'ուրանան Ս. Քահանայապետներուն մեկնութիւնը, խոնարհութեան համար՝ իրենց սեպհական դատաստանը վեր կը դնեն այնչափ միլիոնաւոր Ուղղափառներուն դատաստանէն, այնչափ մեծամեծ Սուրբերուն դատաստանէն, որոնք աշխարհքս հրաշքներով լեցուցին, վայրենի եւ բարբարոս երկիրները դարձուցին, վերջապէս իրենց արեամբը հաւատքնին կնքելով։ Ահաւասիկ աս մի միայն խորհրդածութիւնն է որ կ'ընենք։ Ուստի՝ կրնան իմանալ որ եթէ



յօժար չենք իրենց հաւատալու, ասոր բանաւոր պատճառներն ունինք։

Բայց մեր ճամբան գտանք այսչափ շեղելէն ետքը։ Փրկութիւն ստանալու համար ճշմարիտ Եկեղեցւոյ վերաբերիլը, եւ ճշմարիտ հաւատքն ունենալը հարկաւոր է։ Ասիկայ անտարակուսելի է նաեւ Բողոքականներուն, որոնք ուրիշ բանի համար չեն ուզեր զձեզ իրենց աղանդին քաշել, եթէ ոչ այս պատճառաւ որ ձեզի ճշմարիտ հաւատքը կու տան եւ զձեզ ճշմարիտ Եկեղեցւոյ կը յարեն։ Արդ գիտնալ որ եթէ ճշմարիտ ըլլար ինչ որ ասոնք կը սորվեցընեն, թէ ամէն մարդ ինք իրմէ Ս. Գրքին մէջ պէտք է փնտռէ հաւատալու բաները, բոլորովին անկարելի կ'ըլլար փրկութիւնը, ինչու որ անկարելի է՝ այս սկզբունքով հաւատոյ հասնիլը եւ Եկեղեցին նորէն գտնելը։

Միտ դրէք այս երկու գեղեցիկ պատճառներուս, որոնք այնպէս պայծառ են՝ որ քանի մը համեստ Բողոքականներու բաւական եղան աչքերնին ճշմարտութեան բանալու, երբոր ասոնց ծանրութիւնը աղէկ կշռեցին։ Հաւատքը՝ հաւատք ըլլալու համար հարկ է որ բոլորովին աստոյգ ըլլայ, ապա թէ ոչ կ'ըլլայ կարծիք մը, տեսութեան եղանակ մը, հաւանականութիւն մը եւ ոչ աւելի։ Արդ՝ ով որ ինք իրեն հաւատք մը կը շինէ միայն Ս. Գիրքը կարդալով եւ առանց անսխալ մեկնութեան մը

որ իրենն նոյնը յայտնէ, անկարելի՛ է որ երբեք այնպիսի ստուգութիւն մ՚ունենայ։ Ինչու որ՝ ինչպէս կրնայ երբեք ապահով ըլլալ որ Ս. Գրքին ստոյգ իմաստը գտած է։ Հարկ է որ, այնչափ աւելի վրան տարակուսի, որչափ կը տեսնէ թէ ուրիշները, որոնք իրեն չափ եւ իրմէ աւելի գիտեն եւ կ՚ըսեն, թէ Հոգւոյն Սրբոյ նոյն ներկայութիւնն ունին ինչպէս ինքը. եւ թէ նոյնչափ միամտութիւն ունին ճշմարիտը խնդրելու. Ս. Գիրքը ամենեւին տարբեր եղանակաւ կը մեկնեն. պէտք է ուրեմն որ գոնէ տարակուսի, չըլլայ թէ մոլորութեան մէջ ըլլայ։ Լուտերականը կը տեսնէ որ Կալվինականը մէկ եղանակաւ կը մեկնէ, իսկ Անգղիականը ուրիշ եղանակաւ. Սոկինեանը երրորդ. Մորմոնեանը չորրորդ եղանակաւ, աւելի տարբեր կը մեկնէ Քուեքերը, Սուէտենպորկեանը, Կրկնակնիքը, Միանձնականը, եւ այլն եւ այլն։ Այսչափ մեկնութիւններու մէջ, ո՛վ կրնայ այնչափ ինք զինքը հաւնիլ որ կարծէ թէ ինք միայն այս առանձնաշնորհութիւնն ունեցած ըլլայ ճշմարտութեան նպատակին հասած ըլլալու։ Եթէ այն աստիճանի հասած չէ, որ ինք զինքը անսխալ համարի բոլոր Եկեղեցւոյն անսխալութիւնը ուրանալէն ետքը, մինչ կասկածելու պէտք է ստիպուի։ Արդ՝ ով որ կը կասկածի ճշմարտութեան մը վրայ, չի կրնար անոր վրայ հաւատք ունենալ, որն որ ստուգու-



թիւն մըն է որ ամէն կասկած կը փարատէ։ Ասկից կը հետեւի որ իրաւցընէ ստոյգ է, թէ Բողոքականութիւնը երկնից ճամբան իր հետեւողներուն գոցած է, վասն զի անոնց սրտէն սուրբ հաւատքը խլեր է։

Բայց ասկից՝ փրկութիւն ստանալու համար, ճշմարիտ Եկեղեցւոյ վերաբերիլը հարկաւոր է, որ Նոյին շինած տապանին կը նմանի, կ՚ըսեն Ս. Հարք. եւ անկէ դուրս ով որ ալէկոծութենէ կ՚ազատի։ Եւ Հոգին Սուրբ մեզի կ՚ազդէ, թէ ով որ Եկեղեցւոյն չի լսեր, պէտք է իբրեւ հեթանոս եւ մաքսաւոր համարի, որն որ ըսել կ՚ուզէ թէ այնպիսին փրկութեան ճամբէն դուրս է։ Արդ՝ իմ սիրելիքս, եթէ ճշմարիտ է Բողոքականներուն սկիզբը թէ՝ ամէն մարդ պարտաւոր է ինք իրեն հաւատք մը շինել Ս. Գիրքը կարդալով, ան ատեն անկարելի է մեզի ամէննուս ալ ճշմարիտ Եկեղեցւոյ վերաբերիլը, եւ այսպէս անկարելի է նաեւ մեր փրկուիլը։ Այս է երկրորդ զօրաւոր պատճառը, որ ձեզի կ՚առաջարկէի։

Բայց պիտ՚որ ըսէք. ինչո՞ւ Բողոքականները չեն կրնար վերաբերիլ Ս. Եկեղեցւոյ։ Երկու պատճառի համար. նախ՝ Եկեղեցի չեն կրնար ունենալ, երկրորդ՝ թէեւ իրենց մէջ ճշմարիտ եկեղեցի ալ ըլլայ, իրենք երբեք չեն կրնար նոյնը ճանչնալ։ Եւ յայտնի է որ չեն կրնար զանիկայ ունենալ. ինչու որ՝ Եկեղեցին ի՞նչ կը նշանակէ։ Մեր նպատակին նայելով՝ կը նշա-

նակէ մի եւ նոյն հաւատքը դաւանողներու բազմութիւն մը։ Արդ՝ ինչպէս կ՚ուզես որ գտնուի մի եւ նոյն հաւատքը դաւանողներու բազմութիւն մը անոնց մէջ, որոնք իրենց ուզածին պէս Ս. Գիրքը կը մեկնեն. Որպէս զի կարելի ըլլայ մի եւ նոյն բանը մտածողներու բազմութիւն մը մէկտեղ գալ, հարկ է որ այնպիսիներու բազմութիւն մ՚ըլլայ որ նոյն եղանակաւ Ս. Գիրքը կը մեկնեն։ Արդ՝ ասիկայ շատ կարելի, մանաւանդ թէ խիստ դիւրին բան է մեզի Ուղղափառաց համար, վասն զի ամէնքնիս ալ նոյնը կը մեկնենք ինչպէս Ս. Կաթողիկէ Եկեղեցին կը մեկնէ. բայց Բողոքականաց մէջ պէտք է ի հարկէ որչափ գլուխ՝ այնչափ կարծիքներ ըլլալ։ Նաեւ իրօք ալ ստուգիւ այսպէս է, վասն զի եւ ոչ մէկը կ՚ուզէ մէկալին խօսքին անսալ, եւ ասիկայ բարձրաձայն կը քարոզեն եւ կը պարծին։ Ո՞ւր է ուրեմն իրենց մէջ Եկեղեցին, այս ինքն է՝ բազմութիւն մը որ մի եւ նոյն հաւատքը խոստովանի։ Չկայ որչափ ալ փնտռեն՝ չկայ։ Ըսէք՝ կարելի բան է աղէկ ցորեն ունենալ՝ ուր ամենեւին ցորեն չկայ։ Աղէկ գինի ունենալ՝ ուր ամենեւին գինի չկայ։ Խե՜ղճ Բողոքականներ, որ բաժնուելով Կաթողիկէ Եկեղեցիէն՝ բոլորովին որբ մնացեր են եւ առանց մօր։ Գոնէ աս աղէկ զգածմունքն ունենային, որ եթէ իրենք չեն ուզեր Եկեղեցւոյ գիրկը դառնալ, ուրիշները անկից չխլեն։



Բայց ի՞նչ ըրին։ Ճշմարիտ Եկեղեցի մը չունենալով՝ հարիւրաւորներ շինեցին իրենց ձեռքով, եւ ամէն մէկը կը պարծի թէ իրենք ճշգիւ Յիսուսէ հաստատուած եկեղեցին է։ Այսպիսի եկեղեցիներու բազմութիւն մը շինեցին Անգղիայի, Գերմանիայի, Պրուսիայի, Ամերիկայի միաբանեալ նահանգներու մէջ, եւ մէկը մէկալէն տարբեր. մանաւանդ թէ նորէն ձեւելու վրայ են։ Բայց ի՞նչ։ Գիտենք թէ այնչափ սուտերուն մէջ աղէկ մ՚ալ գտնուի (իրաւամբ ըսի գտնէ՞ր Ֆէ, ինչու որ ստուգիւ ամէնքն ալ սուտ են), ի՞նչ պէտք է ընեն Բողոքականները՝ որ կարող ըլլան զանիկայ ճանչնալ եւ մէկալներուն մէջէն ընտրել։ Մենք Կաթողիկեայքս հրաշքներ, մարգարէութիւններ, մարտիրոսներ, սրբութիւն, առաքելականութիւն, կաթողիկէութիւն եւ այնչափ ուրիշ նշաններ ունինք, որ մեզի կ՚աղդեն ճշմարիտ Եկեղեցին ընտրելու անոնց ամենուն մէջէն, որ նոյնպիսի կերպարանք մը իրենց կը սեպհականեն։ Բայց Բողոքականները՝ որոնց եկեղեցիներուն այս ամէն նշանները յայտնապէս կը պակսին, ի՞նչ եղանակաւ կրնան ճանչնալ որ իրենցը ստուգիւ ճշմարիտն է։ Կարելի չէ։ Նաեւ եթէ չեն կրնար ճանչնալ, ի՞նչ պիտ՚որ ընեն փրկուելու համար։ Յիսուս իր պարգեւները, իր ներկայութիւնը եւ փրկութիւն չէ թէ որպիսի եւ իցէ եկեղեցւոյ խոստացաւ, այլ միայն իր Եկեղեցւոյն. այն մէկալները

ինք չի ճանչնար մանաւանդ թէ կը գարշի։ Ի՞նչ պիտ'որ ըլլան ուրեմն այն դժբախտները, որ անոնց հաղորդակից են։ Ահաւասիկ թշուառական վիճակը՝ ուր զձեզ ալ կը բաղձան ձգել։ Յիսուս իր ողորմութեամբը շնորհեց ձեզի Ս. Հաւատքի պարգեւը, որ ճշմարիտ փրկութեան արմատն է, անկէց զձեզ իբրեւ բախտաւոր անկեր Ս. Եկեղեցւոյ գեղեցիկ պարտէզին մէջ, որպէս զի կարող ըլլաք աճիլ եւ պտղաբեր ըլլալ ի յաւիտենական կեանս, եւ այս ողորմելիները կը ջանան սրտերնուդ մէջէն հաւատքը վերցընել, զձեզ Ս. Եկեղեցւոյ ծոցէն մէկդի նետել եւ դատապարտութեան ճամբուն մէջ դնել։ Ուրեմն Յիսուսի սիրոյն համար, որ ձեզի այսպիսի մեծ շնորհք ըրած է, երկնից արքայութեան ցանկութեանը համար որ ունիք, եւ մշտնջենաւոր դժոխքէն փախչելու համար, զգուշացէք ձեր սիրելի հաւատքին, սերտիւ կապուեցէք ձեր Մօրը Եկեղեցւոյ հետ եւ գարշեցէք զգուշացէք անոնցմէ որ այնչափ խարէութեամբ կը ջանան հոգինիդ կործանել։



# ԳԼՈՒԽ ԺԸ.

Բողոքականութիւնը սուտ կը յայտնէ, [illegible]

Որչափ քիչ ալ ճանչնայ մէկը Քրիստոնէական կրօնքը, շատ աղէկ գիտէ թէ Յիսուս Քրիստոս զանիկայ հիմնած է Գլխոյ մը վրայ, որպէս զի միշտ անկից կառավարուի։ Լսեցէք Յիսուսի Քրիստոսի յաւիտենական ճշմարտութեան եւ Ս. Եկեղեցւոյ հիմնադրին գեղեցիկ խօսքերը։ Գարձաւ եւ ըսաւ Պետրոսի. Դուն (Պետրոս) վէմ ես, եւ ես ալ քեզի կ'ըսեմ՝ այս վէմին՝ վրայ պիտ'որ շինեմ իմ Եկեղեցիս, եւ դժոխոց դռները չըկրնան պիտ'որ յաղթահարեն. քեզի պիտ'որ տամ Երկնից Արքայութեան բանալիները. եւ ինչ որ կապես որ կապուած ըլլայ երկրի վրայ, կապուած ըլլայ երկինքն ալ, եւ ինչ որ երկրի վրայ արձակես, արձակուած ըլլայ երկինքն ալ[1]։ Ըսէք կարելի՞ էր արդեօք աւելի բացայայտ խօսիլ։ Յիսուս Քրիստոս յայտնի կը ցուցնէ թէ՝ իր Եկեղեցին Պետրոսի վրայ պիտ'որ շինէ. ուրեմն Պետրոսն է Գլուխը. կ'ըսէ թէ անոր պիտ'որ տայ բանալիները ճշդիւ այնպէս՝ ինչպէս իշխանի մը կը տրուին, երբոր քաղաք մը կը մտնէ ի նշան իր տէրութեանը, ուրեմն ինքն է Իշխան Եկեղեցւոյ. անոր կու տայ լիուլի իշխանութիւն կապելու եւ արձակելու ամէն բան, ուրեմն անոր

[1] Մատթ. ԺԶ. 18.

իշխանութիւնը կը տարածի ամէն հաւատացելոց վրայ։ Այս ամենայն այնչափ պայծառ է՝ որ հարկ է աչք չունենալ չտեսնելու համար։ Նոյնքէն այս Գլխաւորութիւնը Ս. Պետրոսի վրայ հաստատելու համար Յիսուս իրեն քսաւ յայտնապէս որ Նախ արածէ իր գառնուկները, որ են Հաւատացեալք, ետքը Նաեւ իր ոչխարները¹, որոնք են Հովիւները, այսինքն է՝ միւս Եպիսկոպոսները եւ Քահանաները։ Պետրոսի կ՚ըսէ բացայայտ. Ինք իրեն համար աղօթեց, որպէս զի իր հաւատքը չպակսի, որպէս զի ինք հաստատէ բոլոր իր եղբայրները², Զինքը Ս. Աւետարանին մէջ միշտ առաջին կոչել տալու, որպէս զի իր գլխաւորութիւնը Նշանակուի։

Եկեղեցւոյն ամէն մեծամեծ Սուրբերը միշտ այսպէս իմացան այս ամենապայծառ խօսքերը, ասոր համար ալ միշտ զՍուրբ Պետրոս իբրեւ Գլուխ Եկեղեցւոյ, իբրեւ Փոխանորդ Յիսուսի Քրիստոսի ընդունեցան։ Ուրիշ կերպ ալ չէր կրնար ըլլալ։ Ի՞նչպէս կարելի էր առանց Գլխոյ պահպանել այնչափ ընդարձակ Եկեղեցի մը, որ բովանդակ աշխարհքիս երեսը կը տարածի։ Ընտանիք մը առանց գլխոյ չի կրնար կարգաւորուիլ, ապա որչափ առաւել քաղաք մը. Թագաւորութիւն մը, այնչափ Թագաւորութիւններ որ Եկեղեցւոյ մէջ կը բովանդակին։ Հարկ է՝ որ մէկն ըլլայ որ

¹ Յովհ. ԻԱ. 15, 16.  ² Ղուկ. ԻԲ. 32.



լուծէ ամենայն տարակոյսները, որ կ՚ելլեն. գագրեցընէ ամէն հակառակութիւններն ու կռիւները, որ կը բորբոքին. պահէ վարդապետութեան միութիւնը, միաբանութիւնն ու սէրը։

Բայց որովհետեւ Ս. Եկեղեցին՝ Յիսուսի կամացը համեմատ պէտք է տեւէ մինչեւ ի վախճան ժամանակաց, ու Գլուխն ալ ի հարկէ պիտ՚որ տեւէ մինչեւ ի վախճան ժամանակաց. ապա թէ ոչ՝ Եկեղեցին չէր մնար ինչպէս Յիսուս կերպաւորեց՝ միաբան, մի, նոյն վարդապետութեամբ եւ նոյն կարգաւ։ Արդ՝ ո՞վ պէտք է ըլլայ այս Եկեղեցւոյ Գլուխը։ Ուրիշ մէկը չի կրնար ըլլալ, բայց եթէ անիկայ որ օրինապէս կը յաջորդէ Ս. Պետրոսի, այսինքն է՝ Հռոմէական Քահանայապետը։ Ս. Պետրոս հիմնեց Հռոմէական Աթոռը. հոն ապրեցաւ եւ հոն մեռաւ։ Ուստի՝ Հռոմայ Աթոռը եղաւ ճշմարիտ Պետրոսի Աթոռը, ուր կը գտնուէին եւ ուր փոխադրուեցան ամէն Անոր իրաւունքները։ Եթէ Պետրոսի յաջորդները իր Աթոռին վրայ չժառանգէին Պետրոսի իշխանութիւնը, ի՞նչպէս կրնար ստուգուիլ որ Եկեղեցին Պետրոսի վրայ հիմնուած էր, ինչպէս խոստացաւ Յիսուս։ Անժխտելի է ուրեմն որ անոնք ամէնքը, որոնք հետեւեալ դարերու մէջ նոյն աթոռը նստան, են ճշմարիտ երեւելի Գլուխք Եկեղեցւոյ եւ Յիսուսի Քրիստոսի փոխանորդներ։

Անոր համար՝ մեր Ս. Հաւատոյ բոլոր նախնիքը, ամէն հնագոյն եպիսկոպոսական Աթոռներուն յարգ ու մեծարանք ընծայելէն ետքը՝ գլխաւորութիւնը միշտ Հռոմէական Աթոռին տուին։ Անոր կը բողոքէին ամէն հակառակութեանց ու խնդրոց մէջ որ կը յուզէին, եւ ինք միշտ լուծեց ամէն տարակոյսները, խորհուրդ տուաւ ամէն տգէտներու, ամէն վէճերը սահմանեց եւ դատապարտեց ամէն մոլորութիւնները։ Ս. Պետրոսի Աթոռը յարգեցին ամէն հաւատացեալք, հնազանդեցան ամէն իշխանները, որոնք Ուղղափառ Կաթողիկեայ մնալ ուզեցին, հպատակեցան ամէն ժողովքի գումարած Հովիւները եւ մեծարեցին ամէն Քրիստոնեայք։ Յիսուս Քրիստոս՝ որպէս զի փորձով ցուցընէ որ իր հիմնադրութիւնն է, հաստատեց իր առաջակայութեամբը այս մեծ Աթոռը, որ երբեք չպակսի։ Մէկալ հնագոյն աթոռներուն մէջ երբեմն մտաւ մոլորութիւն եւ շատերուն մէջ ծանր մոլորութիւններ։ Իսկ Պետրոսի Աթոռին վրայ երբեք մոլորութիւն չտեսնուեցաւ։ Մէկալ աթոռները գրեթէ ամէնքն ալ կործանեցան կամ ուրիշ աթոռներու հպատակ եղան, Պետրոսինը ամէն հալածանքներու մրրիկներուն մէջ, որ յարուցին անօրէն իշխանները, ամբարիշտ կայսրները եւ հերետիկոսաց գաւաճանութիւնները, մնաց միշտ ողջ եւ անարատ, եւ Աստուած այնպէս հոգ ունեցաւ այս



մեծ Աթոռին՝ իր իմաստութեան գործարանին վրայ, որ թէպէտ երբեմն քանի մը անարժան Քահանայապետք ալ եկան նէ (որոնց թիւը շատ քիչ է), սակայն թող չտուաւ որ ամենեւին հակառակ Հաւատոյ եւ բարի վարուց բան մը սորվեցընեն, մանաւանդ թէ այնպէս ըրաւ որ նոյն իսկ աս Քահանայապետները Քրիստոսի խօսքին համաձայն՝ միշտ հաստատեցին հաւատքի մէջ իրենց եղբայրքը անդադար ճշմարտութիւնն ուսուցանելով։

Աքանչելի՛ հիմնարկութիւն, զորն որ մեր Աստուածային Փրկիչը իբրեւ գերագոյն հոգաբարձու մը մեզի ամէնուս համար հաստատեց. ինչու որ ասոր մէջ վառեց ջահ մը, որ կը լուսաւորէ մեր խաւարները. այնպէս որ ով որ կ'ուզէ անոր լուսովը երթալ, չի կրնար երբեք ճամբան կորսնցընել։

Արդ՝ ինչ կ'ընեն Բողոքականները։ Կ'ուզեն վերցընել մեզմէ այս գեղեցիկ ջահը, որ այնպէս աղէկ զմեզ կը լուսաւորէ, կ'ուզեն վերցընել մեզմէ այս անշարժ վէմը, որ մեր ապահովութիւնն է, այսինքն է՝ Ս. Եկեղեցւոյ մէջէն կ'ուզեն վերցընել զՀռոմէական Քահանայապետը։ Յիսուս Քրիստոս տուաւ Պետրոսի եւ իր յաջորդներուն իշխանութիւնը, եւ աս Բողոքականները կ'ուզեն իրենցմէ նոյնը յափշտակել։ Յիսուս Քրիստոս ըրաւ Պետրոսի որ ամէնուն ալ սորվեցընէ, եւ անոնք կը պա-

հանքեն որ լռէ, եւ իրենք յառաջ կ'ան-
ցնին ուսուցանելու։ Յիսուս Քրիստոս ը-
սաւ Պետրոսի, որ հաստատէ զամէնքը Հաւ-
ատոյ մէջ, եւ անոնք կը մերժեն զՊետրոս,
եւ իրենք զիրենք ճշմարտութեան մէջ հաս-
տատել կը պահանջեն։ Յիսուս Քրիստոս
զՊետրոս իրենց Գլուխ դրաւ, եւ անոնք
ան Քրիստոսէ դրուած Գլուխը կը հերքեն,
որպէս զի հպատակ ըլլան՝ որո՞ւն։

Կ'ամչնամ ըսելու, կամ զինուորի մը,
որ զիրենք սրով կը կարգաւորէ, կամ իշ-
խանի մը, որ ամենեւին բանէ չի հասկընար
Ս. Հաւատքի նկատմամբ եւ կամ նաեւ
տղու մը կամ կնկան մը, ինչպէս ուրիշ ան-
գամներ պատահած է եւ կը պատահի դեռ
Անգղիայի Բողոքականներուն։ Եթէ աս-
կայ յաւիտենական ամօթ մը չէ, հապա
ո՞րը պիտ'որ ըլլայ։ Ա՞ս է գեղեցիկ Կրօնքը,
որ մեզի կ'ուզեն պարգեւել. եւ ա՞ս կրօն-
քին համար է որ զմեզ կ'ուզեն Կաթողիկէ
Եկեղեցւոյ գրկէն յափշտակել։ Թող իրենք
հնազանդին որուն կը հաճին. մենք կը
ճանչնանք մի միայն Հռոմայ Քահանայա-
պետը եւ Յիսուսի Քրիստոսի փոխանորդը,
եւ յընկերութեան ամէն Սուրբերու, ամէն
Հարց, ամէն վարդապետաց Անոր հպատակն
ենք եւ զինք կը պատուենք երկրիս վրայ
եւ առանց իրեն երբեք չենք ճանչնար ճըշ-
մարիտ Եկեղեցին։ Գեղացի խոհեմ կնիկ
մը Պարոնին մէկուն, որ զինք Բողոքական
ըլլալու կը յորդորէր, աս հարցումը ըրաւ.



Իսկ ան ատենը որո՞ւն ուրեմն պիտ'որ հնա-
զանդիմ։ Ո՛չ մէկու մը, պատասխան տուաւ
Պարոնը, դուն քեզմէ կ'ըսես, քեզի կ'երեւայ
սուրբ Գիրքը կարդալ եւ անկից քեզի
Կրօնք մը շինել։ Ան ատենը ըսաւ կնիկը.
Պարո՛ն, եւ ոչ իմ հաւնոցս առանց աքա-
ղաղի աղէկ կրնայ երթալ. մտածեցէք ու-
րեմն թէ կրնա՞յ աղէկ երթալ բովանդակ
Եկեղեցին առանց Գլխոյ մը։ Աս պարզ՝
բայց իրաւացի պատասխանով, կռնակը
դարձուց եւ թողուց Պարոնը ամօթով։

## ԳԼՈՒԽ ԺԲ.

Բողոքականներուն մէջ կը ցուցուի, հոն չի
խոստովանութիւնը ճշդէ կը մերժուի։

Մեծագոյն բարիքներէն մէկը, որ մեզի
ըրաւ Յիսուս Քրիստոս իր մարդասիրու-
թեամբ աշխարհք գալովը, ան է որ հաս-
տատեց Ապաշխարութեան խորհուրդը.
ինչու որ՝ ինչպէս մարդիկ այնչափ դիւրա-
բեկ ըլլալով միշտ կը մեղանչեն եւ միշտ
հարկաւորութիւն ունին թողութիւն առ-
նելու, այսպէս մեծագոյն է այն շնորհքը,
որ մեզի կը դիւրինցընէ թողութիւնը։

Ահաւասիկ ինչպէս աս բանս եղաւ։
Յիսուս Քրիստոս՝ փառաւոր յարութենէն
ետքը Առաքեալներուն քովը ներկայացաւ,
փչեց անոնց վրայ իր Աստուածային բեր-
նովը եւ հաղորդեց անոնց զՀոգին Սուրբ.
եւ տուաւ այն հանդիսաւոր իշխանութիւնը

մեղաց թողութիւն տալու, ըսելով. «որոնց որ թողուք, թողուած են, եւ որոնց որ կը բռնէք՝ բռնուած են»[1]: Այսպէս կ'ըսէ Ս. Աւետարանը: Արդ՝ ինչպէս կրնայ ի գործ դրուիլ այս Աստուածային հրամանը: Քահանան՝ հոս յայտնապէս ի Յիսուսէ Քրիստոսէ դատաւոր դրուած է. անանկ չէ՞: Արդ դատաւոր մը՝ ամբաստանուած մէկը արձակելու կամ դատապարտելու համար ի՞նչ կ'ընէ: Կը հարցընէ, վկաները կը լսէ եւ ետքը կամ կ'արձակէ եւ կամ կը դատապարտէ:

Նոյնը պէտք է ընէ Քահանան, այսու տարբերութեամբ որ արտաքին դատաւորը կրնայ վարուիլ արտաքին վկաներով: Խոստովանահայրը՝ որ դատաւոր է ոչ եթէ արտաքին գործքերու այլ մեղաց՝ որոնք գլխաւորապէս սրտով կը գործուին, պէտք է վարուի նոյն անձին վկայութեամբը՝ որ կ'ուզէ արձակուիլ. ուստի եւ մեղաւորը պէտք է որ ինք իրմէ իր յանցանքները յայտնէ:

Միայն աս եղանակաւ կրնայ ի գործ դրուիլ Յիսուսի պահանջելի խօսքը. որով ուզեց որ Առաքեալներն եւ իրենց յաջորդները մեղքերը կապեն կամ արձակեն: Իսկ իրաւցընէ ասանկ ալ միշտ ի գործ դրուեցաւ Աստուծոյ Ս. Եկեղեցւոյն մէջ ամէն դար ամէն ժամանակ:

Ս. Կղեմէս Սրբոյն Պետրոսի աշակերտն ու յաջորդը, աւանդեամբ խոստովանու-

[1] Յովհ. Ի. 23.



թիւնը կը յանձնէր: Որոգինէս ասոր համար խորհուրդ կու տար յարմար խոստովանահայր ընտրելու: Ս. Կիպրիանոս մարտիրոսը՝ կը յորդորէր նոյնը ընելու ցորչափ որ ժամանակը ձեռքերնիս է, որպէս զի մահը յանկարծ առանց խոստովանութեան զմեզ չգտնէ: Ս. Յերոնիմոս ազդարարութիւն կ'ընէր, թէ խոստովանահայրն է որ գիտէ թէ երբ պէտք է արձակէ կամ կապէ: Ս. Օգոստինոս կը յորդորէ Հաւատացեալները որ ամչնալէն չյաղթուին եւ ամէն բան որ կը ճանչնան թէ գէշ ըրեր են՝ բացայայտ զրուցեն, այսպէս ամէն հին Սուրբերը:

Աւելի եւս այս պարտաւորութիւնը այնպէս հաստատուն մնաց որ երբեք մէկը անկից չազատեցաւ. խոստովանեցան ամենէն մեծ Սուրբերը, Ուղղափառ Կայսրները, Կրօնաւորները, Քահանաները, նոյն իսկ Ծայրագոյն Քահանայապետները, վասն զի ամէնքն ալ ճանչցան թէ Յիսուսի Քրիստոսի անփոփոխելի խօսքին պահպանութիւնը անհրաժեշտ հարկաւոր է:

Իսկ հիմայ՝ ահաւասիկ ինչ կը պատահի. տասնուվեց դարերէ ետքը, որոնց մէջ բովանդակ Ս. Եկեղեցին այսպէս ըրած էր, եւ ըրած էր Յիսուսի խօսքին վրայ հիմնելով, կ'ելլեն Բողոքականները եւ կ'ըսեն թէ խոստովանանքը հարկաւոր չէ, թէ խոստովանանքը մարդկային գիւտ է եւ թէ բաւական է Աստուծոյ խոստովանիլը: Բայց կաչիէ երես մը չ'ուզեր այս ամենայն ըսելու:

Խոստովանութիւնը քահանաներէն հնարուած է, կ՚ըսեն. լաւ է՝ պատասխան տուէք, ուրեմն որո՞նք եղան խոստովանութիւնը գտնողները։ Ո՞ր ժամանակ գտնուեցաւ։ Ո՞ր երկրին մէջ նախ առաջին ի գործ դրուեցաւ։ Որո՞նք եղան առջինները որ յանձն առին պարանոցներնուն վրայ այս լուծը դնել, որմէ յառաջագոյն ազատ էին։ Հաւանականաբար հին ատենն ալ, այսպիսի ծանրութեան տակ չմտած, ամէն հաւատացեալք ընդդիմութեան ցոյց մը տուած պիտի՚որ ըլլային, եթէ ան ատենուան մարդիկ ապուշ ոչխարներ չէին։ Ոմանք՝ որոնք աւելի իմաստուն կը կարծուին, պատասխան կու տան թէ Լատերանեան 1215ին ժողովքին գիւտն է. բայց կամ կարդալ չեն գիտեր եւ կամ չարամիտ են, վասնզի այն ժողովքին մէջ օրէնք կը տրուի միայն զանցառուներուն համար (որոնցմէ ան ատենն ալ կային, ինչպէս հիմայ ալ կան) որ խոստովանելու պարտաւոր ըլլան գոնէ տարին անգամ մը, ի պատրաստութիւն Զատկական Տօնին. ուստի առջի անգամուն ան ժողովքին մէջ չհնարուեցաւ խոստովանութիւնը, մանաւանդ որ ժողովքը արդէն կ՚ենթադրէր որ Քրիստոնեայք պարտաւոր էին խոստովանիլ, ան ժամանակը սահմանեց թէ երբ կը հարկադրէին արդէն ունեցած պարտքերնին կատարել. ինչպէս օրինակի համար, մէկու մը որ տան վարձքը վճարելու պարտական է, դուն պատուի-



րէիր որ Ս. Միքայէլի կամ Ս. Յովհաննէսի տօնին վճարէ։

Մէկալ անհիմն պատճառը որ յառաջ կը բերեն ան է. Բաւական է Աստուծոյ խոստովանիլ։ Այսպէս է։ Բայց՝ եթէ Աստուած պարտաւորած է զմեզ որ նաեւ քահանաներուն խոստովանինք, ան ատենն ալ բաւական է միայն Աստուծոյ խոստովանիլը։ Արդ՝ ո՞վ է որ աս խորհուրդը սահմանեց։ Նոյն ինքն Յիսուս չէ՞ր, ինչպէս վերը տեսանք։ Ո՞վ էք դուք ուրեմն որ կու գաք ու կ՚ըսէք, թէ բաւական է Աստուծոյ խոստովանիլը։ Ո՛չ բաւական չէ, վասնզի Յիսուս ուրիշ կերպ ուզեց. բաւական չէ, վասն զի իր կամքը յայտնի նշանակեց. բաւական չէ, վասն զի ձեզի չ՚իյնար Աստուծոյ օրէնք տալ, այլ Աստուծոյ կ՚իյնայ ձեզի օրէնք դնել. բաւական չէ, վասն զի Յիսուս ըսաւ որ իր պաշտօնեաներէն բռնուած՝ այսինքն է չարձակուած մեղքերը նաեւ երկինքը բռնուած պիտի՚որ ըլլան։ Բայց աս Պարոններուն յանդգնութիւնը չափ չունի։ Յիսուս կը հաճի, զմեզ դժոխք խրկելու տեղ, որուն մեր ծանր ծանր մեղքերը կ՚արժանաւորին, մեզի անոնց թողութիւնը շնորհել, բաւական որ սրտանց զղջինք եւ յայտնենք նոյն մեղքերը իրեն մէկ պաշտօնէին եւ արձակումն ընդունինք, իսկ մենք հպարտաբար կ՚ըսենք Աստուծոյ որ մեզի հաճոյական չէ այս իր կարգադրութիւնը եւ զանց կ՚ընենք եւ անոր տեղ կ՚ուզենք իրեն

միայն խոստովանիլ ։ Ըսէ՛ք, եթէ Աստուած սա յանդուգն ժպրհութեան համար զմեզ դժոխքին յատակը խրկելու ըլլայ, ամենայն իրաւունք չ՚ունենար ։

Վերջապէս ոմանք կ՚ըսեն թէ՝ Խոստովանութիւնը անհամբեր բան է ։ Ինչո՞ւ. վասն զի առիթ կու տայ աւելի դիւրութեամբ մեղանչելու ։ Ա՜հ կ՚երեւայ թէ ասոնք Քրիստոնէականի շատ քիչ գացեր են կամ թէ բոլորովին չեն գիտեր ։ Ի՞նչ պէտք է որ մէկը մեղք գործելէն ետ կենայ ։ Ամենուն միտքը սա է, որ մէկը երբեք ետ չի կրնար կենալ, եթէ մեղաց դէմ սաստիկ ատելութիւն, սաստիկ զարշիլ մը չ՚ունենար, հաստատուն առաջադրութեամբ մէյ մ՚ալ չմեղանչելու ։ Արդ՝ խոստովանութեան համար հարկաւոր գործքերը ասոնք չե՞ն ։ Քրիստոնէական վարդապետութիւն սորվեցընողները, Քարոզիչները, Առաքեալները, ամէնքն ալ սա գործքերը չե՞ն յանձներ, եւ անդադար չե՞ն աղաղակեր որ եթէ ցաւ չունինք, եթէ առաջադրութիւն չունինք, ամենեւին ոչինչ կ՚արժէ խոստովանանքը ։

Յայտնի է ուրեմն որ Ս. Խոստովանանքի մէջ կը կատարուին այն գործքերը, որ աւելի զօրաւոր են զմեզ մեղքէ ետ քաշելու ։ Մոլորութիւնը որ ունին խոստովանութիւնը մերժողները յայտնի է, որ կը կարծեն թէ մենք Ուղղափառքս կը համարինք թէ մեղքերը կը քաւուին առանց անոնց վրայ ատելութիւն ու զարշութիւն ունենալու, եւ առանց առաջադրութիւն դնելու մէյ մ՚ալ չմեղանչելու ։ Բայց ասիկայ ամենասուտ է ։ Ինչո՞ւ. այսպիսի այլանդակ վարդապետութիւն մը վրանիս կը նետեն, որպէս զի ետքէն սուտ հանեն ու խնդան ։ Թո՛ղ նախ ճանչնան Ս. Եկեղեցւոյ աւանդած վարդապետութիւնը եւ ետքը գրովեն թէ կրնան ։



Եւ ոչ իսկ փոքր ետ կը մնայ աչքերնուս առջեւը հաստատելու այն մեծ բարիքը որ կ՚ընէ մեզի խոստովանութիւնը ։ Յայտնի խօսինք ։ Որո՞նք են որ աւելի կը հայհոյեն, աւելի կը տրտնջան, աւելի յաճախ կ՚երթան տեսակ մը տներ, տեսակ մը անձինքներու քով, որո՞նք են որ աւելի վրանին խօսիլ կու տան ։ Անո՞նք են, որ շատ շատ կը խոստովանին, թէ անոնք որ տարին անգամ մը խոստովանութեան կ՚երթան եւ ամէն տարի խոստովանահայրերնին կը փոխեն որ չճանչցուին ։

Եթէ դուք դաշինք մը դնելու ըլլաք, որո՞նց աւելի կը վստահիք ։ Եթէ կին առնելու ըլլաք, ինչպէս կ՚ուզէք որ ըլլայ ։ Եթէ հարկաւորութիւն մը ունենաք, որո՞ւն կը դիմէք ։ Անո՞նց, որոնք որ խոստովանարանին շուրջ կողմը կ՚առնեն, թէ մէկալներուն որ կը ճանչնաք արդէն ։

Հապա, թո՛ղ հանգիստ անվրդով ձգեն Ս. Խոստովանութիւնը, որ այնպէս կենդանի կը պահէ աստուածպաշտութիւնը ժողովրդոց մէջ, որ կը մխիթարէ մեր հո-

գիրք. որ կը նորոգէ մեր հոգեւոր կորուստները, որ զմեզ Յիսուսի հետ կը հաշտեցընէ, որ կեանքերնուս մէջ դժուարին գործերը առջեւնիս կը դնէ եւ մահուան ատեն Արքայութիւնը կը բանայ։ Նիւրենպերկ քաղքին մէջ Բողոքականները այնչափ ըրին, այնչափ խօսեցան՝ որ մինչեւ յաջողեցուցին խոստովանանքը անսովորական ընել։ Բայց ի՞նչ. գողութիւնները, յափշտակութիւնները, անառակութիւնները, ամէն տեսակ յանցանքները այնպէս շատցան հեղեղեցին, որ քաղաքապետը եւ քաղքին մեծերը Կարոլոս Ե. Կայսեր դեսպանները խրկեցին եւ աղաչեցին, որ նորէն խոստովանութեան գործածութիւնը նորոգել տայ. ինչու որ խոստովանութիւնը վերցուելէն ետքը, կ'ըսէին, ալ անկարելի էր ապրիլը։ Ահաւասիկ ի՞նչպէս անհրաժեշտ է խոստովանութիւնը։

Իսկ Բողոքականները, որ այս խորհուրդիս աստուածային հիմնադրութեանը չեն հաւատար եւ ոչ ալ Քահանայ ունին որ կատարէ աստուածային հրամանը մեղքերը արձակելու կամ կապելու, յայտնի կը ցուցընեն թէ Յիսուսի Եկեղեցին չեն, որն որ միայն, աս մեծ առանձնաշնորհութիւնն ունի։



## ԳԼՈՒԽ ԺԳ.

*Բովանդակութիւնը ասոր կը ցուցունէ, հոն գի-
տնայ Ս. Հաղորդութեան Խորհուրդը։*

Խոստովանութենէ ետքը՝ որ զմեզ մեր մեղքերէն կը սրբէ, Քրիստոնէից մեծագոյն բարիքն է Ս. Հաղորդութիւնը։ Այս խորհուրդն է որ Քրիստոնէից ամենէն մեծ քաջալերութիւնը կու տայ եւ իրենց ամենէն մեծ պատիւն է, ինչու որ ասով հաղորդակից կ'ըլլան՝ ոչ միայն Յիսուսի շնորհաց, այլ նաեւ նոյն իսկ Յիսուսին։

Ս. Հաւատքը ուրեմն կը սորվեցընէ աս Ս. Խորհուրդին նկատմամբ, թէ քահանայագործութեան խօսքերուն միջոցովը, որ կ'ըսէ Քահանան հացին ու գինւոյն վրայ, Ամենակալ Աստուծոյ զօրութեամբը՝ ալ չի մնար հաց ու գինի, այլ գոյացափոխութեամբ՝ հացն ու գինին կ'ըլլան մարմինն եւ արիւն Աստուածային Փրկչին մերոյ. այնպէս որ հացին տեսակին տակ՝ կայ ճշմարտապէս Յիսուս Քրիստոս եւ ոչ թէ օրինակաւ. կայ իրապէս եւ ոչ թէ երեւակայական ներկայութեամբ. կայ գոյացապէս եւ ոչ թէ մինակ իր Աստուածային զօրութեամբը. եւ այսպէս ով որ Ս. Հաղորդութիւնը կ'ընդունի՝ կ'ընդունի ճշմարտապէս Յիսուսի Քրիստոսի Աստուածային Մարմինը, իր անգին արիւնը, իր ամենասուրբ Հոգին, իր անճառելի Աստուածու-

թիւնը։ Ասիկայ շնորհք մըն է, եւ այնչափ մեծ շնորհք մը, որուն չէինք կրնար հաւատալ եթէ ինքն Յիսուս Քրիստոս ըսած չըլլար։ Բայց կենդանի է Աստուած յաւիտենական ճշմարտութիւնը՝ Յիսուս Քրիստոս, ասիկայ այնպէս ապահովութեամբ ստուգեց մեզի որ յաւիտեանս երբեք կարելի չէ վրան տարակուսիլը։

Ահաւասիկ ինչպէս ինքն հաստատեց ասոր վրայ մեզի սորվեցընել ուզած անգամուն որ աս նիւթիս վրայ խօսք բացաւ երբոր Կափառնաում ժողովրդանոցին (Սինակոկային) մէջ կը քարոզեր։

Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, իր խօսքերն են, եթէ Որդւոյ մարդոյ մարմինը չէք ուտեր եւ իր արիւնը չէք խմեր, ձեր անձինքը կեանք չէք ունենար։ Ով որ իմ մարմինս կ'ուտէ եւ իմ արիւնս կը խմէ, կ'ունենայ յաւիտենական կեանքը եւ ես զանիկա կը յարուցանեմ վերջին օրը։ Վասն զի իմ մարմինս ճշմարիտ կերակուր է, եւ իմ արիւնս ճշմարիտ ըմպելի է[1]։ Կրնանք հոս։ Կրնա՞ր Յիսուս Քրիստոս աւելի պայծառ խօսիլ մեզի յայտնելու համար, որ իրաւցընէ կ'ուզէր տալ մեզի կերակուր իր մարմինը եւ իր աստուածային արիւնը։ Յայտնի չէ՞ զրուցեր «Ով որ իմ մարմինս կ'ուտէ, ով որ իմ արիւնս կը խմէ»։ Կրկին անգամ չէ՞ զրուցեր թէ իր մարմինը կերակուր է, իր արիւնը ըմպելի է։ Ասոր վրայ չ'աւելցըներ այս մեծ նշանակութիւն ունեցող ճշմարիտ բառը, որպէսզի ոչ

[1] Յովհ. Զ. 54, 55.



ոք այն խօսքերն այլափոխ իմաստով ըմբռնէ։ Ոմանք իր աշակերտներէն կը գայթակղէին այս խոստման վրայ, կարծելով թէ անկարելի էր կատարուիլը եւ Յիսուս գուցէ ե՛տ առաւ իր խոստումնքը։ Բոլորովին անոր հակառակ Յիսուս նորէն հաստատեց՝ շատ աւելի զօրաւոր խօսքերով նոյնը կրկնելով, նորէն նորէն բացատրելով ամենայն եղանակաւ եւ ամենայն կերպով։ Աս կը մնար ուրեմն ըսելու թէ Յիսուս չկրցաւ ինք զինքը յայտնել, կամ թէ կ'ուզէր զմեզ խաբել։ Բայց այսպիսի բան մը մտքէ անցընելն ալ մեծ հայհոյութիւն է։

Այսու ամենայնիւ՝ իբրեւ թէ ասիկայ բաւական չէր, երբոր եկաւ հասաւ այն մեծ ժամը, ուր որ այս անգին պարգեւը մարդկան պիտ'որ ընէր Յիսուս, դարձեալ նոյն եղանակաւ խօսեցաւ։ Առաւ հացն ու օրհնեց, եւ օրհնելէն ետքը տուաւ սուրբ Առաքեալներուն ըսելով. Ա՛ս է իմ մարմինս. օրհնեց նաեւ բաժակը եւ անոնց խմելու տալով ըսաւ. Ա՛ս է իմ արիւնս։ Բայց՝ ո՞ր մարմնոյ եւ ո՞ր արեան համար կը խօսէր. ճշմարտապէս իր մարմնոյն եւ արեանը, այն մարմնոյն համար որ մահուան պիտ'որ տրուէր, այն արեան՝ որ հեղուելոյ համար պիտ'որ թափուէր[1], ինչպէս ինքն ըսաւ։

Թէ կարելի՞ է արդեօք ասկից աւելի բացայայտ խօսիլ, ես չեմ՛ գիտեր։ Ճշմարիտն աս է որ այս աստուածային խօսքե-

[1] Ղուկ. ԻԲ. 19։ Ա. Կոր. ԺԱ. 25։

րուն վրայ հիմ՝ դնելով ամէն Առաքեալները եւ բոլոր Եկեղեցին. մինչ ի գործ դրին այս սուրբ խորհուրդը. այսպէս առաջին Հաւատացեալները սովոր էին սուէպ սուէպ աս Ս. Խորհուրդն ընդունիլ, ինչպէս կը յիշատակէն Առաքելոց Գործքերը. մինչեւ նաեւ Հեթանոսները՝ որոնք նոյնը աղէկ չէին ճանչնար, ամէն կողմ՝ կը տարածէին թէ մենք զոհուած տղոց մարմինը կ'ուտենք։ Ստոյգ է որ բովանդակ Ս. Եկեղեցին ի պատիւ իր ամենաբարի եւ Ս. Խորհրդեան մէջ նուիրեալ Աստուծոյն իր ամէն պաշտամունքները կը մատուցանէ։

Աւելցուցէք ասոնց վրայ նաեւ այն մեծամեծ ցոյցերը, զորոնք այս աստուածային խորհուրդը վաւերացընելու համար տուաւ մեզի Յիսուս Քրիստոս զարմանալի հրաշքներով, որ պատահեցան քահանայագործեալ նշխարքներու միջոցովը, այնպիսի հրաշքներով, զորոնք հերետիկոսաց հատուածութիւնն ալ չի կրնար ուրանալ, երբեմն նոյն Ս. Նշխարքը երկնաւոր լուսով շրջապատեալ ցուցընելով, երբեմն անոր մէջ սքանչելի գեղեցկութեամբ մանկիկ մը երեւցընելով, ուրիշ անգամ՝ յանկարծական մահուամբ սատկելով Ս. Խորհուրդը ոտքի տակ առնողները, եւ առանձինն շնորհքներ ընելով անոնց՝ որոնք մեծ յարգութեամբ երկրպագութիւն կը մատուցանեն. վերջապէս շատ անգամ՝ ալ իր ներկայութեանը յայտնի եւ պայծառ ցոյցերը տալով Հաւատացելոց. ինչպէս կը պատմեն Սրբոց վարքերը եւ եկեղեցական պատմութիւնները։



Աս պատճառաւ է որ առաջին տասը դարերու մէջ ոչ որ նաեւ հերետիկոսաց մէջէն որչափ ալ խեռ եւ յամառ էին, յանդգնեցաւ այս աստուածային խորհուրդը տարակուսի տակ ձգել։ Առաջինն եղաւ Բերենգարիոս հերետիկոսապետը, որն որ ետքէն ետ կանչեց իր մոլորութիւնը, եւ մեռաւ զղջմամբ։ Աւելին կ'ուզէ՞ք։ Նոյն ինքն Մարտինոս Լութեր ամէն Բողոքականաց հայրը, երբեք չհամարձակեցաւ ուրանալ Յիսուսի իրական ներկայութիւնը ամենասուրբ խորհրդին մէջ։ Ա՛յնչափ պայծառ յայտնուած է բոլոր սուրբ Գրքերուն եւ հնութեան ամէն յիշատակարաններուն մէջ։

Բայց հիմայ թէ մէկը այս նոր ուսուցիչներուն հաւատալու ըլլայ, բանը ատանկ չէ։ Բողոքականներէն շատերը սրբապղծութեան այն աստիճանը հասեր են, որ կը համարձակին ուրանալ Յիսուսին Ս. Նըշխարքին մէջ ներկայութիւնը, եւ այնչափ կը յանդգնին որ զանիկայ հացի կտոր մը կը կոչեն։ Այո՛ այս թշուառականները մինչեւ աս աստիճանը հասեր են։ Որով նախ զՅիսուս Քրիստոս սուտ կը հանեն, որ կը հաստատէ թէ իր ճշմարիտ Մարմինն եւ իր ճշմարիտ Արիւնն է, ետքը բոլոր Ս. Եկեղեցին, որ իր ամէն պաշտամունքը իւր

բարեբար եւ Ս. Խորհրդեան մէջ Նուիրեալ Աստուծոյն կը մատուցանէ, եւ պատրաստ է բովանդակ արիւնն ալ թափելու այս ճշմարտութիւնը անարատ պահելու համար։ Սուտ կը հանեն նաեւ նոյն ինքն իրենց գլուխը Լուտեր, որ որչափ ալ կ'ուզէր՝ երբեք չյանդգնեցաւ իրական ներկայութեան հակառակ գինել. կը սորվեցընեն այնպիսի մոլորութիւն մը որ դատապարտուած է հաւասարապէս բովանդակ Ս. Եկեղեցիէն, ամէն Ս. Հայրերէն, մանաւանդ թէ ամէն հին հերետիկոսներէն եւ նորերուն մէջէն ալ շատերէն, սակայն սատանայական հպարտութենէ աւելի բարձրամտութեամբ իրենք զիրենք միայն ճշմարտութիւնը տեսնողներն եւ ճշմարտութեան լուսաւորեալ ճանաչողները կը համարին։ Ո՜վ ամբարտաւանութիւն, ո՜վ յանդգնութիւն, որ վախճան չունի։

Բայց դուք որ կը լսէք այսպիսի գարշելի հայհոյութիւններ մեր բարեբար եւ սիրոյ Աստուծոյն դէմ, որ մեզի համար գիշեր ցորեկ մեր խորաններուն վրայ կը բնակի՝ այսպէս ըրէք։

Նախ սաստիկ սոսկում մ'ունեցէք Բողոքականութեան դէմ, որ ամենեւին իր Յիսուսին ներկայութիւնը չունի. որով Հրեաներէն ալ շատ վար կը մնան, որոնք գոնէ աստուածային խորհրդին օրինակն ունէին Մանանային վրայ, զոր կը պահէին տապանակին մէջ։ Ետքէն նորոգեցէք միշտ



ձեր Հաւատքը առ Յիսուս ի Ս. Խորհրդեան եւ այս հաւատքը ցուցուցէք ձեր յարգութեամբը, որով անոր առջեւը կը կենաք։

Ս. Լուդովիկոս Գաղղիացւոց թագաւորը, այնպիսի կենդանի հաւատք մ'ունէր որ անգամ մը հրաւէր ընդունելով Եկեղեցի մը երթալու, ուր զարմանալի հրաշքով Յիսուս Նշխարքին մէջ մանկան կերպարանքով կ'երեւար, պատասխան տուաւ թէ երթայ ով որ կ'ուզէ, բայց ինք տեղէն չիշարժիր։ Զարմանալով այսպիսի պատասխանի մը վրայ, Ո՜հ ինչո՞ւ, հարցուցին իրեն, չե՞ս ուզեր տեսնել զՅիսուս։ Բայց Սուրբը նորէն դարձաւ ու ըսաւ. Ես իմ կողմանէս այնչափ ստոյգ եմ Հաւատքով, որ հաւատալու համար հարկաւորութիւն չունիմ աչքովս տեսնելու։ Բաց ասկից ատէպ ատէպ ջանացէք զինքն ընդունիլ, համոզուած ըլլալով որ ուրիշ լաւագոյն կերպով չէք կրնար գոհ ընել Իր սէրը՝ որ մեր վրայ ունի. բայց եթէ ամէնքնիդ ալ Անոր հետ միանալով աս Խորհրդեան մէջ, Վերջապէս առանձին մեծարանքով պատուելով Անոր ամենասուրբ Սիրտը, հատուցում մ'ըրէք այնչափ դառն նախատանաց՝ որ կ'ընդունի հերետիկոսներէն, որոնք կամ չեն ճանչնար այն Սիրտը եւ կամ չարագոյն եւս կը հայհոյեն։

## ԳԼՈՒԽ ԺԴ.

### Սուտ է Բողոքականութիւնը, վասն զի Պատարագ չունի։

Նախընթաց գլխուն մէջ ցուցուած մոլորութեան վրայ, կ'աւելցնենք Բողոքականները ուրիշ ծանրագոյն մ'ալ, որով նորէն կը ցուցուի թէ սուտ է Բողոքականութիւնը, այսինքն է՝ վասն զի չեն ճանչնար ու կը մերժեն Պատարագի Սուրբ Զոհը։

Որպէս զի կարող ըլլանք աղէկ իմանալ այս մոլորութիւնը, նախ պէտք էր գիտնալ որ ամենէն մեծ պարտաւորութիւնը, որ մարդիկ ունին երկրիս վրայ առ Աստուած, ճանչնալն է անոր մեծութիւնն եւ մեծվայելչութիւնը։ Աստուած մեր Արարիչն է եւ մենք իր գործքն ենք. Աստուած մեր Տէրն է եւ մենք իրեն ծառաները. Աստուած մեր Հայրն է եւ մենք իր որդիքը. ուստի իբրեւ որդիք, իբրեւ ծառայք, իբրեւ արարածք, պարտաւոր ենք ընծայել Իրեն մեր երկրպագութեան, ծառայութեան, երկիւղի եւ սիրոյ մեծարանքը։ Ասիկայ անտարակուսելի է, բայց աւելի եւս բան մ'ալ կայ. այսինքն է՝ թէ մարդն յԱդամ մեղանչելով եւ այս առաջին մեղքին վրայ մենք ալ ետքէն այնչափ ուրիշ մեղքեր աւելցնելով, պարտական մնացեր ենք անոր հատուցում ընելու, զորն որ երբեք կարող պիտ'որ չըլլանք կատարել մեր խեղ-



ճութեանը նայելով։ Ի՞նչպէս ուրեմն այս մեծ պարտքը պիտ'որ վճարենք Աստուծոյ։ Աղօթքով, թողութիւն խնդրելով, բայց առանձինն ընծաներով եւ զոհերով։ Իրեն մեր ունեցածը՝ թէ եւ ողորմելի ալ ըլլան, ընծայ մատուցանելով կը խոստովանինք թէ Ինքն է ամենուն տէրը. իրեն բան մը զոհելով կը յայտնենք թէ կարող ըլլայինք մեր անձինքն ալ իրեն կը զոհէինք ի նշան այն յարգութեան, զոր պարտական ենք իրեն եւ ի հատուցումն մեր այնչափ յանցանքներու որ գործեցինք։ Ուստի եւ աշխարհքիս առջի ժամանակներէն անմիջապէս սովորական եղաւ ընծայ եւ զոհ մատուցանելը։ Կային իր երկրին պտուղներն Աստուծոյ կ'ընծայէր, Աբէլ իր հօտին գառնուկներն ու ոչխարները։

Յետ ժամանակի նոյն իսկ Աստուած կարգադրեց հաց, գինի եւ երկրին երախայրիքը ու անասուններու անդրանիկները ընծայ մատուցանել, ինչպէս նաեւ ողջակէզն ալ ինք հրամայեց գառնուկներն ու ցուլերը զոհելով։ Թէպէտ եւ այս ամենայն շատ քիչ էր Աստուծոյ անսահման մեծվայելչութեանը։ Բայց ահաւասիկ Աստուծոյ Միածին որդին, ցաւակից ըլլալով մեր նուաստութեանը, որ չէր կրցած աստուածային անսահման Մեծվայելչութեան արժանաւոր ընծայ եւ զոհ մատուցանել, աշխարհք եկաւ մարմին առաւ, ինչպէս մեր մարմինն է, եւ ինք զինք ընծայեց ու զո-

հեց խաչին խորանին վրայ, որպէս զի հատուցանէ մեր ամէն պարտքերը եւ որպէս զի արժանապէս պատուէ զԱստուածութիւնը։ Այն զոհով վերջապէս հաշտեցաւ Աստուած, եւ Աստուած ունեցաւ պաշտօն մը՝ իրեն արժանի՝ անսահման արժողութեամբ։ Բայց ի՞նչ. այն մեծ զոհը կատարուելէն ետքը, նոյն ինքն Յիսուսէն հիմնուած Ս. Եկեղեցին առանց զոհի՞ մնար պիտ՚որ։ Իսկ մենք՝ որ Աստուծոյ որդիքն ենք սիրոյ ու շնորհաց օրինաց մէջ, զո՞ւրկ պիտ՚որ ըլլայինք անկից, որ չպակսեցաւ նախահարց եւ Հրէից։ Ո՛չ ոչ. մենք ալ ունինք զոհ մը, իրաւցընէ արժանի Աստուծոյ Մեծվայելչութեանը. մենք Ամենասուրբ Երրորդութեան կ՚ընծայենք միշտ զնոյն ինքն Յիսուս, որ զոհեցաւ խաչին վրայ եւ կը նորոգենք թէպէտ եւ առանց արիւն թափելու նոյն զոհը՝ որ ան ատեն ընծայուեցաւ։ Զո՜հ սքանչելի, որ իբրեւ անգին խունկ մը կը բարձրանայ յԱթոռ Աստուածութեան. Զո՛հ որ կը հաշտեցընէ քաղցրութեամբ մեր Տէրը, կը կակղեցընէ իր բարկութիւնը, շնորհակալ կ՚ըլլայ, ինչպէս պէտք է այն ամէն բարիքներուն համար՝ որ մեզի ըրած է, բարեխօս կ՚ըլլայ որ պտղաբեր անձրեւն ամենայն բարեաց երկրիս վրայ հոսէ, եւ ամէն բանէն աւելի կը ճանչնայ եւ կ՚ընդունի արժանապէս յանուն ամենայն մարդկան գերագոյն եւ բարձրական Աստուածային Մեծվայելչութիւնը։



Ո՜հ. որպիսի՜ գեղեցիկ խորհուրդներ. որպիսի՜ զարմանալի գիւտ Աստուածային սիրոյն մեզի նկատմամբ։

Բայց՝ ինչէ՞ն գիտենք որ Յիսուս իրաւցընէ կարգադրեր է այս մեծ խորհուրդը իմ՛ սիրելիքս, նոյն ինք Յիսուսէն գիտենք, որ վերջին ընթրեաց ատեն նախ ինք այս մեծ զոհն ընծայեց, ետքը հրաման տուաւ Առաքեալներուն եւ իրենց յաջորդացը որ նոյնպէս կատարեն։ Ինչպէս որ այս մեծ Զոհը գրուած է Քահանայագործութեան վրայ, որ կը ներկայացընէ Յիսուսի մարմնոյն յարենէն բաժանումը եւ բառ հետեւորդի իր մահը, այսպէս Յիսուս քահանայագործելով բաժանաբար նախ հացը՝ ետքէն բաժակը, ինք իրմէ կատարեց այս մեծ Զոհը, եւ պատուիրելով Առաքելոց որ նոյնն ընեն, բովանդակ Եկեղեցւոյ համար զանիկայ կարգադրեց։

Այսպէս կը ստուգուի Դաւթի բանը Յիսուսի Քրիստոսի վրայ, թէ պիտ՚որ ըլլար քահանայ ըստ կարգի Մելքիսեդեկի[1], որն որ նուէր ընծայեց հացով ու գինւով։ Այսպէս կը ճշմարտի մէկալ Մաղաքեայ գեղեցիկ մարգարէութիւնը, թէ հին զոհերը մերժուելով՝ արեւելքէն մինչեւ արեւմուտք՝ երբեմն նաեւ հեթանոս ժողովուրդեան մէջ, պատարագ մաքուր եւ զոհ մաքուր[2] պիտ՚որ մատուցուէր։ Այսպէս կը ստուգուի Ս. Պօղոսի խօսքը թէ՝ ունինք մենք

[1] Սաղմ. ճԹ. 4։ [2] Մաղ. Ա. 11։

խորան մը, որուն չէին կրնար մօտենալ բուն Հրէաները[1]։

Յիսուսի Քրիստոսի օրինակին եւ Ս. Գրոց վրայ հիմ դնելով, Ս. Առաքեալները շուտ մը սկսան այս մեծ խորհուրդը բոլոր երկրիս վրայ կատարել։ Ս. Անդրէաս Առաքեալը՝ ինչպէս ունինք իր մարտիրոսութեան Գործքերուն մէջ, Ես կը զոհեմ, կ'ըսէր, ամէն օր չէ թէ ցուլերու միսը, այլ անարատ Գառնը խորանի վրայ, որուն մարմինը բոլոր հաւատացելոց ժողովուրդը ուտելէն եւ անոր արիւնը խմելէն ետքը, նոյն իսկ զոհուած գառնը կենդանի եւ անարատ կը մնայ։ Մէկալ Առաքեալները ալ՝ հաստատած Եկեղեցիներնուն մէջ այս մեծ խորհուրդը կարգադրեցին, եւ մենք տասը փորձն ունինք Պատարագամատոյցներուն մէջէն որ Ս. Պետրոսի, Ս. Յովհաննու, Ս. Մատթէոսի, Ս. Մարկոսի անուամբ կը գտնուին։ Նոյն իսկ խիստ հին հերետիկոսները, որ այնչափ Ս. Եկեղեցւոյ դէմ թշնամութիւններ ըրին եւ անկէ բաժնուեցան, այսու ամենայնիւ իրենց հետ մէկտեղ տարին եւ միշտ պահեցին Ս. Պատարագի մատուցումը։ Խիստ հին Ս. Հարք՝ ինչպէս Ս. Կղեմէս աշակերտ Սրբոյն Պետրոսի, Ս. Յուստինոս վկայ, Ս. Իգնատիոս, Ս. Կիպրիանոս, (մեր Ս. Հայրը Գրիգոր Լուսաւորիչ), Ս. Յովհաննէս Ոսկեբերան եւ Ս. Օգոստինոս, ոչ միայն

[1] Եբր. ԺԳ. 10։



մեծապէս կը գովէին Ս. Պատարագը, այլ նաեւ կը մատուցանէին մեծ յարգութեամբ եւ ջերմեռանդութեամբ. ամենէն գիտուն, ամենէն լուսաւորեալ Սուրբերը մեր ատեններն իսկ, իրենց մեծ մխիթարութիւնը դրած էին այս մեծ խորհրդեան վրայ։ Ս. Թովմաս պատարագելու ատենն ի սիրոյն կը հալէր, Ս. Փիլիպպոս Ների, եւ Ս. Իգնատիոս չէին կրնար խորանէն զատուիլ, ինչու որ պատարագելու ատեն Արքայութեան ճաշակ մը կը գտնէին եւ կը սպասաւորէին նաեւ Ս. Պատարագին՝ հրեշտակային պաշտօն մը համարելով, ինչպէս իրօք ալ է։

Բայց այնչափ դարերէ ետքը որ այս ճշմարտութիւնն այսպէս աղէկ հաստատուած է, այսպէս վաւերացեալ է, ահաւասիկ կու գան Բողոքականները եւ ամէն բան կ'ուրանան, որպէս զի ամէն բան կործանեն եւ իրենց մահաբեր ժանտ վարդապետութեան աթոռէն սորվեցնեն, թէ չկայ Պատարագ, թէ հարկաւոր չէ այնպիսի Զոհ, մինչեւ կը լրբին նաեւ ոմանք զանիկայ կռապաշտութիւն կոչել։

Ո՛վ նենգաւոր թշնամիք Յիսուսի Քրիստոսի եւ քրիստոնեայ ժողովրդեան խռովիչք։

Գոնէ ըսէք մեզի, ինչո՞ւ հարկաւոր չէ Պատարագը։ Ահաւասիկ ինչու. վասն զի Յիսուս Քրիստոս, կ'ըսեն, արդէն կատարեց փրկագործութիւնը, ուստի ուրիշ զո֊

հեր մատուցանելը իրեն անիրաւութիւն մըն է, իբրեւ թէ իրենք բաւական չէր։ Բայց այս պատճառիս մէջ որչափ անգիտութիւն եւ որչափ չարութիւն կը պարունակուի։ Ինչ ինչ, Գուցէ թէ Ուղղափառք կ'ուզեն ուրիշ զոհեր ընել, որովհետեւ բաւական չէ փրկագործութիւնը։ Ոչ, կը մատուցանեն Ս. Պատարագի զոհը, որպէս զի խաչին վրայ կատարուած Ս. Զոհին իրենց վրայ մերձեցուցմանը եւ պտղոյն արժանի ըլլան։ Արդ՝ պէտք է գիտնալ որ թէպէտ Յիսուս Քրիստոս իր չարչարանքովը եւ մահուամբը, ամենայն մարդկան համար արդիւնաւորեցաւ մեղաց թողութիւն, Աստուծոյ հետ հաշտութիւն, փրկութեան համար հարկաւոր օգնութիւններ, բայց այս ամէն շնորհքները մեզի չեն օգներ՝ եթէ չեն մերձեցուիր։ Ինքն Յիսուս դիզեց ասանկ ընելու համար, մեծ գանձ մը, բայց աս գանձը զորն որ Յիսուս կրնար մեզի բաշխել առանց մեր կողմանէ փոյթ մ'ունենալու, չ'ուզեր մեզի մատակարարել եթէ մենք ալ մեր գործքերովը գործակից չենք ըլլար։ Կ'ուզէ զմեզ նորէն ծնանել նոր կենաց համար՝ երբոր աշխարհք կու գանք, բայց կ'ուզէ որ ի գործ դնենք Մկրտութիւնը, կ'ուզէ թողութիւն տալ մեր մեղքերուն, բայց կ'ուզէ որ իր սուրբ օգնութեամբը ջանանք սրտանց անոնցմէ զարշիլ, կ'ուզէ մեզի հետ միանալ եւ սուրբ սիրով կապուիլ, բայց կ'ուզէ որ մենք ալ



ամենայն զօրութեամբ ետեւէն երթանք իրեն հաւնելու թէ՛ սիրոյ գործքերով եւ թէ՛ Ս. Հաղորդութեամբ. կ'ուզէ տալ մեզի Ս. Արքայութիւնը՝ զորն որ ինք մեզի համար արդիւնաւորեցաւ, բայց կ'ուզէ որ մենք ալ բարի գործքերով փութանք ժառանգելու. այսպէս աս մեր խնդրոյն մէջն ալ, եթէ կ'ուզէ զմեզ խաչին Ս. Զոհին ամենայն պտղոց մասնակից ընել, կ'ուզէ միանգամայն որ մենք ալ նորոգելով այն մեծ Զոհը խորանին վրայ, խանդակաթ գթով, յարգութեամբ, հաւատով, սիրով, յիշատակն ընենք այն ամէն բաներուն, որ ինք կատարեց չարչարուելով ու մեռնելով մեզի համար։

Ինչ ասանկ ալ կ'իմացուի Ս. Պօղոսի այն խօսքը թէ՝ իմ մարմնոյս վրայ կը լեցնեմ Քրիստոսի չարչարանաց պակասութիւնը անոր եկեղեցւոյն համար[1]։ Կ'ուզէ ըսել որ թէպէտ Յիսուս Քրիստոս առատ գնով ամենուն համար հատուցում ըրաւ, այսու ամենայնիւ կ'ուզէ որ ամէն մարդ աղօթքով, չարչարանքով, զոհերով նոյն հատուցումը իրեն սեպհական ընէ, իրեն մերձեցընելով այն աստուածային գինը եւ այսպէս մեր գործքերը չէ թէ գին կ'ըլլան, հապա թէութիւն եւ միջնորդ Քրիստոսի փրկագործութիւնը մեզի մերձեցընելու։

Այս վարդապետութիւնը Յիսուսի ան-

[1] Կող. Ա. 24։

իրաւութիւն ընելու տեղ, ինչպէս կ՚երազեն Բողոքականները, անոր գերագոյն պատիւ կ՚ընծայէ. նախ վասնզի մենք կը ճանչնանք որ առանց Յիսուսի երբեք չէինք կրնար ունենալ այն գանձը արգեանց ու շնորհաց, որ հարկաւոր են մեր փրկութեան. եւ դարձեալ վասն զի կը ճանչնանք որ առանց Յիսուսի չէր տրուեր մեզի այն շնորհքը եւ ոչ արդիւնքները մեզի կը մերձենային:

Երկրորդ՝ Բողոքականներուն նենգութիւնը կը խայտառակէ, որոնք այս պատճառանքով թէ՝ մեր ամէն ջանքը, մեր բարի գործքերը, մեր խորաններուն Զոհը, անարգութիւն են խաչի Զոհին, կը կարծեն թէ ալ պարտաւորութիւն չունին բան մ՚ընելու, ուստի եւ իրենց փրկութեան վրայ անհոգ եւ անփոյթ կ՚ապրին. յանդուգն վստահութեամբ մը Յիսուսի արդեանցը վրայ: Թէ սակայն որչափ հեռու է Քրիստոնէական հոգիէ, կրնայ իմանալ ամէն մարդ՝ որ առողջ մտաց տէր է եւ քիչ մ՚ալ Ս. Աւետարանը կարդացեր է, որ ամէն էջերուն մէջ կը յորդորէ եւ կը սաստէ զմարդիկ, որ իրենց անձանց դէմ պատերազմելով, ամէն տեսակ չարէ ետ կենան եւ որպիսի դժուարութեամբ ալ ըլլայ ի գործ դնեն ամէն տեսակ բարի գործքերն եւ առաքինութիւնները:

Ասոր համար երբոր կը զրուցեն մեզի, թէ Պատարագի Ս. Զոհը անարգութիւն



է Յիսուսի, ըսէք անոնց որ Յիսուսի անարգութիւն ընողն իրենց ապերախտութիւնն է այսպիսի մեծ բարերարութեան դէմ, իրենց նենգութիւնն է, որ անոր յարգը չի ճանչնար, իրենց չարութիւնն է, որ այսպիսի ծանր մոլորութիւններ կը ցանէ եւ կը ջանայ Քրիստոնեաները այսպիսի Զոհէ մը զրկելով, բարբարոս երկիրներու վայրենիներուն եւ անբան անասուններուն կարգը դնել:

Բաւական մի համարիք միայն սոսկալ ու զզուիլ այնպիսիներէն, որ այս մեծ Զոհը կը թշնամանեն. այլ ջանացէք որ ըլլաք անոնցմէ, որոնց յարգութիւնը եւ մեծարանքը չափ չունի առ այս Ս. Խորհուրդ, ինչու որ ամէն աղօթքներէ որ կարող էք ընել, անհամեմատ առաւել են Ս. Պատարագին աղօթքները: Ան առենն է, որ կու գայ Յիսուս խորանին վրայ. Յիսուս որ կը զոհուի, Յիսուս որ կ՚ընծայուի երկնաւոր Հօր, Յիսուս որ իր աստուածային միջնորդութեամբը բարեխօս կ՚ըլլայ մեզի համար. ան առենն է որ շնորհքները կ՚անձրեւեն սաստիկ առատութեամբ երկրիս վրայ եւ ամենեւին մեզի չի զլացուիր բան մը, որ հարկաւոր է մեր փրկութեան: Վա՜յ երկրիս՝ եթէ այս մեծ Պատարագին Զոհը չէր ըլլար: Գուցէ թէ Աստուած հազար անգամ՝ աշխարհքս կործանած էր, ինչպէս ըրաւ ջրհեղեղի ժամանակ: Բայց միանգամայն վա՜յ մեզի, եթէ գագրելու

ըլլայ աս մեծ Ջուհը մեր երկիրներուն մէջ։

## ԳԼՈՒԽ ԺԵ.

### Սուտ է Բողոքականութիւնը, հանդէպ աւանդութեան ըսածին։

Բողոքականութիւնը սուտ կրօնք մըն է, վասն զի կ'արհամարհէ ու կը մերժէ Յիսուսի Քրիստոսի կարգադրութիւններուն շատերը, զորոնք ինքն Յիսուս հաստատեց եւ կ'ուզէր որ ասոնք ալ միշտ պահուին եկեղեցւոյ մէջ։ Այսու ամենայնիւ՝ իրենց վրայ կերպարանք մը առնելու եւ ապահովութեամբ խաբելու համար, Բողոքականները Աստուծոյ խօսքին վրայ մեծ յարգութիւն կը կեղծաւորեն, կը գովեն զանիկայ, կը բարձրացընեն, կը մեծցընեն եւ կ'աղաղակեն միշտ Աստուծոյ խօսքը, Աստուծոյ խօսքը։ Երանի՜ թէ սրտանց զրուցէին, ուրով իրենց այնչափ չարեաց մէջ բարի բան մ'ալ ըրած կ'ըլլային։ Բայց ճշմարիտն ան է, որ իրենց յարգութիւնը ուրիշ բան չէ, բայց եթէ արտաքին երեւոյթ մը. որովհետեւ նոյն իսկ Աստուծոյ խօսքերուն այն աստիճանի հարուածներ եւ եղծումներ տուեր են եւ կու տան մինչեւ ցայսօր իրենց մեկնութիւններովը, որ սոսկում կը բերէ։ Իրենք են, որ Աստուծոյ խօսքին այնպիսի այլանդակ հակառակախօսութեանց եւ ամբարիշտ հայհոյութեանց նշանակութիւն-



ներ կ'ընծայեն. իրենք են՝ որ Աստուծոյ խօսքերը Ս. Գրոց մէջ կը կրճատեն, ամէն ազգաց նաեւ բարբարոսաց առջեւը կը նետեն՝ անոնց ճշմարտութիւն ծանուցանելու պատճառանքով։ Իրենք են՝ որ այն ճշմարտութիւնը պարունակող թղթերը կ'առնեն եւ իրենց պիտոյից նաեւ աղտեղեաց կը գործածեն։ Աս է՝ որուն շատ եւ շատ անգամ փորձն առած են իրենց Ս. Գրոց բռնուած ընկերութիւններովը։

Բայց մեծագոյն անիրաւութիւնը որ կ'ընեն Աստուծոյ խօսքին ան է, որ անոր մեծ մասը հաւատացեալներէն կը ծածկեն։ Ի՞նչպէս։ Բողոքականները Աստուծոյ խօսքը կը ծածկե՞ն։ Մեզի կ'ըսէին թէ Ուղղափառներն են որ կը ծածկեն եւ հիմայ կ'ըսէք թէ Բողոքականներն են։ Բայց իրն աս է։ Բողոքականներն այն պարտապաններուն կը նմանին, որոնք պարտատէր կը ձեւանան որպէս զի պարտքերնին չվճարեն։ Ահաւասիկ ինչպէս։ Պէտք է գիտնաք որ Աստուծոյ խօսքը մենք ընդունած ենք Սուրբ Առաքեալներուն եւ Աւետարանիչներուն բերնէն, որոնք մեզի աւանդեցին ինչ որ նոյն իսկ Յիսուսի բերնէն լսեցին, կամ տեղեկացած էին անոնցմէ որոնք Յիսուսէն լսած էին. եւ ինչպէս որ թէ՛ Առաքեալները եւ թէ՛ Աւետարանիչներն առանձինն Հոգւոյն սրբոյ ներկայութիւնը քովերնին ունէին որ չմոլորին, ինչպէս Յիսուս իրենց խոստացած էր, այսպէս այս

շնորհքն ունեցան լսածնին մտքուր անա-
րատ եւ առանց մոլորութեան ուրիշներուն
աւանդելու։ Բայց երկու եղանակաւ նոյնը
մեզի աւանդեցին։ Մէկ մը գրելով Յիսու-
սէն լսածներնուն մէկ մասը, եւ այսպէս
առաջանք Նոր Կտակարանին Գիրքերը, ուս-
տի իրաւամբ կ'ըսենք թէ նոյն Գիրքերը կը
պարունակեն Աստուծոյ խօսքը եւ անանց
անսահման յարգութիւն կ'ընծայենք։ Եր-
կրորդ եղանակն որով մեզի նոյնը աւան-
դեցին՝ քարոզութիւնն է, որ ըրին կեն-
դանի ձայնիւ։ Ինչու որ՝ ինչպէս Հոգւոյն
սրբոյ ներկայութիւնը իրենց հետ էր գրած
ատեննին, այսպէս նաեւ նոյն Հոգւոյն
սրբոյ ներկայութիւնն իրենց կ'առաջնոր-
դէր երբ որ Ս. Հաւատքը կը քարոզէին
եւ Եկեղեցիներ կը հիմնէին։ Եւ այս եր-
կրորդ եղանակաւ աւանդինն մեզի Յիսու-
սի խօսքերը կը ծանուցանէին, վասն զի
Յիսուս ալ գլխաւորաբար այս եղանակը
կ'իմանար ու կ'ուզէր, երբ որ իր Առա-
քեալները կը խրկէր կենդանի ձայնիւ իր
հաւատքը սորվեցընելու, եւ գրքերէն յա-
ռաջ նոյնը մարդկան սրտին մէջ տպաւո-
րելու եւ տնկելու։ Այսպէս կենդանի ձայ-
նով յայտնուած Աստուծոյ խօսքը ընդու-
նեցան ժողովուրդներն ու նուիրական հօ-
վիւները, զորոնք Առաքեալները առաջնորդ
կը դնէին իրենցմէ հաստատուած Եկեղե-
ցիներուն վրայ, եւ պահեցին ամենայն
զգուշութեամբ Ս. Եկեղեցւոյ սովորու-

թեանց, Սրբոց Հարց գրուածքներուն,
ժողովքներու հրամանագիրներուն եւ հրա-
պարակական աղօթքներու մէջ եւ եկաւ
հասաւ մինչեւ մեզի։ Եւ այս ան Աստու-
ծոյ խօսքն է, որ մենք աւանդութիւն կ'ա-
նուանենք, վասն զի մեզի աւանդուեցաւ
մեր Հաւատոյ նախնիքներէն։

Իսկ թէ այս աւանդութիւնը հարկաւոր
է Ս. Կաթուղիկէ Եկեղեցւոյ, բոլորովին
անտարակուսելի է նոյն իսկ Ս. Գրոց ճշ-
մարտութենէն։ Ս. Գիրքը չէ՞ որ կ'ըսէ Ս.
Պօղոսի հետ. Եղբա՛րք, ասէ, հաստատ կեցէք
բռնեցէք աւանդութիւնները, որ սորվեցաք թէ
խօսքով եւ թէ թուղթով[1]։ Այս խօսքերուն վրայ
Ս. Յերոնիմոս կը գրէ, թէ ուրեմն յայ-
տնի է որ Առաքեալներն ամէն բան գրով
չսորվեցուցին, այլ շատ բան առանց գրոյ։
Ս. Յովհաննէս չէ՞, որ կը հաստատէ թէ
Շատ բան ունէի ձեզի գրելու, բայց չուզեցի
թուղթով ու մելանով գրել[2], այլ կենդանի
ձայնով ըսել եւ այսպէս աւանդութիւն
թողուլ։ Ս. Պօղոս չէ՞, որ Տիմոթէոսին
կը գրէ. Ողջամիտ խօսքերուն օրինակը ունեցիր,
որ ինձմէ լսեցիր, ամուր պահէ այս բարի աւան-
դը[3], եւ քիչ մը վար. Ինչ որ ինձմէ լսեցիր
շատ վկաներով, նոյնը յանձնէ հաւատարիմ մար-
դիկներու, որոնք կարող ըլլան ուրիշներուն ալ սոր-
վեցնել[4]։ Արդեօք ըսուի՞լ աւելի յայտնի բան
մը աւանդութիւնը վաւերացընելու համար։

[1] Բ. Թես. Բ. 14։
[2] Բ. Յովհ. 12։
[3] Բ. Տիմ. Ա. 13։
[4] Անդ.

Ահաւասիկ բովանդակ դատաստանական քննութիւնը։ Առաքեալը կը խօսի. վկաները կը հաստատեն, Ս. Տիմոթէոս նոյնը ուրիշներուն կը յանձնէ եւ անոնք ալ դարձեալ ուրիշներուն յաջորդաբար իբրեւ ժառանգական աւանդ մը, եւ այսպէս կը պահուի աւանդութիւնը բովանդակ Եկեղեցւոյ մէջ։ Այս ամենայն պարզ եւ պայծառ չէ՞։

Բաց աստի՝ եթէ աւանդութեան մէջ Աստուծոյ խօսքը չի պարունակուիր, հարկ կ'ըլլայ դատապարտել իբրեւ առանց հաւատոյ գրեթէ ամէն հին Եկեղեցիները եւ նոյն իսկ Ս. Առաքեալներէն հաստատուածները, ինչու որ ամէնքն ալ շինուեցան կենդանի ձայնով տրուած, ոչ թէ գրաւոր խօսքով, մանաւանդ որ Նոր Կտակարանին քանի մը մասերը Յիսուսի մահուանէ վաթսուն տարի ետքն ալ գրուեցան, եւ ամէնքը մէկանց հաւաքուած եւ Եկեղեցւոյ հասարակաց չէին եղած, բայց եթէ չորս հարիւր տարիէ աւելի ետքը։ Արդ՝ թէ որ չենք ուզեր ըսել որ այն Եկեղեցիներուն բազմութիւնը, որոնք լի էին եռանդով եւ արդէն մարտիրոսներու գեղեցիկ լեգէոններ երկինք խրկած էին, ամենեւին հաւատք ունեցած չէին, վասն զի չունէին Աստուծոյ գրաւոր խօսքը, բայց եթէ աւանդութեան մէջ միայն պարունակուածը. ուրեմն հարկ է ըսել թէ աս ալ կենդանի եւ ճշմարիտ Աստուծոյ խօսքն է։



Վերջապէս աւելին կ'ուզէ՞ք. թէ աւանդութիւնն Աստուծոյ ճշմարիտ խօսքը կը պարունակէ, ասիկայ նոյն իսկ Բողոքականներուն վկայութեամբը հաստատուած կը գտնենք, որոնք իրենք իրենց հակառակ խօսելով, ինչպէս սովորական է ամէն հերետիկոսներու, թէ որ մէկ կողմանէ նոյնը յամառութեամբ կ'ուրանան՝ մէկալ կողմանէ կը ճանչնան եւ կ'ընդունին։ Անոնք իրենց հաւատքին բոլոր հիմը Ս. Գրոց վրայ դրած են եւ կը հաստատեն թէ՝ ասիկայ միայն Աստուծոյ ճշմարիտ խօսքն է։ Լաւ է. բայց կը պարտաւորին գիտնալ մեծագոյն ապահովութեամբ թէ որոնք են գրքերը, որ բուն ու ճշմարիտ Աստուածաշունչ Ս. Գիրքը կը կազմեն. կը պարտաւորին գիտնալ թէ ամենեւին ապականուած չեն անոնք, ինչու որ մեզմէ այնչափ հեռաւոր ժամանակաւ գրուած եւ ուրիշ այնչափ գրքերու մէջ խառնուած ըլլալով որոնք նաեւ Ս. Գիրք կը հրատարակուին. եթէ այդ Բողոքականները ստուգութիւն չեն ունենար թէ՝ որոնք են ճշմարտախօսները, իրաւցընէ զրկուած կ'ըլլան այն Գրքերէն, որոնց վրայ բոլորովին իրենց հիմը դրած են։ Արդ՝ աս ամէն բանի մէջ ապահովութիւննին ուստի՞ է։ Մի միայն աւանդութեան գիտելով, որ կը պահուի Ուղղափառ Եկեղեցւոյ մէջ։ Ուստի եթէ Ս. Գրոց գանձը ունենալ կ'ուզեն, կը պարտաւորին Աւանդութեան ճշմարտու-

թիւնն ընդունիլ ։ Հոս որովհետեւ իրենց շահաւոր է՝ կ'ընդունին Աւանդութիւնը. բայց՝ երբոր ընդհանրապէս ընդունելութիւն չփոթութեան մէջ կ'իյնան եւ կը պարտաւորին խոստովանիլ իրենց մոլորութիւնը այնչափ անչափ պահանջմունքներուն մէջ, ան ատեն նորէն կը մերժեն ։ Ըսել է թէ՝ ըստ քմաց կը գործեն, երբոր ըստ կանոնաց ճշմարտութեան չեն երթար ։ այլ այնու եղանակաւ որ իրենց նախապաշարեալ խորհրդոցը համաձայն է ։

Այսու ամենայնիւ հրաժարելով այնչափ գեղեցիկ աւանդութիւններէն, որոնք մեզի ճշմարտութիւնը կը յայտնեն, մանաւանդ թէ նոյները դատապարտելով, Աստուծոյ խօսքին մեծ մասը մեզմէ կը վերցընեն ։ Այսինքն է՝ այն ամենայն որ գրուած չէ Աւետարաններուն մէջ, բայց Առաքեալներն աւանդեցին Յիսուսէն կենդանի ձայնով լսելով այն ամենայն՝ զոր Աստուած իրենց ներքուստ ազդեց որպէս զի մեզի սորվեցընեն, եւ իրենք ալ շուտ մը ի գործ դրին Եկեղեցին հաստատելու, եւ Եպիսկոպոսներն ու Քահանաները ուսուցանելու ատենին, զորոնք ամէն կողմ կը տեղաւորէին պարզ հաւատացելոց հօտը կառավարելու համար. այս ամենայն մեզմէ կը յափշտակեն եւ այսպէս Քրիստոնեայ ժողովուրդը շատ բարձրագոյն ճշմարտութիւններէ եւ հարկաւոր բարեպաշտական գործքերէ կը զրկեն. մէկ խօսքով կը վերցընեն մեզմէ Աստուծոյ խօսքին մեծ մասը, այսու ամենայնիւ միշտ Աստուծոյ խօսքը, Աստուծոյ խօսքը կ'աղաղակեն ։



Իրենք չեն ուրեմն Աստուծոյ բոլոր խօսքը ունեցողները, որ անոր այնպիսի մեծ մասը մէկդի կը ձգեն. ուստի եւ իրենք չեն Յիսուսի Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին կազմողները, որն որ թէպէտ եւ անսահման յարգութիւն ունի Աստուծոյ խօսքին այն մասին վրայ՝ որ սուրբ գրքերուն մէջ կը պարունակուին, բայց նուազ յարգութիւն ալ չունի մէկալ մասին, որ կենդանի ձայնիւ Առաքեալներէն՝ իրենցմէ հիմնուած Եկեղեցիներուն աւանդուած է եւ կը պահուի սուրբ Հովիւներուն կենդանի վարդապետութեան մէջ, զորոնք Աստուած իր Եկեղեցին կառավարելու համար դրած է ։

Անկից ուրիշ ծանրակշիռ հետեւութիւն մ'ալ կրնանք հանել, եւ է ձեր տալու պատասխանը անօրէնութեան վարդապետներուն, որոնք ձեզի նենգաւոր հարցմունքներ կ'ընեն Կաթուղիկէ վարդապետութեան քանի մը կէտերուն վրայ ։ Ո՞ւր գրուած է ձեզի կը հարցընեն, Ս. Աւետարանին մէջ թէ՝ օրինակի համար, ծոմ պահելը հարկաւոր է ։ Ո՞ւր գրուած է թէ՝ կը պարտաւորինք Պատարագ տեսնել ։ Ո՞ւր գրուած է թէ՝ հարկ է Եկեղեցի երթալ, խորհուրդներ ընդունիլ եւ այնչափ բարեպաշտութեան գործքեր կատարել ։ Եւ դուք պէտք է պատասխան տաք. թէ այս ամե-

նոյն ըստ բաւականին պայծառ գրուած է Նոր Կտակարանին մէջ կարդալու աչք ունեցողներուն համար. բայց եթէ գրուած ալ չըլլար, վնաս չէր տար. վասնզի Աստուծոյ խօսքն է, զոր աւանդեցին Առաքեալները Եկեղեցւոյ եւ Եկեղեցին մեզի սորվեցուց։ Եւ Աստուծոյ խօսքը, որ կուգայ կը հասնի մեզի աս ճամբով, այնչափ անսխալ է՝ որչափ անսխալ է անիկայ, որ Նոր Կտակարանին մէջ գրուած է։ Ուստի եթէ սրբապիղծ է ով որ չ՚ընդունիր կամ կը մերժէ Ս. Գիրքը, հաւասարապէս սրբապիղծ է ով որ չ՚ընդունիր ու կը մերժէ Աւանդութիւնը։

Բայց կ՚ըսեն Բողոքականները, թէ Ս. Գիրքը կը դատապարտէ զԱւանդութիւնը։ Եւ դուք պատասխան տուէք անոնց, թէ անիրաւութեամբ կը ստեն։ Բոլորովին ասոր հակառակ Ս. Գիրքը կը գովէ կը յանձնէ մեծապէս։ Ս. Պօղոս կ՚ուզէ որ աւանդութիւնները զգուշութեամբ պահուին եւ ոչ մը ուրիշ վարդապետութիւն մ՚ընդունին, բաց անկէ որ ինք կենդանի ձայնով սորվեցուցեր էր, եւ թէ քանի մը վարդապետութիւններ ալ ինք չէր ուզեր գրով, այլ միայն կենդանի խօսքով աւանդել։

Եւ եթէ անգամ մը Յիսուս Քրիստոս Փարիսեցիները յանդիմանեց, որ օրէնքը զանց կ՚առնէին որպէս զի իրենց աւանդութիւնները պահեն[1]. Յիսուսի խօսքը ամենեւին առաքելական աւանդութեանց համար չէր, որոնց վրայ հիմայ կը խօսինք. կը խօսէր Յիսուս քանի մը սովորութիւններու վրայ, որ ժողովուրդն աւելորդապաշտութեամբ կը կատարէր աստուածային ճոխութեան դէմ։ Ի՞նչ զեղեցիկ բան. որովհետեւ կը դատապարտուի ժողովրդեան մէջ մտած զեղծում մը, հա՞րկ է նաեւ ջնջել ամենայն օրէնքները որ ժողովրդեան համար տրուած են։ Յիսուս Քրիստոս կ՚արգելէ Հրէից մէկ քանի սովորութիւնները, զորոնք պահելու համար Աստուծոյ օրէնքը ոտքի տակ կ՚առնէին, ուստի կը հետեւցնեն Բողոքական ուսուցիչները՝ թէ ուրեմն ալ պէտք չէ ընդունուին Առաքելոց ամենասուրբ վարդապետութիւնները, որոնք բոլորովին համաձայն են աստուածային պատուիրաններուն։ Բայց՝ խենթի խօսք չէ՞ ասիկայ։ Այս անանկ է։ Մենք իբրեւ Առաքելական աւանդութիւն ուրիշ բան չենք ճանչնար, բայց եթէ այն աւանդութիւնները՝ որոնք ամենայն ճշդութեամբ այնպէս ճանչցուած են ի Հայրց, ի Վարդապետաց եւ Ս. Եկեղեցւոյ յիշատակարաններէն։ Մենք զանոնք ժողովրդէն չենք առնուր, այլ նուիրական Հովիւներէն։ Մենք զանոնք չենք ընդունիր, երբ հակառակ են Աստուծոյ խօսքին որ Ս. Գրոց մէջն է, որովհետեւ Աստուծոյ խօսքը հակառակ Աստուծոյ խօսքին չի կրնար ըլլալ։ Մենք զանոնք չենք ընդու-

[1] Մատթ. ԺԵ. 3. եւ հետեւ.

նիր՝ բայց եթէ Ս. Եկեղեցւոյ ճոխութե-
նէն, որն որ չի կրնար սխալիլ ճշմարտու-
թեան պահպանութեան մէջ, զորն որ Յի-
սուսէն ընդունած է։ Ասոր համար այն
աւանդութիւնները նաեւ Ս. Գրքեն կը
վաւերանան, որ զմեզ կը պարտաւորէ ան-
սալ Եկեղեցւոյ մեր ամէն տարակուսնե-
րուն մէջ։

Արդ՝ աւանդութիւնը չընդունիլը աս
պատճառանքով որ Յիսուս Քրիստոս ար-
գելեր է քանի մը Հրէից սովորութիւննե-
րը, որ զեղծմամբ եւ անկարգութեամբ
ժողովրդեան մէջ մտած էին եւ աւելի եւս
անկարգութեամբ ի գործ կը դրուէին, բո-
լորովին չգիտնալէն յառաջ կու գայ թէ
ինչ է Աւանդութիւնը, Յիսուսի խօսքե-
րը ծուռ իմանալ է, եւ պատճառանք
խնդրել մին է իրենց անհնազանդութիւնը
եւ ապստամբութիւնը ծածկելու համար։

Ուրեմն անտարակուսելի կը մնայ թէ՝
Բողոքականները Աւանդութիւն չունենա-
լով, չունին ամէն Աստուծոյ խօսքը եւ
չունենալով ամէն Աստուծոյ խօսքը՝ չեն եւ
չեն կրնար ըլլալ ճշմարիտ Եկեղեցի Յի-
սուսի Քրիստոսի։



## ԳԼՈՒԽ ԺԶ.

Սուտ է Բողոքականութիւնը, վասն զի չէ փո-
փոխերէ մարդոց վարքը։

Յիսուս Քրիստոս աշխարհք եկաւ՝ աշ-
խարհքս նորոգելու համար. աս փոխմանս
գլխաւորաբար պատերազմ բացաւ տիրող
մոլութեանց դէմ, որ են հպարտութիւն,
ագահութիւն եւ զգայականութիւն։ Բայց
աս մոլութիւնները ինչպէս կրնանք ճնշել
ու յաղթել։ Ուրիշ կերպով կարելի չէ,
բայց եթէ պատերազմելով արութեամբ
եւ մահացուցմամբ։ Ասոր համար բոլոր
Ս. Աւետարանը մշտնջենաւոր խրատ մըն
է՝ մեր կամքը, մեր մոլութիւնները, մեր
ցանկութիւններն ուրանալու։ Ով որ ա-
սիկայ չէ իմացեր, անիկայ սուրբ Աւետա-
րանէն եւ Յիսուսի վարդապետութենէ
բան մը իմացած չունի։

Ամէն մարդ կը տեսնէ ուրեմն որ հար-
կաւոր է աս փոխմանս համար աշխատա-
նք քաշելը, որպէս զի թէ՛ Աստուծոյ
հատուցում մ՚ըլլայ մեղաց համար, զոր
այս կրքերը մեզի գործել տուին, թէ՛ ջըն-
ջուին վրաներնէս մոլութեանց ունակու-
թիւնները, եւ թէ՛ աւելի եւս ճնշուի մար-
մինը, որ ամբարտաւանութեամբ կ՚ըմբոս-
տանայ, եւ եթէ չսանձուի զմեզ ամէն տե-
սակ չարեաց մէջ կը տանի կը ձգէ։ Ասոր
համար Յիսուս Քրիստոս մարմնոյ մոլու-
թեանց դէմ առանձինն ծոմապահքը հրա-

մայեց։ Մեզի յայտնել տուաւ թէ՝ դեւեր մը [illegible] (եւ սոնք են Հայոց վճռոյն համեմատ զգայականութեան սատանաները) ելլել չէ հալածել՝ եթէ ոչ աղօթքով ու պահքով[1]. Նմանապէս մեզի թէ՝ երբոր փեսան մեզմէ հեռացուելու ըլլայ, այսինքն է՝ երբոր ինք իր աստուածային ներկայութիւնը մեզմէ հեռացընելու ըլլայ. ան ատենը պահք պիտ՛ի բռնենք[2]. եւ ենթադրելով այս պարագը՝ մեզի իմանալ տուաւ, թէ պահք պահելու ատեններս պէտք չէ ընենք ինչպէս կ'ընեին Փարիսեցիները, որ երեսնին կը տխրեցնեին եւ [illegible] կը կեղծաւորեին, որպէս զի պահք պահելնին ցուցնեն իր մարդոց. հապա պէտք ենք ուրախութեամբ ընել, իբրեւ թէ ըսեմ զուարթութեամբ մը, որպէս զի չերեւայ թէ շատ է Աստուծոյ բրածնիս այսչափ քիչ բան իրեն ընծայելով[3]։

Բայց ասկից՝ որովհետեւ ինքն Յիսուս ուզեց ամէն բանի մէջ մեզի օրինակ ըլլալ, թէպէտ եւ իր անձին համար ամենեւին հարկաւորութիւն չունէր պահոց, վասնզի եւ ոչ վտանգի մէջ կրնար ըլլալ փորձուելու կամ հրապուրուելու իր ամենասուրբ մարմնէն, այսու ամենայնիւ անապատ քաշուեցաւ եւ հոն անցուց քառասուն օր եւ քառասուն գիշեր ամենախիստ ծոմապահութեամբ։ Այս պատուիրաններէն եւ աս օրինակէն եկեղեցին սորվելով

[1] Մարկ. Թ. 28
[2] Մատթ. Թ. 15
[3] Մատթ. Զ. 16։



կարգադրեց սուրբ ծոմապահութիւնը, եւ երկու եղանակաւ բրաւ։ Աւելի խստիւ պատուիրեց Մեծ պահոց, Յիսնակաց, Չորս եղանակներու եւ ուրիշ քանի մը օրերու ծոմապահութիւնը, որոնց մէջ ուզեց որ թէ մսեղէն չճաշակենք եւ թէ օրուան մէջ անգամ մը միայն ճաշակենք, թէպէտ եւ աս ալ ետքէն չափաւորեց. իսկ աւելի մեղմ եղանակաւ հրամայեց պահել Ուրբաթ ու Շաբաթ[1] օրերը, ուր մսեղէն չճաշակելը հաստատուն բռնեց, բայց մեր ազատութեան թողուց շատ անգամ ճաշակելը։

Արդ՝ բստ ինքեան աւելի ի՞նչ իրաւացի եւ ի՞նչ աւելի պատշաճագոյն բան կայ Քրիստոնեայ ժողովրդեան, եւ համաձայն Յիսուսի կամացը։ Կարելի՞ է ուրեմն տարակուսիլ, որ Քրիստոսի ճշմարիտ եկեղեցին չըլլայ անիկայ, որ կը հնազանդի այս պատուիրաններուն եւ կը նմանի աս օրինակներուն։ Ի՞նչ ըսենք ուրեմն Բողոքականներուն, որ ո՛չ հնազանդիլ եւ ո՛չ հետեւիլ կ'ուզեն։

Բայց Յիսուս Քրիստոս բսաւ, կը գրու-

[1] Հոս գրուածները արեւմտեան եկեղեցւոյ համար են։ Բայց յայտնի է որ Արեւելեան եկեղեցին ալ նոյնը կը պահէ բստ էական մասին, թէպէտ եւ եղանակին տարածութեան եւ օրերուն կողմանէ կը տարբերի։ Բայց թէ Արեւելեան եւ թէ Արեւմտեան եկեղեցիք կը միաբանին որ ծոմապահութիւնը եկեղեցւոյ հին ծէսն է։ Ծ. Թ.

ցեն Բողոքականները, թէ՝ ինչ որ բերնէն կը մտնէ՝ այն չի պղծեր մարդը. այլ այն որ բերնէն կ՚ելլէ[1], այսինքն է՝ անէծք, հայհոյութիւնք, անիրաւութիւնք, ատելութիւնք։ Այո՛, Յիսուս Քրիստոս ըսաւ այս խօսքերը. բայց ասոնք շատ հեռու են սուրբ ծոմապահութիւնք դատապարտելէն։ Ասիկայ իմանալու համար պէտք էր գիտնալ որ Հրեաները, որոնք միշտ մարմնաւոր ու ապուշ տեսութիւն մ՚ունէին, մաքրերնին գրած էին որ եթէ տեսակ մը արգելուած կերակուրներ ուտելու ըլլային, այս կերակուրները նիւթապէս հոգին կ՚աղտեղէին, իբրեւ թէ հոգին այնպիսի բան մըն էր, որ կերակրով կամ ըմպելիքով կրնար աղտեղիլ։ Տէրն մեր այս խարէութիւնք խելքերնէն հանելու համար, ըսաւ իրենց թէ՝ կերուած բանը նիւթապէս չ՚աղտեղեր, հապա ան որ կ՚աղտեղէ՝ անօրէն յօժարութիւններն եւ սրտի չար կամքն է։ Ասիկայ ամենաստոյգ է։ Բայց Կաթողիկեայք երբեք չըսին թէ կերակուրը նիւթապէս հոգին կ՚աղտեղէ. ոչ, այլ ներհակ կը սորվեցընեն՝ թէ ծոմն ու պահքը աւրուելու ատեն հոգին արատողը անհնազանդութիւնն է, որով մարդիկ Եկեղեցւոյ եւ Յիսուսի կամքին դէմ կը գործեն. ապաշխարանք քաշել չուզելը, երբոր հրամայած է՝ հրամայելու օրինաւոր իշխանութիւն ունեցողը. Յիսուսի օրինակներուն հետեւիլ չուզելն է, որն որ

[1] Մատթ. ժե. 11։



նոյները աշխարհքիս վրայ թողուց որ մենք ալ հետեւինք։ Այս յանցաւոր եւ չար կամքըն է՝ որ կ՚արատէ ու կը պղծէ սիրտը եւ աստուածային Մեծվայելչութիւնը կ՚անարգէ։ Ուստի՝ երբ որ կը լսէք, որ կ՚ըսեն ձեզի թէ ինչ որ բերնէն կը մտնէ՝ ան չի պղծեր, առանց պատասխան տուէք՝ թէ ինչ որ կը մտնէ Աստուծոյ կամացը դէմ, անհնազանդութեամբ Յիսուսի Քրիստոսի հրամանացը եւ ապստամբութեան հոգւով, այո՛ կը պղծէ եւ անանկ կը պղծէ որ դժոխքի յաւիտենականութեան արժանի կ՚ընէ. Ով որ Եկեղեցւոյ չի լսեր, զանիկայ Հեթանոսի եւ Մաքսաւորի տեղ դիր, կ՚ըսէ Յիսուս։ Եւ այնչափ ճշմարիտ է, թէ մենք չենք հաւատար անմտութեամբ որ կերակուրը կը պղծէ զհոգին, մինչեւ Եկեղեցին նոյնը հիւանդաց թոյլ կու տայ, եւ Եկեղեցին երբեք թող չէր տար՝ եթէ մեղք ըլլար։

Իսկ թէ աս է ճշմարիտ միտքը Յիսուսի խօսքին, պայծառ կը տեսնուի Անոր գործքէն. ինչու որ եթէ ինք ծոմապահութիւնք դատապարտել կ՚ուզեր, ինչպէս կ՚ըսեն Բողոքականները, ինչո՞ւ ինքն ալ կը պահէր։ Ուրեմն Յիսուս կը հրամայէ բան մը եւ ետքէն ինք ուրիշ բա՞ն կ՚ընէ։ Ինչո՞ւ պահեց Ս. Յովհաննէս Մկրտիչ։ Ինչո՞ւ պահեցին Սուրբ Առաքեալները, ինչպէս ունինք Ս. Գրքէն։ Ո՞հ. միթէ Առաքեալները չէի՞ն գիտեր որ Յիսուս ծոմապահութիւնք արգելեր է։ Թո՛ղ դատա-

պարտէն ուրեմն թէ կը համարձակին, թող դատապարտէն աստուածային Փրկիչը իր Առաքեալներովը եւ կամ լաւն որ Ս. Եկեղեցին անոնցմէ առնելով շարունակէ իր ծոմապահութիւնները։

Թէրեւս կը բաղձաք գիտնալ թէ՝ ո՞րն է ճշմարիտ պատճառը, որուն համար Բողոքականները եւ անսանձ մարդիկ այնչափ ծոմապահութեան դէմ կը պոռան կը կանչեն։ Ահաւասիկ աս է։ Անսանձ սէրն որ ունին իրենց մարմնոյն. ասոնք երբեք չհասկցան Առաքելոյն խօսքը որ կ՚ըսէ, թէ «Որոնք որ Յիսուսի Քրիստոսին են Սուրբերին, անոնք իրենց մարմինը իր հեշտութիւններովը ու ցանկութիւններովը խաչ հանեցին»[1], եւ ոչ ալ իմացան նոյն Առաքելոյն գործքը երբ կ՚ըսէր թէ. «Ես իմ մարմինս կը ճնշեմ ես կը ծառայեցնեմ»։

Իրենք ողորմելի ստրուկներ են իրենց հաճոյքներուն ու հեշտութեանը, եւ ասոր համար չեն կրնար տանիլ որ Քրիստոնէից մէջ խօսուի վշտամբերութեան, մահացուցման, ծոմի եւ ապաշխարութեան վրայ։ Եւ որովհետեւ շատ ամօթալից բան մը կ՚ըլլար բուն պատճառն յայտնելը որ զիրենք կը մղէ. հնարք մը կը փնտռեն ըսելու թէ Յիսուս Քրիստոս ծոմապահութիւնն արգիլեր է։

Բայց դուք թող տաւէք ըսեն ինչ որ կ՚ուզեն եւ մի խռովիք. վասնզի Աստուած

[1] Գաղ. Ե. 24.



գիտէ ժամանակը իրենցմէ համար պահանջելու ծոմապահութիւնն ու բերնուն համար. եւ հաստատուն կեցէք ծոմապահութեան եւ նոյնը յարգելու մէջ, ջանացէք միշտ աւելի եւս ճշմարիտ Հաւատքը սիրել, որ Յիսուսի նմանելով քաշած ապաշխարանքներովը, նոր ցոյց մը կու տայ իր ճշմարտութեանը։

## ԳԼՈՒԽ ԺԵ.

### Սուտ է Բողոքականութիւնը, քանզի վերջին ժամուն մէջ անոր կը հերքէ։

Մարդ ցորչափ առողջ, առոյգ եւ ծաղկեալ վիճակի մէջ է, սովորական կերպ մ՚ունի մտածելու, զորն որ շատ անգամ կը փոխէ, երբ որ չարիքները, դժբախտութիւններն վրան կը թափին։ Բայց առաւել զարմանալի փոփոխութիւնները կը հանդիպին մահուան ժամուն մէջ։ Ի՞նչ է ասոր պատճառը։ Ա՛յն է որ մարդ իր կրքերէն եւ աշխարհքին անխելք ուրախութիւններէն թմրած ատեն՝ կը մոռնայ ինք զինք, իր պարտքերը, արդարութիւնն ու ճշմարտութիւնը. եւ երբոր Աստուծոյ ձեռքէն կը տանջուի, ան ատեն Անտիոքոսի ըրածը կ՚ընէ, ինք իրեն կու գայ ու կ՚ըսէ. «Ո՜հ, հիմայ կը յիշեմ չարիքները՝ որ ըրի Ես մեղքերը որ գործեցի»[1]։ Այո, ճրագն որ կը վառի մահուան անկողնոյ քովը, կը ցրուէ

[1] Ա. Մակ. Զ. 12.

շատ խաւարներ եւ կը ծագէ այնպիսի կեն-դանի լոյս մը, որ իրերը կենդանութեա-նը մէջ տեսնուածէն՝ բոլորովին տարբեր կ'երեւան: Եւ վճիռը որ մահն անոնց վրայ կը կտրէ, նոյն իսկ Հոգին Սուրբ կը հաս-տատէ. Ո՜վ մահ, ընդունելի են քո դա-տաստաննիքդ[1]: Լսեցէք ուրեմն մահուան այլ եւ այլ վճիռներն, որ կու տայ աս խնդրոյն մէջ:

Երբեք մէկը գտնուած է, որ մահուան ժամուն մէջ զղջացած ըլլայ կաթոլիկեայ ըլլալուն կամ Բողոքականութիւնն ընդու-նած չըլլալուն վրայ: Եկէք, ըսէք. երբեք եղա՞ծ է Ուղղափառ մը, որ զղջացած ըլ-լայ ամէն բանի մէջ եւ ամէն եղանակաւ կաթոլիկէ Եկեղեցւոյ հնազանդ. Ս. Քա-հանայապետին հպատակ ըլլալուն, ատեն ատեն սուրբ խորհուրդներն ընդունելուն, Եկեղեցւոյ մէջ աղօթելուն, ամենասուրբ Կոյսը յարգելուն, Սուրբերը պատուելուն, ծոմապահութիւն ընելուն, ապաշխարանք քաշելուն եւ Կրօնքի ամէն բարի կրթու-թիւնները կատարելուն վրայ: Ըսէ՛ք հա-մարձակ, գտա՞ք մէկը՝ որ այս ամենայն ը-րած ըլլայ. այսինքն՝ ճշդիւ այս սոսկալի ժամուն մէջ իր Ուղղափառ ըլլալը ուրա-ցած ըլլայ, հրաժարած ըլլայ եւ իր փրկու-թիւնը ապահովցնելու համար Բողոքական մտնելու շնորհքը խնդրած ըլլայ: Բացէ՛ք բոլոր գրքերը. կարդացէ՛ք ամէն պատմու-

[1] Սիրաք. ԽԱ. 3.



թիւնները. այս դէպքը երբեք դիմացնիդ չ'ելլեր:

Բոլորովին ատոր ներհակը, ան՝ որ աղէկ ի գործ դրած է սուրբ Ուղղափառ Հաւ-տաքը, այն ժամուն մէջ աւելի եւս սեր-տիւ կը կապուի անոր հետ, անդադար ինք զինքը Յիսուսի, Ս. Կուսին, Սուրբերուն կը յանձնէ. Ս. Խորհուրդները, Եկեղե-ցւոյ ամէն օրհնութիւնները կը խնդրէ եւ անոնց մէջ կը գտնէ ան օգնութիւնները, որ իրեն կը մատուցանէ իր բարեգութ Մայրը. կը գտնէ փրկարար քաջալերութիւն մը, քաղցր համակերպութիւն մը, մինչեւ նաեւ ճաշակ մը սուրբ ուրախութեան, եւ կը մեռնի օրհնելով զԱստուած Ուղղա-փառ ապրելուն համար եւ կը բաղձայ մեռ-նիլ ինչպէս ապրած էր: Եթէ կան ոմանք որ ան ատեն խղճի խայթ կ'ունենան, ատու-գիւ Ս. Եկեղեցւոյ պատուիրաններն ըստ բաւականին աղէկ չպահելնուն համար է: Ասիկայ ստոյգ, հանապազօրեայ եւ սովո-րական դէպք մըն է, որուն դուք ալ հա-զար անգամ վկայ եղած էք: Արդ՝ աս ինչ կ'ուզէ ըսել: Այս վայրկեանը ալ ծաղրե-լու, ծիծաղելու ատեն չէ. կ'ուզէ ըսել ուրեմն թէ մահուան անկողնոյ մէջ վճի-ռը կը տրուի, թէ կաթոլիկեայ Կրօնքը միայն է որ կը բանայ փրկութեան ճամբան: Պրաունշուայկի Ուլրիկոս իմաստուն դուքսը աս պատճառէ շարժեցաւ Բողոքականու-թիւնը ձգելու եւ կաթոլիկէ Կրօնքը ըն-

գուններու։ Հաստատուն կեցեր ուրեմն այս կրօնքին մէջ. որ ձեզի այն վայրկեննին մէջ այնչափ փառաւորութիւն կու տայ։

Եթէ մանչուան անկողնոյ մէջ Կաթողիկեայ մը երբեք չէ զղջացեր խիստ ճշգութեամբ իր Կրօնքը պահելուն, եւ երբեք չէ ուզեր Բողոքական ըլլալ իր փրկութիւնն աւելի եւս ապահովցնելու համար. գուցէ թէ նոյնը պատահած է նաեւ Բողոքականներուն։ Ո՛չ. իրենցմէ քանիններ սար ներհակ բաղձացին Ուղղափառ ըլլալ նոյն ահաւոր վայրկեննին մէջ, իրենց Կրօնքին վրայ ապահովութիւն մը չունենալով։ Մինչեւ Հենրիկոս Ը. այն ժամանակը որ այնչափ հակառակութիւններ սերմանեց Անգղիոյ Եկեղեցւոյն մէջ. վերջին ժամերուն մէջ խղճմտանքին խայթերը հանդարտեցընելու մտօք ուզեց նորէն Կաթողիկեայ՝ Ուղղափառ ըլլալ. թէպէտ եւ աղէկ չի գիտցուիր թէ բանը ինչպէս գնաց։ Քրիստոնէից հիւանդանոցներու մէջ շատ անգամ՝ կը պատահի որ խեղճ Բողոքականները, այն վերջին վայրկեաններուն մէջ Աստուծոյ շնորհքէն շարժելով եւ յաւիտենականութիւնը առջեւնին ունենալով, կ'ուզեն մեզմէ ըլլալ։ Մինչեւ՝ Սեւաստոպոլի վերջին պատերազմին ատենը, շատ դէպքեր պատահեցան, որ խեղճ զինուորները կը խնդրէին այս մեծ շնորհքը եւ կ'ընդունէին. Կաթողիկեայ մեռնելու. եւ այս ամենայն ան ատենները ուր եւ ոչ մէկ Կա-



թողիկեայ մը երազեց երբեք այն վերջին ժամուն մէջ Բողոքական ըլլալ։ Այս ամենայն ի՞նչ կ'ուզէ ըսել։ Ո՛չ. մանչուան ճրագն իրաւցընէ մեծ լոյս կը ծագէ։

Բայց ի՞նչ պատահեցաւ մանչուան ատեն անոնց որոնք ուղղափառութիւնը ձգելով Բողոքական եղած էին։ Շատերը մեռան յայտնի նշաններ ցուցընելով իրենց դատապարտութեանը, ոմանք ալ զղջացան եւ իրենց մոլորութենէն ետ դարձան հրապարակաւ խոստովանելով որ մոլորեցան, պատուիրանազանց գտնուեցան, եւ թողութիւն խնդրեցին տուած գայթակղութեանց համար։ Լուտեր՝ գինեմոլութեան անկարգութիւններէն եւ ոճիրներէն ետքը գրեթէ յանկարծակի մեռաւ իրրեւ անասուն մը, եւ քիչ մը ետքը այնպիսի գարշահոտութիւն կը տարածէր, որ կապարէ սնտուկի մէջն ալ փակուած ըլլալով անկարելի էր տանիլը։ Կալվին փչեց հոգին որդերը գարշահոտ մարմնոյն վրայ կրելով եւ այնպիսի յուսահատական աղաղակներով ու հայհոյութիւններով, որ նոյն իսկ իր Բողոքականներուն վկայութեամբը սոսկում կը բերէր։ Զուինկլիոսի համար կ'ըսէր Լուտեր, թէ սատանան խղդեց զանիկայ իր հայհոյութիւններուն համար։

Զարամիտ Եղիսաբէթ թագուհին ինք զինքը ողորմելի կը կանչէր ու կ'ըսէր. Լուծ մը դրին պարանոցիս վրայ. եւ մեռաւ սեւամաղձութեամբ եւ գառն յուսահա-

տութեամբ։ Սփալաթին՝ Լուտերի ներքին բարեկամը կեանքը փճացուց՝ խղճի խայթերէն ու յուսահատութենէ մաշելով՝ եւ մինչեւ խելքն ալ կորսնցուց։ Յուստոս Յոնաս մեռաւ յուսահատելով Աստուծոյ ողորմութենէն։ Մաթեսիոս կենաց վերջին տարին անցուց խղճի խայթերու եւ վախերու մէջ յուսահատութեամբ։ Հռչակաւոր Պիտենպախ անդադար կը գրուցէր թէ դատապարտութեան մէջ ինկած է սուտ վարդապետութիւն մը պաշտպանելուն համար եւ մոլեգնութեան վայրկենի մէջ ինք զինքը պատուհանէն վարնետեց։ Վեց տարի ետքը մեռաւ եղբայրն ալ նոյն մոլորութեանց մէջ թաթխուած։ Համբաւաւոր Քէննի կենաց վերջին տարին անցուց միշտ լալով ու հեծկլտալով։ Ուրիշ շատերն ալ մեռան խենթանալով։ Իթէ այս հերետիկոսութեանց գախիչներուն, ամէն սոսկալի մահերը ձեզի պատմել ուզէի, զձեզ ստուգիւ ահու դողու եւ սարսափման մէջ կը ձգէի[1]։

Իսկ ստուգիւ այն վատ ուրացողները մահուան սոսկալի վայրկեններին մէջ, պիտ'որ յիշէին Ուղղափառ Եկեղեցւոյ ամէն վարդապետութիւնները, առաջին Սուրբ Հաղորդութիւնը որ ընդունեցան անմեղութեան վիճակի մէջ, Խոստովանութիւնները, Պատարագները եւ ամէն օգնութիւնները որ միշտ գտան մեր մէջը. եւ ո՜հ ան

[1] Տես Փէրրոնէ, կանոն հաւատոյ Մ. Գ. գ. Ջ։



տանն ի՛նչ խայթեր, ի՛նչ ցաւեր, ի՛նչ վախեր պիտ'որ չկրեն։ Ան տանն է, որ Տիտոսաթիի, Տէ-Սանքթիսի, Պորելլայի եւ ուրիշ վատանուն գրուածներու ընթերցուածէն շատ ու շատ տարբեր բաներ հարկաւոր պիտ'որ ըլլան զիրենք մխիթարելու։ Ան տանն պիտ'որ տեսնեն, թէ ամենայն ինչ կամաւոր պատրանք մը եղած էր իրենց կիրքերէն խաբուելով, եւ եթէ կարող եղան մոլորեցընել զմարդիկ, երբեք չկըրցան խաբել ոչ զԱստուած եւ ոչ իրենց խղճմտանքը։

Այսպէս անոնք որ վերջին ժամուն մէջ Աստուծմէ զարմի շնորհքն ընդունեցան, այնպիսի ցաւ, այնպիսի տոկումներ կրեցին, որ երբեք չէին կրնար հանգչիլ. Աստուծմէ եւ մարդիկներէն անդադար թողութիւն կը խնդրէին այն զարհուրելի մեղքին համար որ գործած էին Ս. Հաւատքնին ուրանալով։ Արդ՝ այս ամենայն ի՛նչ կ'ուզէ ըսել։ Կ'ուզէ ըսել ինչ որ Մելանքթոն Բողոքականը իր մօրը ըսաւ։ Այս բարի կինը խնդրեց իր որդիէն, որ այնչափ նոր կրօնքին մեծ վարդապետն ըլլալուն վրայ կը պարծենար, եւ խաբերայ քարոզութիւններովը այնպիսի շշուկ հանած էր, որ ըսէ իրեն անկեղծութեամբ, Կաթողիկեայ ըլլալն աւելի աղէկ էր, չէ նէ Բողոքական։ Մելանքթոն պատասխան տուաւ թէ լաւ է Կաթողիկեայ մնալը, ինչու որ (միտ դրէք պատճառին) Բողոքականութիւնը աղէկ էր

ապրելու համար, բայց մեռնելու համար լաւագոյն էր Կաթոլիկէ կրօնքը։ Իմացա՞ք հիմայ։ Զգայութիւնները գոհ ընելու, կրքերը բորբոքելու եւ ըստ քմաց ապրելու համար աղէկ է Բողոքականութիւնը, որ ամենեւին ոչ խոստովանութեան, ոչ Հաղորդութեան, ոչ Եկեղեցւոյ, ոչ Պատարագի, ոչ ծոմապահութեան հոգ ունի եւ այլն եւ այլն։ Բայց այն սոսկալի վայրկենին համար, որ մէկը Աստուածային Դատաւորին առջեւը պիտ'որ ելլէ, ուր յաւիտենականութեան մէջ պիտ'որ մտնէ, ուր համար պիտ'որ տայ իր ամէն գործերուն, ուր վճիռ պիտ'որ ընդունի կամ յաւիտենական վարձուց եւ կամ յաւիտենական տանջանքներու, այն վայրկենին համար լաւագոյն է Ուղղափառ Կրօնքը։ Արդ՝ ինչո՞ւ համար աշխարհք եկած են, բայց եթէ երջանիկ յաւիտենականութիւնը ստանալու։ Ո՞ր կրօնքն ուրեմն պէտք է ընդունինք։ Այն կրօնքը միայն որ մխիթարութիւն կու տայ մահուան ատեն, ապահովութիւն հոգեվարութեան մէջ եւ կը պատրաստէ յաւիտենական կեանք։

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## Խաբէութիւնք, որոնցմով ներս կը մտնէ Բողոքականութիւնը։

## ԳԼՈՒԽ Ա.

### Առաջին խաբէութիւն. Առաքինութեան ու սրբութեան ցուցնել

Եթէ սատանան ցուցընելու ըլլար որ երեւելապէս կը փորձէ զմարդիկ, ամենեւին բան մը չէր կրնար ձեռք ձգել, ինչու որ ամէնքն ալ Ս. Խաչին նշանովը կը զինուորէին եւ զինք կը հալածէին։ Այսպէս Բողոքականները որ ձեր հոգիները կ'ուզեն մոլորեցընել, եթէ ցուցընելու ըլլային ձեզի իրենց վարդապետութեանց ամէն զարշութիւնն ու տգեղութիւնը, ամենեւին բան մը չէին կրնար վաստըկիլ. ատոր համար բոլորովին ուրիշ կերպ կը կեղծաւորին եւ սուրբերու նմանութիւն ու կերպարանք կ'առնեն զձեզ խաբելու համար։ Ատոր մէջ կը նմանին հին հերետիկոսներուն, որոնք միշտ ի գործ դրին, ինչպէս կը վկայեն հին Հարք, ամէն տեսակ խաբէութիւն իրենց վախճանին հասնելու եւ այսպէս կը ստուգեն Յիսուսի Քրիստոսի խօսքը, թէ առջեւնիդ կ'ելլեն ոչխարի մորթով, բայց ներքուստ յափշտակիչ գայլեր են։

Ասոր համար պատշաճ կը համարիմ զձեզ զգուշացընել այսպիսի պատրանքներէն, յայտնելով ձեզի իրենց դաւանանութիւններն, որոնցմով համարձակօրէն սա ատեններս ձեզի որոգայթ կը դնեն։ Ամենէն յառաջ կը կեղծաւորին առաքինութեան մեծ եռանդ մը եւ սրբութեան սէր։ Ի սկզբան ուրիշ բանի վրայ չեն խօսիր բայց Յիսուսի Քրիստոսի, ընկերսիրութեան, չգողնալու, չհայհոյելու, զԱստուած հոգւով եւ ճշմարտութեամբ պաշտելու վրայ, ամէնքն ալ շատ աղէկ եւ շատ արդար բաներ. եւ ետքէն երբ որ անգամ մը զձեզ կը շահին այսպիսի սրբութեան երեւոյթներով, ծածուկ թոյնը ներս կը թափեն։ Այսպէս կ'ընէին, ինչպէս Որոգինէս կը վկայէ, Առաքելականները, Մարկիոնեան, Վաղենտինեան եւ ուրիշ հերետիկոսները, որոնք հեզութիւն մը, ընկերսիրութիւն մը, արդարութեան սէր մը ոմանք ալ (իրաւցընէ շատ քիչերը) մինչեւ նաեւ ողջախոհութիւն մը ցուցընելով, կը ջանային անուն առնալ, որպէս զի աւելի աջողութեամբ մոլորութիւննին տարածեն։

Արդ դուք զգոյշ կեցէք այս առաջին խաբէութենէն, ինչու որ Յիսուս Քրիստոս սիրել գիտնալու համար հարկաւորութիւն չունինք, որ Բողոքականները մեզի սորվեցընեն։ Մեր ժողովրդապետները, մեր քահանաները մեզի միշտ կը յիշեցընեն, թէ Յիսուս Քրիստոս մեր ամենաբարի Աստուածն է, մեր Հայրը, մի միայն փրկիչը, որ աշխարհք եկաւ մեր սիրոյն համար, ապրեցաւ ու գործեց մեր սիրոյն համար, եւ թէ պէտք ենք մեր յոյսն իրեն վրայ դնել, զինք սիրել ի բոլոր սրտէ եւ իրեն հնազանդ ըլլալ ամէն բանի մէջ որ մեզի կը հրամայէ։



Չեն գար մեզի նոր բան սորվեցընելու, երբ կ'ըսեն թէ կը պարտաւորինք մեկզմեկ սիրել։ Ու՞վ չի գիտեր թէ Ս. Կաթողիկէ Կրօնքը, երբեք ուրիշ բան չի յանձներ, բայց եթէ հարք՝ սիրեն իրենց որդիքը, որդիք՝ իրենց հայրերը, կինը՝ զէրիկը, էրիկը՝ զկինը, եղբարք՝ իրրեւ բարի եղբայրներ իրարու հետ վարուին, ազգականք՝ իրրեւ բարի ազգականներ իրարու հետ անանուին, մէկ խօսքով ոչ ոք ատելութիւն ունենայ իր մերձաւորին դէմ, մանաւանդ թէ ամէն մարդ ջանայ բարիք ընել նաեւ անոր, որ իրեն չարիք հասուցեր է։ Ինչպէս ունէի՞նք հարկաւորութիւն որ անոնք գային եւ իրենց մեղմխանդը մեզի այս ճշմարտութիւնները սորվեցընեին։

Այսպէս նաեւ այնչափ խօսք կը հանեն, թէ զձեզ կը խրատեն ու կը յորդորեն չհայհոյել։ Ո՛հ. իրաւցընէ եթէ անոնք չգային մեզի չսորվեցընեին, այս ամենայն պիտ'որ չգիտնայի՞նք արդեօք։ Ինչո՞ւ ուրեմն այնչափ կը քարոզուի մեր մէջ հայհոյութեան դէմ։ Ինչո՞ւ ընկերութիւններ

եւ եղբայրութիւններ գրուած են աշխարհ-քիս երեսէն այս չարը ջնջելու. եւ ինչո՞ւ խոստովանահայրերը երբ կը տեսնեն որ մէկը ամենեւին փոյթ չի տանիր իւր զինքն ուղղելու, մինչեւ սուրբ արձակումը կը զլանան։

Բայց զարմանալին ան է, որ մեզի խրատ ալ կու տան զԱստուած հոգւով ու ճըշ-մարտութեամբ պաշտելու, իբր թէ կա-թողիկեայքս իրենցմէ աւելի նոյնը յորդո-րած չըլլայինք. մենք որ ոչ միայն իրենցմէ աւելի նոյնը կը յորդորենք այլ նաեւ ի-րենցմէ ալ աւելի ի գործ կը դնենք։ Ի՞նչ է զԱստուած պաշտելը հոգւով ու ճշմար-տութեամբ։ Կ'ուզէ ըսել՝ թէ գոհ ըլլա-լու չենք բերնով զԱստուած գովելնուս եւ արտաքին գործքով պատուելնուս վրայ, այլ թէ նաեւ աստուածային պաշտաման ամէն գործքերը սրտանց պէտք է ընենք եւ ամենէն աւելի գործքով կատարենք ինչ որ Աստուած մեզի կը հրամայէ։ Աս է պաշտել հոգւով եւ ճշմարտութեամբ։ Արդ՝ Ս. Կաթողիկէ Եկեղեցին ուրիշ ի՞նչ կը հրամայէ, բայց եթէ մեր սիրտը զբա-ղեցընել ան ամէն բաներու մէջ որ աս-տուածային պաշտաման կը վերաբերի։ Գու-ցէ թէ ճշմարիտ չէ՞ որ մեզի անդադար կը յիշեցընէ Ս. Եկեղեցին, որ աղօթքի մէջ գոհ չըլլանք միայն բառերն արտաբերել-նուս վրայ թութակներու պէս, հապա սրտանց ընենք։ Գուցէ ճշմարիտ չէ՞, որ



երբ խոստովանելու կ'երթանք, կը պա-տուիրէ մեզի մեղաց վրայ սրտանց զղջալ, ապա թէ ոչ խոստովանանքը բանի մը չի ծա-ռայեր։ Գուցէ թէ ճշմարիտ չէ՞, որ կը խրատէ զմեզ, որպէս զի Ս. Հաղորդու-թեան ատեն եւ ետքը ուրիշ ատեններ ալ, սիրենք բոլորով սրտիւ մեր ամենա-բարի Յիսուսը, իրեն ընծայելով ամէն մեր խորհուրդները, մեր զգայութիւնները, մեր յօժարութիւնները։ Եւ ինչո՞ւ Աստուածա-ծին Կուսին գեղեցիկ գեղեցիկ տօներուն մէջ գթած Ս. Մօրերնուս աղօթել կու-տայ, որ ինք ընծայէ մեր սրտերը Յիսու-սին։ Աս ամէն բաները Ս. Կաթողիկէ Ե-կեղեցին միշտ մեզի չի՞ յանձներ, չի՞ յորդո-րեր։ Իրաւցընէ հարկաւո՞ր էր ուրեմն որ գային Բողոքականները եւ մեզի այս ճշմար-տութիւնները սորվեցընէին։

Իսկ Յիսուսի կամքը կատարելու նկատ-մամբ, որ իր պատուիրաններուն մէջ յայ-տնուած է, դուք ըսէք, ձեր ժողովրդա-պետները, ձեր քահանաները, միշտ նոյնը չե՞ն պատուիրեր, թէ բաւական չէ միայն բարի ըլլալ ուզելը, հապա հարկաւոր է զՅիսուս գոհ ընել՝ գործքով կատարելով ինչ որ ինք մեզի կը հրամայէ. թէ հարկաւոր է որ հայր եւ մայր ընտանեաց մէջ հըս-կեն իրենց որդւոց վրայ եւ թէ որդիք պատուեն իրենց ծնողքը, թէ գողութիւն ընելու չէ, թէ տօնի օրերը սուրբ պահե-լու է, թէ անէծքները, սուտ երդումնե-

րը, հայհոյութիւնները, անառակութիւն-ները, մէկ խօսքով ամէն աստուածային պատուիրաններու բռնաբարութիւնները մեծ մեղքեր են։ Դարձեալ տեղ տեղ չեն խրատեր եւ յորդորեր, թէ բաւական չեն գեղեցիկ խոստմունքները, հապա գործք հարկաւոր է, այսինքն է՝ գործքով ամէն մարդ իր վիճակին պարտաւորութիւնները պէտք է կատարէ։ Եւ հիմայ կու գան ա-տոնք մեզի այս ամենայն սորվեցընելու, ի-բրեւ թէ մենք Ուղղափառքս գիտցած չըլլայինք եւ տեղ տեղ, գեռ իրենք աշ-խարհք չեկած, քարոզած չըլլայինք։ Ի՛հ. մենք ալ գիտենք իրենցմէ աւելի, թէ հարկ է պաշտել զԱստուած հոգւով եւ ճշմար-տութեամբ։ Բայց գիտէ՞ք ինչ վախճանաւ այս ամենայն ձեզի կը զրուցեն։ Չէ թէ ի-րենց հոգն է, այլ անոր համար որ պար-զամիտները խաբեն։ Այս ամէն բարի բա-ները յորդորելէն ետքը, ծածուկ ծածուկ իրենց թոյնը թելադրել կը ջանան. ուրիշ բան չէ ըրածնին, բայց եթէ ինչպէս ցորեն ծախողներէն ոմանք կ'ընեն, պարկին բե-րանը քիչ մը աղէկ ցորեն կը դնեն, բայց ամբողջ պարկը գէշ ցորենով լեցուն է։ Այսպէս ալ ասոնք, այս բարի յորդորնե-րով քիչ մը անուն առնալէն ետքը, ձե-զի այնչափ գէշ գէշ բաներ կը սորվեցը-նեն։ Կ'ըսեն թէ Աստուծոյ սէրը բարի է, բայց ետքէն կ'աւելցընեն թէ հարկաւոր չէ Եկեղեցի երթալ, Ս. Պատարագ տես-



նել, մեղքերը խոստովանիլ, Ս. Քառա-սնորեայ Պահքը պահել։ Կ'ըսեն թէ պէտք չէ հայհոյել, ահաւասիկ բարի ցորենը. բայց ետքէն կու տան ձեզի գէշ ցորենը, աւել-ցընելով թէ Աստուծոյ քահանայիցը պէտք չէ անսալ, թէ պէտք չէ անոնց խօսքին մտիկ ընել, թէ պէտք չէ վախնալ այն պատիժներէն որ կը սպառնան Աստուծոյ անունովը։ Կ'ըսեն թէ հարկ է զԱստուած պաշտել հոգւով ու ճշմարտութեամբ, ահաւասիկ աղէկ ցորենը. բայց ետքէն կու տան ձեզի գէշ ցորենը ըսելով՝ թէ հար-կաւոր չէ Ս. Հաղորդութիւնն ընդունիլ, թէ աղէկ չէ Ս. Աստուածածնայ եւ Սրբոց դիմելը, թէ աւելորդ են այն ամէն արա-րողութիւնները, որ կը կատարէ Ս. Եկե-ղեցին։ Ա՜հ, մատնիչ գայլեր։ Երբե՞ք կըր-նայիք հաւատալ, իմ սիրելիքս, որ ա-տոնք զձեզ խաբելու համար կարո՞ղ էին այնչափ ցոյց, այնչափ եռանդ աստուած-պաշտութեան ցուցընել։ Իրաւցընէ՝ ճիշդ այնպէս է, ինչպէս ձեզի կ'ըսէի. ոչխարի մորթով կը ծածկուին որ վրանիդ յար-ձակին։ Հիմայ դուք ասանկ ըրէք երբ կը սկսին այն ամէն կցուրդները լսելու. շուտ մը զձեզ զգուշութեան մէջ դրէք. շու-տով մէկդի ըրէք այնպիսիները՝ պատաս-խան տալով, թէ ստուգիւ հարկ է զԱս-տուած պաշտել հոգւով ու ճշմարտու-թեամբ, բայց անոր համար պէտք չէ աս-տուածպաշտութեան ամէն արտաքին մէջ-

նորդները զանց առնել, զորօրինակ Աղօթքները, Ս. Խորհուրդները, բարի գործքերը. ինչպէս իրենք ձեզի կը պնդեն. մանաւանդ թէ հարկաւոր է ամենայն եռանդով ի գործ դնել, վասն զի ասոնք են, որոնցմով կը հասնինք ճշմարիտ երկրպագութեան հոգւով ու ճշմարտութեամբ։

## ԳԼՈՒԽ Բ.

### Երկրորդ խաբէութիւն. Հաւատքը բաւական է փրկութեան համար։

Առջինին նման է աս երկրորդ խաբէութիւնը, որով այնչափ կը բարձրացընեն Ս. Հաւատքը եւ կ'ըսեն թէ բաւական է մինակ յԱստուած հաւատք ունենալ եւ ուրիշ ամէն բան հարկաւոր չէ փրկութեան. եւ այս Հաւատքն է զոր որ այնչափ աղաղակաւ կը բարձրացընեն։

Արդ լսեցէք՝ իմ սիրելիքս. Բողոքականները կ'ըսեն, թէ բաւական է յԱստուած հաւատք ունենալը փրկուելու համար. լաւ է. եթէ Ուղղափառները ասոր բոլորովին հակառակը ըսելու ըլլան, այսինքն է՝ թէ մինակ հաւատքը բաւական չէ. որո՞ն պէտք է հաւատալ։ Ես կը կարծեմ՝ թէ ամբողջ Ս. Կաթողիկէ Եկեղեցին գոնէ կ'արժէ այնչափ, որչափ կրնայ արժել այս նոր ուսուցիչներէն մէկը։ Ուստի առանց այնչափ պատճառներ յառաջ բերելու, դատը արդէն տեսնուած վճռուած է։



Բայց գուցէ պատճառներ կը պակսին ցուցընելու, թէ բաւական չէ մինակ հաւատքը։ Ամէն սուրբ գրքերը լեցուն են անյաղթելի ցոյցերով։

Բաւական չէ մինակ հաւատքը. ինչու որ յայտնի կը գրուցէ Ս. Պօղոս թէ հաւատքէն զատ նաեւ յոյս եւ սէր հարկաւոր են եւ եթէ այնչափ հաւատք ալ ունենանք մինչեւ լեռը ըլլանք լեռները փոփոխել, եւ նորանշան հրաշքներ գործել, առանց սիրոյ ոչինչ ենք Աստուծոյ առջեւը[1]։ Բաւական չէ մինակ հաւատքը. վասնզի կը պահանջուին նաեւ բարի գործքերը։ Ս. Յովհ. Առաքեալ պայծառ կը խօսի թէ Ով որ չէ պահեր Աստուծոյ պատուիրանները, անիկայ սէր չունի[2], ինչու որ սիրոյ ցոյցը աստուածային օրինաց պահպանութիւնն է։

Բաւական չէ հաւատքը. ինչու որ Ս. Պօղոս բարձրաձայն կ'աղաղակէ, թէ ամէնքս ալ Աստուծոյ ատենին առջեւը պատիժ կամ վարձք պիտ'որ առնուն իրենց գործքերուն համեմատ[3]։ Եւ Տէրն մեր Յիսուս Քրիստոս մեզի կը ստուգէ, թէ վերջին օրը անոնք որ բարի գործքեր ըրած չեն, ըսեն ինչ որ կ'ուզեն, պիտ'որ դատապարտուին առանց ողորմութեան դժոխքին մէջ[4]։

[1] Ա. Կորն. ԺԳ. 2։
[2] Ա. Յովհ. Բ. 3. 4։
[3] Բ. Կորն. Ե. 10։
[4] Մատթ. ԻԵ։

Բաւական չէ հաւատքը. վասնզի թէ որ անիկայ բաւական ըլլար, բովանդակ աշխարհքս կը կործանէր. եթէ հաւատք ունենալու պատճառանքով ամէն առաքինութեանց գործադրութիւնը անարգելով՝ մարդիկ իրենք զիրենք, ինչպէս ըրին Լուտերականները, արձակ համարձակ ամէն մոլութեանց տալու ըլլային Յիսուսի Քրիստոսի հրամայած վարդապետութեան եւ նոյն իսկ ուղիղ մտաց դէմ։

Բաւական չէ վերջապէս հաւատքը. վասն զի անոնք որ բաւական է կ'ըսեն՝ եւ ոչ նոյն հաւատքն ունին, ոչ ունին եւ ոչ ալ կարող են ունենալ. ինչու որ եւ ոչ իսկ գիտեն թէ ինչ է աս հաւատքը։

Եթէ խօսածնին լսելու ըլլաք, մեծամեծ գովեստներ կու տան Ս. Հաւատքի եւ շատ զարմանալի բաներ կը զրուցեն անոր վրայ. բայց եթէ հարցընելու ըլլաք իրենց, թէ ճշգիւ ինչ կը համարին Հաւատքը, կը շփոթին եւ չեն գիտեր ինչ պատասխան տան։ Ես շատերուն հետ անիկայ փորձեցի եւ ճիշդ ատանկ է։ Կը համարինք, պատասխան կու տան ոմանք, թէ Աստուծոյ հաւատալն է. բայց ստուգիւ եւ ոչ մէկու մը բաւական է Աստուծոյ միայն հաւատալը փրկուելու համար։ Սատանան ալ կը հաւատայ Աստուծոյ, կ'ըսէ Ս. Յակոբոս. Մանաւանդ դեւերն ալ կը հաւատան, որ կը սոսկան դողալով[1]։ Բայց ոչ որ

[1] Յակ. Բ. 19։



կ'ըսէ թէ սատանային փրկութեան տեղի կայ։

Կ'ուզէք դուք ուրեմն գիտնալ թէ ստուգիւ Ս. Հաւատքն ինչ է։ Ես ըսեմ ձեզի եւ իմանանք որ Բողոքականները ամենեւին հաւատք չունին։

Հաւատք չէ այսպէս շփոթ հաւատալը թէ կայ Աստուած եւ Փրկիչ մը, այլ այն հաւատքը որ կը հաւատայ ամէն բաներու որ այս Աստուած եւ Փրկիչը յայտնած է, եւ կը հաւատայ անոր համար, վասն զի Ինք գերագոյն ճշմարտութիւնը այն բաները յայտնած է եւ վասն զի Ս. Եկեղեցին զանոնք առջեւնիս կը դնէ հաւատալու։

Նախ հաւատալ այն ամէն բաներու որ Աստուած յայտնած է, այսինքն է՝ ամէն բանի որ կը բովանդակուի Ս. Գրոց մէջ, եւ ետքը ամէն բաներու, որ Աւանդութիւնը կը պարունակէ, մէկ խօսքով ամենայն բան որ Ինք կաթողիկէ Եկեղեցւոյ աւանդեր է եւ կաթողիկէ Եկեղեցին մեզի կ'առաջարկէ։

Բողոքականները չեն հաւատար ամէն բանի զոր Աստուած յայտնած է, այլ ըստ քմաց կ'ընտրեն, մէկը կ'առնեն, մէկալը կը թողուն։ Օրինակի համար չեն հաւատար թէ եօթն են խորհուրդները, թէ աստուածային է Պատարագի զոհը, թէ բարի է Սուրբերը օգնութեան կանչելը, թէ պարտք է Պատարագ տեսնելը, խոստովանիլը, Հաղորդուիլը եւ հարիւր ուրիշ բաներ։ Ու-

րէն ամենուն չհաւատալով, չունին ճշմա- րիտ հաւատքը։

Բայց եւ ոչ ալ կրնայ ըսուիլ թէ կը հաւատան Աստուծոյ, ինչու որ երբ իրենք իրենցմէ ընտրութիւն կ՚ընեն, ընդունելու եւ մերժելու բաներու մէջ, ստուգիւ չեն հաւատար ուրիշներուն, հապա իրենց ան- ձանց, իրենց քմաց եւ իրենց դատաստա- նին եւ ոչ աւելի։

Գլխաւորաբար չեն հաւատար Եկեղե- ցւոյ ճոխութեանը, որ կ՚առաջարկէ։ Արդ՝ պէտք էք գիտնալ թէ ասիկայ շատ ծանր եւ կարեւոր կէտ մըն է։

Յիսուս Քրիստոս Եկեղեցին տուաւ մե- զի իբրեւ ուսուցիչ եւ կ՚ուզէ որ լսենք Անոր։ Ինքն Յիսուս ըսաւ իր պաշտօնեա- ներուն համար. Ով որ ձեզի կը լսէ՝ ինծի կը լսէ. ով որ զձեզ կ՚անարգէ՝ զիս կ՚անարգէ[1]։

Յիսուս ըսաւ թէ Եկեղեցին է Սիւն եւ հաստատութիւն ճշմարտութեան[2]. Ըսաւ դար- ձեալ թէ Ով որ Ս. Եկեղեցւոյ չի լսեր, քեզի ի Հեթանոսի եւ Մաքսաւորի տեղ դրուի[3]։ Ուրեմն իր կամքն է, որ մենք յայտնուած ճշմարտութիւններու հաւատալու ատեն, հարկաւ Եկեղեցւոյ վարդապետութեանը կապուինք։ Նա Եկեղեցին է, որ կը պահէ Ս. Հաւատքի ամէն ճշմարտութիւնները, ասիկայ մեզի Ս. Գիրքը կը մեկնէ, ասիկայ ճշմարիտ աւանդութիւնները մեզի կը ծա-

[1] Ղուկ. Ժ. 16։ [3] Մատթ. ԺԸ. 17։
[2] Ա. Տիմ. Գ. 15։



նուցանէ եւ Յիսուս կ՚ուզէ որ Հաւատոյ ամէն ճշմարտութիւնները մեզի ասոր ձեռ- քովը առաջարկուին։ Բայց Բողոքական- ները հպարտութեամբ լեցուն, կը մերժեն Եկեղեցւոյ վարդապետական իշխանութիւ- նը, կ՚ուզեն իրենք իրենցմէ ըլլալ, նախ ի- րենք զիրենք դատաւոր կը դնեն այն բա- ներուն որոնց պիտ՚որ հաւատան եւ ետքէն շողոքորթութեան համար զձեզ ալ դա- տաւոր կը նստեցընեն։

Ամէն մարդ, ինչպէս կ՚ըսեն, Ս. Գիրքը պէտք է կարդայ եւ ճշմարտութիւնը գտնէ. ամէն մարդ պէտք է անոր վրայ քննութիւն ընէ եւ յիմարութեամբ ու անօրէնութեամբ կը պահանջեն որ դատաւոր ըլլայ այն խո- րունկ ճշմարտութեանց այնպիսի մէկը որ երբեք չէ սորված, եւ ոչ ալ ժամանակ եւ կարողութիւն ունեցեր է սորվելու։ Ա- սով անկարելին կ՚ուզեն փորձել, եւ այն- պէս կը յոգնեցընեն ու կը թմրեցընեն խեղճ ժողովրդեան խելքն ու միտքը, որ ա՛լ չի գիտեր ինչ հաւատայ եւ ինչ չհաւատայ, այսպէս կը խլեն բոլորովին սրտերնուն մէ- ջէն Ս. Հաւատքը. ինչու որ երբ մեր հաւատքը չենք դներ Ս. Եկեղեցւոյ ճո- խութեանը այլ մեր միայն դատաստանին վրայ՝ արդէն Հաւատքը վերցուած է։ Ա- հաւասիկ, իմ՛ սիրելիքս, ինչ է ատոնց ըրածը որ միշտ հաւա՛տք, հաւա՛տք կը կանչեն, ուրիշ բան չէ բայց եթէ յափշ- տակել ձեզմէ հաւատոյ անգին գանձը.

մտքերնին տոգորել մոլորութիւններով եւ սրտերնին լեցնել հպարտութեամբ եւ ունայնութեամբ։

## ԳԼՈՒԽ Գ.

### Ներքին [illegible]։ Մենք [illegible] փորձերը։

Բողոքականները, ինչպէս նախընթաց գլխուն մէջ տեսանք, չէ թէ միայն հաւատք չունին, այլ նաեւ ուրիշներուն վրայ նոյնը կ'եղծանեն։ Բայց ինչո՞ւ ուրեմն միշտ նոյնը բերաննին է, ինչո՞ւ այնչափ կը գովեն ու կը յորդորեն։ Ի՞նչ վախճան կրնայ ունենալ աս իրենց հնարքն ու կեղծաւորութիւնը։ Ես յայտնեմ ձեզի եւ ծանուցանեմ միանգամայն իրենց մէկ խաբէութիւնն ալ, որով ձեր Կրօնքին որոգայթ կը դնեն։ Կը գովեն ու կը բարձրացընեն Հաւատքը, որպէսզի ետքէն դիւրութիւն ունենան Կաթողիկէ ուղղափառ բարեպաշտութեան ամէն կրթութիւններն ու գործքերը ոտքի տակ առնուլ։

Գիտած էք, ինչ կ'ընեն տրտնջողներէն չարերը։ Իսկզբան կը սկսին քիչ մը աղէկ խօսիլ անձինքներու վրայ, որպէս զի ճշմարտախօս երեւան, եւ ետքէն անգամ մ'որ բերաննին կը բանան բամբասելու, ալ Աստուած գիտէ ինչպէս անոնց պատիւն ալ համբաւն ալ գետնէ գետին կը զարնեն։

Ասանկ կ'ընեն ասոնք ալ, իսկզբան



բարձր գովեստներով քարոզ մը կու տան Հաւատոյ վրայ. բայց արդէն երկրորդ մասին մէջ վար կ'իջնան դատապարտելու ամենէն սուրբ եւ աստուածահաճոյ գործքերը. զորոնք Ս. Եկեղեցին ի գործ կը դնէ հաւատացելոց բարեպաշտութիւնը սնուցանելու համար։ Հոս իրենց չարամիտ հրապոյրներէն մէկ քանին կ'ուզեմ ժողվել. մտացածներուն վրայ ուրիշ տեղ արդէն պիտ'որ խօսիմ։ Արդ՝ գովելով հաւատքը՝ կը ցուցնեն որ հարկաւոր չէ Եկեղեցիներու մէջ ժողվիլը աղօթելու համար, որովհետեւ ամէն տեղ բարի է, ինչպէս կ'ըսեն նաեւ թէ այնչափ հարկաւոր բաներ չեն ծէսերն ու արարողութիւնները, զորոնք Ուղղափառք սովոր են ընել եւ թէ Աստուած մեզմէ ուրիշ բան չի խնդրեր։ Ասոնք մէյմէկ կարիճներ են, որ թոյներնին պոչերնուն վրայ է։ Տեսնենք ուրեմն ասոնց հաշիւը։

**Հարկաւոր չէ Եկեղեցի երթալ**, կը ցուցնեն. եւ ինչո՞ւ. վասն զի Աստուած ամէն տեղ կը գտնուի։ Ուրեմն ինծի թող պատասխան տան. Հին ատեններն ալ Աստուած ամէն տեղ չէ՞ր գտնուեր։ Այո՛, ճշմարիտ է։ Այսու ամենայնիւ ինչո՞ւ ուրեմն ուզեց Աստուած որ Երուսաղէմ մեծ հոյակապ տաճար շինուի, եւ ամէնքն ալ նաեւ հեռաւոր գաւառներէն հոն երթալու պարտաւորուին։ Եթէ Աստուած ամէն տեղ կը գտնուի, կրնար զանոնք այն

ճանապարհորդութենէն ազատ ըլլալ։ Բաց աստից՝ ինչո՞ւ ինքն իսկ Յիսուս տաճարի մէջ ներկայ կը գտնուէր։ Ո՛չ, միթէ ինքն ալ Աստուած եւ մարդ, Եկեղեցւո՛յն կը կարօտէր։ Գիտէ՞ք պատճառը։ Այս է. թէպէտեւ Աստուած ամէն տեղ է, սակայն ամէն տեղ չ'ուզեր նոյն ունկնդրութիւնն ընել։ Այսր տեղ ուզեց որ Եկեղեցի երթանք, հոն աւելի մտադիր ըլլանք, եւ մեր բարեպաշտութիւնը օգնութիւն գտնէ եւ աճի այնչափ արտաքին միջնորդներով պատկերաց, խաչելութեան, մոմեղինաց եւ զարդուց, մեր եղբարցը բարի բարի օրինակներով։ Յիսուս ուզեց Եկեղեցին, վասն զի ուզեց որ մեր աղօթքը հասարակաց միատեղ ըլլայ. եւ հրատարակեց որ ուր շատերը մէկտեղ ժողված են իր անուամբը, ինքն ալ անոնց մէջն է։

Բայց ուրիշ ծանր պատճառ մ'ալ կայ. զորն որ չտեսնելու համար խլուրդներէն աւելի կոյր պէտք է ըլլալ։

Յիսուս Քրիստոս մեր Տէրը, ինչպէս վերն ըսի, հաստատելով իր աստուածային մարմնոյն եւ իր անգին արեանը ամենօրհնեալ խորհուրդը, ուզեց մեր մէջը գտնուիլ եւ մեր խորաններուն վրայ Տապանակներուն մէջ բնակիլ. հոս իր աստուածութենէն զատ ունինք նաեւ իր ամենասուրբ Մարդկութիւնը, որն որ միայն երկինքը եւ քահանայագործեալ նշխարքներու մէջ կը գտնուի։ Ո՞վ չի տեսներ ու-



րեմն թէ որչափ մեծ փոյթ պէտք է ունենան Հաւատացեալները Եկեղեցւոյ մէջ կենալու։ Սուրբերը ստուգիւ իրենց սրտի մեծ գիւրութիւնը հոն կը գտնէին. եւ հոգւով երկնաւոր բաներու զբաղեալ, խորին յարգութեամբ իրենց աստուածային Փրկիչը կը մեծարէին հրեշտակներու եւ հրեշտակապետներու ընկերութեամբը, որ միշտ իրենց ի խորհրդեան նուիրեալ Աստուծոյն բոլորտիքն առած կը գովեն, շնորհակալութիւն կ'ընեն կ'օրհնեն ու կ'երկրպագեն։ Ահաւասիկ ինչու համար Եկեղեցւոյ մէջ կը կեցուի։

Հարկաւոր է նաեւ ներկայ գտնուիլը, վասն զի հոն միայն կը մատուցուի մեր մեծ Զոհը, հոն յարգութեան համար (երբ հիւանդ չենք կամ' պատճառ մը չունինք ազատ ըլլալու) Մկրտութեան, Դրոշմի, Ապաշխարութեան եւ Ս. Հաղորդութեան խորհուրդները կ'ընդունինք. հոն միատեղ ժողված հաւատացեալներուն Աստուծոյ խօսքին գանձը կը բացուի ճշմարտութեամբ։ Հոն կը ժողվինք հասարակաց աղօթքն ընելու, որ աւելի ընդունելի է։ Նոյն իսկ նիւթական միութիւնը որ կը ցուցընենք երկրիս վրայ Աստուծոյ տանը մէջ, պատկեր մըն է այն միութեան, զորն որ կը յուսանք օր մը երկնաւոր Երուսաղէմի մէջ վայելել, ինչպէս որ խորանն ալ նշանակ է Յիսուսի, որ է Վէմ անկեան եւ միացուց երկու Կտակարանները, այսինքն Հրէից ու-

Հեթանոսաց ժողովուրդը՝ զԱստուած կատարելապէս պաշտելու. այս եւ ուրիշ խորհուրդները զորոնք մանր մանր համրելը շատ երկայն կ'երթայ, կը ցուցընեն թէ որպիսի տգիտութեամբ եւ չարամտութեամբ այն թշուառները կը դատապարտեն Եկեղեցի երթալն ու ներկայ գտնուիլը։

Բայց եթէ կ'ուզէք վերջին ցոյց մ'ալ, նոյնը կը գտնէք այն յիմարական պատճառին մէջ, որ յառաջ կը բերեն Բողոքականները իրենց հայհոյութիւնները ջատագովելու համար։ Յիսուս Քրիստոս պատուիրեց որ, կ'ըսեն, «աղօթենք [illegible] մէջ, եւ թէ [illegible], եւ ծածուկ աղօթենք»[1], եւ դարձեալ [illegible] ժամանակ հասած է, ուր ոչ այս լերան մէջ, եւ ոչ Երուսաղէմ [illegible], այլ ամէն տեղ աղօթք պէտ՛որ ըլլայ[2]։ Եւ այս Յիսուսի խօսքովը կը կարծեն թէ կարող են հաստատել որ Եկեղեցիներու մէջ աղօթք պէտք չէ ընել։ Անմիտներ։ Ի՞նչ կ'ուզէր ըսել Յիսուս, երբ կը պատուիրէր որ ծածուկ աղօթենք։ Կ'ուզէր յանդիմանել (ինչպէս պայծառ կը տեսնէ Աւետարանը կարդացողը), կ'ուզէր յանդիմանել Փարիսեցիներուն կեղծաւորութիւնը, որոնք կանգուն շիտակ կը կենային փողոցներու գլուխը եւ հրապարակներու անկիւնները եւ կ'աղօթէին, որպէսզի ամէնքն ալ զիրենք տեսնեն եւ անոնուն աչքին մէյմէկ սուրբեր երեւան։

[1] Մատթ. Զ. 6։ [2] Յովհ. Դ. 21—23։



Անոնց Յիսուս ազդեցութիւն ըրաւ որ տներնուն մէջ աղօթեն, եւ չընեն այն անապարծութիւնները՝ լի ամենայն հպարտութեամբ եւ ունայնութեամբ։ Նաեւ մեր ատեններս ալ, երբ որ կը տեսնենք այս կեղծաւորներէն մէկը որ նման գործողութիւններ կ'ընէ, կը յիշեցընենք իրեն Յիսուսի ազդեցութիւնը. բայց ատոր ու Եկեղեցի երթալու կամ չերթալու մէջ ի՞նչ յարաբերութիւն կայ։ Յայտնի է, որ ստէպ Եկեղեցի երթալու յորդորած ատեն, չենք իմանար որ երթան մարդիկ ու իրենք զիրենք ցուցընեն ու պարծենան։

Մէկալ խօսքերն ուղղեց Յիսուս Սամարացւոյն, որ աւելորդապաշտութեամբ կը համարէր թէ այն ծանօթ լերան վրայ կը պարտաւորէին միայն աղօթել, որպէս զի աղօթքնին աղէկ ըլլար, եւ վար կը զարնէր Հրեաները որ Երուսաղէմի տաճարին մէջ կ'աղօթէին։ Արդ Յիսուս իրեն գեղեցիկ մարգարէութիւն մ'ըրաւ, եւ ըսաւ թէ արդէն ժամանակն հասած է, ուր ամէն տեղ աղօթք պիտ՛որ ըլլար առանց նկատմունք մ'ընելու՝ ոչ ան լերան եւ ոչ ալ Երուսաղէմի։ Եւ մենք ալ այս մարգարէութիւնը կատարուած կը տեսնենք, որովհետեւ հաւատացեալները ամէն տեղ կ'աղօթեն, տներնուն եւ Եկեղեցիներու մէջ, որ ի պատիւ Յիսուսի երկրիս ամէն կողմը շինուած են։ Ահաւասիկ ինչ կ'ուզէր ըսել Յիսուս. եւ ասոնք ծռելով Յիսուսի գեղե-

ցիկ խօսքերուն խորունկ իմաստը, նոյնը կը խանգարեն իրենց եւ ձեր կորստեանը համար։

Վար կը զարնեն նաեւ Ս. Եկեղեցւոյ ծէսերն ու արարողութիւնները եւ կ'ուզեն ջնջել վերցնել զանոնք ալ, որպէսզի զմեզ բարբարոս եւ վայրենի ընեն. բայց հոս ալ կ'երեւայ իրենց սովորական տգիտութիւնն ու չարամտութիւնը։ Կ'երեւայ իրենց տգիտութիւնը, վասն զի չեն գիտեր թէ ով գրած է այս ծէսերը եւ ոչ ալ թէ ինչ կը նշանակեն։ Պէտք է գիտնալ ուրեմն, թէ այն ծէսերուն եւ այն արարողութիւններուն մեծ մասը Առաքեալները հրամայած կամ հաւանած են, եւ կամ Ս. Եկեղեցւոյ ճոխութիւնն ի գործ դրած է, բարձր անհասանելի խորհուրդները նշանակելու եւ զանոնք եղանակաւ մը հաւատացեալ ժողովրդոց բացատրելու համար։

Գոնէ օրինակ մը տամ՝ Ս. Մկրտութեան մէջ երախան եկեղեցւոյ դռներէն դուրս կը տարուի[1], եւ ինչո՞ւ. որպէսզի իմացուի որ դեռ հաւատացելոց թուոյն մէջ չէ, եւ ներս կը բերուի երբ որ Կնքահայրը անոր անուամբ Ս. Հաւատքին շնորհքը կը խնդրէ։ Քահանան թեթեւ մը կը փչէ երախային երեսը. ինչ կ'ուզէ նշանակել։ Թէ Ս. Եկեղեցին Յիսուսի Քրիստոսի իշխանութեամբը, որ իրեն տրուեցաւ, կը հեռացնէ անկից դժոխային ոգին, որն որ զինք դեռ բռնած է սկզբնական մեղաց պատճառաւ։ Ետքէն անոր շրթունքին վրայ քիչ մը աղ կը դնէ, եւ ինչ պատճառաւ։ Ինչպէս որ աղն է որ նիւթերը կը պահպանէ ապականութենէ եւ համ կու տայ, այնպէս աղով կը նշանակուի, թէ այն հոգին անմահ կեանք պիտ'որ ունենայ խորհուրդին զօրութեամբը, զորն որ ընդունելու վրայ է, եւ իբրեւ թէ պիտ'որ համեմի ամէն պարգեւներով ու ամէն շնորհքներով, զորոնք Հոգին սուրբ անոր վրայ պիտ'որ հեղու։ Բայց Ս. Եկեղեցւոյ մէջ մտնելէն ետքը, դարձեալ ինչ գեղեցիկ ու խորունկ են արարողութիւններն որ Ս. Մկրտութենէ յառաջ կը կատարուին։ Յիսուս իր թուքը ի ծնէ կոյրին աչքին մերձեցընելով զանիկայ լուսաւորեց. Յիսուսի պաշտօնեան նոյնպէս շօշափելով երախային ականջներն եւ քիթը՝ զանիկայ հոգեպէս կը բժշկէ, այսինքն է՝ անոր միտաց ականջները կը բանայ, որպէս զի ետքէն իմանայ Աստուծոյ ամէն սուրբ օրէնքները. այնպէս հոտառութիւնն ալ կը զօրացընէ, որպէս զի Յիսուսի աստուածային անուշահոտութեանցը ետեւէն երթայ։ Կու գան ետքը հրաժարմունքները որ պիտ'որ ընէ։ Յիսուս եկաւ՝ սատանային, աշխարհքիս, եւ իր ամէն անօրէն գործքերուն յաղթելու համար. արդ՝ երախայն յառաջ քան որդի Աստուծոյ ըլլալը, կը ճանչնայ իր բոլոր թշնամիները, գեղեցիկ

[1] Այս մասնական ծէսերը են բուն Լատինացւոց արարողութեան։

դաւանութիւն մը կու տայ Յիսուսի ճշմա-
րիտ հետեւողն ըլլալու։ Մկրտութիւնը կը
տրուի իրեն ճերմակ ուրարով մը ի նշան
ուրախութեան, որով Ս. Եկեղեցին կ՚ըն-
դունի իր նոր որդեակը եւ ի նշան անմե-
ղութեան որով զինք կը զգեցունէ։ Չեմ
ուզեր յիշել այն ամէն գեղեցիկ աղօթքնե-
րը որոնցմով կը կատարէ այս սուրբ գոր-
ծողութիւնները. այն եւանդուն իւղերը,
որոնցմով Աստուծոյ կը յանձնէ իր նոր
որդեակը, եւ ոչ այն երդմնեցուցութիւն-
ները, որոնցմով դժոխային իշխանութեան
ձեռքէն զանիկայ կ՚ազատէ, վասն զի ան-
բաւ գործք մը կ՚ըլլար. միայն կը գոչեմ.
Ո՛վ սուրբ ծէսեր, ո՜վ սքանչելի արարո-
ղութիւններ, որ լի էք ամենայն սրբու-
թեամբ։

Ինչ որ ձեզի ըսի Մկրտութեան ծէսին
վրայ. նոյնը դուք իմացէք նաեւ Ս. Եկե-
ղեցւոյ մէկայլ ամէն ծէսերուն վրայ. այն
գեղեցիկ երգերուն, որով Ս. Պատարագը
կը մատուցուի, նուագարաններու ձայնին,
որոնք երկնից հրեշտակներուն մեղեդիները
կը նշանակեն, սուրբ խնկարկութեան՝ որ
կը ներկայացընէ հաւատացելոց աղօթքնե-
րը, որոնք երկինք կ՚ելլեն ի հոտ անուշից.
Ճրագներուն, որ կը վառին ի նշանակ հո-
գեւոր լուսոյ, որ հոգւոց վրայ կը ծագէ,
եւ կը ցուցընեն առաքինութիւններն եւ
իղձերը, որ սրտերնուս մէջ կը բորբոքին.
նոյնը իմացէք նաեւ Եկեղեցւոյ գեղեցիկ



տօնականերուն եւ նուիրական պաշտօնեաներ-
րուն վրայ, որոնք այն մեծութիւնը կը
նշանակեն, զորն որ պէտք է ունենան ա-
նոնք որոնք կը կատարեն, կ՚ընդունին եւ
մասնակից կ՚ըլլան նոյն սուրբ խորհուրդ-
ներուն։ Չէի կրնար երբեք խօսքս լմնցը-
նել, թէ ուզէի այս ամէն մասնաւոր պա-
րագաներուն վրայ խօսիլ ու նկարագրել։

Բոլոր տարւոյն մէջ Ս. Եկեղեցին միշտ
նոր տօներ ունի, եւ անոնց մէջ ծէսեր ու
արարողութիւններ կը կատարուին, որոնք
հոգինիս զարմանքով եւ բարեպաշտական
զգածմամբ կը լեցընեն։ Միայն յիշեցէք
ծննդեան գեղեցիկ գիշերը, երբ Եկեղեցին
մեզի զՅիսուս մանուկ կը ցուցընէ, որ եր-
կինքէն աշխարհք գալով ցրտէն կը դող-
դողայ յարդին վրայ երկու կենդանիներու՝
եզին ու յաւանակին մէջ. յիշեցէք Սուրբ
Շաբաթը, ուր աչքերնուս առջեւը կը
դնէ մեր սիրելի Յիսուսին բովանդակ չար-
չարանքները, բանտարկութիւնը, առեան-
ներուն թշնամանքները, ձաղուիլը, փշով
պսակուիլը, Խաչը տանիլը, հոգեվարու-
թիւնն ու մահը։ Գեղեցիկ չե՞ն այս ամէն
արարողութիւնները, լի ամենայն բարե-
պաշտական ազդեցութեամբ, եւ մեր հո-
գիները չե՞ն լեցըներ երկնաւոր քաղցրու-
թեամբ։ Ի՞նչ ըսեմ դարձեալ այն գեղե-
ցիկ թափորներուն համար, որով Յիսուս
մեր քաղաքներուն ու դաշտերուն մէջէն
հանդիսապէս կը տարուի, որպէս զի ամէն

տեղ իր երկնաւոր օրհնութիւնը տարածէ։ Ի՞նչ ըսեմ Անդաստանաց օրհնութեան վրայ, որո՛վ քահանայն եւ ժողովուրդը Աստուծոյ օրհնութիւնը մեր երկիրներուն, պտուղներուն եւ տուներուն վրայ կը կանչեն, բարեխօս բռնելով Ամենասուրբ Կոյսը եւ երկնից բոլոր Սուրբերը։ Ո՜վ հրեշներ, որ կը յանդգնին անարգելու այսպիսի բարեպաշտական արարողութիւններ։

Ասոր համար էր որ, իմ՛ սիրելիքս, ձեզի կ'ըսէի թէ անոնք տգիտութենէ զատ ո-րով կը հայհոյեն չճանչցած բաներնին, ունին նաեւ անհաւատում՝ չարութիւն։ Չեն կրնար չտեսնել որ այս ամէն Ս. Եկեղեցւոյ ծէսերը զարմանալի զօրութիւն մ'ունին մեր մտաց մէջ կենդանի մտածութիւններ արթնցնելու աստուածային բաներու վրայ, եւ մեր սրտերը բորբոքելու զգալի եռանդով ու սիրով առ Տէր մեր Յիսուս Քրիստոս։ Բայց թէ որ ասիկայ չեն կրնար ուրանալ, ինչո՞ւ ուրեմն կ'ուզեն զմեզ զրկել աս միջոցներէն, զորոնք միշտ Ս. Եկեղեցին ի գործ դրած է, Սուրբերն այնչափ գոված են, ամէն հաւատացեալք այնպէս կը յարգեն եւ մեր հոգեւոր օգտին այնչափ ազդեցութիւն ունին։ Իրենք այսպիսի թշնամանքներով դաշնակից կ'ըլլան ամէն անհաւատներու, ամէն զեղծ փիլիսոփաներու եւ ամէն ամբարիշտներու հետ, որոնք կը բաղձան Աստուծոյ պաշտօնը երկրիս երեսէն ջնջուած տեսնել, եւ



մեզի քիչ ատենուան մէջ անասնոյ կեանք անցընել տալ առանց Եկեղեցւոյ, առանց պաշտաման, առանց Քահանայի, առանց հոգւոյ եւ առանց Աստուծոյ, որպէս զի ետքէն ալ ի յաւիտեանս այրեցընել տան ողբով եւ արտասուօք եւ յուսահատութեամբ յաւիտենական հրոյն մէջ։ Աստուած պահէ զմեզ իր ողորմութեամբը։ Բայց դուք՝ (աղէկ միտ դրէք խօսքերուս) նայեցէք որ չգաղջանաք այս գեղեցիկ բարեպաշտական գործքերը սիրելէն, մանաւանդ թէ աւելի յօժարութեամբ յաճախեցէք անոնց եւ օրէ օր զձեզ աւելի եռանդոտ եւ յարգող ցուցուցէք։ Օձ մըն է սատանան. ուր որ անգամ մը գլուխը կը խոթէ, հոն բոլոր մարմինը կ'անցընէ։ Անգամ մ'որ մտքերնէդ ու սրտերնէդ այս բաները հանելու ըլլայ, անկից ետքը թէ խորհուրդները, թէ Պատարագը եւ թէ փրկութեան ամէն միջոցները ձեզմէ կը վերցընէ։

Վերջապէս կը զրուցեն. [illegible]

Իրա՞ւ է, հարկաւո՞ր են մեզի այս տեսակ շաղակրատութիւնները։ Բաւական է չար չգործելը։ Ի՞նչ շահ ունին ուրեմն, որ մեզմէ մեր այս ամէն բարեպաշտութեան կրթութիւնները վերցընել կ'ուզեն։ Կարծեմ՝ թէ անոնցմով մէկու մը վնաս չենք տար, եւ մեր ծէսերն ու արարողութիւնները մէկու մը հետ սիրոյ պակասութիւն

ունենալու առիթ չեն ըլլար. ինչո՞ւ ուրեմն այնչափ ատոնց դէմ թոյներնին կը թափեն. ինչո՞ւ իրենք չեն սկսիր մեզի հետ քիչ մը սիրով վարուիլ եւ զմեզ մեր խաղաղութեան մէջ ձգել. ինչո՞ւ կու գան մեր երկրին մէջ խռովութիւն եւ դժգոհութիւն կը սերմանեն. — Ա՞ս է սէրը, որ կը քարոզեն. Կեղծաւորներ. Բայց յայտնի խօսինք ատոնց հետ. Չէ՛, բաւական չէ չար չգործելը. հարկաւոր է նաեւ բարիք ընել. բաւական չէ՛ սէր ունենալը ինչպէս իրենք կ՚իմանան, հարկաւոր է արդարութիւն ալ ունենալ, հաւատք ալ ունենալ, համբերութիւն ալ ունենալ եւ նաեւ խոնարհութիւն ալ ունենալ, որն որ ճշդիւ կը պակսի այդ քարոզիչներուն. հարկաւոր է դարձեալ հնազանդութիւն ունենալ, զորն որ ատոնք ամենեւին չեն ճանչնար. վերջապէս հարկ է ունենալ ամէն առաքինութիւն. Չար չգործելը, չգողնալը, չսպաննելը շատ քիչ է. Վասն զի նաեւ շատ քիչ է (յայտնի խօսինք) քիչ մը բարիք ընելը մեր ընկերներուն. Ասիկայ բաւական է մարդիկ խաբելու, բաւական է համարում առնալու, բաւական է աշխարհքի հաճոյ ըլլալու, բայց Աստուծոյ հաճոյ ըլլալու համար ստուգիւ ուրիշ բան հարկաւոր է.

Հարկաւոր է գլուխ ծռել Ս. Հաւատոյ եւ որպիսի հրապոյրներով ալ մեր հպարտութիւնը զմեզ հրապուրելու ըլլայ,



մեր պարտքն է հպատակիլ Ս. Եկեղեցւոյ, ի գործ դնել ինչ որ ինք մեզի կը սորվեցընէ. Ս. Պատարագի ներկայ ըլլալ, խոստովանիլ, հաղորդուիլ երբ ինք կը հրամայէ, ծոմերն ու պահքերը պահել երբոր կը պատուիրէ. Կիրակի ու Տօն օրերը սուրբ բռնել ինչպէս ինք կը հրամայէ. սանձել մեր կիրքերը, ճնշել բարկութիւնը, նախանձը, հպարտութիւնը, որկրամոլութիւնը, արհամարհել աշխարհք եւ իր վայելչութիւնները, սանձել սեպհական մարմինը եւ չտալ ինչ որ կը պահանջէ. այս ամէն բան հարկ է ընել եւ ամենայն ճշդութեամբ.

Բաւական չէ չորս հինգ անգամ գովեստով խօսիլ սիրոյ վրայ, որով եւ ոչ իսկ կ՚իմացուի թէ ինչ կ՚ուզեն ըսել.

Ես իմ մարմինս կը ճնշեմ, կ՚ըսէ Ս. Պօղոս, նոյնը կը ծառայեցընեմ, [illegible][1], ինչպէս կ՚ընեն ատոնք իրենց սիրոյ մեղրով անուշցուցած խօսքերովը, որոնցմով այնչափ անխելք մարդիկ կը խաբեն.

Ասկից կրնաք հետեւցընել թէ բոլորովին սուտ է այն որով կը պարծին թէ չար չեն գործեր. ինչու որ իրօք ալ խիստ շատ կը գործեն, ճշմարիտ բարին զանց առնելով, եւ պակսելով ի ճշմարիտ սիրոյ՝ նոյն իսկ սիրոյ անուամբ պարծելու առեննին, եւ միանգամայն ամենայն չարութեամբ լեցուած ըլլալով.

[1] Ա. Կորն. Թ. 27.

Ճշմարիտ Ուղղափառն ան է, որ անոր համար չար չի գործեր. վասնզի կը յարգէ Աստուծոյ ամէն իրաւունքները, կը կատարէ ամէն իր պարտքերն ընկերաց նկատմամբ եւ կը ջանայ որ իրեն նկատմամբ ալ չպակսի։ Ով որ ասանկ կը մտածէ, Ս. Աւետարանին ամէն վարդապետութեան համաձայն կը մտածէ։ Ով որ ասանկ չի մտածեր, կամ խելագար է որ ինք զինքը կը խաբէ, եւ կամ խաբեբայ մըն է որ ուրիշները կը մոլորցընէ։

## ԳԼՈՒԽ Դ.

[illegible]։ Ամէն [illegible] ընել՝

Ուրիշ խորամանկութիւն մ'ալ ի գործ կը դնեն այս անօրէնները ձեր Ս. Հաւատոյ գանձը գողնալու համար։ Ինչ կ'ընէ գայլը, որ կ'ուզէ յափշտակել ոչխարիկը. կը ջանայ վրան յարձակիլ երբոր հովիւները հեռու են ու շները կը քնանան։ Ինչ կ'ընէ գարանակալը որ կ'ուզէ հրապուրել կին մը կամ խաբել պատանեակ մը. կը դիտէ ժամանակն երբոր անոր երիկը հեռու է եւ ասոր հայրը մօտիկ չէ։ Ասանկ կ'ընեն այս Բողոքական ուսուցիչներն ալ։ Իրենց մոլորութիւնները ձեզի կը թելադրեն, երբոր ձեր Քահանաները, ձեր ժողովրդապետները չեն լսեր. մանաւանդ թէ կ'արգելեն ձեզի անոնց յայտնելու ինչ որ



ձեզի կը խօսին, գրքերը ցուցընելու՝ զորոնք ձեզի կը պարգեւեն, եւ ծանուցանելու իրենց վարդապետութիւնը՝ որ ձեզի կը սորվեցընեն։ Եւ բոլոր իրենց մոլորութիւնները ծածուկ եւ ժողովականներու մէջ կը տարածեն։ Ո՜հ, ինչո՞ւ այսպէս։ Եթէ սորվեցուցածնին ճշմարտութիւն ըլլար, չէին վախնար լուսաւորութենէ. Ամենայն որ զչար գործէ՝ ատեայ զլոյս[1], կ'ըսէ Տէրն մեր Յիսուս Քրիստոս։ Եթէ այսչափ լոյսը կ'ատեն, աս ի՞նչ նշան է։

Բայց տակից ի՞նչպէս կը սորվեցընեն ձեզի։ Ճշդիւ այն եղանակաւ, ինչպէս խաբեբայ մը կ'ուզէ։ Կը տեսնեն որ դուք հացերնիդ գտնելու համար դաշտերու վրայ գործքի մէջ կամ արհեստի մը զբաղած ըլլալով, չէք կրցեր Կրօնքի ուսմունքները խորունկ սորվիլ, ուստի եւ չէք կրնար գիտնալ թէ ո՛րն է ճշմարիտ Ս. Գիրքը, եւ ոչ ալ թէ ինչպէս պէտք է նոյնը իմանալ չմոլորելու համար։ Արդ ձեռքերնիդ կու տան սուրբ Գիրք մը, որ շատ եղանակաւ խանգարուած ու ապականած է, թէ՛ թարգմանութեան մէջ սուտ ու շինծու բառեր ու իմաստներ խոթելով, եւ թէ՛ հատուածներ եւ ամբողջ գրքեր մէջէն վերցընելով։ Աս գիրքը ձեռքերնիդ տալէն ետքը, կը յորդորեն զձեզ աս կամ ան մասը կարդալու։ Տեսէք աս խօսքերը, տեսէք ան խօսքերը. եւ դուք որ խորունկ

[1] Յովհ. Գ. 20։

սորված չէր Ս. Գիրքը, չէր գիտեր ինչ պատասխան տալու՝ էր եւ շփոթած կը մնար. ան ատեն ասոնք ձեզի այն խօսքերը կը մեկնեն իրենց եղանակաւը, մտքերնուդ մէջ ծանր ծանր մոլորութիւններ կը խօթեն, եւ ձեզի հաւատացընել կու տան, որ այն իրենց մոլորութիւնները հիմ՛ ունին Ս. Գրքին մէջ եւ թշուառաբար խաբուած կը մնաք ։

Ով որ այսպիսի դժբախտութեան մէջ ինկած է, անիկայ պէտք չէ որ ուրիշը յանցաւոր համարի, բայց եթէ ինք զինքը. ինչու որ չազդե՞ց մեզի Յիսուս Քրիստոս, թէ Եկեղեցւոյ ձայնէն դուրս ուրիշին խօսքին ականջ մի դնէք, եւ թէ մենք մեր դատաստանին վրայ պէտք չէ ապահովինք. Ի՞նչ զարմանք է, եթէ անոնք որոնք իրենց սրբազան հովիւներուն վարդապետութեա֊նը վրայ ապահովութեամբ հանգչելու տեղ, կ'ուզեն իրենց աչքովը տեսնել եւ իրենց ձեռքովը շօշափել, երբ ասոր կարողու֊թիւն ալ չունին, վերջապէս իրենց հպար֊տութեանը համար խաբուած մնալու ըլ֊լան ։ Հաւատքը երջանիկ ծառ մըն է, որ չի ծլիր հպարտ սրտերու մէջ, անոր ներհակ խոնարհ սրտերու մէջ խորունկ արմատներ կը ձգէ, կ'աճի, կը ծաղկի եւ զարմանալի պտուղ կը բերէ ։ Վա՜յ, վա՜յ հպարտ֊ներուն, ըսաւ Յիսուս այնչափ անգամ, վասնզի Աստուած անոնց հակառակ պիտ'որ ըլլայ եւ անոնց պիտ'որ զլանայ իր շնորհքը ։



Արդ երբոր ասոնք կը սկսին այն խան֊գարուած Աստուածաշունչները եւ այն ա֊պականած Աւետարանները ձեզի պարգեւել, դուք ըսէք իրենց համարձակութեամբ, որ չէք ուզեր եւ ոչ ձեռքերնիդ առնուլ, վասն զի չէք ուզեր զձեզ արատաւորել ։ Երբոր այն իրենց սեթեւեթ պատճառները առջեւնիդ կը դնեն, ըսէք որ դուք չէք ամչնար այնպիսի պատճառները չիմանալ֊նուդ վրայ, վասնզի չէք կրցեր այն նիւ֊թերուն վրայ խորունկ գիտութիւն ու֊նենալ, ըսէք որ երթան ձեր վարդապետ֊ներուն, ձեր քահանաներուն, նախ զանոնք դարձընեն եւ ետքը ձեր վրայ մտածեն ։

Անցողապէս խօսելով, ճշդիւ ասանկ ալ կը վարուի Ս. Կաթուղիկէ Եկեղե֊ցին ։ Աս գթած Մայրը, որ լոյսէն վախ չունի, երբոր Ս. Հաւատքը տարածելու համար կը գործածուի, չէ թէ աւելի տգէտ անձանց հետ, հապա պայծառ լու֊սով մը գիտնագոյն Բողոքականներուն հետ կը խօսի, անոնց հետ որոնք աւելի սորված են. եւ ճշդիւ անոնց կ'առաջարկէ իր սուրբ վարդապետութիւնները, եւ ասոնք շատ անգամ, վասնզի աւելի ընդունակ են ի֊մանալու, առջինները կ'ըլլան դրկելու սուրբ Կաթողիկէ Վարդապետութիւնը ։

Ճշդիւ աս օրերս, որ ասոնք զձեզ կը ջանան մոլորեցընել, որ աս նիւթերու մէջ անփորձ էք, իրենցմէ ամենէն մեծ իմաս֊տունները կը թողուն Բողոքականութիւ֊

նը եւ Ուղղափառութեան կը դառնան։ Եւ եթէ առիկայ ձեր առջեւն ուրանալու ըլլան, որովհետեւ խիստ անամօթ երես ունին՝ չեն ամըչնար յայտնուած ճշմարտութիւնը ուրանալու, դուք հարցուցէք իրենց. ճշմարի՞տ է, թէ չէ, որ Անգղիա՝ Օքսֆորթի Համալսարանին գլխաւոր բողոքական ուսուցիչները Ուղղափառ եղած են. եթէ առիկայ ուրանալու ըլլան, ըսէք իրենց, թէ սուտ կը խօսին բովանդակ Եւրոպայի առջեւ, որ այն անձինքը կը ճանչնայ, եւ ասոր համար մինչեւ երկինք գովելով կը բարձրացընէ. եւ եթէ առիկայ ընդունելու ըլլան, դարձեալ ըսէք իրենց այսպէս, որովհետեւ այդչափ գիտութիւն ունիք, գացէք զանոնք դարձուցէք, մենք չենք ուզեր գրկել այնպիսի Կրօնք մը, զորն որ կը թողուն իր ամենէն իմաստուն անձինքը, որոնց բոլոր շահը նոյնը չմերժելուն վրայ էր, որովհետեւ անոր մէջ ծնած էին, ուրեմն յայտնապէս տեսան որ սուտ է։

## Գ Լ Ո Ւ Խ Ե.

Հինգերորդ խօսակցութիւն. Ըսել թէ Ս. Եկեղեցին Աստուածաշունչ կարդալ կ'արգիլէ։

Սուրբ Գիրքը կարդալու նկատմամբ ալ Բողոքականներն ուրիշ զրպարտութիւն մը կը հնարեն, եւ Կաթողիկէ Եկեղեցւոյ վրայ կը նետեն. Կ'ըսեն թէ Կաթողիկեայ



Քահանաները զձեզ տգիտութեան մէջ բռնել կ'ուզեն, որպէսզի իրենց խաբէութիւններն ու ստութիւնները չտեսնէք. ուստի ասոր համար ալ չեն ուզեր որ կարդաք Աստուածաշունչը. Ս. Աւետարանը, մինչեւ որ եթէ ատ գրքերը կարդալու ըլլաք, իրենց խաբէութիւնները պիտի ճանչնաք։ Աս կը զրուցեն աներեսութեամբ։ Բայց զուտ ստութիւն, զուտ զրպարտութիւն է։ Ս. Եկեղեցին ուրիշ բան այնչափ չի բաղձար, որչափ ամէն Հաւատացեալք խորունկ տեղեկութիւն ունենան Ս. Կրօնքի ճշմարտութեանց մէջ։ Միթէ ժողովրդապետները, Քահանաները միշտ զձեզ յորդորելու վրայ չե՞ն, որ Խրատ եւ Աւետարանի բացատրութեան երթաք, եւ ձեր զաւկըները Քրիստոնէական Վարդապետութեան խաւրէք։ Արդեօք մասնաւոր հոգ չի տարուիր որ առաջին Ս. Հաղորդութիւնը եւ Դրոշմի Ս. Խորհուրդը չընդունած՝ փութաջան կրօնական կրթութիւն մը տրուի։ Միթէ Ս. Եկեղեցին հրաման հանած չէ՞, որ ժողովրդապետները յառաջ քան պսակելը հարսն ու փեսան քննեն քրիստոնէական Վարդապետութեան մէջ, ապահով ըլլալու համար որ սորված ու տեղեակ են։ Արդեօք ճշմարիտ չէ՞ որ ամէն ատեն խոստովանահայրքը, երբ որ կը տեսնեն թէ Ապաշխարողները չեն գիտեր փըրկութեան հարկաւոր եղած բաները, այնպիսիներուն արձակումը կ'ուշացընեն, մին֊

չէ որ սորվին։ Ասկից աւելի ի՞նչ ծանր ստութիւն կրնայ ըլլալ, որ կը հաստատեն թէ Ս. Եկեղեցին ազատութիւնը կը յառաջացընէ։ Գիտնաք որ աս վերջի տարիներս ի բաց առնելով, աշխարհքիս վրայ ամէն դպրոցներն եւ ամենէն հռչակաւոր Համալսարանները, Եպիսկոպոսներէն ու Ծայրագոյն Քահանայապետներէն բացուած են։ Տեսէք որ սուտ են, որ կը սիրեն ազատութիւնը։ Եւ դուք ըսէք աս ձեր ուսուցիչներուն, որ շնորհք ընեն ցուցընեն մեզի որ աս սանկ չէ։

Բայց պիտ'որ ըսէք, [illegible] Ս. Գիրքը [illegible]։ Աս ալ յայտնի զրպարտութիւն է։ Ս. Եկեղեցին չարգիլեց Հաւատացելոց Ս. Գիրքը, այլ կ'ուզէ որ կարդալու համար երկու զգուշաւորութիւն ըլլայ։

Նախ չ'ուզեր որ հերետիկոսներէն խանգարուած, ապականուած եւ ստութեամբ խառնուած Աստուածաշունչ մը կարդացուի, ինչպէս է ձեր ձեռքը տրուած Աստուածաշունչը։ Եւ իրաւունք ունի սանկ ընելու, ինչու որ ան տանը ձեր հոգւոյն կերակուր մ'ունենալու տեղ՝ մոլորութեանց թոյնը կ'ունենաք, որ այն Աստուածաշունչներուն մէջ խառնուած է։ Եթէ որ բոլորովին մոլորութենէ մաքուր Աստուածաշունչ մը կարդալու ըլլաք, ինչպէս է Գերապ. Մարթինին տպածը (Իտալացւոց համար) ասիկա Ս. Եկեղեցին չ'արգիլեր։



Արդ ըսէք ինծի. անտարակոյս դուք ձեր զաւակացը կ'արգիլէք որ փտտած, թթու պտուղներ եւ ուրիշ վնասակար կերակուրներ չուտեն. եթէ մէկը ասիկա առիթ առնելով ըսելու ըլլայ ձեզի, թէ դուք չէք ուզեր ամենեւին որ զաւակնիդ ուտեն եւ կ'ուզէք որ անօթութենէ մեռնին, ինչ կ'ըսէիք. կ'ըսէիք թէ զրպարտիչ է, վասնզի դուք գոհ էք թէ անոնք ուտեն եւ առողջ կերակուրներ ուտեն։ Արդ նոյնը կ'ընէ Ս. Եկեղեցին. թո՛ղ կարդան Հաւատացեալք Ս. Գիրքը եւ կարդան ջերմեռանդութեամբ, յարգութեամբ, բարեպաշտութեամբ, խոնարհութեամբ, որ պտուղ քաղեն. բայց կարդան ճշմարիտ Ս. Գիրքը, չէ թէ զանիկա որ ապականած է հերետիկոսներէն. Ասկից աւելի ինչ բանաւոր բան կայ։

Մէկալ զգուշաւորութիւնը, զոր կ'ուզէ որ ընենք գթած Մայր Եկեղեցին, աս է որ ջանանք կարդալու ատեն չխոտորիլ եւ ծուռ իմաստ չհանել, ինչու որ պէտք է գիտնաք, որ Ս. Գրքերուն մէջ շատ խորունկ, նուրբ, իմանալու դժուարին բաներ կան, որոնք եթէ ծուռ առնուելու ըլլան, փոխանակ զմեզ ճշմարտութեան մէջ հրահանգելու, մոլորութեան կը տանին, ինչպէս կը սորվեցընէ նոյն ինքն Պետրոս Առաքեալը։

Արդ որպէսզի աս դժուարութիւնը մեզի չպատահի, Ս. Եկեղեցին կ'ուզէ որ կար-

գանք զանիկա քովը տրուած պատշաճաւոր մեկնութիւններով ։ Այսանկով թէ որ տարակոյս մը ծնանելու ըլլայ կամ դժուարութիւն մը առջեւնիս ելլէ, շուտով մը լուծումը եւ մեկնութիւնը կը գտնուի ։ Ուստի կ'ուզէ Ս. Եկեղեցին որ Ս. Գիրքը աղէկ եւ իր ապահով ճանչցած մեկնութիւններն ունենայ, եւ այսպիսի բացատրութիւններով զարդարուած ժողովըրդեան ձեռքը տրուի ։ Ասիկա Ս. Եկեղեցւոյ մեծ սէրն ու մեծ խնամքը քեզի չ'ե՞րեւար, որ մեր վրայ ունի ։ Կու տայ մեզի այնպէս աղէկ պատրաստուած ու կտրուած հաց մը, որպէսզի մեզի վնաս չտայ ։ Դուք ձեր տղոցը թող կու տաք, որ խաղան խնտան, ցատկըտեն ու զբօսնուն, բայց թող կու տա՞ք որ ընեն աս ամէն բան փոսի կամ դարաւանդի մը քով ։ Ոչ ամենեւին, կ'ուզէք որ անվտանգ ըլլան ։ Ասանկ ալ կ'ընէ ձեզի հետ Ս. Եկեղեցին ։ Զայներնին քաշեն ուրեմն Ս. Եկեղեցւոյ ամէն զրպարտիչները եւ ամչնան, եւ դուք միշտ անոր իմաստութեանը վրայ զարմացէք եւ շնորհակալ եղէք իր սիրոյն ։

Բայց ի՞նչ վտանգ կրնայ դիմացնիս ելլել Ս. Գիրքը կարդալու ատեն, վասնզի Հոգին սուրբ է որ կը յայտնէ մեզի ինչ որ անոնց մէջ պարունակուած է ։ Այո, գիտեմ որ Բողոքականները միշտ բերաննին ունին աս գեղեցիկ պատճառը, բայց չարն ան է, որ ամենեւին սուտ է, թէ



Հոգին սուրբ խօսք տուած է մեզի մեկնիչ սուրբ գրոց ըլլալու ։ Հոգին Սուրբ մեզի ամէն բան կը սորվեցնէ այսու միտք, որ երբոր ականջնիս կը հասնին արտաքին վարդապետութիւնները Ս. Եկեղեցւոյ օրինաւոր հովիւներուն եւ կամ Աստուածաշունչ Գրոց, ըստ մեկնութեան սրբոց Հարց խոնարհութեամբ կարդալով, Հոգին սուրբ մեզի հաճութիւն մը կը պատճառէ եւ մեր հոգւոյն նոյները կը քաղցրացընէ, ինչպէս ամէն օր կը տեսնենք որ կը պատահի անկեղծ ջերմեռանդ անձինքներուն. բայց չի սորվեցըներ մեզի այնպիսի եղանակաւ, որ յայտնէ մեզի զգալի ազդեցութեամբ ինչ որ պէտք է հաւատանք եւ ի գործ դնենք ։ Այսպիսի բան պահանջելը յիմարութիւն է եւ աղբիւր ուրիշ անհամանում յիմարութիւններու, որ կը տեսնենք անոնց վրայ, որոնք այսպիսի անմիջական ազդեցութեան մը կը հաւատան ։ Մէկ խօսքով Հոգին Սուրբ մեզի մեկնիչ Ս. Գրոց չ'ըլլար, բայց երբ որ անիկա առողջ միտք մեկնուած է՝ ինք մեզի նոյնը կը քաղցրացընէ եւ անկից օգուտ քաղել կու տայ ։ Եւ աս է, զորն որ կը սորվեցընէ մեզի Ս. Գիրքը յայտնի զրուցելով, թէ Հաւատքը մեզի լսելու միջոցով կու գայ, այսինքն է մեկնութեամբ, որ կու տայ Ս. Եկեղեցւոյ վարդապետական ճոխութիւնը. թէ Ս. Գիրքը պէտք չէ իմանալ ըստ առանձնական մեկնութեան, այլ ինչպէս Ս. Եկեղեցին կը մեկ-

նէ. թէ Ս. Գրոց մէջ շատ դժուարիմաց բաներ կան, եւ թէ անոնք ի կործանումն անձանց նոյները կը թիւրեն եւ այսպէս կը կորսուին: Այսու ամենայնիւ այնչափ յայտնի է, թէ Հոգին Սուրբ երբեք խօսք տուած չէ, ամէն մարդու առանձին առանձին սորվեցընելու, որ ասիկա ընելու համար բաւական է միայն աչք ունենալ: Ի՞նչ է Հոգին սուրբ: Հոգի ճըշմարտութեան է: Չի կրնար ուրեմն ճշմարտութիւնը չյայտնել: Արդ՝ թէ որ ամենուն ալ Հոգին Սուրբ ազդած ըլլար նէ, անոնք որ Ս. Գիրքը առանձին կը մեկնեն, կարող չըլլային պիտ՚որ իրարու հակառակելու, հապա ամէնքն ի հարկէ միաբան պիտ՚որ ըլլային մի եւ նոյն ճշմարտութեան վրայ, զորն որ Ս. Գրքէն կը հանեն. սակայն գործը զմեզ կը համոզէ վերջին ստուգութեամբ, թէ բոլորովին ասոր հակառակը կը պատահի, երբոր ամէն մարդ իր եղանակաւը կ՚իմանայ:

Լուտերին կ՚ըսէ Հոգին Սուրբ, օրինակի համար, թէ Յիսուս Քրիստոս Նշխարքի մէջ կը գտնուի, Կալուինին կ՚ըսէ թէ տարակուսական է, Խորհրդականներուն՝ թէ բացարձակապէս չի գտնուիր: Հոգին Սուրբ կ՚ըսէ ոմանց, թէ բարի գործքերը հարկաւոր են, ուրիշներուն՝ թէ անօգուտ են, ուրիշներուն ալ՝ թէ կարելի բաներ չեն, այսպէս իմացէք ուրիշ բաներն ալ: Ամէնքը իրենց վարդապետութիւնը կը հիմնեն Ս. Գրոց վրայ. ամէնքը կը ցուցնեն թէ ունին զՀոգին Սուրբ, որ իրենց կ՚առաջնորդէ, բայց կարելի՞ է որ Հոգին սուրբ ըսէ, այո՛ եւ միանգամայն ոչ, ամէն բոպէի մէջ ինք իրեն հակառակ խօսի եւ այնչափ հակառակախօսութեամբ. որչափ են գլուխները: Հոգին Սուրբ Աստուած է, ինչպէս Հայր եւ ինչպէս Որդին, եւ է նոյն ինքն իմաստութիւն, արդարութիւն եւ ճշմարտութիւն: Ուրեմն սրբապիղծ եւ հայհոյիչ է ով որ զանիկա խաբեբայի, ստախօսի եւ ինք իրեն դէմ հակառակախօսի տեղ կը դնէ: Արդ՝ ով որ չ՚ուզեր հայհոյել, թող մէկ դի ձգէ իր կամակորութիւնը առանձնական ազդեցութեան վրայ: Հոգին Սուրբ միացեալ է Յիսուսի Եկեղեցւոյն հետ, զանիկա կը կառավարէ, կը լուսաւորէ, կը զօրացընէ, եւ անոր կ՚օգնէ իր պարգեւներովը եւ իր շնորհքներովը. եւ մենք ցորչափ որ Եկեղեցւոյ միութեան մէջն ենք, մասնակից կ՚ըլլանք Հոգւոյն Սրբոյ պարգեւաց եւ իր աստուածային լուսոյն. բայց հազիւ թէ կը հեռանանք անկից, Հոգին սուրբ ալ մեզմէ կը հեռանայ, եւ մենք ան ատենը այնչափ կը տկարանանք որ աստուածային ազդեցութեան տեղ կ՚առնենք խելքերնուս ամէն մէկ այլանդակութիւնները:

## ԳԼՈՒԽ Զ.

### Վերջերս Բողոքականներուն՝ Ս. Եկեղեցւոյ վրայ կռապաշտութեան մեղքը դնել։

Զրպարտութիւնը՝ որչափ որ ալ ատենին յայտնուած ըլլայ, միշտ բիծ մը կը թողու անոր ճակտին վրայ, որուն վրայ անգամ մը դրուած էր։ Ասոր համար է որ մոլորութեան Ուսուցիչները ասիկա անդադար ձեռք կ'առնեն, եւ ստութեամբ կը հրատարակեն թէ մենք խել մը սուտ վարդապետութիւններ ունինք, զորոնք չէ թէ միայն չունինք, հապա բոլոր սրտէ կը մերժենք, եւ անգամ մ'որ այսպիսի ստութիւններ վրանիս նետեն, ալ կը սկսին անոնց դէմ խօսիլ, վար զարնել իբրեւ թէ ճշմարիտ եղած ըլլային։ Ձեզի քանի մը օրինակ յառաջ բերեմ. աղէկ միտ դրէք։

Նախ՝ կ'ըսեն թէ մենք կռապաշտ ենք եւ ետքէն Ս. Գրքէն քանի մը խօսք առջեւնիս կը նետեն, թէ Աստուծմէ կռապաշտութիւնը դատապարտուած է եւ այսպէս զմեզ չարաչար կը վատահամբաւեն։ Մենք ալ գիտենք որ կռապաշտութիւնը մեծ անօրէնութիւն է. բայց հոս է իրենց զրպարտութիւնը, մեզի Ուղղափառացս այսպիսի կեղտ մը դնել, որմէ մենք առաւելապէս ի բոլոր սրտէ կը զարշինք։ Այսու ամենայնիւ կը կարծէ՞ք դուք, թէ ասոնք գիտե՞ն ինչ է կռապաշտութիւնը։ Միշտ բերաննին է աս զրպարտութիւնը, բայց ես



մէկ անգամմըն աւելի փորձն ըրած եմ, որ չեն ալ գիտեր թէ ինչ կը նշանակէ։ Եւ ես մեկնեմ ձեզի, որպէս զի ձեռքով շօշափէք թէ Աստուծոյ ողորմութեամբը որչափ հեռու ենք աս անօրէնութենէն։

Կռապաշտութիւնն է արարածի մը այն երկրպագութիւնն ընծայել, որ միայն Աստուծոյ պարտական ենք, ինչպէս կ'ընէին հեթանոսները, որոնք իրենց ձեռքովը շինած արձաններուն եւ կուռքերուն իբրեւ ամենաստոյգ աստուածութիւններու զոհ եւ խունկ կը մատուցանէին. ասիկա ամենածանր յանցանք է, ինչպէս ամէն մարդ կը տեսնէ, որովհետեւ անարգ արարած մը Արարչին հաւասար կը դնէ եւ անոր աստուածական պատիւներ կը մատուցանէ, յափշտակելով նոյներն աստուածային մեծվայելչութենէն, որ միայն արժանաւոր է այնպիսի պատուոյ։ Արդ՝ Ս. Եկեղեցւոյ մէջ որո՞ւն կ'ընծայուի գերագոյն երկրպագութեան պաշտօնը։ Կաթողիկէ Եկեղեցին կը սորվեցընէ ու կը դաւանի որ ասիկա մինակ Աստուծոյ պարտական ենք, որն որ մեր Արարիչը, մեր մի միայն Փրկիչը, մեր գերագոյն Պաշտպանն է. եւ թէ նոյնը կը պարտաւորինք իրեն հատուցանել սրտանց իրեն հետ միանալով հաւատքով, յուսով եւ սիրով, իրեն միայն սրտերնիս դարձընելով, որ միայն կրնայ մեր կատարեալ երանութիւնը կերպաւորել հաղորդելով մեզի ինք.զինքը, որ անսահման բարութիւն

է։ Եւ ասոր ցոյցն ան է որ Ս. Պատարագի զոհը Եկեղեցւոյ ամենէն բարձր եւ հանդիսաւոր կրօնական գործողութիւնը՝ Աստուծոյ միայն կը մատուցուի. եւ թէպէտ անոր մէջ նաեւ Սուրբերու բարեխօսութիւնը կը խնդրուի որ մեզի օգնական ըլլան այնպիսի մեծ զոհն արժանապէս նուիրելու, սակայն Պատարագը միշտ միայն Աստուածութեան կ՚ընծայուի։

Ասիկա ասանկ ըլլալէն ետքը, ինչպէս կրնայ ճշմարիտ ըլլալ որ Եկեղեցւոյ մէջ կռապաշտութիւն գտնուի, Ամենասուրբ Կուսին եւ Սուրբերուն երկրպագութեան այն գործքերն ընծայելով՝ որ Աստուածութեան կը պատշաճին։ Աստուած չընէ որ մենք այնպիսի ոճրագործութեան մէջ իյնանք։ Ստուգիւ կը պարծինք Աստուածածին Կոյսը եւ Սուրբերը պատուելնուս վրայ. բայց ամէն բանէ առաջ իրենց վրայ աստուածային կատարելութիւն մը չենք ճանչնար, կ՚ուրանանք որ իրենց վրայ Արարչի, Փրկչի, գերագոյն Տեառն եւ վերջին վախճանի յատկութիւններ գտնուին, կը վկայենք թէ ամէն բարի բան որ ունին՝ տրուեցաւ իրենց Աստուծմէ Յիսուսի արդեանցը համար, թէ ինչ որ մեր օգտին համար կ՚ընեն, այն ամենայն միայն աղաչելով ու բարեխօսելով կարող են ընել, եւ թէ բոլոր իրենց երջանկութիւնը Յիսուսի հետ միացեալ ըլլալու վրայ է։ Կը



տեսնէք ուրեմն թէ որչափ հեռու ենք կռապաշտութենէ։

Իրաւցընէ՝ եթէ մենք Ս. Աստուածածինը կամ Սուրբերն իբրեւ աստուածութիւն յարգելու ըլլայինք, կ՚ըսէի՞նք երբեք, որ մեզի համար բարեխօս ըլլան։ Խիստ յայտնի բան չէ՞ ասիկա։ Բայց քննեցէք ամէն գեղեցիկ աղօթքները, որ կ՚ընենք Ամենասուրբ Կուսին եւ Սուրբերուն. եւ կը տեսնէք որ միշտ կ՚ըսենք, որ բարեխօս ըլլան մեզի համար։ Ողջոյն քեզ Մարիամին մէջ դուք ինչ կ՚ըսէք. Սրբուհի Մարիամ Մայր Աստուծոյ, բարեխօս եղիր մեզ մեղաւորաց համար, հիմայ եւ մեր մահուան ատենը։ Ս. Աստուածածնայ եւ Սրբոց Լիթանիաներուն մէջ ինչ կ՚ըսէք. Աղօթէ մեզ համար, աղօթեցէք մեզ համար։ Տեսա՞ք հիմայ։ Այսու ամենայնիւ ստախօսները չեն դադրիր ըսելէն, թէ կռապաշտ ենք եւ թէ Ս. Աստուածածինը եւ սուրբերը Աստուած կը ճանչնանք։ Եւ այսպէս զմեզ զրպարտելով՝ զձեզ կ՚ուզեն խաբել։

Բայց գոնէ ճշմարիտ չէ՞ ան որ կ՚ըսեն, թէ Ուղղափառները չափազանց կը բարձրացընեն Ս. Աստուածածնայ մեծութիւնները, երբոր զինք իրենց կեանքը, իրենց քաղցրութիւնը, իրենց յոյսը կ՚անուանեն եւ այլն։ Գուցէ աս ալ ճշմարիտ չէ՞, թէ աս անունները միայն Յիսուսի կը պատշաճին։ Ո՛հ, իմ սիրելիքս, չէ չէ։ Ուղղափառներն աս բաններու մէջ ամենեւին չա-

փը չէն անցըներ. ինչու որ Ս. Կուսին Աստուած ըլլալը ճանչնալէն ետքը, ուրիշ ինչ մեծացուցիչ եւ բարձրացուցիչ բան իրեն վրայ ըսելու ըլլան, ամէնն ալ փոքր է, քիչ է, իր Աստուածամայրութեան անհամեմատ արժանաւորութեան նայելով։ Ինքն իսկ Հոգւով Սրբով լեցուած կը գոչէր. Ինծի մեծամեծ բաներ ըրաւ Հզօրը. ուստի ասոր համար ալ ամենայն ազգերը ինծի երանի պիտ'ըս տան։ Բայց ուրեմն՝ ինչպէս կը պատշաճին Ամենասուրբ Կուսին այն ամէն անունները։ Գիտենք որ երկու եղանակաւ մէկը կրնայ ըսուիլ մեր կեանքը, յոյսը, քաղցրութիւնը եւ այլն. կամ որ անոր կը վերաբերի մեզի կեանք տալը եւ մեր յոյսը կերպաւորելը, եւ կամ եթէ անոր չի վերաբերիր մեզի նոյները շնորհելը, բայց կրնայ մեզի համար առնուլ անկից, որ կարող է տալ։ Արդ՝ այն անուններն առջի եղանակաւ միայն Յիսուսի կը պատշաճին, երկրորդ եղանակաւ շատ լաւ կը պատշաճին նաեւ Ամենասուրբ Կուսին։ Ասիկա աւելի պայծառ իմանալու համար, մտածեցէք աղքատ գեղացի մը որ տանտիրոջը բոլոր վստահութիւնն ունեցող տնտեսին առջեւն եկած է անդաստան մը վարձու առնելու համար, եւ կամ մտածեցէք պաշտօնատէր մը, որ Իշխանին բոլոր վստահութիւնը վայելող պաշտօնէի մը քով մտեր է, որպէս զի անոր ձեռքովը յառաջացում մ'ունենայ. արդ՝ թէ գեղա-



ցին թէ պաշտօնատէրն աս առիթներուն մէջ ինչ պիտ'որ ըսեն։ Տէր, իմ յոյսս բոլորովին քու վրադ դրած եմ. Դուն ստուգիւ կրնաս ինծի օգնել. թէ որ դուն ինծի համար միջնորդ ըլլալու ըլլաս, ինծի կեանք կու տաս եւ բովանդակ ընտանեացս փրկութիւնը կ'ըլլաս։ Այս եւ ասոր նման խօսքեր երկուքն ալ պիտ'որ գործածեն. Միթէ տանտիրոջ կամ իշխանին չի՞ վերաբերիր շնորհք ընելը, եւ իրենց նախատինք չ'ըլլար այն եղանակաւ իրենց պաշտօնեաներուն հետ խօսիլը։ Ոչինչ ամենեւին. ինչու որ ամէնքն ալ գիտեն թէ շնորհք ընելու իշխանութիւնը ճշմարտապէս տանտիրոջ եւ իշխանին ձեռքն է, իսկ ստորակարգեալներուն բովանդակ իշխանութիւնն աղաչելու եւ բարեխօս ըլլալու վրայ է։ Արդ՝ նոյն բանն է նկատմամբ Ամենասուրբ Կուսին։ Որովհետեւ ինք իբրեւ Մայր Յիսուսի անրաւ ազդեցութիւն ունի ուզած շնորհքներ խնդրելու եւ ընդունելու, այսպէս մենք ալ զինք մեր կեանքը, մեր յոյսը եւ ասոր նմանները կը կանչենք, զմեզ իրեն յանձնած ատեննիս. բայց արդէն կը գիտցուի որ իր ըրածը միայն կարողութիւն եւ ազդեցութիւն աղաչանաց է, իսկ էական իշխանութիւնը մինակ Յիսուսի ձեռքն է։ Ապա ուրեմն՝ այն աղօթքներու ձեւին մէջ ամենեւին զեղծմունք մը չկայ, մանաւանդ թէ ամենայն եռանդեամբ ստէպ ստէպ նոյներն ընելու ենք։

վասն զի շատ զօրութիւն ունին մեր վստահութիւնն աւելցընելու։

Ս. Աստուածածնայ վրայ ուրիշ ամենածանր մոլորութիւն մ'ալ կը տարածեն։ Այս անօրէնները՝ նմանելով սատանայի որ միշտ մեծ թշնամի եղած է Մարիամ Կուսին, կը յանդգնին ուրանալու անոր սուրբ կուսութիւնը։ Հին սուրբերը, ինչպէս Ս. Հերոնիմոս, Ս. Ամբրոսիոս, Ս. Բեռնարդոս, երբոր այս զարհուրելի հայհոյութիւնը կը լսէին Ամենասուրբ Կուսին մեր Մօրը դէմ, այնպէս մեծ սոսկում կը զգային որ ականջնին կը գոցէին։ Արդ՝ նոյնը մենք ալ պէտք է ընենք։ Բայց՝ ի՞նչ կ'ընեն ասոնք՝ իրենց հայհոյութիւնը հաստատելու համար։ Կը տեսնեն, որ Ս. Աւետարանին մէջ երբեմն Յիսուսի եղբայրները կ'անուանուին, ասկից շուտ մը կը կարծեն թէ Ամենասուրբ Կոյսը ուրիշ զաւակներ ալ ունեցած ըլլայ։

Արդ՝ ասիկա բոլորովին իրենց տգիտութիւնն է, ինչու որ չեն գիտեր թէ Սուրբ Գիրքը, արեւելեանց եղանակաւ խօսելով, ուրիշ ազգականներն ալ եղբայրներու անունով կը կոչէ, ինչպէս են հօրեղբօրորդիներն ու տագրները եւ այլն. այսպէս Ս. Աւետարանը չ'ուզեր ըսել թէ Յիսուս ուրիշ մարմնաւոր եղբայրներ ալ ունէր, այլ հօրեղբօրորդիներ եւ ազգականներ. ուստի ամենեւին սուտ է թէ Ս. Կոյսը Յիսուսէ զատ ուրիշ որդիք ալ ունեցեր է, ինչպէս



բովանդակ Սուրբ Եկեղեցին հաստատութեամբ ընդունած է, միշտ դատապարտելով այն հրէշները, որոնք Մարիամ Աստուածածնի կը զլանան իր մեծ առանձնաշնորհութիւնը Կոյս մնացած ըլլալու՝ յառաջ քան զծնանելը, ծնած ատենը եւ ծնանելէն ետքը։

Բայց՝ ի՞նչ հարկաւորութիւն կայ, կ'ըսեն դարձեալ, Ս. Կուսին եւ Սուրբերուն դիմել եւ բարեխօսութեան կանչել. չէ՞նք կրնար շիտակ Յիսուսին երթալ։ Մենք ալ իրենց պատասխան կու տանք, թէ երթան Յիսուսին որչափ կ'ուզեն եւ երբեք շատ գացած չեն ըլլար, եւ երբեք զիրենք ատոր համար չենք յանդիմաներ, միայն թէ չյանդգնին դատապարտել Ս. Եկեղեցին որ անոնց բարեխօսութիւնը կը գործածէ։ Իրենք ալ դիմեն անոնց այնչափ, որչափ կը դիմէ Ս. Եկեղեցին իր պաշտամանց մէջ, որպէս զի անոր հնազանդ որդիքն ըլլան. այսու ամենայնիւ առանձնական ջերմեռանդութեան կրթութեանց մէջ, եթէ աւելի կ'ուզեն շիտակ Յիսուսի դիմել՝ տէր են։

Մենք Ուղղափառքս առանձին վստահութիւն ունինք Ամենասուրբ Կուսին եւ Սրբոց վրայ շատ պատճառներու համար, վասն զի մենք մեր յանցաւորութեան վրայ համոզուած եւ խոնարհութեան խորին զգածմունքներով լեցուած ըլլալով՝ կը հաւատանք որ աւելի դիւրութեամբ մեր աղաչանքները կը լսուին, երբոր աստուա-

ծայրին աթոռին առջեւը կ'ըլլենք Սուրբերուն եւ առանձինն Երանելի Կուսին աղօթից ընկերութեամբը, որն որ Յիսուսի Մայրն ըլլալով՝ անսահմանապար սիրելի է անոր սրտին. վստահ ենք որ այսպէս Յիսուս աւելի գործունէութեամբ մեզի օգնութեան կը շարժի, աւելի առատութեամբ զմեզ կը մխիթարէ եւ մեզի կ'ողորմի: Մեր ըրածն ան է ինչ որ ամենէն ստորին տան ծառայ մը կ'ընէ. ասիկա թէ որ իր տանտիրոջմէ շնորհք մը ընդունիլ կ'ուզէ, կը դիմէ ուրիշ ծառայի մը, որ աւելի մտերիմ է Տիրոջը, որպէս զի իրեն համար խօսի. եւ այս խոնարհութեան զգածմունքը ստուգիւ մեծ յարգ ունի Աստուծոյ առջեւ, որ խոնարհ սրտերը կը սիրէ:

Բայց ասկից՝ զատ աւելի եւս զՅիսուս Քրիստոս կը պատուենք. ինչու որ ստոյգ չէ՞ք համարիր, թէ իշխան մը այնչափ աւելի պատիւ կը ստանայ, որչափ աւելի մեծ անձինք են, որոնք իրեն առջեւը կը խոնարհին շնորհքներ եւ նպաստներ խնդրելու: Արդ՝ մենք մեր Աստուածը եւ Փրկիչը Յիսուս՝ այնչափ մեծ կը համարինք, մինչեւ կը բաղձանք որ իր առջեւը խոնարհին եւ պաղատին ոչ միայն ամէն Սուրբերը եւ ամէն հրեշտակները, այլ նաեւ անոնց ամենուն Թագուհին՝ Մարիամ. եւ այսպէս իրեն կը մատուցանենք մեծագոյն պատիւ որչափ կարող ենք: Տեսէք ուրեմն թէ որ-



չափ յիմարական բաներ կը գրուցեն ձեզի, երբոր կը հաստատեն թէ պատուելով զՄարիամ՝ Յիսուսի նախատինք կ'ըլլայ:

Բայց դուք՝ լսելով այս ամենայն անարգանքները, որ կու տան Բողոքականները մեր սիրելի Մօրը Մարիամու, ջանացէք աւելի եւս զինք պատուել եւ այն սոսկալի անարգանքներուն փոխարէնը հատուցանել, իրեն աւելի ջերմեռանդութեամբ աղօթելով, օր ըստ օրէ իր սուրբ Վարդարանը գրուցելով, ձեր ընտանիքներն իրեն պաշտպանութեան յանձնելով եւ պարծելով ամէն ատեն, ամէն առթի մէջ, ձեր գթած մօրն եռանդուն պաշտպան ըլլալնուդ վրայ: Նոյնն ըսէք պատշաճաւոր համեմատութեամբ նաեւ Սուրբերու նկատմամբն ալ: Սէր ունեցէք ձեր Պաշտպան եւ Բարեխօս Սուրբերուն, որոնք Աստուծմէ տրուած են ձեզի, եւ կ'աղօթեն ձեզի համար, բայց դուք ալ միշտ յանձնեցէք զձեզ անոնց ամենայն վստահութեամբ:

Բովանդակ Սուրբ Եկեղեցին լեցուած է այնչափ զարմանալի շնորհքներով, զորոնք Ամենասուրբ Կոյսը եւ Սուրբերն ըրած են իրենց ջերմեռանդներուն. հրաշքները՝ որոնք հետզհետէ գործուած են իրենց բարեխօսութեամբը՝ բիւրաւոր են, աշխարհքիս ամենէն երեւելի մարդիկներէն հաստատուած եւ շատ անգամ ամբողջ բազմութեան առջեւ պատահած, այնպէս որ անկարելի է ուրանալը. եւ այս է մեծ պա-

տուն երկնից եւ երկրի Թագաւորին՝ Յիսուսի Քրիստոսի, որ իր ծառաներն ալ այնչափ մեծ են, որ կարող են Իրմէ այնպիսի հրաշքներ գործելու կարողութիւնն ընդունիլ, ինչպէս են անոնք՝ որոնց վրայ կը զարմանանք ի փառս Յիսուսի եւ փորձը կը տեսնենք մեր օգտին։

## ԳԼՈՒԽ Է.

ԽՈՐՀՈՒՐԴ ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՆ. ՊԱՏԿԵՐՆԵՐՆ ՈՒ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԸ ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՆԵՐ ԵՆ։

Ուրիշ մէկ պատճառը, որուն համար Բողոքականները զմեզ կռապաշտ կը կանչեն, ան է որ կը պատուենք Սրբոց պատկերները եւ կը յարգենք անոնց մասունքները։ Մանաւանդ ասոր դէմ՝ այնչափ կ'աղաղակեն, որ նմանը չէ տեսնուած. յառաջ կը բերեն յարմար կամ՝ անյարմար վկայութիւններ Ս. Գիրքէն, կ'երդնուն որ մենք հեթանոսներէն ալ գէշ ենք եւ մինչեւ ըսելու կը համնին թէ այս մեր աւելորդապաշտութիւնները պահելու համար, նաեւ Աստուծոյ պատուիրաններն եղծեր խանգարեր ենք։ Արդ՝ զգոյշ կեցէք, իմ՝ սիրելիքս, աս ալ իրենց մէկ խաբէութիւնն է, որ նախընթացէն վար չի մնար։

Եւ նախ առաջին յիշեցէք ինչ որ ձեզի մեկնած են ձեր քահանաները Քրիստոնէական վարդապետութեան մէջ Սուրբ Պատկերներու եւ Մասունքներու նկատ-



մամբ։ Գուցէ թէ երբեք ըսի՞ն ձեզի, որ փայտին, թուղթին, լաթին՝ մետաղին մէջ, որոնցմէ շինուած կամ՝ կերպարուած են պատկերները, զօրութիւն մը պարունակուած ըլլայ։ Ո՛չ ամենեւին։ Մանաւանդ որ Ս. Եկեղեցին մեզի բացարձակապէս կ'արգելէ, որ չհաւատանք պատկերներու մէջ զօրութիւն կամ՝ իշխանութիւն մը գտնուելուն. կ'արգելէ մեր վստահութիւնը նիւթական արձաններուն կամ՝ պատկերներուն վրայ դնելու, եւ կ'ուզէ որ ամէն պատիւ որ անոնց կու տանք, իրենց բուն օրինակին՝ այսինքն է Սուրբերուն, Ս. Կուսին եւ նոյն իսկ Յիսուսի երթան, որ կեան ու կը թագաւորեն յերկինս. այնպէս որ երբ զանոնք կը համբուրենք, կամ՝ ծնրադրութիւն կ'ընենք առջեւնին, մենք ան պատկերներուն երկրպագութիւն կամ՝ պատիւ չենք ըներ, այլ մեր պատիւը Սուրբերուն եւ Ս. Կուսին, իսկ երկրպագութիւնը՝ Յիսուսի կը մատուցուի։ Ասիկայ է Ս. Եկեղեցւոյ վարդապետութիւնը, ինչպէս ծանօթ է ամէն Քրիստոնէական վարդապետութիւններէն եւ Տրիդենդեան Ս. Ժողովքէն։

Արդ՝ աս միայն բաւական չէ՞ ցուցնելու թէ հոս կռապաշտութիւն չկայ եւ չի կրնար ալ ըլլալ։ Եթէ մենք պատկերներուն մէջ ամենեւին կարողութիւն կամ՝ զօրութիւն մը չենք ճանչնար, ապա ուրեմն եւ ոչ աստուածութիւն մը կը ճանչ-

նանք, եւ եթէ աստուածութիւն մը չենք ճանչնար, ո՛ւր է կռապաշտութիւնը։ Նոյնպէս եթէ անոնցմով ուրիշ բան չենք ըներ, բայց եթէ բուն սկզբնապատկերները պատուել, ապա ուրեմն փայտին, մետաղին, լաթին պաշտօն չենք ընծայեր, ինչպէս անոնք կը զրուցեն, ուստի նաեւ չկայ կռապաշտութիւն։

Բայց ան ատեն պատկերները ինչո՞ւ կը գործածենք։ Իրաւցընէ այնչափ ինչ ունե-րու հարկաւորութիւն չունինք պատճառտալու, որովհետեւ կրնանք պատասխան տալ, որ Ս. Եկեղեցին՝ Հոգին Սուրբէն լուսաւորեալ եւ առաջնորդեալ՝ միշտ ասանկ ըրած է, եւ աս պատճառը բաւականէն աւելի է. այսու ամենայնիւ իրենց օգտութեանը ցուցակից ըլլալով, կ՚ըսենք թէ պատճառները շատ եւ խիստ ծանր են։

Մենք սուրբ պատկերները կը գործածենք, վասն զի կ՚արթընցընեն մեր վրայ Յիսուսի, Ամենասուրբ Կուսին ու Սրբոց յիշատակը, եւ այսպէս կը հրաւիրեն զմեզ՝ քաղցրութեամբ զիրենք մեզի բարեխօսութեան կանչելու։ Ինչո՞ւ Բողոքականներն ալ հօրերնուն, մօրերնուն, ազգականներնուն եւ իրենց սիրելի անձինքներուն պատկերները նկարել կու տան։ Անոնք ի՛նչ բանի կը ծառայեն։ Պատասխան կու տան մեզի, թէ կը ծառայեն կենդանի պահելու անոնց յիշատակը, որ գուցէ արդէն մեռած են կամ հեռու կը գտնուին եւ այս-



պէս զիրենք միշտ առջեւնին ներկայ ունենալու։ Լա՛ւ է, մենք ալ կը բաղձանք յաճախ Յիսուսի՝ մեր Հօրը, Մարիամու՝ մեր Մօրը, եւ Սրբոց՝ մեր Եղբարց եւ բարեկամաց յիշատակը մտքերնիս բերել, եւ դեռ իրենցմէ հեռու ըլլալնուս համար, կը ցանկանք գոնէ իրենց պատկերաց տեսութեամբը զմայլիլ։ Ասոր ի՛նչ կրնան ըսել։

Սուրբ պատկերները կը ծառայեն նաեւ սրտերնուս վրայ շատ օգտակար տպաւորութիւն ընելու, վասն զի գրեթէ աչքերնուս առջեւը կը բերեն Յիսուսի կենաց խորհուրդները եւ Սրբոց գործքերը, որոնք զինք այնչափ սիրեցին։ Ստոյգ չէ՞ արդեօք, որ գեղեցիկ Մանուկ Յիսուսի տեսութիւնը՝ մէկ վայրկենի մէջ իրեն աստուածային մանկութեան ամէն քաղցրութիւններն առջեւնիս կը բերէ։ Ս. Փրանկիսկոս Ասիզացին այսպիսի տեսութեամբ այնչափ ի գութ կը շարժէր, որ կու լար սաստիկ արցունք թափելով։ Նաեւ ստոյգ չէ՞ արդեօք, թէ աղուոր խաչելութիւն մը մէկ վայրկենի մէջ աչքերնուս առջին կը դնէ Յիսուսի չարչարանքները, իր հոգեվարութիւնը, իր կսկիծները, իր մահը, եւ ի՛նչպէս սաստկութեամբ զմեզ կը շարժէ։ Ամեն Սուրբերու սրտերը կը հալէին կը մաշէին խաչելութեան դիմացը։ Նոյնն ըսէք նաեւ գեղեցիկ Սիրտ Յիսուսի մը տեսնելու ատեննիդ, որն որ իր բոցերովը մեզի յիշել կու տայ սիրոյն անչափութիւնը, զորն որ

Յիսուս մեր վրայ ունեցաւ ։ Նոյնն ըսէք Մարիամու պատկերներուն համար, որ մեզի կը վիճեցընեն, թէ երկինքն ունինք գթած Մայր մը, որ մեզի համար կ'աղօթէ ։ Նոյնն ըսէք նաեւ Սրբոց պատկերներուն նկատմամբ, որ մտքերնիս կը ձգեն ինչ որ իրենք Յիսուսի համար գործեցին ու կրեցին, եւ մեզի սիրտ կու տան նոյնպէս գործելու ։ Ասոր համար է որ բարի հաւատացեալները այնչափ կը սիրեն սուրբ պատկերները, կը զուարճանան նոյները եկեղեցիներու մէջ տեսնելով ու կը ժողվին աղօթելու համար. ինչու որ կը շարժեն ասոնք երեւակայութիւնը մտադիր կենալու. կ'ուրախանան նաեւ տներնուն մէջ նոյները տեսնելով, որպէսզի իրենց գրգիռ ըլլան աղէկ եւ սուրբ մտածութիւններ ունենալու, կ'ուրախանան առանձինն՝ անկողնոյ չորս կողմը տեսնելով, որպէս զի զՅիսուս եւ զՄարիամ յիշեն անկողին գացած ու ելած ատեննին, այնչափ սիրելի են ասոնք իրենց մահուան ժամուն մէջ. կը պագնեն, եռանդեամբ սրտերնուն կը մերձեցընեն, իբրեւ թէ զՅիսուս եւ զՄարիամ ողջագուրեն ։ Շատ գժբախտ են անոնք, որոնք այսպիսի պայծառ բաներէ չեն հասկընար ։ Անոնք միայն կարող են չսիրել սուրբ պատկերները, որոնք բուն սկզբնապատկերները չեն սիրեր. ինչու որ անկարելի է առնել կենդանագիր մը, երբոր սիրելի է անձը՝ որ անով կը ներկայացուի ։



Կը ծառայեն նաեւ սուրբ պատկերները տխմար կարդալ չգիտցող անձինքներու հրահանգ մը տալու ։ Ինչու որ այն պատկերներուն մէջ, Յիսուսի կենաց, չարչարանաց ու մահուան խորհուրդները նկարուած տեսնելով, ան ամէն դէպքերը մտքերնուն մէջ կը տպաւորուին, եւ անոնց գեղեցիկ պարագաներն ալ մտքերնէն չեն ելլեր ։ Նոյնը կը պատահի համեմատաբար Սրբոց եւ Երանելի Կուսին կենացը նկատմամբ, որոնք մեզի շինութիւն, օրինակ եւ խթան ըլլալու կը ծառայեն ։ Հիմակուան ատենս որ տղոց հարիւրումէկ արժէք չունեցող բաներ սորվեցընելու համար, մեծ շռայլութեամբ այնչափ փորագրութիւններ եւ նկարներ կը գործածուին, եւ նոյն իսկ Բողոքականները միշտ անոնցմով կը վարուին, դեռ խելքերնին չի հասնիր, թէ ինչպէս Ս. Եկեղեցին՝ որն որ երկնաւոր իմաստութիւնն ունի, կարող եղեր է իրենցմէ յառաջ աս միջոցը ի գործ դնել հաւատացելոց կրթութեան համար ։

Վերջապէս սուրբ պատկերները երբեմն կը ծառայեն աստուածպաշտութիւնն արտաքոյ կարգի զարթուցանելու համար ։ Վասն զի Աստուած շատ անգամ՝ աս պատկերներուն միջոցով՝ առանձինն եղանակաւ Եկեղեցւոյ մը, վկայարանի մը մէջ փառաւորուիլ ուզելով, իր շնորհքները հոն առատութեամբ կը հեղու, հաւատացելոց բազմութիւնը հրաւիրելով, ասոնք

ալ ամենայն փութով հոն կը ժողվին, եւ ռանդեամբ կ՚աղօթեն, վստահութիւննին կը զօրանայ, մեծագոյն հաւատքով Յիսուսի կենաց խորհուրդներուն աւելի տեղեակ կ՚ըլլան, եւ միանգամայն մեծագոյն եռանդով անոր ծառաները՝ Սուրբերը եւ կամ Ս. Աստուածամայրը յարգելով, մեծամեծ շնորհքներ ու օգնութիւններ կ՚ընդունին։ Ասով իբրեւ թէ կը նորոգի. քրիստոնէական աստուածպաշտութիւնը որն որ մեր տկարութեամբը միշտ նուաղելու եւ պակսելու վրայ է։

Ս. Պատկերաց պաշտօնէն զատ, նաեւ Ս. Մասունքներու պաշտօնն ալ կը դատապարտեն. բայց յայտնի է թէ կը խաբուին եւ հոս ալ կ՚ուզեն խաբել. պատկերաց համար յառաջ բերուած պատճառները ասոնց համար ալ կ՚արժեն։ Մենք Մասունքները կը գործածենք, ինչպէս պատկերներու համար ըսինք, այն անձինքներն յիշատակելու փափաքանաւ, որոնց մասունքներն են. որպէսզի յորդորուինք զանոնք պատուելու եւ անոնց նմանելու, առանց անոնց նիւթական զօրութիւն մը ընծայելու։ Ասոր համար աս նիւթիս մէջ մեզի դէմ ամէն ըսածնին սուտ զրպարտութիւն է։

Այսու ամենայնիւ ինծի կ՚երեւայ թէ Բողոքականները չեն գիտեր բոլորովին, թէ ինչ են մասունքները՝ որ մենք կը յարգենք։ Ինչու որ եթէ գիտնալու ըլլային,



կրնայի՞ն արդեօք այնպէս խօսիլ, ինչպէս կը խօսին։ Գլխաւոր մասունքները որ Ս. Եկեղեցւոյ մէջ կը յարգուին, են նախ՝ Ս. Խաչափայտին, Ս. Փուշ-պսակին, Տէգին, Ս. Սինդոնին կամ Պատանաւակալին, ինչպէս նաեւ Փրկչին չարչարանաց ուրիշ գործիքներուն մասունքները։ Բայց Բողոքականները, որ այնչափ Ուղղափառաց դէմ կ՚աղաղակեն, իբր թէ ըստ բաւականին Յիսուսի Քրիստոսի վրայ չեն մտածեր, կրնա՞ն զմեզ յանդիմանել, որ Յիսուսի սիրոյն համար կը մեծարենք մինչեւ նաեւ գործիքները, որ անոր ամենասուրբ մարմնոյն մերձեցան։ Նոյնէն կու գան Սուրբ Մարտիրոսներուն կամ Խոստովանողներուն մասունքները, որոնք իրենց մարմինը սրբացուցին կամ մարտիրոսութեամբ եւ կամ ապաշխարութեամբ, նուիրելով ի պատիւ Յիսուսի։ Եւ այն մարմինները՝ որ եղան կենդանի տաճար Հոգւոյն Սրբոյ, եղան նաեւ գործիք այնչափ ապաշխարութեանց, սրբացան այնչափ խորհուրդներով, ու ատի եւ մեծաւ փառօք պիտի՛որ պայծառանան բովանդակ յաւիտենականութեան մէջ. արդ այս մարմինները՝ արժանի չե՞ն արդեօք մեծ եւ առանձին յարգութեան։ Զարմանալու մեծ ախորժակ մը պէտք է աս ամէն բաներու մէջ գայթելու առիթ մը գտնելու համար. եւ կամ պէտք է կարծել թէ Քրիստոնեաներուն ու Սուրբերուն մարմիններն անասնոց մարմիններու պէս բաներ էին։

Բայց՝ գիտէ՞ք արդեօք, որո՛նք են որ սուրբ մասունքներու պաշտօնը կը դատապարտեն. անո՛նք են՝ որոնք մոլեգնութեամբ ուրիշ տեսակ մասունքներ ստանալու ետեւէն կ'իյնան։ Անո՛նք են՝ որոնք մեծ մասունքի մը պէս կը պահեն այն աղտեղի ուրացողին՝ Մարտինոս Լութերի՝ կաղամարը. անո՛նք են՝ որոնք մասունքի պէս կը պահեն խառնագնաց մէկուն գրիչը, ինչպէս է Պայրըն. անո՛նք են՝ որոնք ինչ գնով որ ըլլայ, կը գնեն հին կօշիկ մը, վասնզի Նաբոլէոն գործածեր էր. անո՛նք են՝ (յայտնի զրուցենք իրենց անմիտ-ովը) որոնք իրարու ձեռքէ կը յափշտակեն ժապաւէն մը, ծաղիկ մը, չնչին բան մը, վասնզի կաքաւիչ մը, գուսան մը, բոզ մը գործածեր էր։ Իրաւցընէ՛ այսպիսիներուն բերնին կը վայլէ, որ վար զարնեն Կաթողիկէ Եկեղեցւոյ ամենամաքուր պաշտամունքը։

Բայց մենք չենք, կ'ըսեն դարձեալ, մենք չենք որ այդ ամենայն կը դատապարտենք, այլ Ս. Գիրքն է։ Սուտ զի՞ կ'ըսեն. Իրաւցընէ Ս. Գի՛րքն է։ Չէ՞ք գիտեր, որ նոյն Գրքին մէջ յայտնի կը զրուցէ, թէ ամենեւին գրօշեալ մ'ունենար։ Նոյնպէս Մարգարէներն ու առանձինն Սաղմոսը բարձրաձայն կ'աղաղակեն անոնց դէմ, որոնք կուռքեր եւ անդրիներ կը շինեն։ Իրաւունք ունինք ուրեմն Բողոքականները կռապաշտ կանչելու։ Ճշմարիտ կը զրուցեմ, ես այսպիսի նոր հետեւութեան մը



չէի սպասեր, ստուգիւ բարձրագոյն հանճար մը կ'ուզէ այս խօսակցութիւնն ընելու։ Աստուած արգելեց որ կուռք, մետաղէ եւ ասոնց նման արձանները Աստուածներու տեղ չդնենք ու չհաւատանք, ուրեմն չեն կրնար եղեր գործածուիլ արձաններն ու պատկերներն անմեղ՝ մանաւանդ թէ սուրբ գործածութեամբ, այսինքն է՝ Աստուծոյ յիշատակը դիւրացընելու, եւ լաւագոյն եղանակաւ Ս. Հաւատոյ խորհուրդներն իմանալու համար։ Բայց աս է իրենց խօսակցութիւնը։

Ինչու որ (ըսենք իրենց դժուարութիւնը լուծելու համար), որո՞նց համար տրուած են այն արգելքները անդրի եւ պատկեր չշինելու։ Տրուած են Հրեաներուն, որոնք Եգիպտոսի կռապաշտութեան մէջ զարգացած ըլլալով, բնականապէս առ այն միտեալ էին, ինչպէս կը տեսնուէր անապատին մէջ, ուր իրենց ոսկի որթը շինեցին, ու ետքէն ալ ուրիշ հարիւրաւոր դէպքերու մէջ, իրենց դրացի ազգերուն Աստուածները պաշտեցին։ Հրեաները ինչ հաւատք ունէին այն արձաններուն ու պատկերներուն վրայ։ Կը հաւատային իրբեւ ստոյգ աստուածութիւններ, անոր համար ալ անոնց երկրպագութիւն ընելով կը պաշտէին, զոհեր կը մատուցանէին եւ անոնց պատճառաւ ճշմարիտ Աստուծմէ կը հեռանային։ Արդ՝ ասոր նկատմամբ Աստուած ի՞նչ կը հրամայէ իրենց։ Կ'արգե-

լէ որ արձաններ կամ երկնից եւ երկրի վրայ
գտնուած որ եւ իցէ առարկաններու պատ-
կերը չշինեն. վասն զի չէր ուզեր որ զա-
նոնք պաշտեն, որովհետեւ ինքն է մի միայն
եւ ճշմարիտ Աստուած, որուն երկրպա-
գութիւն ընել պէտք է։ Եւ ինչ որ Աս-
տուծմէ արգիլուած էր, նոյնը նորէն անոր
անուամբը Սուրբ Մարգարէներէն ալ ար-
գիլուեցաւ. եւ որպէս զի միշտ եւ աւելի
եւս հեռանայ ժողովուրդը սուտ Աստուած-
ներու երկրպագութենէն, սուրբ Թագաւո-
րը Դաւիթ զանոնք ամէնքն ալ ծաղրե-
լով կը խայտառակէր ու կ'ըսէր. թէ աչք
ունին եւ չեն տեսներ, ականջ ունին եւ
չեն լսեր, ձեռք ունին եւ չեն շօշափեր,
ոտք ունին եւ չեն քալեր, բերան ունին
եւ չեն խօսիր. մէկ խօսքով անկենդան
փայտի ու մետաղի կտորներ են։ Ահա ի-
մաստը այն խօսքերուն, զորոնք միշտ Բո-
ղոքականաց դէմ յառաջ կը բերեն առանց
հասկընալու։

Արդ շնորհք ըրէք, մտածեցէք ինչ
յարաբերութիւն ունին աս խօսքերը մեր
պաշտամանց հետ։ Մենք՝ արձանները ու
պատկերները կը գործածենք, բայց կ'ը-
սե՞նք արդեօք, թէ Աստուածներ են։ Երբ-
բեք. սորվեցուցի՞նք, որ Յիսուսի պատկե-
րը՝ ճշմարիտ Յիսուսն է, թէ Մարիամու
պատկերը՝ ճշմարիտ Աստուածածինն է։ Բո-
լորովին ներհակը կը ցուցնենք, թէ ուրիշ
բան չեն բայց եթէ փայտ, կաւ կամ մե-



տաղ. այնպէս որ եթէ հիննալու ըլլան
եւ մեզի ալ չծառայեն, առանց խղճի
մէկ դի կը դնենք։ Բայց ասկից զատ թէ
ասոնց աստուածային զօրութիւն մը, նիւ-
թական կարողութիւն մը կ'ընծայենք.
ինչպէս կ'ընէին կռապաշտները. բոլորովին
ներհակը. յայտնի կը սորվեցընենք, թէ ա-
սոնք չեն պարունակեր իրենց մէջ ոչ կա-
րողութիւն եւ ոչ զօրութիւն մը։ Վեր-
ջապէս պատկերներու եւ արձաններու ա-
ռաջին համար կը թողո՞ւնք ճշմարիտ Աստու-
ծոյ երկրպագութիւնը, ինչպէս կ'ընէին
կռապաշտները։ Ամենեւին։ Մանաւանդ
թէ կը սորվեցընենք՝ թէ պատկերներու
վրայ պէտք է յարգել միայն զանիկա, զորն
որ կը ներկայացընեն եւ անոր համար կը
գործածենք զանոնք, վասնզի կ'օգնեն մեզի
նոյնը յաւագոյն եւս պատուելու։ Ո՞ւր են
ուրեմն այն ամէն արգելքները, որ կ'երա-
զեն։ Այն ամէն Ս. Գրոց վկայութիւննե-
րը որ յառաջ կը բերեն Բողոքականները,
ի՞նչ յարաբերութիւն ունին մեզի հետ։
Արդ՝ եթէ չեն ճանչնար կաթողիկէ վար-
դապետութիւնը, ինչո՞ւ կը հակառակին։
Եթէ կը ճանչնան, ինչո՞ւ նենգութեամբ
կռապաշտներու վարդապետութեան հետ
կը շփոթեն։

Այսու ամենայնիւ կը հաստատք ար-
դեօք. այս իրենց յիմարութեան մէջ ա-
նանկ յամառ են, որ մինչեւ կը յան-
դգնէին ըսելու, ինչպէս մէկ քանիներէն

լուած եմ, թէ մենք Ուղղափառքս աղա-
տութեամբ կռապաշտութիւն ընել կարող
ըլլալու համար, նաեւ աստուածային Պա-
տուիրանները խարդախեր ենք. այսպէս ո-
ղորմելի ուրացող մ'ալ Ս. Հաւատքին հետ
ան աստիճանի առողջ մտածութիւնն ալ
կորսնցուցեր է, մինչեւ այսպիսի յիմա-
րութիւնները տպագրութեամբ ալ հրա-
տարակած է՝ այն անարգ տետրակներուն
մէջ, զորոնք այնչափ կը ջանան ձեռքեր-
նիդ հասցընել։ Բայց այսպիսի զրպարտու-
թեան մը ի՞նչ կերպարանք կրնային տալ
արդեօք։ Ահաւասիկ։ Մեր Քրիստոնէա-
կան Վարդապետութիւններուն մէջ գտեր
են, թէ աստուածային Պատուիրանները
բառ առ բառ չեն օրինակուած Նըէց
Գրքին մէջէն, եւ թէ զանց առնուած են
այս բառերը «Քեզի դրօշելոցներ մ՛ չըներ» եւ
այլն. եւ ասոր վրայ կ'աղաղակեն թէ խար-
դախութի՜ւն կայ, կաթողիկէ Եկեղեցիէն
մտանութիւն եղեր է հաւատացեալներուն։
Մի՛տ դրէք, եւ միշտ աւելի եւս կը ճանչ-
նաք այս ուրացողներուն բարեմտութիւ-
նը։ Պատուիրանները բառ առ բառ Քրիս-
տոնէականին մէջ չեն օրինակուած, կ'ը-
սեն։ Ի՞նչ զարմանալի բան։ Արդէն կը
գիտցուի, թէ բառ առ բառ չեն օրինա-
կուած։ Ա՜հ. Քրիստոնէականին մէջ հա՞րկ
է բոլոր Ս. Գիրքն օրինակել։ Քրիստո-
նէական վարդապետութիւնը ուրիշ բան
չէ, բայց եթէ համառօտութիւն գիտնա-



լու համար ամենէն հարկաւոր ճշմարտու-
թիւններուն. Յաւցածները, թէպէտ եւ պա-
տուական եւ անգին են, թէպէտ եւ աս-
տուածային, այսու ամենայնիւ զանց կ'առ-
նուին։ Ասոր պատճառն է, որ աստուա-
ծային Պատուիրաններէն այն ամենայն կը
ձգուի, որոնք գլխաւորաբար Հրէից համար
տրուած էին։ Այսպէս առաջին Պատուի-
րանին մէջ զանց կ'առնուի թէ «Ա[illegible]
[illegible]», վասն
զի անոնց կը նայի. զանց կ'առնուին նոյն-
պէս օրհնութիւններն ու պատիժները, զո-
րոնք Աստուած պիտ'որ տայ անոնց որ նոյ-
ները կը պահեն կամ չեն պահեր, ինչու որ
երկրաւոր պատիժներն ու վարձքերն աւելի
պատշաճաւոր էին հին օրինաց քան թէ
նոր օրինաց։ Երրորդին մէջ կը ձգուի այն
մասը, որ տօները սուրբ պահելու համար
այն մասնաւոր ժողովրդեան սովորութեան-
ցը համեմատ էր։ Վերջինոյն մէջ քիչ բա-
ռերով կը համառօտուի ինչ որ ընդար-
ձակ գրուցուած է։ Արդ՝ նոյն եղանակաւ
առաջինին մէջ ալ զանց կ'առնուի ինչ որ
կռապաշտութեան կը նայի, ինչու որ
Քրիստոնեայ ժողովրդեան մէջ, Աստուծո՛յ
գոհութիւն, ա՛լ այս վտանգը չկայ, միայն
կենդանի ու ճշմարիտ Աստուծմէ զատ ու-
րիշ մը ա՛լ չի ճանչցուիր։ Ուրեմն ժողո-
վուրդենէ ի՞նչ գաղտնի պահած է Ս. Եկե-
ղեցին։ Ան բանը, որուն գիտութիւնը հար-
կաւոր չէ, եթէ իրաւցընէ մեզի չեն գար

Բողոքականները եւ ըսեր թէ մեր մէջն ինչպէս փոխանց կայ կռապաշտութեան։ Այսու ամենայնիւ եւ ոչ ասիկա ծածկեր է Ս. Եկեղեցին, ինչու որ ամէն քիչ մը ընդարձակ Քրիստոնէականներու մէջ (Սուրացողները ասիկա հարկ է որ գիտնան) երկայն կը խօսուի կռապաշտութեան վրայ, եւ կը գրուին ամէն բաները ինչպէս են Նոյեց մէջ․ բաց ասկից Ս. Գրքին մէջէն այն բաները վերցուցած չէ, եւ ով որ կ՚ուզէ կարդալ, գիտութեամբ կրնայ տեսնել։ Հոս ինչ չարութիւն կայ ուրեմն։ Այն չարութիւնը միայն, որ կը հասցընեն Ս. Կաթողիկէ Եկեղեցւոյ վրայ ամբարիշտ զրպարտիչները։ Ահաւասիկ վերջապէս ուր կը տանին կը հասցընեն իրենց պատճառները, որպէս զի ցուցընեն թէ Եկեղեցւոյ մէջ կռապաշտութիւն կայ։

Սակայն աս կռապաշտութիւնը կը տեսնեն հոն՝ ուր չկայ ամենեւին, եւ չեն տեսներ Քրիստոնէական բարեպաշտութիւնը՝ ուր իրօք եւ արդեամբ կը գտնուի։ Չեն տեսներ ինչպէս Յիսուս իր պատկերներուն միջոցովը երկրպագութիւն ընդունելով եւ Ս. Կոյսն ու սուրբերը անոնցմով բարեխօսութեան կանչուելով, մեզի ամէն տեսակ շնորհքներ կ՚ընեն։ Չեն տեսներ որ Յիսուս երբեմն մանուկ նկարուած, երբեմն վշտակիր, եւ երբեմն խաչեալ, կը զարթուցանէ այնչափ Քրիստոնեայ սրտերու մէջ այն գեղեցիկ զգածմունքները հաւա-



տոյ, վշտակցութեան, սիրոյ, յուսոյ եւ զղջման․ չեն տեսներ թէ ինչպէս Ս. Կոյսն այնչափ տաճարներու մէջ բարեխօսութեան կանչուելով, կ՚ընդունի Յիսուսէն ամենէն մեծ շնորհքները․ չեն տեսներ որ Սուրբերը իրենց գերեզմանին վրայ եւ իրենց մասունքներովը մեծարուելով, շատ անգամ՝ Աստուծմէ ընդունած են հիւանդաց առողջութիւն, կուրաց տեսութիւն, խուլերու լսողութիւն եւ մինչեւ մեռելոց դարձի շնորհքը։ Չեն տեսներ որ Եկեղեցւոյ մէջ ամէն ատեն միշտ սովորութիւն եղած է Սուրբերին օգնութեան կանչել եւ մասունքներնուն պաշտօն ընծայել, անանկ որ մինչեւ գետնափոր գերեզմաններու մէջ այս պաշտօնը կատարուած կը տեսնուի։ Չեն տեսներ որ ամենէն մեծ Սուրբերը ասիկա մեզի յանձնեցին, եւ կը պատմեն ասոր հետեւութիւնները մեծամեծ հրաշքներով։ Չեն տեսներ որ միտքն ալ ասոր կը հաւանի, հաւատքը նոյնը կը խրատէ, մինչեւ նաեւ առողջ մտածութիւնը մեզի նոյնը կը համոզցընէ։ Չեն տեսներ այս ամենայն որ այնչափ պայծառ է եւ կը տեսնեն մոլեգին ըղձերնուն երազները, եւ զանոնք ձեզի հաւատալի ցուցընելով՝ այնպիսի ամբարտաւանութեամբ կը պարծին, որ զզուանք եւ միանգամայն ցաւակցութիւն կը պատճառեն։ Յիսուս լուսաւորէ զիրենք Ս. Աստուածածնայ եւ այն Սուրբերուն բարեխօսութեամբը, զորոնք դժբախ-

տութեամբ չեն ուզեր ճանչնալ, բայց դուք մերժեցէք անոնց հայհոյութիւնները, սիրելի ըլլան ձեզի սուրբ պատկերները, առ ժամն մխիթարուեցէք աչքերնուդ առջեւն ունենալով անոնց կենդանագիրը, որոնց հետ կը յուսաք ընտանեբար կենցաղավարել բովանդակ յաւիտենականութեան մէջ։

## ԳԼՈՒԽ Ը.

### ՈՒՐԻՇՆԵՐՈՒԴ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ. ՔԱՀԱՆԱՅՈՒԹԻՒՆԸ ԱՐՀԱՄԱՐՀԵԼԻ ԸՆԵԼԸ.

Սուրբ Հաւատքի թշնամիները, նուիրական բաներն ի չարն մեկնելէն ետքը, անձինքներուն ալ չարամտութեամբ կ՚անիրաւեն. եւ ահաւասիկ ուրիշ մէկ որոգայթ մը, որ կը դնեն ձեր միամտութեանը զձեզ խաբելու համար։ Աչքերնուդ առջեւը կը դնեն ձեր քահանաները, մանր մանր կը քննեն անոնց պակասութիւնները, ամէն մոլորութիւններնին ու մեղքերնին, եւ ետքէն խոշոր պատկեր մը նկարելով, անոնց տուած գայթակղութեանցը եւ ամէն տեսակ անկարգութեանցը, ի՛նչպէս կրնայ աղէկ ըլլալ, կ՚ըսեն, կրօն մը՝ որ այսպիսի քահանաներ ունի։ Իմ՛ սիրելիքս, աղէկ լսեցէք ճշմարտութիւնը եւ կը տեսնէք թէ ո՛րչափ անխելք են այսպէս խօսողները։

Ես կը շնորհեմ ձեզի նախ՝ որ նաեւ քահանաներուն մէջ գէշ ու գայթակ-



ղեցուցիչ անձինք կը գտնուին։ Այո՛ քահանաներն ալ մարդիկ են, մարմին ունին եւ կրնան սխալիլ։ Ուրեմն կրօնքի մը աղէկութիւնը քահանաներուն աղէկութենէն կը կախուի։ Ո՛հ որչափ անխելք է ով որ այսպէս կը մտածէ։ Կրօնքը աղէկ է եւ սուրբ է, վասնզի Յիսուս Քրիստոս հաստատած է։

Եթէ քահանաներէն ոմանք զանիկա չեն պահեր, վայն իրենց է, վասնզի պիտ՚որ պատժուին հազար անգամ աւելի քան մէկ աշխարհական մը. բայց ասոր համար կրօնքը բան մը չի կորսնցըներ իր ներքին գեղեցկութենէն ու բարութենէն։ Եթէ կրօնքը՝ իր պաշտօնեաներուն չարութիւնն ու գէշութիւնը յառաջցընելու ըլլար, ան ատեն կրնայիք յանցանքը կրօնքին տալ. բայց երբոր չէ թէ միայն չի յառաջցըներ անոնց յանցանքը, այլ նաեւ ամենայն խստութեամբ կը դատապարտէ, ի՛նչ յանցանք ունի։ Գիտէք արդէն, կրօնքը յայտնի կը ծանուցանէ, որ եթէ դուք աշխարհականներդ՝ մեղաց մէջ մեռնելու ըլլաք, ի հուրն յաւիտենական պիտ՚որ դատապարտուիք. բայց եթէ քահանաները մեղաց մէջ մեռնելու ըլլան, ձեզմէ շատ խիստ դատապարտութիւն պիտի կրեն. դժոխքի մէջ իրենց տանջանքներն աւելի դառն, հարուածներն աւելի խիստ, չարչարանքներն աւելի անողորմ պիտի ըլլան. կը տեսնէք ուրեմն որ կրօն-

քը մաս չունի իրենց յանցաւորութեան մէջ։ Համարեցէք թէ անխրատ եւ չարազգած որդի մը ունիք, դուք զանիկա շիտակ ճամբուն մէջ դնելու համար կը խրատէք, կը յանդիմանէք, կը սպառնաք, կը պատժէք եւ կ'ընէք ինչ որ կրնաք ընել։ Եթէ անիկա իր չարեաց մէջ միշտ անուղղայ եւ յամառ մնալու ըլլայ, կրնայ մէկը յանցանքը ձեր վրայ ձգել, որ ամէն կարելի միջոցներն ի գործ դրիք զինքն ուղղելու։ Արդ՝ եթէ ասիկա ձեզի անիրաւ կ'երեւայ, երբոր ձեր վրայ է խօսքը, դուք նկատմամբ Կրօնի նոյնպէս պիտ'որ վարուիք։ Նաեւ Կրօնքը ձայնը բարձրացուց, սպառնացաւ եւ իր ժամանակին կը պատժէ նաեւ գայթակղեցուցիչ քահանան, ինչո՞ւ ուրեմն իրեն յանցանք պիտ'որ համարուի։

Իսկ ձեզի շնորհեցի, որ քահանաներուն մէջն ալ գէշեր եւ գայթակղեցուցիչներ կը գտնուին. բայց պէտք եմ ծանուցանել որ Աստուծոյ շնորհքովը բարիները խիստ շատ են։ Ո՛րչափ խեղճ ժողովրդապետներ գիշեր ու ցորեկ իրենց անձանցը չեն խնայեր ձեր ամէն հարկաւորութիւնները հոգալու համար։ Ո՛րչափ քահանաներ ամենեւին հոգնիլ չեն գիտեր երկայն ժամերով խոստովանարաններու մէջ պաշտօննին կատարելու։ Ո՛րչափները ամբողջ գիշերներ խեղճ հիւանդներու քով կ'անցընեն։ Ո՛րչափներ ըստ իրենց կարողութեանը աղքատներուն նաեւ դրամական օգնութիւն ընելէն չեն



դադրիր։ Որո՞նք են անոնք, որ իրենց հայրենիքը ձգելով, կը թողուն կ'երթան բարբարոսաց երկիրները, անոնց վտանգներու մէջ ծովերն ու անապատներն անցնելով, որպէսզի քարոզեն Սուրբ Հաւատքը հեթանոս ու վայրենի ազգերու։ Քահանաներն են։ Որո՞նք են անոնք, որ նաեւ մեր կողմերը կ'աշխատին սուրբ Առաքելութեանց մէջ։ Թէ՛ վանական եւ թէ՛ աշխարհական քահանաներն են։ Որո՞նք են անոնք, որ ըղեղնին կը մաշեցընեն նուիրական ուսմունքներու մէջ, գրքեր գրելով ժողովրդեան շինութիւն ըլլալու եւ անոր բարեպաշտութիւնն աճեցընելու համար։ Քահանաներն են։ Որո՞նք են անոնք, որ իրենց աշխատութեամբը, ձեր հոգւոյն փրկութեան թշնամիներուն դէմ, ձեր երկրաւոր եւ յաւիտենական օգտին պաշտպան կը կենան։ Քահանաները։

Գիտէ՞ք ինչու համար գէշերուն քով բարիները այնչափ չեն երեւար։ Վասնզի գէշերը, ինչպէս սայլի մը ամենէն գէշ անիւը, աւելի կը շառաչեն, ամէն հրապարակներու, ամէն ակումբներու, մինչեւ պանդոկներու եւ խաղերու մէջ կը տեսնուին, եւ ամենուն աչքին փուշ են. ասոր ներհակ բարիները աւելի քաշուած ու առանձնացեալ կը կենան, կամ գրքերով զբաղած են եւ կամ Եկեղեցիներու մէջ բարիք ընելու վրայ են, եւ այսպէս ձայներնին քիչ կ'ելլէ։ եւ անոր համար կ'ե-

րեւայ թէ քիչուոր ըլլան, թէպէտեւ բազմաթիւ են։

Կը տեսնէք ուրեմն թէ որպիսի անիրաւութիւն է զրպարտել ամէն քահանաները, ինչպէս կ'ընեն այդ անօրէնութեան ուսուցիչները. ըսելով թէ ամէնքն ալ մէկ կաղապարէ են։ Ոչ. ամէնքն ալ այսպէս չեն, բարիներ կան, եթէ չարեր ալ կան։ Արդար կը համարէ՞ք, եթէ դատապարտուին արհեստի մը ամէն մարդիկը, եթէ այն արհեստին մէջ ոմանք յանցաւոր գտնուելու ըլլան։

Գեղացիներուն մէջ անտարակոյս ոմանք տէրերնուն բաները կը գողնան, գոհ կ'ըլլայի՞ք եթէ ամէն գեղացիներն ալ գող կոչուէին։ Արհեստաւորներուն եւ գործաւորներուն մէջ կան ոմանք, որ չեն գիտեր արհեստնին աղէկ բանեցընել. արդա՞ր էր եթէ ամէնքն ալ անճարտար եղծիչ արհեստին կոչուէին։ Աղջկանց եւ կարգուածներու մէջ կան լկտիներ եւ իրենց խոստմանցը անհաւատարիմներ։ Կրնա՞յ ուրեմն այս պատիւը տրուիլ ամէն կանանց նաեւ ձեր ամուսիններուն եւ ձեր զաւկերաց, զամէնքն ալ աշխարհաւէր կանչելով։ Ի՞նչպէս ուրեմն գէշ կ'անուանէք ամէն քահանաներն ալ, վասնզի անոնց մէջէն ոմանք գէշ կը գտնուին։

Մանաւանդ թէ պէտք էր (հոս հարեւանցի խօսելով) զամէնքն ալ յարգէիք. որովհետեւ իրենց արքունական արժանաւո-



րութիւնք չի նուազիր, որպիսի եւ իցէ յանցանք ալ գործելու ըլլան։ Եթէ ասոնք չար կը գործեն, չարիքը իրենցն է, մեզի վնաս մը չեն տար։ Խօսքերնին որոնք մեզի կը քարոզեն, Աստուծոյ խօսքերն են, եւ աստուածային խօսքը չ'աղտեղիր նաեւ եթէ անարժան բերնէ անցնելու ըլլայ։ Արձակումն որ կու տան՝ մեզի Ապաշխարութեան ատենին մէջ հաւասարապէս աղէկ է։ Ս. Պատարագը՝ մեզի համար որ կը լսենք նոյն զօրութիւնն ունի. բարի է նոյնպէս Ս. Հաղորդութիւնը, որ մեզի կը մատակարարեն. նոյնը ըսէք նաեւ Վերջին օծման եւ ուրիշ ամէն բանի համար, որոնցմով կ'օգնեն մեզի իրենց պաշտաման մէջ։ Իրենց իշխանութիւնը չի նուազիր իրենց անարժանութեամբը։ Եթէ Աստուած կը պահէ անոնց վրայ իր շնորհած իշխանութիւնը իրենց անօրէնութեանը չնայելով, մենք ինչո՞ւ նոյնը պիտ'որ չյարգենք։

Ա՜հ, վա՜յ ան անիծեալ քահանաներուն, որոնք փոխանակ գթութեամբ քահանայից իրենց հայրերուն պակասութիւնները ծածկելու, նոյները կը յայտնեն եւ կը ծանրացընեն։ Աստուած է, որ իր ժամանակին անոնց վրէժխնդիր պիտ'որ ըլլայ։ Մեծ ինքնակալն Կոստանդիանոս սովորութիւն ունէր ըսելու. Ես իմ կողմանէս եթէ աչքովս տեսնէի քահանայի մը յանցանք գործելը, կ'երթայի եւ իմ կայսերական ծիրանեաւս կը ծածկէի. այնչափ մեծ կը

համարէր յարգութիւնը, որ պարտաւոր է անոնց արժանաւորութեան ։

Իսկ եթէ կ'ուզէք գիտնալ, եթէ ի՞նչ է ամենէն սաստիկ պատիժը, որ կը խրկէ Աստուած իրեն պաշտօնեաները թշնամանողներուն եւ անարգողներուն վրայ, ես զրուցեմ ձեզի. անոնց՝ որոնք կեանքերնուն մէջ քահանաները խիստ անարգեր են, Աստուած երբեմն թող կու տայ, որ քահանայ չգտնուի քովերնին մեռնելու ատեններնին ։

Այս վերջին ժամուն մէջ եթէ բոլոր իշխանները, ամէն կայսրները, աշխարհքիս բովանդակ իմաստունները զձեզ շրջապատելու ըլլան, ձեր հոգւոյն ի՞նչ օգուտ կրնան ընել. կրնան աղօթել ձեր հոգւոյն համար, բայց ոչ ոք կարող է ամենափոքր մեղքերնիդ արձակել ։ Մինակ քահանան է, որ իշխանութիւն ունի զձեզ մեղաց կապանքէն արձակելու՝ բարի եղեր է չար եղեր է, եւ ինչ որ ինք երկրի վրայ արձակելու ըլլայ արձակուած պիտ'որ ըլլայ նաեւ երկինքը, եւ ինչ որ հոս կապելու ըլլայ, հոն վերն ալ կապուած պիտ'որ ըլլայ ։ Իսկ եթէ Աստուծոյ արդար դատաստանաւ քովերնիդ քահանայ չգտնուի նոյն ժամուն մէջ, եւ դուք մահացու մեղքերով ծանրացած ըլլաք, ձեր վախճանը ի՞նչ պիտ'որ ըլլայ ։ Անցեալ դարուն մէջ հրաչակուած անօրէն մը, որ բոլոր կեանքը մէջ կը ծաղրէր Աստուծոյ պաշտօնեաները,



վերջին ժամուն մէջ, երբոր բաները՝ առողջութեան ատենէն՝ շատ տարբեր կը տեսնէր, մարդ խրկեց քահանայ մը կանչելու ։ Բայց ի՞նչ ։ Նոյն իսկ իրեն բարեկամները երբեք թող չտուին քահանային որ խուցը մտնէ, եւ ինք շան պէս վռնկվռնկալով եւ հայհոյելով մեռաւ յուսահատութեամբ ։ Այս օրինակները ուրիշ անգամ ալ կրկնուեցան. վա՜յ էր մեզի, եթէ մեր մէջն ալ աս բաներս կրկնուէին ։ Բայց մեր գլխաւոր կէտին դառնալով, մտքերնուդ մէջ հաստատութեամբ տպաւորեցէք, որ Կրօնքը միշտ մի եւ նոյն բարին է, թէպէտեւ քանի մը քահանայք գէշ ալ ըլլան, եւ թէ ծանր մոլորութիւն մըն է Կրօնքի վրայ նետել այն յանցանքը, զորն որ ինք ամենայն խստութեամբ կ'արգելէ ։

Ուրիշ նենգ մ'ալ կը գործեն ատոնք Աստուծոյ քահանայից դէմ, զիրենք անարգ եւ ատելի ընելու համար, եւ գիտէ՞ք որն է ։ Ձեր առջեւը զանոնք իբրեւ շահասէր մարդիկ կը նկարեն ։ Չէ՞ք տեսներ, կ'ըսեն, որ Պատարագի, քարոզի եւ ուրիշ ամէն հոգեւոր պաշտամանց համար ստակ կ'ուզեն ։ Լսեցէք ուրեմն մէկ խօսքով՝ պատասխանս, բայց մտքերնուդ մէջ աղէկ տեղաւորեցէք ։ Այդ Բողոքականնե՞րն են, որ ձեզի աս դժուարութիւնը կը հանեն. ասիկա ձեզի եւ ձեր միամտութեանը որոգայթ մը դնել է ։ Աստուծոյ սիրոյն համար ըլլայ, աչքերնիդ բացէք ։ Միթէ ի-

րենց պաշտօնեաները կամ՝ քահանաները, ինչպէս կ'ուզէք կանչեցէք. անշահասէ՞ր են։ Անոնք այնչափ հաստատ եկամուտներ ունին՝ որ, ինչպէս հաշիւները կը ցուցնեն, միայն Անգղիական աղանդին՝ իր պաշտօնեաներուն տուածը՝ շատ աւելի է քան թէ բովանդակ Կաթուղիկէ կղերին ընդունածն ընդհանուր տիեզերաց վրայ։ Եւ այս եկամուտները չեն ծախեր աղքատներու, վասնզի իրենց կանանց շռայլութիւնը պէտք է գոհ ընեն, իրենց աղջիկներուն օժիտ տան, իրենց որդիքը հագուն։ Եւ ի՞նչ է ըրածնին ժողովրդեան համար, այնչափ առատ եկամուտները վայելելէն ետքը։ Ո՛չ խոստովանանք կը լսեն, ո՛չ հիւանդներու օգնութեան կ'երթան, ո՛չ պատարագ կը մատուցանեն. բոլոր իրենց մեծ գործքը աս է միայն, որ տանի օրերը համառօտ քարոզ մը կու տան, զորն որ կամ՝ տգիտութեան կամ՝ ծուլութեան համար եւ ոչ բերնուց գիտեն, այլ կ'երթան հրապարակաւ կը կարդան։ Արդ՝ ասոնց յանդգնիլն ու Կաթուղիկէ Կղերը շահասէր կանչելը, իրաւցընէ սոսկալի բան մըն է։

Այսու ամենայնիւ Կաթուղիկէ Կղերին ըրածն ի՞նչ է։ Գուցէ թէ Պատարագները, Քարոզներն եւ ասոնց նմանները վճարե՞լ կու տայ. ինչպէս ոմանք անխելքութեամբ (չարագոյնը չըսելու համար) կը զրուցեն։ Ո՛չ երբեք։ Վճարել չի տրուիր



ո՛չ Պատարագը, ո՛չ Քարոզը, վասնզի այն մեծ զոհը կամ՝ աստուածային խօսքը եթէ վճարելի ըլլային, ոչ միայն դուք՝ հապա եւ ոչ իսկ երկրիս ամէն իշխանները իրենց գանձատուններուն մէջ այնչափ ստակ կըրնային ունենալ, որ կարող ըլլային վճարել։ Ձեր պաշտօնեաները իրենց պաշտօնը ձրի կը կատարեն, ինչու որ ո՛չ Պատարագը, ո՛չ Քարոզները եւ ո՛չ խորհուրդները ամենեւին չեն վճարուիր։ Միայն ողորմութիւն մը կը տրուի, վասնզի հարկ է որ Քահանաներն ալ ապրին։ Եւ ասիկա համաձայն է Ս. Գրոց, որն որ հին օրինաց Քահանաներուն նկատմամբ կը ծանուցանէ, թէ անոնք աստուածային տրամադրութեամբ, տասանորդներէն զատ, որ կ'առնէին ամէն ցեղերէն, կ'ընդունէին նաեւ շատ նուէրներ ու պարգեւներ ալ զանազան առիթներու մէջ. մանաւանդ թէ՝ Նոր Կտակարանին մէջն ալ, Ս. Պօղոս կը յայտնէ մեզի, թէ Քահանաները իրենց պաշտօնին արժանաւորութեան համար կըրկին պատուի կ'արժանաւորին[1]. եւ դարձեալ՝ թէ մեծ բան չէ եթէ անոնք, որ ձեզի հոգւոյ կերակուրը կը մատակարարեն, ձեզմէ մարմնոյ կերակուրը[2] ընդունելու ըլլան. վասնզի վերջապէս՝ ով որ խորանին կը ծառայէ, խորանէն ալ կ'ապրի[3]։

Իսկ ան որ կ'ըսեն շատերը, թէ նախնի

[1] Ա. Տիմ. Ե. 17։
[2] Ա. Կորն. Թ. 11։
[3] Անդ. 13։

քահանաները իրենց ձեռաց աշխատու-
թեամբը կ'ապրէին, ըստ մասին իրաւ է,
ըստ մասին սուտ։ Իրաւ է որ երբեմն քա-
հանաները քանի մը առիթներու մէջ, որ-
պէսզի հեթանոսներուն պատճառ չտան
տրտնջելու, իբր թէ Աւետարանը շահու
համար կը քարոզէին. իրենց ձեռաց աշ-
խատութեամբը կը կերակրուէին. եւ ասիկա
շատ անգամ հիմա ալ կ'ընեն մեր առա-
քեալները Հեթանոսաց մէջ նոյն պատճա-
ռաւ. սուտ է թէ միշտ այսպէս կ'ընէին
հինները. ինչու որ՝ ուր Քրիստոնէական հա-
սարակութիւններ հաստատուած էին, հոն
քահանաները հոգեւոր պաշտամանն կը զբա-
ղէին, եւ հաւատացեալներէն իրենց պա-
րէնը կ'ընդունէին. ինչպէս կ'երեւայ Ս.
Պետրոսի եւ մեկալ Առաքելոց գործքե-
րէն, որոնք եւ ոչ իսկ ողորմութիւնները
բաշխելու համար շատ զբաղիլ ուզեցին,
որպէսզի հոգեւոր կրթութեանց համար
ժամանակնին չկորսնցընեն, ուստի եւ աս
պատճառաւ ընտրեցին սարկաւագներ, ինչ-
պէս կը պատմուի Գործք առաքելոցին մէջ[1],
Այսու ամենայնիւ մեր Յիսուսէն գերա-
գոյն քահանայէն սկսեալ, որն որ կ'ապրէր
իր աստուածային քարոզութեանց մէջ,
Յովհաննայի, Մագդաղենացւոյն, Շուշա-
նայ եւ ուրիշ հարուստ անձանց ողորմու-
թենէն, ինչպէս կը յիշէ Ս. Աւետարանը[2],
քահանաները միշտ հաւատացելոց ողոր-

[1] Գործ. Զ. 2։ [2] Ղուկ. Ը. 2. 3։



մութենէն ապրուստնին կը գտնէին. եւ
ասիկա շատ արդար եւ իրաւացի է, ինչու
որ քահանաները չեն կրնար թէ՛ հաւա-
տացելոց հոգւոյն միտ դնել, եւ թէ՛ միան-
գամայն արհեստ մը բանեցընել ապրելու
համար. եւ վա՜յ այն անարգու եւ հայր-
ատեաց որդւոց, որոնք կը յանդգնին չա-
րանալ իրենց հոգւոց հայրը դէմ, եւ ա-
նոնց բերնին պատառները կը հանեն. ին-
չու որ եթէ Աստուած ժամանակ մը ի-
րենց անարգութիւնը չտեսնելու ալ գար-
նէ, ետքէն պիտ'որ ցուցընէ թէ իրեն դէմ
էր այն թշնամանքը, որ կ'ըլլար իր Պաշ-
տօնեաներուն։

## ԳԼՈՒԽ Թ.

ԻՆՆԵՐՈՐԴ ԽԱԲԷՈՒԹԻՒՆ, ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՆԵՐՈՒ, ԵՒ Ս. ՆԻԿԻԷՑՒՈՅ ԺՈՂՈՎԱԿԱՆՆԵՐՈՒ ԲԵՐԱ-
ՆԸ։

Քահանաներուն ագահութիւնը յանդի-
մանելէն ետքը, յառաջ կ'անցնին անոնց
շքեղութիւնները դատապարտելու, զորն
որ գլխաւորաբար քահանայապետին, կար-
դինալներուն եւ Սուրբ Եկեղեցւոյ առաջ-
նորդներուն վրայ կը տեսնեն։ Տեսէք, կ'ը-
սեն, թէ Ս. Պետրոս գահի վրայ կը նստէ՞ր,
թէ ուրիշ առաքեալները ծիրանի կը հագ-
նէի՞ն, թէ այնչափ պալատներով եւ կառ-
քերով կը պերճանային. աս խօսքերով ա-

նանկ կը համարին, թէ կարող են Կրօնքը դատապարտել իբրեւ սուտ։

Հիմա դուք մտիկ ըրէք. բայց վայրկեան մը մտքերնուդ մէջ այնպէս ձեւացուցէք, թէ այս ամենայն անկարգութիւններն եղած ըլլան, որ չեն ստուգիւ, ինչպէս պիտ՚որ ցուցընենք, այսու ամենայնիւ մտաք այնպէս համարեցէք թէ անկարգութիւններ են. աղէ՛կ է, բայց ատոնց հետ ի՞նչ յարաբերութիւն ունի Յիսուսի Քրիստոսի Կրօնքը։ Առաւելն կրնար ըսուիլ, թէ Առաջնորդները զանիկա չեն պահեր կոր, ինչպէս պարտքերնին է։ Սակայն եթէ անոնք չեն պահեր, ուրեմն Կրօնքը սո՞ւտ է։ Իսկապէս սագի ըղեղ մը պէտք է այս հետեւութիւնը հանելու համար։

Բայց Բողոքականները, որ այնչափ սէր եւ նախանձ ունին Առաքելական աղքատութեան, ինչո՞ւ իրենք չեն սկսիր իրենց տանը մէջ նոյնը յառաջացընելու։ Անգլիա ու Պրուս այնպիսի երկիրներ են, որ ամէն Բողոքականներուն ալ օրինակի տեղ կ՚անցնին. ասոր վրայ ոչ ոք կը տարակուսի։ Արդ աս երկիրներուն մէջ, որո՞նք են Կրօնի գլուխները։ Պրուսի մէջ՝ Թագաւորը. Անգլիայի մէջ՝ Թագուհին։ Եթէ Թագաւորական արժանապատուութիւնը, շքեղութիւնը, իշխանական պերճութիւնը անմիաբան է Կրօնքի Գլխոյ մը ճոխութեանը հետ, անոնք որ այսպիսի Գլուխներ ըլլալնուն վրայ կը պարծենան, ինչո՞ւ



այնչափ փառաւորութիւններ կը ցուցընեն, ոչ միայն ձիերով ու կառքերով, հապա նաեւ հանդէսներով ու թէատրոններով։ Ինչո՞ւ այս ամենայն ոչ միայն իրենց, այլ նաեւ իրենց կնոջը, որդւոցը կամ՝ երկանը համար այնչափ հոգացողութեամբ կը պատրաստեն։ Ինչո՞ւ չեն դատապարտեր Անգլիական Եպիսկոպոսներուն անբաւ եկամուտները եւ շքեղութիւնը, որոնք մեր Եպիսկոպոսներէն ու Կարդինալներէն շատ աւելի հարուստ են, եւ իրենց ամէն հարստութիւնը կը ծախեն կնոջ շռայլութեան եւ իրենց որդիքն ու դստերքը տեղաւորելու համար, աղքատներուն բաշխելու տեղ։ Պիտ՚որ ըսէք, բայց անոնք Թագաւորներ են։ Այո, բայց ինչո՞ւ ատոնց ալ չէք ըսեր, թէ Ս. Պետրոս գահի վրայ չէր նստեր, ծիրանիներով չէր զարդարուեր, մանաւանդ որ իրաւամբ կրնայիք աս ալ աւելցընել, թէ Ս. Պետրոս այնչափ արքունական սպասաւորներու եւ արքունական տիկիններու մէջ ալ չէր նստեր։ Կեղծաւորնե՛ր, գերանը աչքերնուդ վրայ է, եւ ուրիշին աչքին վրայ չեղած յարդը կը փնտռէք։

Բայց վերջապէս ստոյգ չէ՞ որ Ս. Պետրոս եւ Առաքեալներն այնչափ զեղխութիւն չունէին, ուստի հարկ է որ իրենք նորէն նոյն ատենուան աղքատութեանը դառնան։ Աղէ՛կ. եթէ կ՚ուզէք իրենք նոյն վիճակին մէջ խոթել, կը յուսամ՝ որ կրկին կշիռք եւ կրկին

չափ ունեցող մարդիկ չէք ուզեր ըլլալ։ Եթէ իրերը այն ատեններուն սովորութեանը պէտք է դառնան, դուք ամէն բան պէտք է նոյնին համաձայնցընէք, ու միայն Քահանայապետը, եւ սուրբ Եկեղեցւոյ առաջնորդները, հապա նոյն իսկ աշխարհականները եւ բոլոր Քրիստոնեայ ժողովուրդը։ Գիտենք որ երբոր Ս. Պետրոս եւ Առաքեալները ցնցոտի կապերտներով կը ծածկուէին, նոյն իսկ Հաւատացեալներն աւելի շքեղ չէին հագներ։ Ուրեմն սկսեցէք դուք ալ գետնափորներուն մէջ ապրելու, ինչպէս անոնք կ'ապրէին, հոն, այն խոր վիրապներուն՝ այն տխուր գերեզմաններուն մթութեան մէջ, ուր սոսկում ու սարսափում է։ Այն ատենը Հաւատացեալները (եւ ասիկա Գործք Առաքելոցին մէջն է) կը վաճառուէին ունեցածնին եւ գինը Առաքեալներուն կը յանձնէին, որ աղքատներուն, այրիներուն բաժնեն. դուք ալ այնպէս ըրէք։ Այն ատենը Քրիստոնեաները երկայն երկայն ժամերով աղօթք կ'ընէին անդադար. դուք ալ արիացէք ցուցուցէք որ քիչ մը երկայն աղօթելու սկսեր էք։ Այն ատենը ատեն ատեն՝ նաեւ ամէն օր կը հաղորդուէին, ներկայ ըլլալով աստուածային պաշտաման. ինչ կեցեր էք, ցուցուցէք զձեզ փոյթեռանդն ամէն տօնի օրեր Ս. Պատարագը տեսնելու, եւ գոնէ ամիսը մէյմը հաղորդուելու։ Այն ատենը



Հաւատացեալները պատրաստ էին Յիսուսի Քրիստոսի սիրոյն համար արիւննին թափելու, կեանքերնին զոհելու տանջանքներու մէջ. ուրեմն քիչ մը քաջութիւն դուք ալ ցուցուցէք, եթէ հիւպատոսներուն եւ դահիճներուն առջեւն ալ չէ, գոնէ անհաւատներուն եւ անառակներուն առջեւը։

Եթէ ամէն բան այն ժամանակներուն սովորութեան դարձնել կ'ուզէք, անիրաւ մի ըլլաք, մի դարձնէք միայն Քահանայապետը եւ Եպիսկոպոսները, այլ զամէնքն ալ, նաեւ պարզ Հաւատացեալները։ Հաճելի՞ է ձեզի աս նոր տեսակ Քրիստոնէի կեանքը։ Գրկեցէք նոյնը շուտով, եւ ետքէն յանդիմանեցէք զանոնք, որ այնպէս չեն վարուիր։

Իսկ եթէ ըստ պատահման քաղցր է ձեզի տներնուդ մէջ հանդարտութեամբ կենալ գործքերնիդ տեսնել, Եկեղեցին երթալ երբ կ'ուզէք, մանաւանդ եթէ ծանր ալ կու գայ ձեզի հոն երթալը, այն քիչ անգամներն ալ, որ այնպիսի չափաւորութեամբ կը պատուիրէ ձեզի Ս. Եկեղեցին, ինչո՞ւ ուրեմն սուտ նախանձաւորութեամբ Սուրբ Եկեղեցւոյ Առաջնորդներուն, Եպիսկոպոսներուն, Քահանայապետին դէմ կը չարախօսէք։ Ա՜յ կեղծաւորներ, դարձեալ կ'ըսեմ, կեղծաւորնե՛ր, ձեր կշիռը երկու կշռորդ ունի, մէկով զձեզ, մէկալով ուրիշները կը կշռէք։

Բայց մենենք քիչ մը ճշմարտութիւնը։ Սուտ է, որ արտաքին վայելչութիւնն ու իշխանութիւնը դէմ կ'ելլայ Եկեղեցւոյ Գլխոյն եւ Առաջնորդաց։ Սուտ է եւ ամենասուտ։ Այո՛ առջի ատեններ Եկեղեցին խիստ անարգ վիճակի մէջ էր, բայց անիկա իր բուն վիճակը չէր, ինչպէս աղքատութեան հասակն ալ մարդուն բուն հասակը չէ։ Յիսուս ժամանակ մը թող տուաւ, որ Եկեղեցին փոքր, ծածկուած, հալածանքի տակ ըլլայ, որպէս զի ամէն մարդ տեսնէ եւ իմանայ, որ եթէ այսպիսի վիճակի մէջ ալ կը հաստատուի եւ կը տարածուի, ապա ուրեմն իր հիմնադրութիւնը մարդկային գործք մը չէր, եւ այսպէս ամէն մարդ ճանչնայ Աստուծոյ աջը. բայց ան ժամանակն անցնելէն եւ այն ցոյցը մեր խստասրտութեանը տրուելէն ետքը. Աստուածային կամքն ան էր, որ Սուրբ Եկեղեցին յաղթէր եւ բոլոր աշխարհքիս առջեւը հռչակուէր ու փառաւորուէր, որպէսզի ասով կարող ըլլար ամէն կողմ իր լոյսը սփռել իրեն քաշել ամենուն աչքը, եւ ամէն մարդկան սիրտը նուաճել։ Կ'ուզէր ուրեմն որ արտաքին վայելչութեամբ խիստ երեւելի ըլլայ, վասն զի իր արտաքին մեծութիւնը պիտ'որ ծառայէր իրեն ձգելու անբաւ բազմութիւն մը որդեկաց. ուստի եւ այն արտաքին փառաւորութիւնը գլխաւորապէս չէ թէ



Հովիւներուն, այլ հաւատացելոց օգտին համար էր։

Ասանկ կը գուշակեն ամէն մարգարէութիւնները, որոնք Եկեղեցւոյ վրայ, մեծ թագաւորութեան մը պէս կը խօսին, որ պիտի տարածուի երկրիս մէկ ծայրէն մէկալ ծայրը, ինչպէս ուրիշ տեղ ցուցցեցինք։ Ասանկ ալ մեզի կը ծանուցանէ ինքն Յիսուս, որն որ այս մեծութեան առաջին սերմերը ցանեց, տանելով ի հասարակի Առաքելոց հետ մէկտեղ այն դրամը որ իր Հաւատացեալներէն կ'ընդունէր, ինչպէս կը ցուցուի Ս. Աւետարանէն, որն որ կը պատմէ թէ Յուդայ եկած դրամները իր քովը կը պահէր։ Դարձեալ նոյն իսկ Առաքեալները մեծ գումարներ ձեռքերնին ունէին ու կը տրամադրէին, ինչպէս կը մակաբերուի անկից՝ որ հարկ համարեցան եօթը սարկաւագներ ընտրել, որպէսզի դրամական տնտեսութիւնը անոնց յանձնեն։ Հռոմայ Քահանայապետները՝ անոնց յաջորդները՝ նոյն որպիսութեան մէջն էին, ինչպէս կը տեսնուի Կոստանդիանոս կայսեր ըրած կարգադրութիւններէն, որ Եկեղեցւոյ ետ դարձնել հատուցանել տուաւ բազմութիւն դրամոց. զոր իր ժամանակէն յառաջ իր նախորդները յափշտակած էին։ Ս. Գրիգոր Մեծ՝ իր թղթերուն մէջ յայտնի կը ցուցընէ, թէ որչափ տացուածքներ ունէր իր տրամադրութեան

տակ թէ՛ Հռոմ, թէ՛ Սիկիլիա եւ թէ ուրիշ տեղուանք, ուստի կրնաք հետեւցընել, թէ Եկեղեցին ծնաւ ստանալու իրաւամբ, ինչպէս ուրիշ ամէն ընկերութիւններ. եւ արդեամբ ալ անմիջապէս ձեռքը հարստութիւններ անցած էր ու կը տրամադրէր։

Բայց համբերութիւն, եթէ Եկեղեցին նոյնը աղքատաց գործածելու ըլլար. սակայն այնչափ դրամ՝ շքեղութեան համար վատնել. քա՛ւ լիցի։ Ա՛ս շքեղութենէ առնուած գեղեցիկ պատճառը առջի անգամ՝ գիտէ՞ք ով գտաւ։ Յուդայ, որ կը համարէր թէ Մագդաղենացին սաստիկ շռայլութեամբ անուշահոտ իւղոյն մեծ անօթը Յիսուսի բոլորովին թափեր էր, երբ կրնար անոր գինը լաւագոյն եղանակաւ աղքատներուն օգտին նուիրել։ Եւ ինչպէս որ աս պատճառը առջի անգամուն Յիսուսի դէմ գործածուեցաւ, ասանկ ետքէն ալ շատ անգամ՝ նոյնը յառաջ բերուեցաւ Յիսուսի Քրիստոսի հարսին Ս. Եկեղեցւոյ դէմ։ Բայց Յիսուս Քրիստոս հաճութեամբ չլսեց այն նենգաւոր պատճառը, մանաւանդ թէ գովեց զՄագդաղենացին այն զեղխութեանը համար, իբրեւ սուրբ գործքի մը՝ պէս. նոյնը կրնայ ըսուիլ Ս. Եկեղեցւոյ հովիւներուն վրայ տեսնուած վայելչութեան նկատմամբ, զորն որ ատոնք շռայլութիւն կը կարծեն։ Վասնզի ինչպէս



Սուրբ Տաճարները կը զարդարուին մեծ շքեղութեամբ, որպէսզի արտաքին փառաւորութիւնը մեր միտքը ի վեր առ Աստուած բարձրացընէ, օգնէ մեր բարեպաշտութեան եւ ծառայէ ջերմեռանդութեան, այսպէս Ս. Եկեղեցին կ'ընդունի Սուրբ Հովիւներուն արտաքին փառաւորութիւնը, ինչու որ արտաքին մեծութիւնը մեզի գաղափար մը կու տայ այն ամենամեծ իշխանութեան, զորն որ իրենց շնորհած է Յիսուս Քրիստոս, եւ այն մեծ յարգութեան, որ այսպիսի իշխանութեան մը պարտական ենք։ Երկրաւոր իշխանները իրենց իշխանութիւնն ու աւագութիւնը ցուցընելու համար, ամէն միջոց ի գործ կը դնեն։ Իրենց սպասաւորութեան համար բազմութիւն մարդկան կը ծառայեցընեն, մեծաշէն պալատներու մէջ կը բնակին, եւ այնպիսի փառաւորութիւններով կը պերճանան։ Իսկ Ս. Եկեղեցւոյ առաջնորդները, որոնց բարձրագոյն ճոխութիւնը այնչափ առաւել է քան երկրաւոր թագաւորներուն իշխանութիւնը, որչափ հոգին քան զմարմինը կը գերազանցէ, պէտք չէ՞ որ իրենք ալ ճանչցընել տան իրենցը։ Կամ՝ թէ ունայնութիւն պէտք է համարիլ այն բանը, որ Յիսուսի փառաց կը դառնայ, որ այնպիսի իշխանութիւն տուաւ մարդկան ի պատիւ Ս. Եկեղեցւոյ՝ որ մեծացաւ եւ բարձրացաւ, եւ յօգուտ հաւատացելոց. որոնք այն ար-

տալին մեծվայելչութենէ շարժեալ աւելի եւս քաղցրութեամբ կը յօժարին յարգել, մեծարել եւ հպատակել Քահանայապետին եւ Առաջնորդաց ճոխութեանը։ Իսկ ինչ։ Հին օրէնքին մէջ Աստուած պատուէր չտուա՞ւ Քահանայապետին եւ Ղեւտացիներուն մեծագին եւ խիստ փառաւոր զգեստներ շինելու։

Այսու ամենայնիւ՝ ծայրագոյն Քահանայապետին համար արքունական գահ ունենալը հարկաւոր բան մը չէ, կ'ըսեն Բողոքականները։ Այդէ՞կ. համարեցէք թէ հարկաւոր չըլլայ. ուրեմն առոր համար գէ՞շ բան պէտք է ըլլայ։ Այնչափ բաներ կան որ հարկաւոր չեն, բայց զանոնք ի գործ դնելը գէշ չէ։ Ի՞նչ ընդդիմութիւն կայ եթէ իշխանի եւ Քահանայապետի երկու որպիսութիւնները իրարու հետ միանան։ Այս երկու աւագութիւնները այնչափ անգամ միացան Հրէից հին ժողովրդեան մէջ, որ օրինակ էր Քրիստոնեայ ժողովրդեան. ինչո՞ւ ուրեմն հիմա ընդդիմութիւն պիտի գտնուի։ Յիշեցէք նաեւ Բողոքական իշխանները, որոնք եկեղեցիներու Գլուխներ են, եւ անոնց դէմ ոչ ոք ձայն կը հանէ, ոչ ոք կը բողոքէ։

Բայց Յիսուս Քրիստոս ըսաւ, թէ իմ թագաւորութիւնս աս աշխարհքէս չէ։ Այո՛. իսկ Բողոքականները, որ կը պնդեն թէ իրենց քովն է ճշմարիտ Եկեղեցին, ինչո՞ւ իրենց վրայ չեն առներ աս ընդդի-



ըը. եւ ինչո՞ւ կը լան, որ իրենց գլուխը թագաւոր կամ թագուհի մը նստի։ Ասկայն ճշմարտութիւնն ան է, որ Յիսուսի Քրիստոսի խօսքերը բոլորովին ուրիշ բան կ'ուզեն նշանակել քան զոր կը մեկնեն անօրէնութեան ուսուցիչները, եւ ականջնիդ կը լեցընեն ամեն օր։ Աս խօսքերը կ'ուզեն նշանակել, թէ Յիսուս Քրիստոս, թէպէտեւ ընդհանուր թագաւոր էր ամենայն մարդկան, այսու ամենայնիւ իր վախճանն ան չէր, որ աշխարհքիս վրայ երկրաւոր թագաւորութիւն մը հաստատէ, որպէսզի անով զմարդիկ կառավարէ, ինչպէս կ'ընեն երկրաւոր թագաւորները. մանաւանդ թէ կ'ուզէր զամէն մարդիկ այնպէս կարգաւորել, որ այն մեծ թագաւորութիւնը կերպաւորեն, որուն լրութիւնն ու կատարելութիւնն երկինքն ըլլայ, ուստի եւ առոր համար այնչափ անգամ Աւետարանին մէջ Արքայութիւն երկնից կ'անուանուի։ Եթէ այս խօսքերը ուրիշ կերպ իմացուելու ըլլային, հայհոյութիւն մը կը նշանակէին Յիսուսի դէմ. ինչու որ կը նշանակէին թէ Յիսուս չունեցաւ գերագոյն իշխանութիւն ամէն մարդկան վրայ, եւ թէ չի կրնար թագաւորել անոնց վրայ նաեւ հոս աս աշխարհքիս մէջ։ Արդ՝ ով է, որ չի գիտեր թէ Յիսուս մարդ եւ Աստուած է, իբրեւ Աստուած՝ տէր է ամէն բանի, իբրեւ մարդ՝ ամէն բան իր հօրմէ ընդունեցաւ. որն որ ամենայն ինչ իր ձե-

ժը ———, ինչպէս կը ցուցնէ Աւետարա-
նը[1]։ Ուրեմն երբոր կ՚ըսէ Յիսուս, թէ իր թագաւորութիւնը աս աշխարհքէս չէ, ուրիշ բան չ՚ուզեր ըսել, բայց եթէ որ թէպէտ ինք բացարձակ տէր է ամենուն, բայց եկած չէ մէկ երկրաւոր թագաւորութիւն մը հաստատելու, որպէս զի անոր մէջ ուրիշ Միապետներուն պէս թագաւորէ, ինչպէս կը կարծէին Հրեաներէն շատերը եւ նաեւ երկու Առաքեալները՝ Յակոբոս եւ Յովհաննէս, եւ անոր համար կը բաղձային մէկը Յիսուսին աջ կողմը՝ մէկալը ձախ կողմը նստիլ. հապա կ՚ուզէր անոր տեղ հիմն դնել հոգեւոր Միապետութեան, որ գրկէր ու ամփոփէր պիտ՚որ ամէն հաւատացեալները, զորոնք ինք տարէն իր հոգեւոր ու երկնային թագաւորութեան մէջ պիտի ժողվէր, եթէ անոր արժանի ըլլային։ Արդ՝ ինչ կ՚ընէ Ընդհանրական Քահանայապետը։ Կը շարունակէ նոյն ինքն Յիսուսի գործը, կը կարգաւորէ սուրբ Եկեղեցւոյ ամէն անդամները, կը կանոնաւորէ զանոնք, կը հսկէ ամենուն վրայ, ամենուն կը սորվեցնէ, զանոնք կը հաստատէ, այս ինքն է՝ Եպիսկոպոսներ կը դնէ, Հաւատոյ աւանդը անարատ կը պահէ, կ՚որոշէ Հաւատացելոց տարակոյսները, որոնք բոլոր աշխարհքիս երեսը ցրուած են, եւ ինչպէս յայտնի է, զիրենք կարգաւորելու նպատակը

[1]. Յովհ. Դ. 35.



երկրաւոր Միապետութիւն մը ձեւացընել չէ, այլ երկնաւոր ու հոգեւոր Միապետութիւն մը։ Այսպէս՝ ամենայն ճըշդութեամբ ինքն ալ կրնայ ըսել, թէ իր թագաւորութիւնը աս աշխարհքէս չէ. եթէ մէկը ան աստիճանի ապշութեան հասած չէ, որ հաստատէ թէ բոլոր աշխարհքիս Ուղղափառները Քահանայապետին երկրաւոր հպատակներն են։

Բայց եւ ոչ այս որպիսութիւնը որ ունի, ըսեմ այսպէս, ամենայն Հաւատացելոց հոգեւոր թագաւորութիւնը կարգաւորելու, կ՚արգելէ զՔահանայապետը՝ որ կարող ըլլայ ժամանակաւոր կարգաւորիչ ըլլալ փոքր Տէրութեան մը, ինչպէս է Եկեղեցւոյ տէրութիւնը։ Մանաւանդ որ իր անբաւ արժանաւորութիւնը զինք աւելի արժանի, աւելի ընդունակ կ՚ընէ աղէկ տնտեսութիւն ընելու. ինչու որ միշտ ընդհանրապէս խօսելով, Քահանայապետ մը նուազ կրից տէր է քան զՄիապետ մը, եւ Կրօնքի սրբազան գիտութիւնը որով զարդարուած է, շատ աւելի կ՚օգնէ իրեն նաեւ ժամանակաւոր տնտեսութիւնն աղէկ կառավարելու։

Բանն անոր վրայ է, որ այն Գահուն ինք օրինաւոր իրաւունք մ՚ունենայ։ Բայց Քահանայապետին այս ժամանակաւոր իշխանութեան իրաւունքը տարակուսի մը տակ ձգելն ալ մեծ եւ անըմբռնելի այլանդակութիւն մըն է. վասնզի Քահանայա-

պետք Վեհապետ եղաւ՝ իշխաններուն ու ժողովրդոց կամաւորապէս իրեն հպատակելովը, վասնզի իր իշխանութիւնը հաստատուած է այնչափ դարերու նախագրութեամբ, որչափ ուրիշ միապետութիւն մը ամենեւին չի կրնար ցուցընել, եւ դարձեալ՝ վասնզի ճանչցուած է աշխարհքիս ամէն վեհապետներէն եւ պաշտպանուած է։ Եթէ այս իրաւունքները չեն արժեր, ան ատեն իրենց արքունական գահերէն վար առէք նաեւ երկրիս ամէն իշխանները, վասն զի եւ ոչ մէկը կը գտնուի որ կարող ըլլայ պարծիլ այնպիսի իրաւունքներով, որ գոնէ հեռուանց հաւասար ըլլան Հռոմայ Քահանայապետներուն իրաւանցը։

Ով որ կը կարծէ թէ ժամանակաւոր թագաւորութեան մը կառավարութիւնը վնասակար է ընդհանուր Եկեղեցւոյ հոգեւոր տեսչութեանը, որովհետեւ իրը բոլորովին ատոր հակառակն է։ Ծայրագոյն Քահանայապետը զամէնքն ալ մշտնջենաւոր երանութեան ի՞նչպէս պիտ'որ առաջնորդէ։ Հարկաւոր է, որ ազատութեամբ խօսի ամենուն հետ, ամենուն քարոզէ Քրիստոնէական ճշմարտութիւնները, զամէնքը յորդորէ, յանդիմանէ, ամենուն սպառնայ եւ եթէ հարկ է նաեւ պատշաճ պատիժներով նուաճէ։ Եթէ Քահանայապետը արձակ ձեռք չունենար, ի՞նչպէս կրնար ազատութեամբ հրամայել։ Արդ՝ իրեն աշխարհներուն մէջ կը գտնուին քրիստոնեայ իշ-



խաններ, Թագաւորներ, Կայսրներ։ Նաեւ ատոնց վրայ պէտք է որ տարածէ իր հոգեւոր իշխանութիւնը, խրատէ, խորհուրդ տայ, յանդիմանէ եւ եթէ հարկը պահանջելու ըլլայ, նաեւ բանադրէ. եթէ չենք ուզեր ըսել, թէ ատոնք ալ Քրիստոնեայ եւ Յիսուսի աշխարհները չեն, վասնզի բարձր աւագութեան հասեր են։ Արդ՝ ի՞նչպէս կրնայ Քահանայապետը այս իր անկողոպտելի իրաւունքները բանեցընել այդպիսի անձանց վրայ, եթէ ատոնցմէ անկախ չ'ըլլար։ Իսկ ի՞նչպէս կրնար իրենցմէ անկախ ըլլալ, եթէ իրենց հպատակն ըլլար, եւ իրենք կարող ըլլային զինքը բռնել, բանտարկել, եւ ամէն վայրկեան վրան բռնանալ։ Ստուգիւ կը յիշէք այն ժամանակը որ Սրբազան Հայրը 1849ին Կաէթա կը կենար։ Ան ատենը ի՞նչ կ'ըսէին ամբարիշտ մարդիկ, կ'ըսէին թէ ինչ որ կը վճռէր եւ կը հրամայէր՝ չէ թէ իր կարգադրութիւնները, հապա Նափոլիի Թագաւորիններն էին, որուն երկրին մէջ կը կենար, եւ անկից առիթ կ'առնէին չհնազանդելու. թէպէտ եւ ամէնքն ալ գիտեն թէ ինք կատարեալ ազատութիւն ունէր վճռելու ինչ որ կ'ուզէր՝ առանց մէկու մը արգելք դնելուն։ Նոյնը հիմա ալ պիտ'որ ըսէին, եթէ ժամանակաւոր հպատակ ըլլար վեհապետի մը։

Իսկ նոյն իսկ Իշխանները շատ անգամ փորձութեան մէջ պիտ'որ իյնային պար-

տաւոր հպատակութիւնն իրեն չմատուցանելու։ Ինչու որ, ո՞ր վեհապետը զՔահանայապետն իրեն հպատակ ունենալով, անոր հրամանները հոգեւոր բաներու մէջ կը զիջանէր ընդունելու. մանաւանդ թէ որ իրեն չախորժական բաներ ըլլային։ Եթէ Քահանայապետը, օրինակի համար, ժամանակաւոր հպատակ ըլլար Աւստրիայի, արդեօք կը հնազանդէ՞ր Գաղղիան։ Եթէ ժամանակաւոր հպատակ ըլլար Գաղղիայի, Աւստրիա կամաւ կը հնազանդէ՞ր։ Ով որ կը ճանչնայ աշխարհքիս բաները, դիւրաւ կը տեսնէ թէ որչափ դժուարին բան է։ Ասոր ներհակ ինքն ալ վեհապետ մը ըլլալով, ոչ ոք կրնայ ինք զինք անիրաւոր ընել բռնելով թէ Քահանայապետը ազատութիւն չունի հրամայելու մէջ, եւ կամ թէ հրամանները ուրիշի թելադրութեամբը տուած է։

Հոս սքանչելի կ՚երեւայ աստուածային նախախնամութիւնը, որն որ Սուրբ Եկեղեցւոյ բարւոյն, Հաւատացելոց հանդարտութեանը եւ Յիսուսի Քրիստոսի թագաւորութեան զարգացման համար, այնպէս տրամադրեց՝ որ Քահանայապետն ունենայ թագաւորութիւն մը, ոչ այնչափ ընդարձակ որ իրեն աւելորդ զբաղում պատճառէ, եւ ոչ ալ այնչափ փոքր, որ արքունական պատիւ եւ մեծարանք բոլոր տէրութեանց առջեւը չունենայ, բայց եւ



բաւական ըլլայ իրեն հարկաւոր ազատութիւնը պահելու։

Աս ամէն բանէ վերջապէս ոմանք կը հետեւցընեն թէ ուրեմն Ս. Եկեղեցին՝ առանց մարդկային իշխանութեան չի կրնար կենալ։ Այս անխելք մակաբերութեան նմանութեամբ մը պատասխան տամ։

Ս. Եկեղեցին չի կրնար կենալ առանց մէկ միջոցի մը, ինչպէս մարդու կեանքը չի կրնար տեւել առանց մէկ կերակրոյ մը։ Արդ՝ ինչպէս հիմա Աստուած սահմաներ է, որ հացն ըլլայ մեր հասարակաց կերակուրը, եւ մենք կը գովենք իր Նախախնամութիւնը, որ մեզի նոյնը կու տայ։ Նմանապէս հիմա Աստուած որոշած ըլլալով որ արքունական Գահը Քահանայապետին հարկաւոր ազատութիւնը պահպանէ Եկեղեցւոյ կառավարութեան մէջ, այսպէս մենք շնորհակալ կ՚ըլլանք, որ կը պահպանէ Քահանայապետին Գահը, որ անոր ազատութեան նեցուկն է։ Բայց եթէ ասիկա վերջանալու ըլլայ, ինչ պիտ՚որ ծագի։ Եւ եթէ մարդկանց հացը պակսելու ըլլայ, ինչ պիտ՚որ ըլլայ։ Ինչպէս Աստուած անսահման միջոցներ ունի իր իմաստութեան եւ ամենակարողութեան մէջ, մարդկան առանց հացի կերակուր հոգալու համար, այսպէս անսահման միջոցներ ալ ունի Եկեղեցին անվնաս պահելու առանց Քահանայապետական

դահին։ Բայց ինչպէս ամբարիշտ մը կը կ'ըլլար, ով որ չէր զարմանար եւ չէր գո-վեր Աստուծոյ բարութիւնը մեզի հաց տալուն համար, զորն որ ուզեց որ մեր աշխատանքի միջոցն ըլլայ· այսպէս ժանտ եւ անօրէն կ'ըլլայ, ով որ Քահանայապետին ժամանակաւոր իշխանութեանը կը հակա-ռակի հիմակուան ատենս, որ Աստուած նոյնը ընտրած է իր Երեսփոխանին հար-կաւոր անկախութիւնը եւ ազատութիւնը պահելու համար։

Մէկ խօսքով Աստուած պիտ'որ խնա-մէ իր Եկեղեցին ուրիշ միջոցներով թէ որ ուզէ եւ բարեհաճի աս միջոցը բառնա-լու, ինչու որ Եկեղեցին պէտք է տեւէ մինչեւ ի վախճան դարուց. բայց որովհետեւ հիմա ասիկա ընտրած է, մեզի ամենայն յար-գութեամբ իր կամքին ընդունել կ'իյնայ։

Ի վախճանի կ'ուզէ՞ք յայտնի ճանչնալ պատճառը, որուն համար այնչափ սաս-տիկ կը զայրանան Հռոմայ Քահանայա-պետին ժամանակաւոր տէրութեանը դէմ ամէն աղանդաւորները եւ ամէն իրենց նմանողները։ Ո՛չ Աւետարանական ազա-տութեան համար է, ինչու որ առանց զիրենք զրպարտելու, դուք ալ գիտէք որ այսպէս աղաղակողներն ամենէն ջերմե-ռանդները եւ առաքինութիւն սիրողները չեն. ասոր ներհակ Հաւատքը երկրիս վրայէն խլելու իրենց մոլեգին ցանկու-թիւնն է, որ զիրենք կը շարժէ։



Թագաւորական աւագութիւնը որ Քա-հանայապետին վրայ միացեալ է, այնպիսի պայծառութիւն եւ այնպիսի վայելչու-թիւն կու տայ իրեն, որ չափէ դուրս կ'ազ-դէ մարդկանց վրայ, որոնք զգայարանքով կը կառավարուին. մեծարանք եւ հպատա-կութիւն տպաւորելու։ Ուստի այսպէս յարգութիւն ու մեծարանք գտնելով Քա-հանայապետը, մեծագոյն ազդեցութեամբ ի գործ կը դնէ հաւատացեալ ժողովուրդը ըստ հոգւոյ կառավարելու մեծ պարտաւո-րութիւնը։ Արդ որովհետեւ ասոնք կ'ու-զեն անոր ամէն ճոխութիւնը վրայէն վեր-ցնել եթէ կարելի է, անոր համար դէմ կը դառնան ու պատերազմ կը յարուցանեն այն միջոցին դէմ, որ նոյն ճոխութիւնը իրեն վրայ կը միարանէ։ Այս նենգութիւնը նաեւ աշխարհական իշխաններու դէմ ալ կը բանեցնեն։ Անոնց ալ խորհուրդ կու տան որ ժողովրդեան ընտանի ըլլալու հա-մար, իրենց արտաքին մեծվայելչութիւնը մէկ դի ձգեն, որպէսզի անկից մերկացած ըլլալով, իրենց աւագութեան գաղափարը ժողովրդեան մտքէն նուազի, եւ աւելի դիւրին ըլլայ ապստամբութիւն հանելն ու զիրենք արքունական աթոռէն վար ձգելը։ Նմանապէս եթէ կարող ըլլային Քահա-նայապետն ալ ան աստիճանի հասցընել, որ սոսկ Քահանայի մը հաւասար ըլլայ, զինքն ալ կամաց կամաց բազմութեան աչքին արհամարհելի ընել կ'ուզէին, որպէսզի ժո-

ղովրդոց անոր հոգեւոր իշխանութեանը գլուխ ծռելու պատրաստականութիւնը նուազեցընեն ։

Ահաւասիկ մեկնուեցաւ պատճառը, որուն համար այնչափ դառնութեամբ կը խօսին Քահանայապետին վրայ, խոնարհական կերպարանքով մը Աւետարանական աղքատութեան սէր կեղծաւորելով ։

Ասոր համար չեն կրնար տանիլ, որ այնչափ եւ այնպիսի պատուով մեծարուի, ժողովուրդք անոր առջեւը ծունկի վրայ իջնան, ոտքը պագնեն եւ ուրիշ ասոր նման բաներ ։ Այսպէս անդադար կը զըրուցեն, թէ ինք Քահանայապետն ուրիշ բան չէ, բայց եթէ առաջին Եպիսկոպոս եւ թէ մեզի պէս մարդ մըն է ։ Այս ամենայն խիստ բարակ ատելութիւն մըն է, որ ունին Սուրբ Եկեղեցւոյ դէմ ։ Արդ դուք պէտք էք ասոնց պատասխան տալ թէ ոչ միայն առաջին Եպիսկոպոս է, այլ նաեւ ստուգիւ ճշմարիտ իշխանութիւն ունի ամէն Եպիսկոպոսներուն վրայ. թէ մարդ է ինչպէս մենք, բայց արժանաւորութիւն մ'ունի, զորն որ մենք չունինք. թէ այո՛ մարդ մըն է, բայց մարդ մը, որուն Յիսուս Քրիստոս յաւիտենական ճշմարտութիւնը իր առաջակայութիւնը խոստացաւ, որպէսզի երբեք չսխալի ճշմարտութիւնը սորվեցընելու համար. այո՛ մարդ մըն է, բայց անոր վրայ Յիսուս հաստատեց իր Եկեղեցին. այո՛ մարդ մըն



է, բայց ձեռքն ունի Յիսուսին իրեն տուած երկնից արքայութեան բանալիները. այո՛ մարդ մըն է, բայց ունի իշխանութիւն արձակելու եւ կապելու երկրիս վրայ ամէն բան, եւ Յիսուս խոստմամբ հաստատեց թէ ինքն ալ պիտ'որ ճանչնայ եւ ընդունի ինչ որ ինք ընելու ըլլայ. այո՛ մարդ մըն է, բայց է կենդրոն, գլուխ, եւ կատարումն բովանդակ Եկեղեցւոյ. ան ձայնն է՛ որով Յիսուս կը խօսի ամէն Հաւատացելոց հետ ։

Եւ եթէ իրեն ոտքը կը համբուրենք, ասիկա մեր ունեցած պարտաւորութենէն շատ քիչ է ։ Ինչու որ անոր առջեւը չենք խոնարհիր՝ վասնզի մարդ է, այլ վասնզի աստուածային ճոխութեամբ զարդարուած մարդ է, եւ այս ճոխութիւնն է, զորն որ առանձինն իրեն վրայ կ'ուզենք ճանչնալ այնպիսի մեծարանքով ։ Այն դժբախտներուն, որոնք ուրիշ աչք չունին բայց եթէ մարմնոյ աչքը, եւ հոգւոյ աչքով բոլորովին կուրցեալ են, կրնայ ասիկա չափէ դուրս հպատակութիւն մը երեւնալ. բայց անոնց որոնք բաները շիտակ կը տեսնեն, բոլոր այն հպատակութիւնը ոչինչ կ'երեւայ ։ Ի՞նչ կ'ըսէիր խլուրդին, թէ տրտնջար որ արեւ չկայ. Ա՜հ. եթէ արծուի աչքեր ունենայիր, արեւը կը տեսնէիր ։ Նմանը ըսէ ասոնց ալ. ինչու որ մարմնաւոր մարդիկ են, եւ բաւական չեն այնչափ բարձրանալու, որ կարող ըլլան երկնաւոր առաքինութիւններն իմանալ ։

## ԳԼՈՒԽ Ժ.

### Յաւելորդ բարեգործութիւն: Ներողութեան վաճառականութիւն:

Ընդհանուր շփոթութիւնը որ Հռոմայ արքունեաց առաջնորդներուն վրայ կ'երեւայ, չի կրնար պահուիլ առանց պատշաճաւոր ծախուց. եւ ահաւասիկ ասկէց կը ծագի հոգեւոր բաներով տուր եւ առ ընելու հարկաւորութիւնը: Ասանկ կը խօսին այն ողորմելիները, որոնք կ'ուզեն զմեզ Ս. Եկեղեցւոյ գրքէն հանել դուրս նետել. յառաջ կ'անցնին եւ կը պատմեն ձեզի, թէ ինչպէս Հռոմ դրամ կը ժողվուի վաճառելով ներողութիւնները, ամուսնութեանց տնօրինումները, առանձնական մատուռ շինելու իշխանութիւնները, եկեղեցական բարերարութեանց հանդերձաւորութիւնները. Սրբոց մասունքները եւ այլն եւ այլն: Թէ ասոնց հաւատալու ըլլայ. հոն ամենայն ինչ գնում վաճառում եւ փոփոխութիւն է, առանց ոչ Աստուծմէ, ոչ աշխարհքէս եւ ոչ իսկ սուրբ բաներէն ամչնալու. եւ այս ամէն բան աղէկ մը նշանակելու համար, արդէն իրենց սեպհական բառն ալ հնարած են, եւ զՀռոմ Քահանաներու մեծ խանութը կ'անուանեն: Հիմա, իմ սիրելիքս, լսեցէք. քանի մը խօսք միայն ունիմ ըսելու այս ամէն ամբաստանութիւններուն վրայ, եւ ամէն բանէն յառաջ ներողութեանց



վրայ, որոնց համար այնչափ աղմուկ կը հանեն. եւ դուք կը տեսնէք ասոնցմէ թէ ինչ տեսակ կրօնք է Բողոքականութիւնը, որն որ կանգուն կենալու համար այսպիսի զրպարտութիւններու դիմելու հարկաւորութիւն ունի:

Առաջին ամբաստանութեան առիթը կ'առնեն ներողութիւններէն, որոնք իրենց խօսքին նայելով՝ այն վաճառքն են, որ Հռոմայի առատ եկամուտք կը պտղաբերեն: Լաւ է, այս խօսքերնուն պատասխանը շուտ մը ի գործ տալու համար, հարցուցէք իրենց, ինչ ստակ վճարած են երբեք ան ամէն յոբելեաններուն եւ ներողութիւններուն համար, որոնց հրատարակութիւնը կեանքերնուն մէջ մինչեւ հիմա լսած են: Ի՞նչ հատուցեր են գոնէ այս վերջին հրատարակութեանց համար, որ ըրաւ Պիոս Թ. Քահանայապետը, մէկտեղ առնելով յիսուն'ութին տուածներն ալ: Ո՞վ երբեք իրենցմէ ստակ ուզած ունի նոյնպիսի հոգեւոր բարիքներու մասնակից ըլլալու համար: Գուցէ ձեզի պատասխան կու տան, թէ այսպիսի բաները իրենց հոգը չէ: Ասանկ ըլլայ. բայց եթէ հոգ ընելու ըլլային, գուցէ բան մը պիտ'որ հատուցանէի՞ն: Բաց ասկից՝ տարուայն ընթացքին մէջ այլ եւ այլ հանդիսութեանց մէջ գրուած են սուրբ ներողութիւններ, որոնք ամպիոններէն կը հրատարակուին հաւատացելոց. եւ ասոնց ծանուցումներն

ալ գրուած կախուած են Եկեղեցիներու դռներու վրայ. արդ ո՞վ երբեք սուտ մը տուած է ներս մտնելու, մասնակից ըլլալու համար։ Այս հոգեւոր նպաստները տրուած են բովանդակ աշխարհքիս երեսը տարածուած Միաբանութիւններու եւ Եղբայրութիւններու, կապուած են անբաւ բարեպաշտական գործքերու վրայ, եւ ո՞վ երբեք երազեց, թէ նոյն շնորհքները ստանալու համար հրամայուած բարեպաշտ գործքերէն զատ ուրիշ բան հարկաւոր է։ Ո՞ւր են ուրեմն Հռոմայի շահերը եւ ներողութեանց այնչափ եկամուտները։

Բայց եթէ հիմա այսպէս չէ ալ, կ'ըսեն, սակայն էր անցեալ ատենները, եւ պատմութիւնները մեզի կը յիշեցընեն, թէ ճշդիւ այն վաճառումներուն համար էր, որ Մարտինոս Լուտեր ելաւ բողոքեց Եկեղեցւոյ դէմ։ Եւ ալ պատասխան կու տամ՝ թէ պատմութիւնները շատ գէշ կարդացեր են անոնք, որոնք պատմութեանց մէջ այս ամէն ստութիւնները գտեր են, որովհետեւ ոչ անցած եւ ոչ հիմակուան ատեններս երբեք մէկը ներողութիւն վաճառած ունի։ Կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ հոգեւոր բարիքները վաճառելը չէ թէ միայն ամենածանր մեղք է, այլ գրեթէ հաւատոյ մոլորութիւն մը կը համարուի, որովհետեւ շատ դէպքերու մէջ հերետիկոսի տեղ դրուեցան Սիմոնականները, որոնք ճշդիւ այսպիսի անօրէնութեամբ պըղ-



ծեալ էին, եւ ամէն ատեն Ս. Եկեղեցին զիրենք հալածեց։ Իսկ ներողութիւններու նկատմամբ ամէն մարդ գիտէ, թէ ո՛րչափ հրամանագիրներով Ս. Եկեղեցին արգելած է որպիսի եւ իցէ զեղծում, զորն որ իր պաշտօնատէրներէն ոմանք կրնային ընել։

Իսկ այն որ քանի մը տգէտներու առիթ տուաւ մոլորելու եւ շատերուն անիրաւութեամբ չարախօսելու, ահաւասիկ աս է։ Ս. Եկեղեցին երբ այս նպաստները կը շնորհէ, ինչպէս են սուրբ ներողութիւնները, սովոր է հաւատացելոց քանի մը բարեպաշտութեան եւ ապաշխարութեան գործքեր պատուիրել, որպէսզի թէ՛ աւելի արժանաւոր ըլլան եւ թէ՛ անիկա հատուցում՝ մ'ըլլայ պարտաւորութեանց որ կը թողուին։ Իսկ ապաշխարութեան գործքերը ըստ Ս. Գրոց գլխաւորաբար երեք են՝ աղօթք, ծոմապահութիւն եւ ողորմութիւն. եւ անիկա ծանօթ է ամենուն որոնք Քրիստոնէական Հաւատոյ առաջին տարերքը գիտեն։ Արդ՝ ինչպէս որ Ս. Եկեղեցին դեռ պատշաճ չհամարեցաւ, իր թշնամեաց չարախօսութեանցը, կամ նաեւ ոմանց գաղջ որդւոց տրտունջներուն համար, բարի գործքերու ցանկին մէջէն ողորմութիւնը վերցընել, եւ ոչ ալ հրաժարել այն իրաւունքէն, որ ունի հաւատացելոց պատուէր տալու, որ ողորմութիւն ընեն, նոյնպէս ալ երբեք ինք աս ողորմութիւնն ընելը պատշաճ կը համարի

ներողութիւն առնալու համար, ան ատենը նոյնը կը յանձնէ այնու եղանակաւ, ինչպէս աղօթքն ու ծոմապահութիւնը պայման կը դնէ ներողութիւններն առնալու համար։

Իսկ եթէ ոմանք՝ անարգ ու շահասէր հոգիք՝ ասկից առիթ կ'առնեն Եկեղեցին զրպարտելու, ասիկա բոլորովին իրենց չարութիւնն է։ Բայց ասկից եղանակը որով վճիռ կը տրուի այսպիսի դէպքերու մէջ ողորմութիւն ընելու, այնպէս խոհեմական եւ այնպէս անշահախնդիր է, որ որչափ ալ մէկը աչուըները սրէ՝ երբեք բան մը չի կրնար գտնել քամահելու։ Եկեղեցին շատ անգամ երկու եղանակաւ այս տրամադրութիւնը կ'ընէ. կամ մեր կատարեալ ազատութեամբ կը թողու ողորմութիւն ընել որուն որ կ'ուզենք, եւ կամ մասնաւոր վախճանի մը համար կը սահմանէ։ Թէ՛ մէկուն եւ թէ՛ միւսին մէջ, ինքն ամենեւին մեր դրամը չի սեպհականեր։ Այսպէս մէկ անգամմէն աւելի տեսանք, որ հրամայուած գործքերու մէջ ընդհանրապէս ողորմութիւն ընելն ալ սահմանուած է Յոբելեան ներողութիւնը առնալու համար, բայց աս առիթներուն մէջն ալ հաւատացեալները կ'ընտրեն այն աղքատները որ կ'ուզեն, ան այրիները եւ այն որբերը, որոնց վրայ գութ մը կը զգան, եւ հոս ստուգիւ վաճառականութեան եւ ոչ ստուերը կայ։ Ուրիշ առիթներու մէջ ողորմու-



թիւններ սահմանուած են կամ Սուրբ Երկիրները՝ Քրիստոնէական բարեպաշտութեան սիրելի տեղուանքը պահպանելու, կամ Ս. Հաւատքը տարածելու, կամ Քրիստոնէից համար՝ որոնք տաճկական գերութեան մէջ կը հեծէին, կամ Հիւանդանոցներ շինելու եւ կամ ասոնց նման ուրիշ գործքերու համար, եւ այս առիթներու մէջ դրամը կը յանձնուէր անոնց, որոնց կը վերաբերէր, եւ ոչ հոս ստուեր վաճառականութեան կը տեսնուի։

Գայթակղութեան մեծ քարն եղաւ Հռոմայի Ս. Պետրոսի Եկեղեցին շինելու համար Լեւոն Ժ. Քահանայապետէն սահմանուած ողորմութիւնը։ Ասիկա նախ առաջին Մարտինոս Լուտերի առիթ տուաւ Եկեղեցւոյ դէմ ելլելու, եւ մինչեւ մեր օրերը միշտ ընդհանուր պատճառ մըն է Բողոքականներուն Եկեղեցւոյ դէմ զրպարտութեանց։ Բայց ահաւասիկ քիչ խօսքով հարազատ դէպքը։ Մեծ Քահանայապետը Յուլիոս Բ. մեծագործ գաղափարն ունեցաւ Հռոմ Առաքելոց Իշխանին նուիրուած տաճար մը կանգնելու, այնպէս որ նուազ անարժան ըլլայ Կաթողիկէ Եկեղեցւոյ Մեծվայելչութեանը. եւ Լեւոն Ժ. իր յաջորդը գործքը յառաջ տանելու եւ կատարելու համար հրաւիրեց Կաթողիկէ տիեզերաց ամէն հաւատացեալները, որ իրենց ողորմութեամբը գործակից ըլլան։ Բայց աւելի ազդեցութեամբ բանը

յառաջ տանելու համար քանի մը ներողութիւններ հրատարակեց, զորոնք կրնային ստանալ ամէնքը, որոնք իրենց ողորմութիւններովը գործակից կ'ըլլային աստուածային պաշտաման եւ քրիստոնէական բարեպաշտութեան այսպիսի մեծ գործքի մը: Հիմայ ասոր մէջ ինչ բան կայ քամահելու: կամ ուրանալու է, որ Ս. Եկեղեցին չունի իշխանութիւն ներողութիւն շնորհելու, բայց ասիկա ի սկզբան եւ ոչ Մարտինոս Լուտեր յանդգնեցաւ ըսելու, որովհետեւ ուրիշ բանի դէմ չէր իր հակառակութիւնը, բայց եթէ տեսակ մը զեղծմունքներու, որ կ'ընէին նոյն ներողութեանց քարոզիչները, այնպիսի զեղծմունքներու՝ զորոնք նոյն իսկ Ս. Եկեղեցին դատապարտեց ու շուտով սանձահարեց. եւ կամ հաստատելու է, թէ աստուածային պաշտաման գործք մը չէ տաճար կանգնել Աստուծոյ Մեծվայելչութեանը. սակայն Բողոքականները, որոնք Ս. Գրքով այնչափ բարձրաձայն կը պարծին, գոնէ պէտք էին գիտնալ, որ Աստուած հին օրինաց ժամանակէն վեր այնչափ սէր ու նախանձաւորութիւն ցուցուց իր Տաճարին փառաւորութեանը, մինչեւ ինք յայտնեց անոր բովանդակ յատակագիծը, ինք անոր ամէն զարդերը սահմանեց, մինչեւ նաեւ ինքն էր որ տուաւ իմաստութիւն ու գիտութիւն երկու արհեստաւորներու, որպէսզի քանի մը ազնիւ



ու բարակ գործքեր ամենայն գեղեցկութեամբ ու կատարելութեամբ գլուխ հանեն: Արդ՝ ո՞ւր է հոգեւոր բարիքներու առատութիւն ու վաճառքը: Ցորչափ որ Բողոքականները չեն ցուցըներ, թէ բաներն ուրիշ կերպ եղած են, մենք միշտ կարող ըլլանք պիտ'որ ըսելու, թէ երբոր իրենք աս նիւթիս մէջ Ս. Եկեղեցին կը նախատեն, կամ չեն գիտեր ինչ կը զրուցեն, կամ զրպարտիչ են, որ պարզամիտները կ'ուզեն մոլորեցընել:

Եւ որովհետեւ ներողութեանց վրայ է խօսքերնիս, հոս ուրիշ զրպարտութիւն մ'ալ աւելցընեմ, զորն որ նոյն պատճառաւ Բողոքականները Եկեղեցւոյ վրայ կը նետեն: Կ'ըսեն թէ այս թողութիւններու եւ յոբելեաններու դիւրութիւնները, մեծապէս կ'օգնեն մեղքերը յաճախելու. ինչու որ հաւատացեալները ինչպէս կրնան զգուշիլ մեղք չգործելու, երբոր գիտեն թէ այնչափ դիւրին է թողութիւն առնելը: Բայց ասկից Քրիստոնեայք ինչպէս բարի գործքերու մէջ պիտ'որ յառաջանան, երբ ներողութեանց միջոցովը այնչափ դիւրին կ'ըլլայ երկնից ճամբան: Արդ՝ իմ՛ սիրելիքս, իրաւ որ զարմանալի են այս դժուարութիւնները Բողոքականներուն բերանը: Անոնք կը սորվեցընեն, թէ ամէնեւին հարկաւոր չեն բարի գործքերը, թէ երկինք հանելու համար բաւական է Հաւատքը, թէ ձիւթէն աւելի սեւ հոգի մը

բաւական որ հաւատայ թէ Աստուծոյ առջեւ արդարացած է, ատով միայն ձիւնէն աւելի մաքուր կ'ըլլայ. Եւ այս գեղեցիկ վարդապետութիւնը սորվեցընելէն ետքը՝ կու գան կեղծաւորի երեսով մը ու կ'ողբան բարի գործքերու նուազիլը եւ մեղանչելու դիւրութիւնը։ Իրաւցընէ ասիկա Հրէից կեղծաւորութիւնն է, որոնք խիղճ չէին ընէր զՔրիստոս սպաննելու, բայց խղճերնին կը զարնէր տունի որ դատաւորին տունը մտնելու։

Բայց որպէս զի աւելի պայծառ տեսնէք, թէ ինչպէս զձեզ կը խաբեն այսպիսի բարեպաշտական երեւոյթներով, միտքերնիդ բերէք ինչ որ աս նիւթիս վրայ Կաթոլիկէ Եկեղեցին կը սորվեցընէ։ Մեղքի մէջ երկու բան կայ գիտնալու. կայ յանցանք՝ որ զԱստուած կ'արհամարհէ, կայ պատիժ՝ որուն արժանաւոր կ'ըլլայ յանցաւորը։ Արդ՝ յանցանքը ըստ Կաթոլիկէ վարդապետութեան չի թողուիր՝ եթէ ոչ Ապաշխարութեան Խորհուրդով, կամ իրօք ընդունելով նոյն Խորհուրդը ուր կարելի է, կամ գոնէ բաղձալով նոյն Խորհուրդն ընդունելու՝ երբոր մէկը միջոց չունի անոր մերձենալու, միայն թէ աս բաղձանքին վրայ աւելցընէ կատարեալ զղջումը։ Իսկ պատիժը կամ բոլորովին եւ կամ բան մասին կը շնորհուի նոյն Խորհուրդին մէջ ըստ առաւելութեան կամ նուազութեան կատարեալ



զղջման ապաշխարողին, եւ կամ կը մնայ հատուցանելի այս կամ անդին աշխարհք ժամանակաւոր պատժական հատուցմամբ։ Արդ՝ աղէկ միտք առէք, ներողութիւնը ուրիշ բան չէ, բայց եթէ մասնական կամ կատարեալ թողութիւն՝ մեղաց համար պարտաւոր պատժոյ, բայց ոչ երբեք յանցանաց թողութիւն է. ուստի՝ ներողութիւն չ'ընդունուիր, բայց եթէ մեղաց վրայ ողբալէն, մեղքէն զզուելէն ու հոգին մաքրելէն ետքը։ Ի՞նչպէս ուրեմն ներողութիւնը մեղքի կը յորդորէ։ Մտքերնուդ մէջ երեւակայեցէք, որ մէկը տեսնելով լողացող մը որ ծովեզերքէն դէպ ի բաց ծովին մէջ կը յառաջանայ, ծանրութեամբ մը ըսէ քովիններուն, թէ անոր համար այն լողացողը այնչափ բացը կ'երթայ, վասն զի կառք մ'ունի, որ զինքը ցամաք պիտ'որ բերէ. դուք ի՞նչ պատասխան կու տայիք։ Ախորժակով մը կը խնդայիք, եւ կ'ըսէիք. Կառքերը ջրերու մէջ չեն երթար, հարկ է ցամաքին ըլլալ՝ որ կառքը գործածուի։ Իսկ երբոր կը լսէք Բողոքականէ մը, որ ձեզի ծանրութեամբ կը զրուցէ թէ Ուղղափառները դիւրին կը մեղանչեն, վասն զի պատրաստ է իրենց թողութիւնը ներողութեամբ, դուք ալ նոյնը պէտք էք ըսել. Ներողութիւններով մեղքերը չեն թողուիր, հարկ է որ նախ ջնջուած ըլլան, որպէսզի կարող ըլլանք ընդունիլ նաեւ պատիժներուն

թողութիւնը։ Եւ ինչպէս այն լողացողը, եթէ ուրիշ միջոց չունի ցամաք գտնալու, բայց եթէ կառքը, կրնայ աչքն առնուլ խղդուկը երբոր կ'ուզէ. այսպէս այն մեղաւորն ալ, որ փրկութեան հասնելու համար չ'ուզեր ուրիշ միջոց ի գործ դնել, բայց եթէ ներողութիւնները, կրնայ ինք զինքը որոշել դատապարտութեան երթալու։ Արդ տեսանք ըլլալով Ս. Եկեղեցւոյ վարդապետութիւնը, ի՞նչ իմաստ ունի այն դժուարութիւնը, զորն որ այդ իմաստունները այնչափ վստահութեամբ ու պարծանօք յառաջ կը շարժեն։

Ան ալ ճշմարիտ չէ, որ կ'աւելցընեն, թէ ներողութեանց պատճառաւ բարի գործքերը կը նուազին. ինչու որ նոյն ներողութիւնները ստանալու համար զանազան բարի գործքեր կը սահմանուին, ինչպէս՝ աղօթք, ծոմ, ողորմութիւն, առանց յիշելու թէ ներողութեանց ստացումն ալ շատ աղէկ բարեգործութիւն մըն է. ինչու որ անոր մէջն է կրթութիւն Հաւատոյ Աստուծոյ խօսքին վրայ, անկեղծ գործք խոնարհութեան՝ ինք զինք Աստուծոյ առջեւը արժանի պատժոց ճանչնալով, բաղձանք մը Աստուծոյ արդարութեանը հատուցում ընելու, եւ միանգամայն Յիսուսի անգին արեանը փառաւորութիւնը, որուն արժէքովը մեր արժանաւորած պատիժները կը թողուին։ Այս ամենայն առանց յիշելու Ս. Եկեղեցւոյ



յորդորանքը, որ կու տայ մեզի անդադար, Ս. Ներողութիւններով միայն չշատանալ, հապա անոնց հետ նաեւ ամէն տեսակ բարեգործութիւնները միացընել։

Համոզուած են ասոնց վրայ Բողոքականները, այսու ամենայնիւ չեն ուզեր ձայներնին քաշել։ Ուղղափառներուն ներողութիւնները, կ'ըսեն զարմնալ, անիրաւութիւն են Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ Փրկագործութեանը։ Եւ ի՞նչ եղանակաւ։ Երկու եղանակաւ, պատասխան կու տան, մէյ մը՝ վասն զի Ուղղափառները ներողութեանց մէջ կը պահանջեն որ տեսակ մը գործքեր ընենք, իբրեւ թէ դեռ այնպիսի գործքերու հարկաւորութիւն եղած ըլլայ թողութիւն գտնելու համար Յիսուսի Փրկագործութենէ ետքը. եւ երկրորդ՝ վասն զի Ուղղափառները Յիսուսի հատուցումներուն վրայ կ'աւելցընեն նաեւ Աստուածածնայ եւ Սրբոց հատուցումները, իբրեւ թէ առջինները բաւական եղած չըլլային։ Արդ՝ իմ սիրելիքս, գոհութեամբ այս ամէն դժուարութիւններուն պատասխանը կու տամ, որովհետեւ առջեւս դաշտ մը կը բանան ձեզի աղէկ մը Ս. Եկեղեցւոյ վարդապետութիւնը մեկնելու։

Նախ առաջին՝ պէտք էք գիտնալ, որ ամէն բարի գործքերնուս մէջ կրկին արժէք կան, կայ արդիւնք մը, որով յաւիտենական կեանքը կը ստանանք, կայ նաեւ

հատուցում մը, որով կը մաքրենք մեր յանցանքները։ Արդիւնքը՝ անկից կը ծնանի, վասն զի այն բարի գործքերը աստուածային սիրոյ շարժմամբ ու ազդմամբ եղած են. հատուցում մը անկից՝ վասն զի այն գործքերն աշխատալից եւ պատժական են։ Այսպէս յայտնի կը սորվեցընէ Ս. Գիրքը, եւ մեզի, օրինակի համար, կը ծանուցանէ թէ Ողորմութիւնը մեղքերէն կ'ազատէ ու մահուանէ կը փրկէ[1], որ ըսել կ'ուզէ, թէ մեղքերուն հատուցում մը կ'ընէ, եւ միանգամայն իբրեւ բարի գործք եւ Աստուծոյ հաճոյական յաւիտենական կեանք կ'արդիւնաւորէ, ինչպէս կը սորվեցընէ մեզի մեր Տէրն ըսելով. Ժառանգեցէք ինծի համար պատրաստուած թագաւորութիւնը, ինչու որ անօթի էի, ու ինծի կերակուր տուիք, ծարաւ ունեցայ, ու ինծի ջուր տուիք խմելու[2]։

Երկրորդ՝ պէտք է գիտնալ, որ արժանիքը կամ արդիւնաւորութիւնը անձնական է, եւ ամէն մէկու այնպէս յատուկ է, որ անկարելի է ուրիշի մը շնորհելը, եւ այս արդիւնաւորութեան պիտ'որ համեմատուի փառաց աստիճանը, զորն որ ամէն մէկը պիտ'որ ընդունի երկինքը. ասոր ներհակ՝ հատուցումը, որն որ ուրիշ բան չէ, բայց եթէ պարտքի վճարումը, կրնայ ուրիշի մը օգտին համար ալ ի գործ դրուիլ։ Այն եղանակաւ, ինչպէս հարուստ մարդ մը կրնայ իր բարեկամին տեղը հատուցանել անոր պարտքերը, որոնք անոր արգելք կ'ըլլային հրապարակական պաշտօն մը առնելու. բայց առանց այն պաշտօնին արդիւնաւորութիւնն անոր շնորհելու։

[1] Տովբ. Դ. Սիրաք Գ.   [2] Մատթ. ԻԵ.



Երրորդ պէտք է գիտնալ, թէ Եկեղեցւոյ մէջ այս հատուցումներուն գանձը անսահման է. ինչու որ Յիսուսի չարչարանքը՝ որն որ գլխաւորաբար զանիկա կը բովանդակէ, անսահման արժէք ունի։ Հատուցման արժէքը կ'առնուի անձին արժանաւորութենէն՝ որ կը կրէ այն եղանակաւ, ինչպէս արհամարհանաց ծանրութիւնը կ'առնուի անձին արժանաւորութենէ, զորն որ ուրիշ մը կ'արհամարհէ։ Արդ՝ Աստուած ըլլալով այն որ կրեց ի մահկանացու մարմնի, իր չարչարանքը անսահման զօրութիւն ունի, որ կ'արժէ չէ թէ մինակ մէկ աշխարհքի մը փրկութեան, այլ անթիւ աշխարհքներու համար ալ, եթէ ըլլային եւ փրկութեան հարկաւորութիւն ունենային։

Այսու ամենայնիւ այս գանձը կերպաւորելու համար կը զուգընթանան Սուրբ Կուսին ու Սրբոց արդիւնքներն ալ, որոնք աւելի կրեցին քան որչափ հարկաւոր էր իրենց մեղաց հատուցումն ընելու համար։

Բողոքականները չեն կրնար տանիլ աս վարդապետութիւնը. գոցեն ականջնին որչափ կ'ուզեն՝ մեր հոգը չէ. վասն զի յայտնի եւ ակներեւ է որ աս ասանկ է։ Ամենասուրբ Կոյսը ստուգիւ երբեք եւ ոչինչ

եղանակաւ մեղք գործեց, ոչ մնացու եւ ոչ ներելի. այսու ամենայնիւ անհնարին ցաւ ու վիշտ կրեց խաչին տակը։ Ս. Յովհաննէս Մկրտիչ մօրը արգանդէն սրբուեցաւ, անանկով ալ ամենախիստ ճգնութիւններով կեանքը անցուց, եւ եաքը իր արիւնը տուաւ արդարութեան համար։ Առաքեալները՝ նոյնպէս այնչափ սուրբ Մարտիրոսներն ալ անարատ վարք ունէին, բայց ամենադաժան տանջանքներ կրեցին իրենց մահուանէն առաջ, յայտնի է թէ մինակ մահը բաւական էր բստ Հաատոց բոլոր յանցանքներնուն հատուցումն ընելու։ Վերջապէս այնչափ սուրբ Ապաշխարողներ, Կուսանք եւ խոստովանողներ, խիստ ապաշխարութեան հետ անմեղ կեանք մը միացընելով, աւելի հատուցին քան զոր պարտական էին իրենց յանցանաց համար։ Ճշմարտապէս կը զրուցէր Երանելին Յոբ. Երանի՜ թէ իմ մեղքերս եւ իմ ցաւերս կշռոյն կշռուէին, որովհետեւ աւազ քան ծովեզերքներէն ծանրագոյն պիտ'ըլլային[1]։ Արդ՝ աս ամէն հատուցումներէն կը բովանդակի գանձ մը անսահման արժողութեամբ, զորն որ Ս. Եկեղեցին ներողութիւններով մեր վրայ կը մերձեցընէ։

Բայց ես կը հարցընեմ՝ նախ՝ ինչ անիրաւութիւն կ'ըլլայ Յիսուսի, եթէ Անոր հատուցումները մեր վրայ մերձեցուին մեր

[1] Յոբ. Զ.



մեղքերուն վճարման համար։ Մանաւանդ թէ աւելի մեծ ինչ պատիւ կրնայ ըլլալ Փրկագործութեան, եթէ կը հաւատանք որ Յիսուսի անգին արիւնը մեզի չէ թէ միայն յանցանաց թողութիւն կ'ընդունի, այլ նաեւ մեր մեղքերուն պարտաւոր պատիժներն ալ կը շնորհէ։ Բայց, կ'ըսեն, Ուղղափառները կ'ուզեն, որ այս թողութիւնն ընդունելու համար, մենք ալ մեր բարեգործութիւններն ի գործ դնենք։ Ո՜հ լսեցէք ուրեմն անգամ՝ մը, եւ իմացէք ճշմարտութիւնը։ Ան ամէն բաներու մէջ, որ մենք կը գործենք մեր հոգւոյն օգտին համար, ամէն բանի մէջ բողոքականները կը համարին, թէ մենք նախատինք մը կ'ընենք Յիսուսի։ Եթէ Ս. Պատարագին ներկայ կ'ըլլանք, կ'ըսեն թէ անիրաւութիւն կ'ընենք խաչի զոհին. եթէ բարի գործքեր կ'ընենք, կ'ըսեն թէ Յիսուսի բարի գործքերը անօգուտ կ'ընենք. եթէ Ս. Աստուածածինը եւ Սուրբերը բարեխօսութեան կը կանչենք, կ'ըսեն թէ զանոնք Յիսուսէն վեր կը դնենք։ Եթէ ի գործ կը դնենք ներողութիւնները վաստըկելու համար սահմանուած գործքերը, կը համարին թէ անօգուտ կ'ընենք Յիսուսի չարչարանքը։ Բայց կ'ուզէ՞ք իմանալ ճըշմարիտը։ Աս է ճշմարտութիւնը, որ իրենք կը նախատեն ու կը թշնամանեն չարաչար զՅիսուս Քրիստոս այս ամէն անօրէն պատճառաբանութիւններով, ինչու որ

առանցմով ամենեւին չէին ճանչնար, թէ ինչ է փրկագործութիւնը։ Ինչու որ Յիսուսի մեզի համար կատարած փրկագործութիւնը յայսմ՝ չի կայանար, որ զմեզ ազատ ըրած ըլլայ մեր մասնակցութիւնը ի գործ դնելէն։ Ամենեւին ոչ։ Փրկագործութեան անսահման բարերարութիւնը յայսմ՝ կը կայանայ որ երբ մենք կարող չէինք առանց փրկագործութեան բան մը գործել, որ մեզի յաւիտենական կեանքն արժէր, ոչ հաւատալ, ոչ մեր մեղաց վրայ զղջալ, ոչ սիրել զԱստուած ինչպէս պարտաւոր էր. Յիսուս իր անգին արեամբը ընդունեցաւ մեզի աս անբաւ շնորհքը, որ այս ամենայն կարող ըլլանք ընել այնու եղանակաւ, որ մեզի արժէ ի փրկութիւն։ Բայց աս շնորհքն ընելէն ետքն ալ, ոչ միայն չի մերժեր մեր գործակցութիւնը, հապա նոյնը կ'ուզէ, կը պատուիրէ, կը պահանջէ ամենայն եղանակաւ։ Սուրբ Աւետարանները մեզի կը ծանուցանեն որ պարտական ենք ապաշխարութիւն ընել, պարտական ենք ծոմ ու պահք պահել, պարտական ենք աղօթել, պարտական ենք Ս. Խորհուրդներն ընդունիլ, պարտական ենք մեր ընկերաց ողորմութեան գործքեր ընել, եւ ասոր նմանները։ Յիսուս Քրիստոս դատաստանին օրը անարգեալները դատապարտելուն պատճառ պիտ'որ բերէ բարի գործքերնուն պակասութիւնը, ինչպէս ընտրեալները վարձատրելուն պատ-



ճառ պիտ'որ բերէ բարի գործքերուն գործադրութիւնը։

Առողջ միտքը կորսնցուցած պէտք է ըլլայ մէկը՝ ասիկա չիմանալու համար, իսկ չարագոյն եւս՝ հակառակելու համար։ Ի՞նչ պիտ'որ ըսէիք Գեղացւոյ մը համար, թէ ասիկա աստուածային նախախնամութեան, որմէ իր սնունդը կը յուսայ, անիրաւութիւն չընելու պատճառաւ, ալ չուզէ երկիր բանեցընել, ոչ սերմանել, ոչ հերկել, ոչ հնձել եւ ոչ իր պարէնը շտեմարանը ժողվել։ Պիտ'որ ըսէիք թէ խենթ է ասիկայ։ Աստուածային Նախախնամութիւնը յայսմ՝ կը կայանայ, որ կը պահէ՝ մեր զօրութիւնը գործելու, մեզի օգտակար անձրեւները կը խրկէ, մեզի արեւը կը ծագէ, հովերը կը յարուցանէ եւ ինչ որ հարկաւոր է հունձքի. բայց չի մերժեր, մանաւանդ թէ կ'ենթադրէ ու կը պահանջէ նաեւ մեր աշխատութիւնը, մեր գործքը։ Հիմա նոյնն ըսէք մեր փրկուածին մէջ։ Յիսուսի Փրկագործութիւնը մեզի ամէն հարկաւոր միջոցները հոգացած է բարեգործելու, այնպէս որ առանց անոր երբեք բարեգործութիւն չէինք ունենար. բայց նոյն փրկագործութիւնը մեզի չի մերձենար, եթէ մենք ալ մեր գործակցութիւնը չենք ըներ։ Կ'ուզէք անգամ մը պայծառ իմանալ, թէ ուր կ'երթայ կը հասնի այնպիսի ամբարշտական գովեստը, որով կը բարձրացընեն Բողոքականները

զփրկագործութիւնը։ Ո՛չ. Յիսուսի սէրը
չէ՝ անոր աստուածային արեանը յարգն ու
պատիւը չէ՝ պատճառանք մըն է, որ յա-
ռաջ կը բերեն իրենք զիրենք ապաշխա-
րանք քաշելու, բարեգործութեան մէջ
կրթելու ամէն պարտաւորութենէ ազա-
տելու համար։

Բայց Յիսուսի հատուցմանը հետ Ս.
Կուսին եւ Սրբոց հատուցումներն ալ
միացընելը. Անոր անիրաւութիւն ըսել
չէ՞։ Ո՛չ ամենեւին, իմ սիրելիքս։ Ինչու
որ եթէ մենք զանոնք այնպէս միացընէ-
ինք, իբրեւ թէ Յիսուսի հատուցումները
բաւական չէին, ասիկա ստուգիւ թշնա-
մանք մըն էր Յիսուսի. բայց Կաթոլիկէ
Եկեղեցին երբեք աս բանս չըրաւ եւ աս-
կից մեծապէս կը սոսկայ։ Զանոնք կը
միացընէ, վասնզի անով այնչափ աւելի Յի-
սուսի փառքը կ'առաւելու եւ իր յաղ-
թանակը աւելի եւս պանծալի կ'ըլլայ.
որովհետեւ անոնցմէ կը տեսնուի թէ Յի-
սուս իր շնորհքովը ինչ կարող եղաւ գոր-
ծել իւր ծառաներուն վրայ, որոնց այն-
չափ օգնեց եւ այնպէս արժանաւոր ըրաւ,
որ կարող եղան այնպիսի մեծ գլուխ հա-
տուցմանց դիզել որ ոչ միայն իրենց,
այլ եւ իրենց եղբարցը բաւական էր։ Եթէ
տեսնէիք Կայսր մը որ իր բոլորտիքն ունի
այնչափ եւ այնպիսի հարուստ պաշտօնեա-
ներ, որ անոնք ալ ուրիշներուն իրենց ա-
ռատաձեռնութիւնը կրնան ցուցընել, կ'ը-



սէիք երբեք թէ ասոնք իրենց մեծամեծու-
թեամբը Կայսեր նախատինք են։ Բոլորո-
վին հակառակ. ինչու որ ասոնք աւելի
կը փառաւորեն զՄիապետը, որ կրցաւ
զիրենք այնչափ մեծցընել։

Ասկից յայտնի պիտ'որ երեւայ ձեզի,
թէ ինչպէս Ուղղափառները կը ճանչնան
այն մեծ ճշմարտութիւնը, թէ Յիսուս
Քրիստոս է մի միայն Փրկիչը, մի միայն
Միջնորդը, մի միայն Ազատիչը ամենայն
մարդկան։ Ինչու որ մենք կը խոստովա-
նինք սրտերնուս մեծ ուրախութեամբ՝
թէ մինակ Յիսուս զմեզ երկնաւոր Հօրը
հետ հաշտեցուց, մինակ Յիսուս մեզի հա-
մար արդիւնաւորեցաւ ամէն շնորհք, մի-
նակ Յիսուս կ'օգնէ մեզի բարի գործք գոր-
ծելու, մինակ Յիսուս մեր հատուցմնե-
րուն արժէք կու տայ։ Եւ եթէ երբեմն
Սուրբերն ալ ընթացակից կ'ըլլան, կամ՝
բարեխօսելով մեզի համար, կամ՝ մասնա-
կից ընելով զմեզ իրենց հատուցմնե-
րուն, ամենայն ինչ՝ պարծանք, պատիւ,
փառք եւ գործք Յիսուսի է, որ Սուրբե-
րը իր շնորհքներովը արժանաւոր ըրաւ որ
կարող ըլլան մեզի համար աղօթել եւ
մեզի համար հատուցում ընծայել, կը
բարեհաճի նաեւ իր գթութեամբը այն
հատուցմանց նուիրումը եւ այն աղօթք-
ներն ընդունիլ։

Բայց վերջապէս, դարձեալ կը զրու-
ցեն. դնենք թէ մէկ ժամանակաւոր պա-

տուժ մը միայն թողուի նորոգութիւններով. սակայն ինչ իշխանութեամբ Եկեղեցին աս իրաւունքը կը բանեցընէ։ Ես կրնայի ձեզի պատասխան տալ, որ եթէ Եկեղեցին աս իշխանութիւնը կը բանեցընէ, անտարակուսելի նշան է թէ իրաւունք ունի. ինչու որ ինք անսխալ ըլլալով՝ չի կրնար իր իրաւունքներուն սահմանէն անդին անցնիլ, եւ ոչ ալ յափշտակել իշխանութիւն մը, որ իրեն տրուած չէ։ Այսու ամենայնիւ ահաւասիկ ձեզի ուրիշ պատճառ մ'ալ։ Վերը ձեզի ըսի, թէ մեղաց մէջ երկու բան կայ մտածելու. յանցանք ու պատիժ։ Հիմա պէտք է գիտնաք, որ Սուրբ Գիրքը մեզի կը սորվեցընէ թէ յանցանքին թողութիւն տրուելովը, միշտ պատիժն ալ թողուած չէ։ Այսպէս օրինակի համար, Դաւթի մեղաց թողութիւն տրուեցաւ, բայց՝ դեռ մնաց, որ զաւկին մահուանը պատիժը կրէ։ Այսպէս՝ Մովսէսի աղօթքովը թողութիւն տրուեցաւ Հրէից կռապաշտութեանցը եւ անհաւատարմութեանցը. որ գործեցին անապատին մէջ, սակայն նոյն անապատին մէջ ժամանակաւոր մահուան պատիժն իրենց տրուեցաւ. ուստի յայտնի կը տեսնուի, որ մեղքի մէջ յանցանքին պարտաւորութենէն զատ՝ կայ նաեւ պատժոյ պարտաւորութիւնը, որն որ յանցանքին հետ մէկտեղ միշտ չի թողուիր, ճշդիւ ինչպէս երբեմն մեր մէջը կը պա-



տահի, որ մէկը իր մեծաւորէն վնասներ եւ անիրաւութիւններ կրած ըլլալով, թողութիւն կու տայ անիրաւին, բայց կ'ուզէ որ տուած վնասներուն տեղը լեցընէ։ Արդ՝ Յիսուսի Քրիստոսի Եկեղեցւոյ շնորհած կարողութիւնն ի՞նչ է։ Գուցէ թէ միայն մեղքերու թողութիւն տալու կարողութի՞ւնն է։ Ո՛չ։ Յիսուս Քրիստոս շատ անգամ՝ կրկնեց եւ ըսաւ, թէ Եկեղեցին ինչ որ կապէք՝ ըլլայ, ինչ որ արձակէք՝ ըլլայ, արձակուած կամ կապուած երկինքը։ Ո՛չ սահմանն ու ո՛չ պայման դրաւ. եւ ինչպէս որ Եկեղեցին Յիսուսի արդեանց միջնորդութեամբը կը թողու մեղքերը, այսպէս Յիսուսի արդեանց միջնորդութեամբը կը թողու պատիժն ալ, որն որ նաեւ ճշմարիտ կապանք մըն է հաւատացելոց։ Եւ ասանկ ալ նոյնը միշտ իմացաւ եւ ի գործ դրաւ Ս. Եկեղեցին։ Ս. Պօղոս Առաքեալը շնորհեց այն ծանօթ Կորնթացի ազգապղծին այսպիսի մէկ պատիժ մը Յիսուսի Քրիստոսի անուամբը, ինչպէս ինք կը գրուցէ[1]։ Ս. Մարտիրոսները հին ժամանակները, ինչպէս կը վկայեն Ս. Կիպրիանոս եւ Տերտուղիանոս, կը խնդրէին ու կ'ընդունէին շատ անգամ՝ Եկեղեցւոյ օրինաւոր Հովիւներէն, որ շնորհեն այսպիսի պատիժ մը այն դժբախտներուն, որոնք տանջանքներու վախէն Ս. Հաւատքը ուրացեր էին հալածանաց ատեն, եւ ետքէն ապաշ-

[1] Բ. Կորն. Բ.

խաւարութեան դարձած էին. յաջորդ ժամանակներու մէջ՝ Նիկիայի, Անկիւրիայի եւ Լաւոդիկիայի ժողովքները կը ցուցընեն աւելի խոհեմական ճամբայ մը առ Ներողութիւնները շնորհելու։ Ս. Գրիգորի ատեններէն վեր ծանօթ է Ներողութիւններու գործածութիւնը, զորն որ Բողոքականներէն եւ ոչ մէկը առանց յանդգնութեան կրնայ տարակուսի տակ ձգել։ Ասոնց ամենէն աւելի ուրիշ բան մ'ալ կայ։ Ընդհանուր ժողովքները, որոնք բովանդակ Եկեղեցւոյ անսխալ ձայնն են, նոյնը կը վաւերացընեն շատ եղանակաւ։ Կլարամոնտեան ժողովը Ուրբանոս Բ. Քահանայապետէն կ'ընդունի սուրբ Ներողութիւնները։ Լատերանեան ժողովը՝ Պասկալիս Բ. էն։ Իսկ Լատերանեան մեկալ ժողովը, նոյնպէս Լիոնի ժողովքն ալ, յանդիմանելով զանոնք, որ կը զեղծանէին աշխարհական նպատակներու գործածելով Ներողութիւնները, անոնց արգիւնքը նորէն հաստատեցին։ Կոստանդեան ժողովքին մէջ դատապարտուեցաւ Վիկլէֆ հերետիկոսին մոլորութիւնը, որ Ներողութեանց կը հակառակէր։ Մէկ խօսքով Ս. Եկեղեցին մինչեւ մեր օրերը միշտ այսպիսի ճոխութիւն կամ իշխանութիւն մ'ունեցաւ, եւ նոյնը միշտ գործածեց։ Ահաւասիկ ուր հիմնուած կեցած է Ս. Եկեղեցւոյ իրաւունքը։ Հիմնուած է Ս. Գրքերուն վրայ, հիմնուած է Աւանդութեան վրայ, հիմնուած է անսխալութեան վրայ, զորն որ Յիսուս շնորհեց իր Եկեղեցւոյն իր աստուածային Ներկայութեամբը։



Եւ այս ամենայն բաւական պատասխան ըլլայ անոնց, որոնք չեն ճանչնար Ս. Եկեղեցւոյ իրաւունքները։ Բայց դուք բաւական մի համարիք միայն պահել նոյնները ձեր Հաւատոյ բոլոր հաստատութեամբը, յառաջ գացէք եւ միշտ մէջերնիդ աճեցուցէք այս բարիքներուն յարգն ու համարումը եւ փոյթ եղէք ստանալու երբոր Ս. Եկեղեցին ձեզի առիթ կ'ընծայէ։ Ամէն ժամանակ ճշմարիտ հաւատացեալներու սիրելի էին Ս. Ներողութիւնները։ Եկեղեցւոյ մեծ Սուրբերէն շատերը շատ անգամ պանդխտութեամբ ճամբորդութիւն ըրին թէ՛ Հռոմ եւ թէ Պաղեստին այս հոգեւոր գանձերը ստանալու համար։ Երբ որ Ծայրագոյն Քահանայապետները սկսան շրջանաւ հարիւր տարին մէյ մը եւ ետքէն ամէն յիսուն տարի, եւ վերջապէս ամէն քսանուհինգ տարի մէյ մը Յոբելեանները հրատարակել, բովանդակ Քրիստոնեայ ժողովուրդք շարժեցան, եւ գետ կը յիշատակուի որ ժամանակ մը մինչեւ հարիւր հազար հաւատացեալք ամէն օր կը մտնէին ու կ'ելլէին Հռոմայ դռներէն, ամէնքն ալ հեռաւոր երկիրներէ գալով Ներողութիւնն ստանալու համար։ Այս էր մեր Հարց հաւատքը, թող ըլլայ մերն

ալ եւ իր ժամանակին կը տեսնուի, թէ որպիսի ստոյգ ապահովութեան մէջ է, ով որ կը հանգչի Ս. Եկեղեցւոյ վարդապետութեանցը վրայ։

## ԳԼՈՒԽ ԺԸ.

### Մեթոտականներուն Քուէքերներուն, Ցնցիններուն հաւատքը եւ այլն.

Ներողութեանց առարկէն ետքը՝ յառաջ կ'անցնին Բողոքականները Ս. Եկեղեցւոյ երեսը զարնելու, ինչպէս իրենք կ'ըսեն, կոնդակներու, համառօտագիրներու, անօրինութիւններու, չեմ գիտեր ինչ բանի, վաճառականութիւնները. հոս ալ անվերջանալի աղմուկ մը կը հանեն Հռոմայ դէմ։ Բայց զարմանալին ան է, որ այս դժուարութիւնը հանողները Բողոքականներն են, որոնք աս մասին մէջ անանկ մաքուր ձեռք ունին, որ իրաւցընէ չինութիւն մըն է։

Այն ատուչները, որ կը ջանան զձեզ խաբել, կամ չեն գիտեր ինչեր կը պատահին Նորոգութեան (Բողոքականաց) հպատակ երկիրներու մէջ, կամ եթէ գիտեն, յարդը կը տեսնեն ուրիշին աչքին մէջ, եւ գերանը չեն տեսներ իրենց աչքին վրայ։ Արդ՝ պէտք է գիտնալ որ իրենց մէջ, կը ծախուին կ'առնուին ու կը տրուին իրրեւ վաճառք՝ բարերարութիւնները, ժողովրդապետութիւնները, մատրանապետու-



թիւնները, ինչպէս ուրիշ տեղ ցուցինք, գինւոյ, ձէթի, արջառներու առուտուր կ'ըլլայ։ Անգղիայի մէջ օրագիրներ հաստատուած են, որ կը ծանուցանեն գնուելու եւ ծախուելու բարերարութիւնները, գործակալութիւններ դրուած են, որոնք գին կը կտրեն եւ դաշինք կը դնեն, Կ'առնուն իրարու վրայ կը դիզեն եկեղեցական բարերարութիւնները, եւ ետքը կու տան իրենց կանանցը, որդւոցը, աղջկանցը, քեռիներուն, որ վայելեն այնպիսի շռայլութեամբ, մինչեւ մէկ անգամէն աւելի բողոքական խորհրդանոցը սահման մէջ ձգեց։ Եւ այս ամէն բաներէն ետքը կ'ելլեն սուրբ նախանձաւորութեամբ մը վառուած, Հռոմայ վաճառմանց դէմ կ'աղաղակեն։ Ի՞նչ կ'ըսէք. չէ՞ք լսեր զաղերը, որ արդարութեան պաշտպան կ'ուզեն ըլլալ։

Բայց այս ամենայն մէկդի ձգելով, ան ճշմարի՞տ է, որ Հռոմ՝ այնպիսի առուտուր կ'ըլլայ։ Սուտ եւ ամենասուտ, եւ անհաւատալի ինչ է հոն եղածը։ Հռոմ զանազան պատճառի համար կը դիմեն հաւատացեալները։ Ոմանք իշխանութիւն ընդունելու համար, որ կարող ըլլան արձակուիլ տեսակ մը ամենածանր մեղքերէն, զորոնք ծայրագոյն Քահանայապետն խնամութեամբ իրեն կը վերապահէ, որպէս զի արձակման դժուարութիւնը աւելի ազդեցութեամբ առնէ հաւատացեալները

նոյն մեղքերը չգործելու․ եւ աս առթիս մէջ բոլորովին ձրի է ամենայն շնորհքն. ինչպէս աղէկ գիտեն Քահանայք, որոնք աս շնորհման համար ապաշխարութեան ատենին կը դիմեն, եւ հաւատացեալները՝ որոնք այնպիսի հարկաւորութեան առթի մէջ կը գտնուին։ Մանաւանդ թէ որպէս զի պաշտօնեաներէն մէկը, որուն ձեռքէն պիտ'որ անցնին, գեղծում մը չընէ, մինչեւ թուղթին ճակատին վրայ ձրի տպուած է։ Կը դիմեն Հռոմ, որպէսզի ընդունին սրբոց մարմիններու նուիրական մասունքները, որ ինքն ունի եւ միշտ գետնափոր գերեզմաններու (Քաթակոմբներու) մէջէն կը հանէ, եւ այնչափ փութով ու խնամով կը պահպանէ, որպէսզի իրենց վաւերականութիւնը չկորսնցընեն. բայց հոս ալ, Աստուած չընէ, որ դանկ մ'ալ առնու անոնց փոխարէն, որոնք ի հարկէ ձրի պէտք է բաշխուին. իսկ թէ այս այսպէս է՝ կրնան վկայել հազարաւոր օտարականներ, որ ամէն տարի Հռոմէն նոյն սուրբ մասունքները կ'առնուն միատեղ կը տանին։

Ամենք ալ Հռոմ կը դիմեն շնորհքներ եւ արտօնութիւններ առնելու, որոնք որ ընդհանուր օրինաց բեկում մը կը պատճառեն։ Ինչպէս կը պատահի երբ որ մէկը, օրինակի համար, կ'ուզէ իրեն ընտանեաց համար առանձին մատուռ մը կանգնել, եւ այսպէս ազատ ըլլալ ժողովրդապետական եկեղեցին երթալէն։ Այսպէս կը պատահի, երբոր մէկը կ'ուզէ ամուսնանալ արենակցութեան աստիճանի մը մէջ, որ արգիլուած է եկեղեցական օրէնքներէն։ Արդ՝ Հռոմայ ընթացքը այսպիսի առիթներու մէջ այս է։ Եթէ խնդրող անձը աղքատ է եւ ճշմարիտ հարկաւորութիւն ունի տնօրինման, կամ դայթակղութիւնը դադրեցընելու, կամ մեծ օգուտ մը յառաջ բերելու համար, Ս. Եկեղեցին ամենայն գթութեամբ կը վարուի եւ այս շնորհքները կը տրուին առանց եւ ոչ ստակ մը վճարուելու, եւ ասիկայ այնչափ շատ անգամ կը պատահի որ այսպիսի տնօրինմունքներն առանձինն անուամբ ընդ կերպարանաց աղքատաց շնորհեալ կը կոչուին։ Եթէ այն տնօրինմանց հարկաւորութիւն մը չկայ, հապա միայն խնդրողին առանձնական մխիթարութեանը համար է, ան ատենը Ս. Եկեղեցին սովորութիւն ունի տուգանք մը դնել յառաջ քան շնորհելը։ Եւ ասիկա խիստ իմաստուն կարգադրութիւն մըն է շատ պատճառաւ։ Եթէ հասարակաց օրէնքներն ամէն վայրկեան բեկանելու ըլլան, շուտով կ'եղծանին եւ վնաս ընդհանուր կ'ըլլայ։ Զոր օրինակ եթէ ամէն ընտանեաց թոյլ տրուէր առանձնական մատուռ կանգնելու, ո՞ւր կը մնար հասարակաց աստուածային պաշտօնը, ո՞ւր բարի օրինակը զոր մեծամեծք պէտք է որ տան ժողովրդեան իրենց ներկայ գտնուելովը ժողովրդապետական հասարա-

կաց հանդէսներուն։ Եթէ ծանր պատճառ մը չխնդրուէր, այլ բաւական ըլլար միայն առանձնական գիրութիւնը, որ ամէնքն ալ կարող ըլլային ամուսնանալ այն աստիճաններու մէջ, որոնք իմաստութեամբ արգելուած են, որչափ անօրէնութիւններ չէին պատահեր ընտանեաց մէջ։ Ս. Խորհուրդը կը կորսնցընէր իր յարգը, անական ընկերութիւնն իր ապահովութիւնը. ճամբայ կը բացուէր հազար ու մէկ անիրներու, զորոնք աւելի դիւրին է իմանալը քան մեկնելը։ Ուր որ տուգանքն ու պատիժը, որ կը դնէ Ս. Եկեղեցին, հաւատացելոց շատերը ետ կը ձգէ այսպիսի աղաչանքներ ընելէն, եւ հասարակաց օրէնքը իր զօրութեան մէջ կը պահուի։ Ուրեմն ոչ վաճառում է եւ ոչ ալ առուտո՛ւր անօրինութիւն մը որ կը տրուի այսպիսի պայմաններով, այլ փոխարէն մըն է որ կը պահանջուի շնորհք խնդրողէն, որպէս զի չըլլայ թէ շնորհքը խիստ հասարակ բան մ՚ըլլալով՝ եղծանէ օրէնքները, որոնք պէտք չեն եղծանիլ ընդհանրապէս։

Ուրիշ կողմանէ որչափ իրաւացի է, որ տուանք ալ ըլլայ շատ պատճառներու համար։ Նախ՝ այսպէս պատշաճ է, վասն զի արդար է, որ առաքելական աթոռը, որն որ այնչափ կրկին ծանրութիւններ ունի, այնչափ ժողովքներ, այնչափ պաշտօնատարներ պէտք է պահէ որչափ կը պահանջէն բոլոր աշխարհքիս եկեղեցական



հարկաւորութիւնները. մէկ կողմանէ ալ դրամական օգնութիւնն ունենայ, որ կարող ըլլայ հարկաւորութեանց դարման տանիլ, եթէ չ՚ուզեր մէկն ըսել, թէ Հռոմ իրեն ծառայող պաշտօնատարները հոգալէն զատ՝ պարտաւոր է նաեւ զանոնք դարմանել, որոնք բոլոր աշխարհքիս եկեղեցական ընթացքին համար հարկաւոր են։ Արդար է այնչափ աւելի եւս, որչափ որ այն պաշտօններուն մէջէն շատերուն կրնան բաղձալ եւ իրօք ալ հասած են մարդիկ աշխարհքիս ամէն կողմանէ։ Արդար է, վասն զի այս եղանակաւ ամէնքն ալ ընդհանրապէս անոնց պահպանութեանը օգնական չեն ըլլար. հապա անոնք մասնաւորապէս, որոնք որ օգուտ մը կը քաղեն. եւ արդարութիւնը կը պահանջէ, որ ով որ շնորհք մը կը վայելէ, ծանրութիւնն ալ կրէ, որ անոր հետ կից է։ Այսու ամենայնիւ այս ամէն տուգանքները որ կը ժողվին, այնչափ քիչ են, որ եթէ ծայրագոյն Քահանայապետը իր ընդհանուր ողորմածութեամբը պիտոյից օգնութեան չհասնէր, իրաւցընէ իրենց պարէնը չէին կրնար գտնել այն պաշտօնատարները, որոնք այնպիսի գործողութեանց մէջ կ՚աշխատին։ Բոլոր Եւրոպա հազար անգամ տեսած է տէրութեանց վիճակագրութիւնը, եւ շատ աղէկ գիտէ որ անգղիական ստատ եպիսկոպոս մը, որն որ տասուգին բան մը չի գործեր. ինչպէս նոյն իսկ Բողոքա-

կանոնները կը զրուցեն, կը փայլէ տասն ան-գամ աւելի եկամուտ մը, քան թէ Հռո-մէական Կարդինալաց ժողովք մը։

Կը մնայ քանի մը խօսք ալ ըսել կոն-դակներու, կամ Եկեղեցական բարերա-րութեանց հանդերձաւորութեան համար Հռոմ խրկուած դրամներուն վրայ։ Քրիս-տոնեայք, որ կը ճանչնան Ս. Եկեղեցւոյ վարդապետութիւնը, աղէկ գիտեն, թէ Ծայրագոյն Քահանայապետն ընդհանուր մատակարար է Ս. Եկեղեցւոյ ստացուա-ծոց, եւ թէ ուրիշ կերպ ալ չի կրնար ըլլալ. թէպէտեւ քանի մը Փեպրոնեան, Վանէսփեննեան, Բողոքական օրէնսգէտ-ներ Ս. Եկեղեցւոյ ամէն իրաւունքները աշխարհական տէրութեանց կ'ընծայեն, զո-րոնք Աստուծոյ տեղ դրած են։ Եկեղե-ցւոյ ստացուածները Յիսուսի Քրիստոսի նուիրուած տուչութիւններ են անոնցմէ, որոնք օրինաւոր տէրերն էին. եւ ցորչափ որ սեպհականութեան իրաւունքը կը զօ-րէ, ցորչափ որ գողութիւնը անպատիժ չի կրնար մնալ, մինչ առաքելական աթոռին պիտ'որ վերաբերի անոնց գործածութիւ-նը սահմանելը ստացուածներուն որպիսու-թեան համեմատ։ Արդ՝ աս խնդրոյս մէջ ի՞նչ կ'ընէ Հռոմայ Քահանայապետը։ ինչ որ խոհեմ ընտանեաց հայր մը կ'ընէ. այս-ինքն է՝ այնպէս կը տրամադրէ իր տնտե-սութեան յանձնուած ստացուածքները, որ կարող ըլլայ ամէն պիտոյից գիմացն



տանել։ Ուստի երբոր հարկաւոր կը հա-մարի, կամ ընդհանուր Եկեղեցւոյ կառա-վարութեան մէջ ծառայող պաշտօնատէր-ներուն սննդեանը, կամ աղքատ Եկեղե-ցիները հոգալու, կամ Առաքելութիւննե-րը պահպանելու, կամ Կղերանոցներ կան-գնելու, կամ աստուածային պաշտաման ուրիշ գործքերը տանելու համար, այն ստացուածքներէն քիչ մը տուրք առնել, ուրիշ բան չ'ըներ, բայց եթէ իր գերագոյն պաշտաման պարտքը կատարել, եւ նոյն ստացուածներուն ուղիղ կիրառութիւնը ի գործ դնել, որոնք ըստ սուրբ Կանոնաց, աղքատներու ժառանգութիւն, մեղաց գներն են։ Իրաւ է, որ ոմանք չեն հաւա-տար թէ կարելի բան է տակ տրամադրել առանց անմիջապէս ձեռքին վրայ կպչելու. (գուցէ անիկա իրենց առանձնական փորձ-առութիւնն ըլլայ)· բայց Ս. Եկեղեցին Յուդայի վրայ հիմնուած չէ, այլ Առա-քելոց վրայ, որոնք նոյնը աղքատաց եւ այ-րիներուն համար կը գործածէին, եւ մինչ ոտքի տակ առած էին։

Վերջին դժուարութիւն մ'ալ աս նիւ-թիս մէջ անկից կը հանեն, որ տակով, ինչպէս իրենք կ'ըսեն, անօրինում կը տրուի ծոմ ու պահք պահելէն ազատ ըլլալու. ուստի որչափ որ կոկորդնին ձայն ունին, կ'աղաղակեն թէ անիրաւու-թիւն է, սէր չկայ։ Լաւ է, բայց գիտ-նալը որ հոս ալ զձեզ շատ եղանակաւ կը

խարեն։ Ուրեմն միտ դրէք նախ՝ որ հարուստն ու աղքատը Եկեղեցին ըրած չէ. հապա թէ՛ մէկն ու թէ՛ մէկալը Տէրն ըրած է իր ամենասուրբ վախճաններուն համար. Երկոցունց արարիչն է Տէր[1]։ Որպէս զի այս անհաւասարութեան մէջ այլեւայլ առաքինութիւններն երեւան. աղքատներու վրայ խոնարհութիւն, համբերութիւն, հպատակութիւն. հարուստներու վրայ սէր, ողորմածութիւն, բարերարութիւն, եւ այսպէս ամէնքն ալ ոմանք աս եւ ոմանք ան ճամբով երանութիւնն ստանան։ Միտ դրէք երկրորդ՝ որ Ս. Եկեղեցին մայր է թէ՛ ասոնց եւ թէ՛ անոնց, թէ՛ աղքատներուն եւ թէ՛ հարուստներուն, թէ՛ պզտիկներուն եւ թէ՛ մեծերուն. եւ թէ Յիսուսէն սորվելով՝ մանաւանդ գութ մ՚ունի աղքատներուն, այսու ամենայնիւ մեծ հոգ ունի ամենուն փրկութեանն ալ։ Ասոր համար զամէնքը բարեգործութեան կը յորդորէ. բայց որովհետեւ մեծ է իր ընտրողութիւնը, ամէն մէկուն ան բանը կը հրամայէ, որ իրեն կարելի է։ Եթէ աղքատները ողորմութիւն ընելու յորդորէր, նոյնը անոնցմէ պահանջելու ըլլար, դուք ի՞նչ կ՚ըսէիք։ Իրաւամբ պատասխան կու տայիք, թէ այնպիսի բան մը կ՚ուզէ, զորն որ չէք կրնար ընել, թէ ընտրողութիւն չունի։ Այսու ամենայնիւ երբ որ Եկեղեցին աղքատները կը յորդորէ խոնար-

[1] Լատ. Utriusque operator est Dominus.



հութիւն ընելու, երբոր իրենց քաջալերութեան համար կը յիշեցնէ թէ Յիսուս ալ աղքատ եղաւ, եւ աղքատները երանելի կոչեց, մէկալ կողմանէ բարի գործքերը իրենց կը թեթեւցնէ, մինչեւ նաեւ շատ անգամ աղքատութիւննին մտածելով՝ զիրենք թէ՛ ծոմէ եւ թէ՛ պահքէ ազատ կ՚ընէ։ Իսկ հարուստները տարբեր վիճակի մէջ են։ Եկեղեցին իրենց նայելով ի՞նչ պէտք է ընէ։ Զիրենք կը յորդորէ որչափ կրնայ ողորմութեան եւ սիրոյ գործքերը կատարելու։ Եւ զիրենք աւելի ազդեցութեամբ առ այս յօժարեցնելու համար, կը շնորհէ նաեւ ինչպէս վերն ըսինք, քանի մը դէպքերու մէջ Սուրբ ներողութիւններ, եւ երբեմն երբեմն ողորմութեան գործքերը կատարելնուն համար ուրիշ ծանրութիւնները իրենցմէ կը թեթեւցնէ, ինչպէս են ծոմերն ու պահքերը։ բարի գործքերու փոփոխութիւն մը ընելով, եւ յայսմ՝ շատ պատճառաւ մեծ զգօնութիւն կը ցուցնէ։

Ասով կը յառաջացընէ նոյն իսկ աղքատներուն օգուտը, որոնք որ իր աչաց բբերն են, գրեթէ ստիպելով հարուստները աղքատներուն համար առատատուր եւ առատաձեռն ըլլալու։ Քաղցրութեամբ կը շարժէ հարուստները կատարել իրենց վիճակին անանօրինելի պարտաւորութիւնը, այսինքն է իրենց աւելորդը աղքատաց բաշխելու, ինչպէս իրենց կը հրամայէ Տէրն

մեր Յիսուս Քրիստոս։ Մեծ աղքատու-թեամբ զիրենք ետ կը քաշէ աս աշխարհ-քիս զգալի բարիքները սիրելէն, որն որ ա-մենէն վտանգաւոր ժայռն է, որուն կըր-նան զարնուիլ, եւ այսպէս ալ խոհեմա-կան անտեսութեամբ կը հոգայ ճշմարիտ բարին աղքատներուն, հարուստներուն եւ ամէն եկեղեցական ընկերութեան։ Հիմա մե՞ր է Բողոքականներուն երազած առու-տուրն ու վաճառքը։

Վերջապէս ամենայն անկեղծութեամբ աս ալ ըսեմ ձեզի, որ մինչեւ կ՚ամչնամ այս ամէն դժուարութիւններուն պատաս-խան տալու պարտաւորուելուս վրայ։ Հարկ է բոլորովին անբնական որդի մ՚ըլլալ, մօրերնէս ընչից գործածութեան համարը պահանջելու որ իր անտեսութեանը յանձ-նուած են։ Եւ ի՞նչ. ո՞ւր է աւելի մեր յարգը որ ունինք Եկեղեցւոյ՝ Յիսուսի ան-արատ հարսին։ Ո՞րն այ Քրիստոնեայ մը հաւատայ, որ անիկա այնչափ քիչ յարգէ Յիսուսէն իրեն ձգուած բարիքները, այն-պէս որ քիչ մը ստակի շահուն համար զանոնք անարգութեան մատնէ։ Միթէ Յիսուսի որդիքն են անոնք, որ այսպիսի անարգ թշնամանք մը մօրերնուն երեսը կը զարնեն։ Ո՛հ, չեմ գիտեր՝ եթէ գերեզ-մաններէն յարութիւն առնելու ըլլային այն վեհանձն Քրիստոնեաները, որոնք Եկե-ղեցւոյ ձեռքը կը յանձնէին իրենց ունե-ցածը, արդեօք կրնայի՞ն ճանչնալ այսպի-



սիները իբրեւ իրենց հոգւոյն եւ իրենց հաւատքին ժառանգները։ Չեմ գիտեր, թէ արդեօք մօրերնէն կրնայի՞ն անցը-նել, որ անոնք ալ ի հարկաւորութեան արիւննին Յիսուսի Քրիստոսի համար պատրաստ են թափելու, որոնք որ այնչափ լրբութեամբ կը չարախօսեն քանի մը ստակ երբեմն Յիսուսի համար կու տան։ Ո՛ր եւ իցէ առթի մէջ ըլլայ, ստուգեցէք այսպիսի հրէշները, եւ անկից ալ առիթ առէք ձեզի օրէ օր աւելի եւս սիրելու այն Եկե-ղեցին, որուն դէմ հնար չէ հակառակիլ, առանց անմիջապէս ամօթալից պղլանդա-կութեանց մէջ իյնալու։

## ԳԼՈՒԽ ԺԲ.

Եկեղեցականներուդ խօսքերուն, թէ Քահա-նաներ Քահանաներէն հնարուած է շահաւորու-թեան համար։

Բողոքականները երկրիս վրայ ապրող հաւատացեալները չփոթելէն ետքը, եթէ կարող էին՝ փորձել կ՚ուզէին նաեւ զա-նոնք վրդովել, որոնք արդէն անդին աշ-խարհքն անցած են, եւ կ՚ուզէին զանոնք ալ Եկեղեցւոյ օգնութիւններէն, պատա-րագներէն եւ աղօթքներէն զրկել։ Անոր համար կը սորվեցընեն, թէ Քաւարան չկայ, թէ հաւատացեալները մեռածնուն պէս կամ Արքայութիւն կ՚երթան, կամ դժոխք կը թափին. եւ թէ աս

վարդապետութիւնը ուրիշ բանի համար քահանաներէն չէ հնարուած, բայց եթէ վասնզի իրենց շահախնդրութեանը շատ օգտակար էր։ Արդ՝ գիտենք որ աս ստութիւններով, զոր կը տարածեն, երեք մեծամեծ չարիք կը գործեն. առաջինուն մէջէն կը վերցընեն հաւատքը, զոր ունիք այսպիսի հանդիսաւոր ճշմարտութեան մը վրայ Եկեղեցւոյ մէջ. կը զրկեն խեղճ հաւատացելոց հոգիները այն օգնութիւններէն, որ իրենց շատ նպաստաւոր են, եւ չարաչար կը զրպարտեն Քրիստոնէական Քահանայութիւնը։

Տեսէք ստոյգ է թէ չէ։ Կ'ըսեն թէ Քաւարան չկայ. բայց Ս. Գիրքը, որուն որ իրենք խօսքով այնչափ յարգութիւն կը ցուցընեն, բոլորովին հակառակը կը սորվեցընէ. Ս. Եկեղեցին, որ այնչափ հնութիւն ունի, ինչպէս վերն ըսի, միշտ աւանդեց թէ կայ. Սուրբ վարդապետները ոչ միայն նոյնը պաշտպանեցին, այլ նաեւ փախցան ալ. անթիւ յայտնութիւններն որ եղան, չէ թէ գձուձ կանանց՝ այլ մեծ սուրբերուն, նոյնը կը հաստատեն, եւ այս ամենայն քիչ մ'աւելի չ'արժեր արդեօք քան թէ իրենց հեգնութիւնները, ծիծաղները եւ հայհոյութիւնները։ Ս. Գրքին մէջ յայտնի կը զրուցուի, թէ Յուդայ Մակաբէ տասներկու հազար սատեր արծաթ խրկեց Երուսաղէմ, որպէսզի պատարագ մատուցանեն անոնց համար, որոնք պատե-



րազմի մէջ մեռած էին. ինչու որ, այսպէս կ'ըսէ Սուրբ Գիրքը. Սուրբ եւ բարեպաշտ խորհուրդ մըն է մեռելոց համար աղօթելը, որպէսզի իրենց մեղքերէն արձակուին[1]։ Արդ՝ եթէ Քաւարան չկայ, ի՞նչ կ'օգնէ մեռելոց համար աղօթելը։ Անոնք որ արքայութեան մէջն են՝ ալ հարկաւորութիւն չունին, անոնք՝ որ դժոխք գացեր են, ալ ամենեւին դիւրութիւն չեն կրնար ընդունիլ։ Ուրեմն յայտնի է թէ Քաւարան կայ։ Բողոքականները որպէսզի ապրծին այս նեղութենէ, չեն գիտեր ինչ զրուցեն, ուստի կ'ուրանան թէ այն գիրքն Աստուածաշունչի մաս ըլլայ. բայց Ս. Օգոստինոս, Ս. Կիպրիանոս, Ս. Ամբրոսիոս եւ բովանդակ Կաթողիկէ Եկեղեցին, որ ամէն ատեն ամէն դար միշտ նոյնը Աստուածաշունչի մաս ընդունեցաւ, քիչ մը աւաելագոյն ծանրութիւն ունի քան անոնց խօսքը։ Բայց Նոր Կտակարանն ալ Քաւարանը յայտնի կը հաստատէ։ Տէրն Մեր կը սորվեցընէ, թէ Ով որ Հոգւոյն Սրբոյ դէմ խօսի, Թողութիւն պիտ'ոչ գտնէ ոչ աս աշխարհիս մէջ եւ ոչ անդին աշխարհն[2], ուրեմն կը հետեւցընէ Ս. Օգոստինոս, պէտք ըլլան մեղքեր, որոնք անդին աշխարհքը պիտ'որ քաւուին։ Չեն թողուիր երկինքը, վասն զի հոն արատաւոր բան չի մտներ. չեն թողուիր դժոխքը, վասնզի հոն ալ փրկութիւն չկայ. ինչ կը մնայ.

[1] Բ. Մակ. ԺԲ. [2] Մատթ. ԺԲ.

եթէ ոչ քաւարանը։ Նաեւ Ս. Պօղոս Կորնթացւոց թղթին մէջ կ'ըսէ թէ ոմանք պիտ'որ փրկուին, բայց այնպէս, իբր թէ հրովին անցնելով[1]։ Փիլիպեցւոց կը գրէ, թէ Յիսուսի անուանը երկրպագութիւն պէտ'որ ընեն երկինքը, երկրի վրայ եւ ստորներքին կողմերը[2]. եւ դժոխքին մէջ, ուր որ դատապարտեալները կը գտնուին, ստուգիւ ոչ մը յարգութիւն կ'ընծայէ Յիսուսի անուանը, ուրեմն քաւարանի մէջ փակուած հոգիներն են, որ զինք կը մեծարեն։ Նոյն դարձեալ յայտնի է որ ամենեւին արատաւոր կամ պիղծ բան մը երկինք չի մտներ, ինչպէս կը սորվեցնէ Ս. Յովհաննէս[3], եթէ ստոյգ է, որ նաեւ արդարները շատ, թէ եւ փոքր պակասութիւններու մէջ կ'իյնան, ինչպէս կ'ուսուցանէ Միքիա[4]. յայտնի է նոյնպէս որ տեղ մ'ալ պէտք է ըլլայ, ուր կարող ըլլան մաքրուիլ անոնք, որոնք ժամանակ կամ փոյթ չունեցան կեանքերնուն մէջ նոյնն ընելու։

Նոյն իրք ասանկ ալ սորվեցուց Ս. Եկեղեցին, ինչպէս կը ստուգեն Սուրբ Վարդապետք իրենց վաւերական վկայութեանը։ Հոս տեղս մէկ քանին միայն առջեւնիդ դնեմ, որպէս զի տեսնէք, թէ որչափ սուտ եւ անիրաւ են այն ողորմելիները որոնք կ'ըսեն թէ քաւարանը քահանաներու գիւտ մըն է։ Ս. Եփրեմ իր հոգեւոր

[1] Ա. Կորնթ. Գ.
[2] Փիլիպ. Բ.
[3] Յովհ. ԻԱ.
[4] Միքիա Է.



կտակին մէջ աղօթք կը խնդրէ իր հոգւոյն հանգստեանը համար։ Կոստանդիանոս Կայսրը ուզեց Եկեղեցւոյ մէջ թաղուիլ, որպէս զի հաւատացեալները զինքն յիշեն եւ իրեն համար աղօթեն, եւ այս բաղձանքն ունին մեր ատեններն ալ եռանդնոտ քրիստոնեաները։ Ս. Յովհաննէս Ոսկեբերան ազդեցութիւն կ'ընէ հաւատացելոց, որ եթէ անօգուտ են ննջեցելոց՝ կենդանեաց լալն ու ողբալը, ստուգիւ օգտակար են ողորմութիւններն ու աղօթքները։ Ս. Հերոնիմոս կը գովէ զՊամմաքիոս, որ փոխանակ իր կնոջը գերեզմանին վրայ ծաղիկ սփռելու, աղքատներու ողորմութիւն բաշխեր էր անոր հոգւոյն նպաստելու համար։ Ս. Օգոստինոս կը յիշէ պատարագները, որ մատուցուեցան իր Մոնիկա մօրը համար, եւ Հերետիկոսութեանց Գրքին մէջ կը գրէ թէ Աերիոս առաջին հերետիկոսն եղաւ, որ զքաւարանը ուրացաւ։ Արդ՝ եթէ այս ամէն մեծ սուրբերը եւ ուրիշ շատերն ալ՝ զորոնք կրնայի յառաջ բերել, ամէնքն ալ միաբերան կը յանձնեն մեզի ննջեցելոց համար աղօթք ընել, ի՞նչ յանդգնութիւն է, որ այս նոր ուսուցիչները կ'ուրանան քաւարանի գոյութիւնը։

Բայց՝ չէ թէ միայն սատանայական յանդգնութիւն մըն է ասիկա, այլ նաեւ չլսուած անգթութիւն մը այն խեղճ հոգիներուն դէմ։ Ինչու որ՝ առանց հոս

տեղս քննելու, թէ ի՞նչ է իրենց կրած պատիժը, ստոյգ է որ սոսկալի է կրածնին, եւ Աստուած միայն գիտէ որչափ ատեն, որովհետեւ ամենափոքր յանցանքի մը համար ալ պիտ՚որ հատուցանեն։ Արդ ով որ վայրկեան մը կը մտածէ, թէ ոչ միայն Քրիստոնէից հոգիներն են, որ մեզի հետ նոյն հասարակաց Հաւատքը ունեցան, որ Յիսուսի շնորհաց մէջ մեռան, որ յաւիտենական փառաց մէջ, ինչպէս կը յուսանք, մեր ընկերները պիտ՚որ ըլլան. հապա միանգամայն անոնց մէջ մեր ծնողաց, մեր բարեկամներուն, մեր խեղճ հօրը՝ մեր խեղճ մօրը, գուցէ երկան մը եւ գուցէ հարսի մը հոգիները կը գտնուին, որոնք մեզի աս երկրիս վրայ այնչափ սիրելի էին, եւ հիմա մեզմէ քիչ մը օգնութեան կը սպասեն. ով որ կը մտածէ, կ՚ըսեմ, այս ամենայն, ինչպէս պիտ՚որ չսոսկայ զիրենք բոլորովին անյիշատակ ձգելու այնպիսի ամբարիշտ պատճառանքով, թէ չկայ Քաւարան։ Հաւատքն ու սիրտը պէտք է կորսնցուցած ըլլայ մէկը այսպիսի չարեաց մէջ գլորելու համար։ Աստուգիւ շատ Բողոքականներ մեր օրերը, սրտերնուն զգածման եռանդեան երթալով՝ այս ճշմարտութիւնն ընդունելու հասած են, որպէս զի մխիթարութիւն ունենան իրենց ծնողաց եւ սիրելեաց համար աղօթելու. եւ մենք պիտի համբերե՞նք, որ այս մոլորութեան ուսուցիչները, կողոպտեն մեզմէ այն գեղեցիկ



մխիթարութիւնը՝ զոր Հաւատքը մեզի կ՚ընծայէ։

Բայց ի՞նչ պատճառ ունին ուրեմն այս ճշմարտութիւնն ուրանալու. գոնէ ծանուցանէին մեզի։ Ահաւասիկ ես ձեզի յայտնեմ։ Յառաջ կը բերեն նախ ժողովողին խօսքը թէ. Փայտը որ իյնայ որ կողմը, Թէ հարաւ եւ թէ հիւսիս, հոն կը մնայ. եւ այն խօսքը Ս. Պօղոսի թէ Երանի՜ անոնց որոնք ի Տէր կը մեռնին, հանգչին իրենց աշխատութիւններէն դէպ՚ի հանգիստն. եւ կը պնդեն թէ աս խօսքերէն Քաւարանի վարդապետութիւնը կը ջնջուի. իբրու ըսելու թէ ուրիշ լաւագոյն պատճառ չունէին, կրնային ի յաւիտեան լռել։ Ինչու որ այդ խօսքերը Քաւարանի հետ ի՞նչ յարաբերութիւն ունին։ Ժողովողին խօսքերը կը նշանակեն, թէ անդիի աշխարհք ուրիշ բան չկայ, բայց եթէ կամ յաւիտենական փրկութիւն կամ դատապարտութիւն, եւ ասիկա ո՞վ երբեք ուրացաւ։ Ասիկա հոգւոց վերջնական վիճակն է. մի՞թէ այն հոգիները, որոնք նախ Քաւարանէն կ՚անցնին մաքրուելու համար՝ անմիջապէս յաւիտենական փրկութեան չե՞ն հասնիր։ Ս. Պօղոսի խօսքերը կը նշանակեն այն խիստ մխիթարական ճշմարտութիւնը, թէ ի Տէր ննջողները իրենց աշխատութիւններէն պիտ՚որ հանգչին։ Այո. բայց եթէ անոնց մէջ ըլլան այնպիսիներ ալ, որոնց հարկ է քիչ մը ատեն մաքրուիլ. ալ իրենց համար ստոյգ պիտ՚որ չըլ-

լո՞ր. թէ անկից հանգստեան կը հասնին։
Միթէ Ս. Պօղոս ըսա՞ւ որ ամէնքն ալ
շուտ մը հանգստեան կը հասնին։ Բայց կը
հաւատա՞ք արդեօք. այս մնոտի ու չնչին
պատճառներն իրենց ամենէն զօրաւորներն
են, որ յառաջ կը բերեն Քաւարանն ու-
րանալու։ Ստուգիւ վրանիդ կը ծիծաղին
ասոնք, երբ իրենց մոլորութիւնները ձեզի
կը ծախեն։

Թեպէտեւ չէ թէ մենք, քա՛ւ լիցի,
պատասխան կու տանք, հապա քահանա-
ներն են, որ ձեզի այդ յիմարութիւնները
կը սորվեցընեն, վասն զի անոնք են, որ
Քաւարանին հրոյն վրայ (իրենց խօսքերն
են) պտուկնին կ՚եռացընեն։ Իրաւ որ եթէ
ես ալ ուզէի յիմարին ըստ իւր յիմարու-
թեանը պատասխան տալ, կրնայի ըսել
թէ Աստուած այդ սրբապիղծները չէ թէ
Քաւարանին, այլ ուրիշ կերպ հրոյ մը
վրայ պիտի եռացընէ։ Կրնայի նաեւ ցու-
ցընել, թէ որչափ վայելուչ է աս եղա-
նակաւ խօսիլը անոնց, որոնք իբրեւ Յի-
սուսի Քրիստոսի առաքեալները կ՚ուզեն
երեւալ. բայց այս ամենայն մէկդի ձգե-
լով, ես իրենցմէ ամենէն յառաջ աս կը
խնդրեմ. ի՞նչ կը վաստըկին Քահանաները
Քաւարանէն։

Կաթողիկէ Եկեղեցին կ՚ուսուցանէ,
թէ Քաւարանի հոգւոց կրնայ օգնութիւն
ըլլալ աղօթքներով, Պատարագ տեսնե-
լով, ծոմապահութիւններով, ողորմու-



թեամբ, եւ ամէն տեսակ բարի գործքե-
րով։ Հիմայ ի՞նչ կը վաստըկին քահանա-
ները եթէ դուք կ՚աղօթէք. եթէ դուք
Պատարագ կը տեսնէք, եթէ դուք ծոմա-
պահութիւն կ՚ընէք, եթէ դուք ողորմու-
թիւն կու տաք, եթէ դուք զձեզ կը մա-
հացընէք, կամ՝ զձեզ կը վարժեցընէք բա-
րիք գործելու։ Ո՞հ ըսէք, ի՞նչ վաստակ ու-
նին ասոնց ամենուն մէջ քահանաները։
Եթէ ստոյգ ըլլար որ իրենք հնարած են
Քաւարանը շահերնին փնտռելու համար,
ձեզի երբեք կը սորվեցընէին հոգւոց օգուտ
ընելու համար, այնչափ այնչափ եղանակ-
ներ, որոնք իրենց ամենեւին պտուղ մը
չեն տար։

Բոլոր իրենց շահը պիտ՚որ ըլլայ մինակ
պատարագներ մատուցանել, եւ աստուա-
ծային պաշտօնները երգել կամ՝ կատա-
րել։ Բայց նախ եւ առաջ, ո՞վ կը ստիպէ
հաւատացեալները, աս եղանակաւ հոգւոց
օգնութեան հասնելու, միթէ իրենք տէր
չեն ընտրելու վերը յիշուած այնչափ մի-
ջոցները։ Բայց սակայն եթէ բարեպաշ-
տական գործք մը կատարուելու ատեն եր-
բեմն քահանայից ալ օգուտ մը անկից ըլ-
լալուն համար՝ անպատեհ ըլլար նոյն գործ-
քը կատարելու յորդորելը, ան ատենը աշ-
խարհքիս վրայէն ամենեւին առաքինու-
թեան յորդորը պէտք էր վերցընել։

Ինչու որ գրեթէ ամէն բարի գործքե-
րու մէջ, որուն մէկը զընկերը կը յորդորէ,

մէջտ յորդորողին ալ օգուտ մը կը գըտնուի։ Սկսելով իշխանէն որ հպատակին հնազանդութիւն կը քարոզէ, մինչեւ գեղացին, որ իր մշակէն նոյնը կը պահանջէ, ամէնքն ալ ատոնց մէջ իրենց օգուտը կը գտնեն. ուրեմն ա՛լ պէտք չէ հնազանդութեան յորդորել, թէպէտեւ նոյնը այնչափ յանձնեց մեզի Յիսուս Քրիստոս։ Այրը կարող պիտ'որ չըլլայ կնիկը քաշուած կենալու յորդորել, ինչու որ պիտ'որ ըսուի, թէ իր դիւրութեան համար կ'ընէ, վասն զի նախանձոտ է։ Հայրը կարող չըլլայ պիտ'որ յանձնել որդւոյն որ չմսխէ, վասնզի պիտ'որ ըսուի, թէ իր օգտին համար է, որովհետեւ շատ ագահ է։ Բայց ան ատեն կրնայ ըսուիլ այն ողորմելիներուն համար ալ, թէ Քաւարանը կ'ուրանան, վասնզի այնչափ ուիշտ ագահ են որ կը վախնան ստակ մը դուրս հանել իրենց խեղճ ննջեցելոցը համար։ Եթէ սա եղանակաւ դիտաւորութիւնը մեկնելը աղէկ է քահանաներու նկատմամբ, ինչո՞ւ աղէկ պիտ'որ չըլլայ նաեւ իրենց զրպարտիչներուն նկատմամբն ալ։ Ասոր ի՞նչ կ'ըսէք։

Այսու ամենայնիւ՝ եթէ քահանաները ողորմութենէ ժամանակաւոր օգուտ մը քաղեն, անգամ մը աղէկ մտա գրեք եւ ատոնց ալ իմացուցեք, խիստ արդար է որ սա օգուտն ունենան։ Անոնք ալ պէտք է ապրին։ Մեծ բան։ Արդար կը համարուի որ բժիշկ մը, փաստաբան մը, դատաւոր մը թոշակ ունենայ, վասն զի ան ալ պէտք է ապրի, վասն զի այնչափ տարի աշխատեր, այնչափ ծախք ըրեր է սորվելու իր արհեստը, ուստի պատշաճ է որ ժամանակին վարձքն ալ առնու. իսկ քահանայ մը, որ այնչափ տարիներ ծախեր է ընդունակ ըլլալու ամենաբարձր պաշտօնի աստուածային խօսքը քարոզելու, խորհուրդները մատակարարելու, այն մեծ պատարագը մատուցանելու, իրաւունք պիտ'որ չունենայ, չեմ ըսեր փոխարէն վարձուց, զորն որ չի փնտռեր, այլ եւ ոչ օրըստօրական սնընդեանը։ Հոս ծիծաղականն ու այլանդակը միացեալ են անզգամութեան եւ անօրէնութեան հետ։



Գիտէ՞ք, բուն ճշմարիտ պատճառն ինչ է, որուն համար այնչափ քահանայից դէմ աղմուկ կը հանեն։ Ահաւասիկ յայտնի է։ Չեն կրնար տանիլ քահանաները, վասն զի կ'ատեն այն կրօնքը, որուն անոնք պաշտօնեաներն են։ Չեն ուզեր որ քարոզ տրուի, որպէս զի անհանգիստ չըլլան մեղաց քնոյ մէջէն, ուր ընկղմած են. չեն ուզեր խոստովանանքը, վասն զի չեն ուզեր վարքերնին փոխել, եւ շատ անգամ իրենց ձեռք չի տար որ ուրիշներն ալ վարքերնին փոխեն. չեն ուզեր քահանայական նախանձաւորութիւնը, վասն զի իրենց նենգաւոր խորհուրդները կը պղտորեն, զորն որ չկըրնալով տանիլ, անոնց վրայ իրենց բոլոր

թոյնն ու դառնութիւնը կը թափեն ամէն տեսակ զրպարտութիւններով, եւ ամէն առիթ ձեռք կ'առնեն որպէս զի անոնց անունը կորսեն։ Եւ ասիկա ձեզի բաւած ըլլայ, զձեզ զգուշացընելու համար ամէն իրենց չարախօսութիւններէն։

Արդ՝ մինչեւ հիմա աս գլխուն մէջ ըսածներնուս հետեւութիւնն աս ըլլայ, որ դուք չէ թէ միայն հաստատուն բռնէք Ս. Եկեղեցւոյ վարդապետութիւնը Քաւարանի վրայ, այլ նաեւ հոգի առնուք, զօրանաք եւ ձեռքերնէդ եկածին չափ օգնութեան հասնիք այն խեղճ հոգիներուն։ Որոնք ստուգիւ ապերախտ չեն ըլլար ձեզի, մանաւանդ թէ այն գեղեցիկ հաղորդութեամբ, որ կայ կենդանի հաւատացելոց եւ ննջեցելոց մէջ, անոնք ալ ձեզի համար առանձինն պիտ'որ աղօթեն թէ՛ հիմա, եւ թէ՛ երբ որ կը հասնին Աստուծոյ երեսաց դէմյանդիման տեսութիւնը վայելելու, ինչպէս վկայութիւն կու տան, ամենայն եկեղեցական պատմութիւնները, Սրբոց ամէն վարքերը։ Եւ երբ որ մէկը ձեզի ըսելու ըլլայ թէ չկայ Քաւարան, պատասխան տուէք, ինչպէս որ անգամ մ'ըսաւ բարի մարդ մը այսպէս խօսողի մը, թէ ճշմարիտ է որ չկայ Քաւարան զանիկա ուրացողի մը համար, ինչու որ իբրեւ հերետիկոս մինակ դժոխքի պահուած է։

# ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

### Ա. Հաւատքը կորսնցընելու հետեւութիւնները, եւ ատոնց առջեւն առնելու Եղանակները։

—◆—

## ԳԼՈՒԽ Ա.

Որչափ՛ [illegible]

Ով որ ունի Աստուծմէ այն մեծ շնորհքը Ս. Եկեղեցւոյ մէջ ապրելու, գանձ մը ընդուներ է հոգեւոր բարիքներու, որոնց յարգն ու պատուականութիւնը մեր ըմբռնմանէ շատ վեր է։ Բողոքականները զձեզ Ս. Եկեղեցւոյ գրկէն յափշտակելով՝ կ'ուզեն նաեւ այս ամէն բարիքները ձեզմէ կողոպտել։ Իմ սիրելիքս, վայրկեան մը մտածեցէք վնասին ընդարձակութիւնը եւ ծանրութիւնը, որ կ'ուզեն ձեզի հասցընել, եւ ասիկա բաւական է միայն զձեզ սուրբ սոսկմամբ լեցընելու։

Ով որ սուրբ Եկեղեցւոյ մէջ մտած է սուրբ Մկրտութեամբ, իր պղծութենէն ու տգեղութենէն՝ որ ունէր սկզբնական մեղաց պատճառաւ, մաքրուած ու գեղեցկացած է Աստուծոյ շնորհքովը, որ այն վայրկենին մէջ կը տրուի. Աստուծոյ թշնամի էր՝ անոր բարեկամն եղած է. Արու-

ուկին գերին էր՝ Աստուծոյ որդի եղաւ. անկարող էր յաւիտենական կենաց համար բան մը գործելու, եղաւ ազատ ճշմարիտ ազատութեամբ, որ իրեն կարողութիւն կը շնորհէ արդիւնք վաստըկելու. յառաջագոյն մերկ էր ամէն բարութենէ, եւ լի ամենայն չարութեամբ, հարուստ եղաւ ի Յիսուս Քրիստոս ամենայն պարգեւօք, եւ բարեբախտութեամբ ստացաւ Հաւատոյ, Յուսոյ, Սիրոյ եւ այնչափ ուրիշ առաքինութեանց զգեստը. եւ ան որ ամէն բան կը պակսէ, Աստուծոյ շնորհքով որդի Աստուծոյ ըլլալովը, եղաւ նաեւ ժառանգաւորը Արքայութեան։ Հիմա ահաւասիկ ինչ պիտի՛ որ ընեն ձեզի Բողոքականները, եթէ զձեզ Սուրբ Եկեղեցւոյ գրկէն յափշըտակելու ըլլան. ձեզմէ պիտի՛ որ կողոպտեն այս ամէն շնորհքները. զձեզ պիտի՛ որ մերկացընեն այս ամէն բարիքներէն, եւ գլխաւորաբար յաւիտենական ժառանգութենէ, որ կը յուսաք ի Յիսուս Քրիստոս։

Ս. Եկեղեցւոյ մէջ ընդունելով Դրոշմը, դուք Հոգին Սուրբ առիք, որ կը բնակի ձեր սրտին մէջ իր պարգեւներովը եւ իր շնորհքներովը, որ ձեր միտքը կը լուսաւորէ՝ որպէս զի աղէկ պահպանէք սուրբ պատուիրանները, եւ ձեր սիրտը կը զօրացընէ՝ որ կարող ըլլաք նաեւ դժուարին պարագաներու մէջ, զձեզ ճշմարիտ Քրիստոնեայ ցուցընել Ս. Հաւատքը խոստո-



վանելով։ Բայց եթէ սրտերնուդ մէջէն այն Հաւատքը փրցընելու ըլլան, Հոգին Սուրբ ձեզմէ կը հեռանայ եւ դուք կը զրկուիք այն ամէն շնորհքներէն, որոնց ինքն է մշտնջենաւոր աղբիւրը։

Ցորչափ որ աշխարհքիս վրայ ենք, միշտ մեղաց մէջ կ՚իյնանք, եւ երբեմն նաեւ ծանր մեղաց մէջ, որոնք մահ կը պատճառեն մեր հոգւոյն, զրկելով զմեզ Յիսուսի շնորհքէն։ Արդ ո՞րն է մեր յոյսը, երբ անօրէնութիւններով ծանրացեալ՝ արժանի կ՚ըլլանք դժոխոց։ Ան ատեն Ս. Եկեղեցւոյ մէջ Յիսուսէն հաստատուած խոստովանութեան խորհուրդը մեզի օգնական ունինք. կ՚երթանք Քահանային՝ Յիսուսի Պաշտօնէին՝ կը յայտնենք մեր մեղքերը, որպէս զի Անոր անունովը մեզի թողութիւն շնորհէ. Եթէ տեսնէ Քահանան, որ անկեղծութեամբ եւ բոլոր սրտէ մեղաց վրայ զղջացեր ենք, Յիսուսի իրեն տուած իշխանութեամբը կ՚արձակէ զմեզ եւ թողութիւն կու տայ. եւ Աստուած երկինքը կը թողու մեղքերը, որոնց թողութիւնը քահանան տուաւ երկրիս վրայ ըստ իր անսխալ խոստմանը։

Ո՜հ ինչ մեծ շնորհք է ասիկա, զորն որ Հաւատացեալները կը վայելեն։ Ի՞նչ պիտի՛ որ գար մեր գլուխը որ այնչափ դիւրաւ կը մեղանչենք, եթէ չունենայինք աս մխիթարութիւնը մեր կենաց մէջ, մանաւանդ՝ մեր մահուան ատենը. ուր այնչափ

հարկաւորութիւն ունինք Աստուծոյ հետ հաշտուած ըլլալու։ Արդ, իմ սիրելիքս, պիտ՚որ զրկեն զձեզ Բողոքականներն այսպիսի մեծ բարիքէ մը, ինչպէս է մեղաց թողութիւնը, եւ ձեր սրտէն յափշտակելով այն քաղցր վստահութիւնը, որ կ'ունենաք թողութիւն ընդունած ըլլալնուդ վրայ, որ հիմնուած է Յիսուսի խոստմանց վրայ, անոր տեղը սրտերնուդ մէջ պիտ՚որ տնկեն ամբարտաւան անձնապաստանութիւն մը առանց արդեանց զձեզ փրկելու եւ կամ անդարմանելի յուսահատութիւն մը։

Ան ատենը միշտ վախերնէդ դողաք պիտ՚որ, ինչպէս տերեւները հովէն կը դողան, եւ պիտ՚որ ըսէք, ո՞վ գիտէ թէ թողութիւն առած եմ. ոչ ոք ինծի վստահութիւն մը կու տայ. եւ ամենէն աւելի մահուան ատեն վերջին անձկութեան մէջ պիտ՚որ գտնուիք։ Ո՛վ նենգաւորներ որ կ'ուզեն զրկել զձեզ այնչափ բարիքներէ, այնպիսի կեղծաւորութեամբ։

Սուրբ Խոստովանութիւնը մեզի համար պատրաստութիւն մըն է նաեւ մեծագոյն բարիքներու։ Ապաշխարութեան Խորհրդին մէջ խոստովանութեամբ ու զղջմամբ՝ Յիսուսի անգին արեանը մէջ մաքրուած ըլլալէն ետքը, կը մերձենանք Ս. Հաղորդութեան Խորհրդին զՅիսուս ընդունելու։

Հո՛ս անկարելի է ըստ մասին իսկ յայտ-



նել այն շնորհքները, զորոնք մեր բարեգութ փրկիչը՝ Յիսուս մեզի առատութեամբ կը շնորհէ։ Ինք կու տայ մեզի անատեն իր Աստուածային Մարմինը, իր անգին Արիւնը, իր ամենասուրբ Հոգին, իր անճառելի Աստուածութիւնը. եւ այսպէս զմեզ զամէնքս ալ իրեն հետ միացընելով կը լեցնէ զմեզ ամէն տեսակ շնորհքներով, որ յաղթենք աշխարհքիս փորձութիւններուն, սատանային եւ մարմնոյ, շնորհքներով՝ որ վիճակներնուս պարտաւորութիւնները կատարենք, շնորհքներով՝ որ զինքը սիրենք ոչ թէ խօսքով միայն, այլ եւ անդամամբ, եւ իր պատուիրանները պահելով, շնորհքներով՝ որ դիւրութեամբ արքայութեան հասնինք։ Երբ որ արժանաւորութեամբ Ս. Հաղորդութիւնը կ'ընդունինք, անանկ մը կը միանանք մէկ մարմին կ'ըլլանք Յիսուսի հետ՝ որ մինչեւ հրեշտակները կը նախանձին։ Ո՜հ, ինչ երջանիկ է այս վիճակը։ Բայց տեսէք դուք Բողոքականներուն դաւանանութիւնը։ Ասոնք ամենեւին չեն ճանչնար Աստուծոյ այս մեծ շնորհքը։ Չեն հաւատար որ Յիսուս ներկայ է սուրբ Հաղորդութեան մէջ, եւ այնչափ հպարտ են, որ եւ ոչ Յիսուսի Քրիստոսի խօսքին կը հաւատան, որն որ նոյնը շատ անգամ մեզի զրուցեց, չեն հաւատար Սուրբ Եկեղեցւոյ որ Յիսուսէն եւ Առաքեալներէն նոյնը սորվեցաւ, չեն հաւատար ամէն Սուրբե-

րուն, որոնք այնչափ յարգութեամբ ու սիրով կ'ընդունէին այս հրեշտակաց կերակուրը. եւ իրենք՝ այն եղկելիները՝ իրենց անհաւատութեամբն ու չարութեամբը այս ամէն բարիքներէն զրկուած ըլլալով, զմեզ ալ կ'ուզեն զրկել՝ ըսելով թէ Յիսուս Քրիստոս չի գտնուիր այն ամենասուրբ՝ նշխարքին մէջ, եւ թէ ձեզի բարիք մը չի կրնար ընել։ Ո՜վ անզգամներ, ո՜վ անհաւատներ։

Դեռ չեն շատնար այնչափ բարիքներ ձեզմէ յափշտակելով։ Ս. Հաղորդութիւնը խորհուրդ ըլլալէն զատ որ կ'ընդունինք, նաեւ պատարագ է, որ կը մատուցանենք Աստուծոյ։ Գիտէք արդէն, որ Քահանան երբոր խորանին առջեւը կ'ելլէ Ս. Պատարագը մատուցանելու, ուրիշ բան չ'ըներ, բայց եթէ նորէն զոհել մեր գթած Յիսուսը իր երկնաւոր Հօրը, նորոգելով՝ թէպէտեւ առանց արիւն թափելու, այն մեծ զոհը, որ ընծայեց Յիսուս խաչին վրայ։ Արդ՝ երբոր մեր երկնաւոր Հայրը կը տեսնէ այն մեծ ողջակէզը որ իրեն այնչափ սիրելի է, վասնզի իր Անդրանիկ որդին է, շուտ կը հաշտուի մեզի հետ, կը լսէ մեր աղաչանքները անոր սիրոյն համար, քաւիչ կ'ըլլայ մեր մեղացը. կը հաճի ու կը շատանայ այն պատուով, զորն որ ինքն Յիսուս անոր կը մատուցանէ, եւ կ'ընդունի նոյնը անոր ձեռքէն իբրեւ թէ մենք ըրած ըլլայինք. որոնց որ ինքն է Փրկիչ եւ Ազատիչ ամենագութ։ Անկից է որ Տէրն մեր



այս մեծ զոհին զօրութեամբը, որ մեզի համար կը զոհուի, եւ մենք գոնէ տօնի օրերը ներկայ կը գտնուինք, կը խնայէ երկրիս եւ կ'արգելէ այն պատիժները, զորոնք իր արդարութիւնը կը խրկէր արդէն մեր վրայ, եւ անոր տեղը մեզի օրհնութեան կը դարձընէ այն անէծքները, որոնց մենք արժանի եղած ենք։ Վա՜յ աշխարհքիս, եթէ Պատարագի սուրբ զոհը աշխարհքիս վրայ մատուցանելու չըլլայ։ Բայց Բողոքականները, ուրիշ ամէն բարիքները մեզմէ կողոպտելէն ետքը, ասիկա ալ կ'ուզեն յափշտակել, եւ այսպէս զրկել զմեզ մէկ հարուածով ամէն մարմնաւոր ու հոգեւոր բարիքներէն, որ մեզի կը բաշխուին այս ողջակէզով։ Որպիսի՜ անզգամութիւն, որպիսի՜ դաւաճանութիւն։

Բայց դեռ բաւական չէ։ Կ'ուզէին նաեւ զմեզ ան աստիճանի հասցընել երկրիս վրայ, որ անասնոց պէս ապրինք։ Կ'ուզեն գողնալ մեզմէ Պսակի Ս. Խորհուրդը, ուրանալով անոր Ս. Խորհուրդ ըլլալը։ Որով առն ու կնոջ միաւորութիւնը՝ փոխանակ Յիսուսի Քրիստոսի շնորհքովը սուրբ ըլլալու, շանց ու անասնոց միաւորութեանը կը դառնայ։

Կ'ուզեն նաեւ վերցընել մեզմէ Կարգի խորհուրդը, որով Քահանայք կ'օրհնուին, եւ այսպէս կամաց կամաց զմեզ վայրենիներուն դարձընել, որոնք ոչ Եկեղեցի, ոչ Քահանայ եւ ոչ Աստուած ունին։

Կը հաւատամք արդեօք. մինչեւ մեր հոգեվարութեան մէջ կ'ուզեն զմեզ վշտացընել՝ զրկելով զմեզ Վերջին Օծման մեծ մխիթարութենէն։ Այն վայրկենին մէջ, ուր այնչափ մեծ է մեր պիտոյքը, ուր սատանան վրանիս կը յարձակի, հիւանդութիւնը զմեզ անձկութեան մէջ կը ձգէ, այն ահաւոր վայրկենին մէջ բարի Հաւատացեալները մեծ քաջալերութիւն կ'ընդունին Վերջին Օծման խորհրդէն, ինչու որ Յիսուս այն միջոցով մեզի սիրտ կու տայ, զմեզ կը մխիթարէ, նաեւ մեր մեղացը թողութիւն կը շնորհէ, եւ վստահութիւն կու տայ աղէկ մեռնելու։ Արդ՝ այս անիրաւները նաեւ այն վայրկեաններուն մէջ զմեզ կը հալածեն, արգելլով այսպիսի մխիթարութեամբ լի խորհուրդը մատակարարելու։ Բայց իրենց ուզածն ու ջանքը այս է. եթէ բողոքական ըլլաք, պիտի զրկուիք այս ամէն գանձերէն, զորոնք իրենք կ'արհամարհեն, վասնզի չեն ճանչնար եւ չեն ուզեր ճանչնալ։ Ա՜հ, հազար անգամ՝ մեռնիլ լաւագոյն է, քան թէ այնչափ մոլորութեան եւ այնչափ գարշութեան մէջ իյնալ։



## ԳԼՈՒԽ Բ.

### ՈՒՐԻՇ ԲԱՐԻՔՆԵՐ, ՈՐՈՆՑՄԷ ԱԼ Կ'ՈՒԶԵՆ ԶՐԿԵԼ ՄԵԶ ԲՈՂՈՔԱԿԱՆՆԵՐԸ։

Մի կարծէք թէ վերջ տուած եմ խօսքիս, որով աչքերնիդ կը դնէի այն ամէն բարիքը, զորոնք կ'ուզեն ձեզմէ յափշտակել այդ անօրէնները, որոնք գաղտնի կողոպտել կը ջանան Ս. Հաւատքնիդ։ Դեռ շատ բաներ պիտ'որ լսէք։ Դուք մեծ վըստահութիւն ունիք Ամենասուրբ Կուսին պաշտպանութեանը վրայ եւ իրաւունք ունիք. վասնզի այնչափ այնչափ անգամ այս գթած Մայրը զձեզ մխիթարեր է, պաշտպաներ է եւ օգներ է իր բարեխօսութեամբը Յիսուսի առջին։ Այս պատիւը որ կու տաք Ս. Կուսին խիստ արդար, խիստ պատշաճաւոր եւ խիստ սուրբ է, վասնզի Ս. Կոյսը Յիսուսի՝ մեր աստուածային Փրկչին՝ երանելի Մայրն է, եւ դուք պատուելով զՄայրը, կը պատուէք նաեւ Որդին. մանաւանդ թէ այնչափ աւելի կը պատուէք զՈրդին, որչափ աւելի կը պատուէք զՄայրը։ Ինչու որ՝ ո՞վ չ'ըսեր թէ դուք մեծ յարգութիւն կ'ընծայէք տան տիրոջը, երբոր անոր սիրոյն համար իր մայրն ալ կը մեծարէք։ Արդ՝ մենք ալ նոյնը կ'ընենք։ Այնչափ Յիսուսը կը սիրենք որ իր սիրոյն համար նաեւ Մայրը շատ կը սիրենք։ Այս ամենայն պայծառ չէ՞։ Այսու ամենայնիւ այս խարեբայ Բողոքականները

չեն ուզեր որ դուք Ս. Աստուածածինը պատուէք, եւ զձեզ իր խնամքը յանձնէք. աս յիմարութիւնն ու անօրէնութիւնը կ՚երազեն, թէ Ս. Աստուածածինը պատուելով՝ Յիսուսի անիրաւութիւն կ՚ընէք, ուր որ ասով դուք՝ Իրեն մեծագոյն պատիւ կ՚ընծայէք։ Նաեւ այս ամէն չարախօսութիւններով կ՚ուզեն գողնալ սրտերնուդ մէջէն Ամենասուրբ Կուսին վստահութիւնն ու պաշտպանութիւնը. Կ՚ուզեն զրկել զձեզ գթած Մօրերնէդ, այնպէս որ, եթէ տրտմութեան մէջ ըլլաք, ալ չունենաք այն մայրենի Սիրտը, որ զձեզ մխիթարէ. եթէ մեղքերնիդ զձեզ վհատեցնեն եւ քաջալերութիւննիդ կորսնցընէք, ալ չունենաք այն քաղցր ապաստանը, որ զձեզ ընդունի եւ ձեզի համար Յիսուսի աղաչելով Նորէն զձեզ անոր հետ հաշտեցընէ. կ՚ուզեն ձեզմէ հեռացընել ձեր ընտանեաց պաշտպանը, որ կը պաշտպանէ զաւակնիդ եւ կը պահպանէ զամէնքը։ Ո՜վ ժամու անօրէններ, որչափ բարիքներ կ՚ուզեն ձեզմէ կողոպտել։

Նաեւ ձեր Պաշտպան Սուրբերէն ալ շատ շնորհքներ կ՚ընդունիք. ինչու որ ասոնք աշխարհքիս վրայ եղած ատեննին ամէն առաքինութեանց օրինակներ մեզի ձգելէն ետքը, հիմա որ երկինքն են, չեն դադրիր մեզի համար աղօթելէն, եւ աւանձինն կ՚աղօթեն անոնց համար, որոնք իրենք զիրենք անոնց կը յանձնեն եւ զա-



նոնք կը պատուեն։ Արդ՝ Բողոքականները Սուրբերուն անունն ալ լսել չեն ուզեր։ Կ՚ըսեն դարձեալ, թէ մենք անիրաւութիւն կ՚ընենք Յիսուսի՝ եթէ զմեզ անոնց կը յանձնենք։ Սակայն՝ ասկից աւելի յիմարութիւն մը կրնա՞յ մէկը զրուցել։ Ըսէք ինծի. Թագաւորին կամ իշխանին անիրաւութիւն կ՚ընէ, ով որ եթէ անկից խնդրելու բան մ՚ունի, աղերսագիրը արքունեաց մէջէն մէկու մը ձեռքովը կ՚ընծայէ, որն որ անոր շնորհաց մէջն է։ Հիմա, ի՞նչ անիրաւութիւն կ՚ընենք մենք Յիսուսի, եթէ իր աթոռին առջեւը մեզի համար բարեխօս կը խրկենք Սուրբերը, զորոնք այնչափ կը սիրէ։ Մանաւանդ որ ասով աւելի զինք կը պատուենք, քան թէ մենք անձամբ մինակ իրեն աղաչելու ըլլայինք։

Նաեւ թէ որչափ Աստուծոյ հաճելի է Սուրբերը օգնութեան կանչելը, անկից աղէկ կ՚երեւայ, որ այնչափ շնորհքներ անոնց բարեխօսութեամբը մեզի ըրած է։ Ո՞վ կրնայ ըսել այն ամէն սքանչելի շնորհքները, զորոնք Ս. Աստուածածին եւ Սուրբերը մեզի անդադար Աստուծմէ կ՚ընդունին։ Բաւական է իրենց նուիրուած հռչակաւոր տաճարներուն մէկը երթալ ու տեսնել այնչափ նուէրներն, որ կախուած ընծայուած են, եւ հռչակաւոր ցոյցեր են այնչափ բժշկութիւններու եւ այնչափ դժբախտութիւններէ ազատութեանց որ ընդունած են իրենց ջերմեռանդները. բայց

ինչ. Բողոքականները կ'ուզեն զմեզ ամէն բանէ մերկացընել։

Արդ՝ կը շատանա՞ն արդեօք ասոնցմով։ Ուրիշ բան կը մնա՞յ դեռ կողոպտելու՝ Ս. Հաւատքը յափշտակելէն ետքը։ Այո՛։ Ինչ աղէկ բան որ ունէինք կենաց մէջ մեզմէ գողնալէն ետքը, կ'ուզեն նաեւ գողնալ ինչ որ մահուանէ ետքն ունինք։ Գիտէք, որ Ս. Եկեղեցին, գթած մայրը, մեզի իր սուրբ խորհուրդներովը, իր աղօթքներովը, Ամենասուրբ Կուսին եւ Սրբոց բարեխօսութիւններովը եւ այնչափ ուրիշ միջոցներով օգնելէն ետքը, մահուանէ ետքն ալ զմեզ չի մոռնար, այլ իր աղօթքներովը, իր սուրբ ներողութիւններովը զմեզ կը սփոփէ երբոր Քաւարանն ենք։

Արդ՝ Բողոքականները կ'ուզեն մեզմէ յափշտակել աս օգնութիւնն ալ, որ Ս. Եկեղեցին ան ատենը մեզի պիտի տայ։

Պիտ'որ ըսէք. այդչափ անգթամութիւն անկարելի՛ է։ Սակայն այսպէս է։ Ասոնք կ'ուրանան ննջեցելոց համար եղած բոլոր նպաստները, աղօթքները, ողորմութիւնները, ներողութիւններու զօրութիւնը։ Կը հայհոյեն թէ չկայ Քաւարան, կ'արգելեն զձեզ խեղճ հօրերնուդ, մօրերնուդ, եղբայրներնուդ, հարսներնուդ, ամէն ազգականներնուդ համար աղօթելու, եւ կը խընտան ձեր բարեպաշտութեանը վրայ։ Ի՞նչ անողորմ մարդիկ։ Մեռելներո՛ւ դէմ՝ ալ կատղեր են։



Բայց բաներն այսպէս են։ Ուստի՝ եթէ գտնուի մէկը, որ համարձակի հրաժարիլ Ս. Աստուածածնայ պաշտպանութենէ, Սրբոց բարեխօսութենէ, Եկեղեցւոյ աղօթքներէն, անոր մեր մահուանէ ետքը մեզի համար ընելու օգնութիւններէն, թո՛ղ ընէ, թո՛ղ հրաժարի Կաթողիկէ Սուրբ Հաւատքէն, թո՛ղ ըլլայ Բողոքական. վասն զի Կաթողիկէ Հաւատքին աւելի պատիւ է, կորսնցընել այնպիսի հրէշ մը, քան թէ պահել։

## ԳԼՈՒԽ Գ.

### Բողոքականները զմեզ նաեւ ժամանակաւոր բարիքներէ կը զրկեն։

Առջեւնիդ դրի քանի մը հոգեւոր բարիքներ, որոնցմէ Բողոքականները կ'ուզեն զրկել ձեր հոգիները. բայց մի կարծէք թէ միայն հոգեւոր են վնասները որ ձեզի կը հասցընեն։ Ո՛չ։ Նաեւ աս աշխարհքիս վրայ կը զրկեն զձեզ շատ ժամանակաւոր բարիքներէն. վասնզի Աստուծոյ արդար թոյլտուութեամբը կը պատժուին նաեւ երկրաւոր բարիքներու մէջ անոնք, որոնք երկնից բարութիւններուն վրայ ամենեւին հոգ չեն տանիր։ Ո՞րն է մեծագոյն բարիքն որ ընտանիքի մը մէջ կրնայ գտնուիլ։ Սիրական խաղաղութիւնն, հանդարտութիւնն ու սէրն է որ ունին մէկ մէկու այն ընտանեաց անդամները։ Ո՞րն է մեծա-

գոյն բարիքը մէկ ամբողջ գաւառի մը, ամբողջ քաղքի մը։ Միաբանութիւնն, հանգստութիւնն եւ բարեկարգութիւնը որ կը տիրէ ամէն քաղաքացիներու մէջ։ Այսպէս դուք ալ սովորութիւն ունիք ըսելու, թէ աւելի օգտակար է պատառ մը հաց՝ որ խաղաղութեամբ ու սուրբ սիրով կ'ուտուի, քան որ եւ իցէ անուշահամ կերակրոց վայելմունքը խռովութեանց եւ դառնութեանց մէջ։ Նաեւ տեսէք, որ ուր Բողոքականութիւնը կը մտնէ, հոն անմիաբանութեան դիւական հոգին ալ կը մտնէ իր ամէն անկարգութիւններովը։

Վա՜յ այն ընտանեաց, ուր մէկը կամ մէկալը անզգուշութեամբ որոգայթին մէջ կ'իյնայ։ Այնպիսին միշտ կռուոյ մէջ է ամենուն հետ, կը կորսնցընէ նաեւ իր ամենէն ընտանի ազգականներուն վստահութիւնն ու սէրը. եւ ինչպէս որ ի ներքուստ խղճմտանաց խայթէն խռովեալ է եւ չունի խաղաղութիւն ինքն իր մէջը, այսպէս ալ ուրիշներուն խաղաղութիւնը կը վրդովէ։

Դուք չէք ճանչնար Բողոքականութեան պատմութիւնը, բայց եթէ ճանչնալու ըլլայիք, կը զարհուրէիք։ Ուր որ երեւցաւ, ուր որ մտաւ, ամէն տեղ սեւ սեւ արեան հետքեր թողուց։ Գերմանիայի մէջ սոսկալի պատերազմ գրգռեց, որ շատ տարիներ տեւեց, եւ այն պատերազմին մէջ սպաննուած գեղացիներուն թիւը միայն հարիւր հազարի կը հասնի։ Կոտորածը



այնչափ ահագին էր, որ նոյն պատերազմին պատմիչներէն Գիւղականաց պատերազմ անուանեցաւ։ Ըսէք Բողոքականներուն որ ուրանան ասիկա եթէ կրնան։ Գաղղիա՝ գլխաւորապէս հարաւակողման գաւառներու մէջ, այնչափ խռովութիւններու, այնչափ պատերազմներու պատճառ եղաւ, որ միայն խեղճ ժողովրդեան մէջէն հազարաւորներ կորսուեցան, առանց հաշուելու ամէն աստիճանի ազնուական տէրերը, որոնց արիւնն ալ թափուեցաւ։ Ըսէք Բողոքականներուն որ ուրանան եթէ կրնան։ Իսկ Անգղիայի մէջ արեամբ մտաւ Բողոքականութիւնը, արեամբ ապրեցաւ, եւ միշտ արեամբ ալ կը պահպանուի։

Ասիկա աղէկ գիտեն Իռլանտացիները իրենց դաշտերուն երկիրներուն վրայ. ինչե՞ր պարտաւորեցան կրել իրենց բողոքական տէրերէն, չարչարանք, տառապանք, հարուած, կողոպտում, սով եւ նեղութեան մահ, աս էր իրենց բաժինը։ Ըսէք Բողոքականներուն որ ուրանան թէ կրնան համարձակիլ։ Նաեւ այս ամենայն չարիքներն ու ոճիրները աշխարհքի վրայ հասցընելէն ետքը, հիմա կը յանդգնին նոյն Բողոքականները մեր գեղեցիկ երկիրներուն մէջ երեւալու, որպէսզի տխուր անապատ դարձընեն, եւ լեցընեն ամէն կողմ խռովութեամբ, հարուածներով եւ սպանութիւններով։ Ո՜վ գթած Յիսուս, ցրուէ այս անօրէնութեան փորձանքները։

Ուրիշ մեծ վնաս մ'ալ, որ Բողոքականութիւնը մտած տեղը հետը կը բերէ, ժամանակաւոր թշուառութիւնն է։ Մեր մէջն ալ չեն պակսիր դժբախտութիւններ նաեւ ծանր դժբախտութիւններ, որոնք երբեմն ընտանիքներ մուրացկանութեան մէջ կը ձգեն։ Բայց որչափ քիչ կը պատահի այն դէպքը որ ամբողջ ընտանիք մը պարզ անօթութենէ մեռնի։ Տարիներ եւ տարիներ կ'անցնին, եւ այսպիսի բան մը չի լսուիր, վանքի կամ գթած դրացի մը կամ տեղւոյն քահանան, եւ ողորմած տէր մը, հազիւ թէ նման թշուառութեան մը լուրը կ'առնեն, անմիջապէս կը վազեն ճար մը կը հոգան։ Բայց հարցուցէք քիչ մը անգղիական Բողոքականներուն, թէ երբեք չե՞ն մեռնիր իրենցմէ անօթութեան պատճառաւ։ Հազարաւոր աղքատները անօգնական կը ձգեն որ մեռնին սոսկ նեղութենէ. ինչու որ Կաթողիկէ սիրտ չունենալով, եւ ոչ ալ վշտակցութեան աղիքն ունին։ Հարցուցէք փնտռեցէ՛ք քիչ մը, թէ ի՞նչպէս կը նային իրենց Իրլանտացի գեղացիները։ Անասուններու պէս իրարու վրայ դիզած կը թողուն հիւղերու մէջ, ամենեւին անպատսպարան եւ անդարման, նաեւ ձմերուան ատեն մերկ գետնի վրայ. եւ երբոր իրենց այնչափ գետնախնձոր կը շնորհեն, որչափ բաւական է չմեռնելու՝ չէ թէ կշտանալու համար, կը համարին թէ գթութեան հրաշքներ գործեր են։



Ամէն տարի հազարաւորներ փոխանակ անօթութենէ մեռնելու, կը ստիպուին հայրենիք, ազգականներ թող տալ եւ ծովերն անցնելով, Ամերիկա երթալ, որպէսզի հացի կտոր մ'ունենան ուտելու, զորն որ իրենց երկիրը չեն կրնար գտնել։

Սակայն Բողոքականութենէ յառաջ, եթէ մինչ յաղթանակաւ ալ չէին երթար, ստուգիւ չէին գիտեր, ինչ է թշուառութիւնը, որ հիմա կը փորձեն։ Ա՛հ, ճշմարիտ է իրաւցընէ, որ Բողոքականութիւնը նաեւ իրենց ժամանակաւոր բարիքն ալ կողոպտեց։ Իսկ արհեստաւորները, աշխատաւորները, տարաղագործները, այն դժբախտ երկրին մէջ բոլոր օրը, առանց վայրկեան մը հանգիստ ունենալու աշխատելէն ետքը, բոլոր իրենց աշխատութեան գինմացը՝ անձեան համար քանի մը գետնախնձոր կը շահին, պարզ ջուր կը խմեն, եւ այսչափ բաւական է։ Կանչեցէք Բողոքականները, զամէնքն ալ, որ ուրանան այս ամէն աղէտալից դէպքերը Բողոքականութեան մէջ եթէ կարող են։

Բայց թողունք աս ողորմելի բարիքները որ աս աշխարհքիս վրայ են։ Ձեզի՝ գաւառաց եւ գիւղից բնակիչներուն՝ Աստուած չէ տուեր քանի մը առաւելութիւններ, զորոնք ուրիշներուն տուեր է. դուք չունիք տերանց հարստութիւնը, չունիք անոնց հեշտականութիւնները, անոնց զբօսանքները. բայց Աստուած, որ բարեխնամ հայր

է, ձեզի առանց փոխարէնը առատութեամբ տուած է, որ շատ աւելի դիւրութիւն ունիք արքայութիւնը վաստըկելու։

Դաշտերու վրայ այնչափ վտանգներ չունիք ձեր հոգւոյն, հոն աւելի պարզմտութիւն եւ անմեղութիւն կայ։ Այսու ամենայնիւ եթէ քիչ մ'ալ կրելու բան ունենաք քանի մը տարի, բայց շատ դիւրին է ձեզի յաւիտենականութեան մէջ ուրախութիւնն ու հանգիստը։ Ո՜հ. ինչ աղէ՛կ հատուցում ձեզի համար։ Չարակրութիւններ ունենալ որ շուտով կ'անցնին եւ վայելմունքներ որ երբեք վախճան չունին։ Ա՞ս միայն կը պակսէր ձեզի, որ գային այդ մատնիչները եւ գողնային ձեզմէ արքայութիւնն ու բոլոր այն դիւրութիւնները, զոր գթածն Յիսուս ձեզի տուած է նոյնը ստանալու համար, առանց թող տալու ձեզի նոյն իսկ ողորմելի բարիքները, որ աս աշխարհքիս վայելմունքներն են։ Դուք ալ տեսաք, որ այս ամենայն ստուգիւ այսպէս է, վասնզի ձեր Հաւատքին հետ միասին կը յափշտակեն ձեզմէ նաեւ փրկութեան միջոցները, որ են Եկեղեցի, իր օգնութիւնները, իր խորհուրդները, իր բարի գործքերը եւ վերջապէս Սուրբ Արքայութիւնը, առանց շնորհելու ձեզի եւ ոչ իսկ այն խեղճ մխիթարութիւնն որ կրնայ մարդ վայելել այս կենաց մէջ։

Ո՜հ. Յիսուսի սիրոյն համար, մտածեցէք մէյմը յառաջ քան հրաժարելնիդ այնպիսի



բարիքներէն, եւ ըսէք անոնց որ զձեզ կը հրապուրեն, թէ չէք ուզեր ի յաւիտենս կորսնցընել այն գեղեցիկ արքայութիւնը, զորն որ ձեզի խոստացաւ Յիսուս։

## ԳԼՈՒԽ Գ.

### Ի՞ՆՉ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ ՊԷՏՔ Է ԿԱԹՈՂԻԿԷ ՄԱՐԴԸ Ն-ԵՆԳՈՂԻՆ ՀԱՐՑՄԱՆԸ։

Դուցէ հարցընէք. բայց իրաւցընէ կը կորսնցընէ՞ մէկը սուրբ Արքայութիւնն ի յաւիտեան, կաթողիկէ կրօնքը ձգելով եւ Բողոքական ըլլալովը։ Ի՛մ սիրելիքս կը տարակուսիք ասոր վրայ։

Անոնք, որ դժբախտութեամբ Բողոքականներու մէջ ծնած ըլլալով առանց իրենց յանցանքին ճշմարտութենէ զրկուած են*, եւ ոչ իսկ մտադիր կասկած մ'ունեցեր են իրենց կրօնքին վրայ, եթէ պարզմտութեամբ ընեն ինչ որ կարող են ընելու, եւ մեղքերէ հեռու կենան, կամ թէ անոնց համար սրտանց թողութիւն խնդրեն Աստուծմէ կատարեալ զղջմամբ, կրնան փրկութեան ճամբան գտնել. բայց անոնք որ Սուրբ Կաթողիկէ Հաւատքին անգին շնորհքին ընդունած են, եւ նոյնը սրբապղծութեամբ մերժած են, անոնց համար՝ եթէ նորէն Աստուծոյ չեն դառնար, ուրիշ բան չի մնար, բայց եթէ դատապարտութիւն։ Եթէ դուք ըստ պատահման ասոր վրայ կասկած մ'ունիք, լսեցէք պատճառները։

Ով որ Ս. Հաւատքը կը թողու, այնպէս զարհուրելի մեղք մը կը գործէ, որ Քրիստոնէի մը համար անկէց մեծագոյնը չկայ. բայց որովհետեւ այս մեղքն ընդարձակ ծովի մը պէս է, որ ամէն տեսակ չարութիւններ կը պարունակէ, փոյթ տարէք քիչ մ՚աւելի մանրամասն զանիկա ճանչնալու։

Կը պարունակէ այնպիսի ապերախտութիւն մը Աստուծոյ դէմ, որ չի կրնար երեւակայուիլ։ Ինչու որ մենք ի՛նչ արժանաւորութիւն ունէինք Սուրբ Կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ ծնանելու համար ընտրուած ըլլալու, քան թէ ուրիշ կրօնքի մը մէջ։ Եթէ Աստուած զմեզ Հրեաներու, Տաճիկներու, կռապաշտ Հեթանոսներու մէջ ծնանելու տրամադրէր, մենք թշուառութեամբ եւ անկարգութիւններով լեցուն կեանք մը պիտի անցընէինք, եւ ետքէն անոնց վայել մահուան մը հանդիպելով՝ վերջապէս յուսահատական յաւիտենականութիւն մը պիտ՚որ ունենայինք դժոխքի մէջ։

Ասոր ներհակ ի՛նչ արդիւնք ունէինք մենք, Աստուծոյ որդւոց կարգն անցնելու Ս. Մկրտութեամբ, եւ ետքը այնչափ այնչափ շնորհքներով զօրանալով փրկութեան ճամբուն մէջ դրուելու. ինչու որ մինչեւ Բողոքականներն ալ կը խոստովանին, որ մենք Արքայութեան ճամբուն մէջն ենք։

Ի՛նչ արդիւնք ունէինք այսպիսի սիրալիր



ընտրութեան մը։ Պարզապէս Աստուծոյ զուտ ողորմութիւնն էր, որ զմեզ ուրիշներէն աւելի սիրելով, մեզի հետ անանկ վարուեցաւ։ Ուրեմն կրնա՞յ աւելի ժանտ ապերախտութիւն մը մտածուիլ՝ քան զմերժելը այն Ս. Հաւատքը, որ մեզի այնպիսի գթութեամբ տրուեցաւ, քան զհրաժարելը Ս. Մայր Եկեղեցիէն, եւ զմեզ Բողոքական աղանդին գիրկը նետելը։

Կը պարունակէ ամենածանր թշնամանք առ Յիսուս Քրիստոս. վասնզի Ուղղափառները կը վայելեն անոր գութն ու քաղցրութիւնը։ Անոնք, որոնք որ Բողոքական ծնած են, եւ առանց իրենց յանցանքին անոնց մէջ կը գտնուին, եւ ճըշմարտութիւնը չեն ճանչնար, կրնան եղանակաւ մը սիրել զՅիսուս Քրիստոս. բայց ուրացող Ուղղափառը բոլորովին կը մերժէ զՅիսուս, եւ ալ չի կրնար զինք սիրել։ Գիտէ ի հաւատոց թէ Կաթողիկէ Եկեղեցին Հարսն է Քրիստոսի, ուստի ոտքի տակ առնելով զՀարսը, գիտէ որ չի կրնար թշնամի չըլլալ Փեսային։

Կը պարունակէ ամենածանր թշնամանք մը առ Ս. Եկեղեցին. Կաթողիկեայ հաւատացեալը գիտէ, որ Յիսուս դրաւ իր Եկեղեցւոյն մէջ իր հաւատացելոց ամէն հոգեւոր բարիքը. որովհետեւ ուզեց որ անիկա մեր Մայրն ու մեր ուսուցիչն ըլլայ։ Արդ՝ ով որ Բողոքական կ՚ըլլայ. կը մերժէ իր Մօրն ամէն գթութիւնները եւ իր Ու-

տուցին ամէն սուրբ կրթութիւնները, խիստ կը տրտմեցընէ զանիկա, եւ իր թըշնամեաց առջեւը զանիկա կ'անարգէ։ Եթէ ես առջեւս ունենայի այսպիսի թշուառ կաթողիկեայ հաւատացեալ մը, որ ուզենար այս զարհուրելի անցքն ընել, գիտէք ինչ կ'ուզէի ընել։ Ան որ ըրաւ Ագրիպպինա իր որդւոյն Ներոն կայսեր։

Ասիկա սովորութիւն ունէր ահագին գումարներով խաղալու, բայց կը կորսընցընէր եւ առանց այն գումարները տեսնելու վճարել կու տար։ Զինքը կրթելու համար, որ մի իր մայրը խաղի մէջ կորսընցուցած գումարը սեղանի մը վրայ գրուած առջեւը հանել ու իրեն (Ներոնի) համրել տուաւ։ Ան ատենը շռայլ որդին ինք իրմէ տեսաւ, թէ որչափ դրամ, ինչ սաստիկ գումար կորսընցուցեր էր։ Ես ալ նոյնը կ'ուզէի ընել ան թշուառականին, որ կ'ուզէ Հաւատքն ուրանալ։ Հոս եկուր, կ'ուզէի ըսել, հոս եկուր, կ'ուզե՞ս Բողոքական ըլլալ։ Գրիչը ձեռքդ առ ու գրէ այն ամենայն, որմէ կ'ուզես հրաժարիլ։

Պիտի հրաժարիս այն Հաւատքէն, որ հեղաւ քու հոգւոյդ վրայ Ս. Մկրտութեամբ, այն Հաւատքէն, որ քեզի ան ատեն զՅիսուս տուաւ զգեցընելով անմեղութեան զգեստը։ Գրէ՛. Կը հրաժարիմ։

Հրաժարէ Ապաշխարութեան Խորհրդէն։ Բայց ալ անկից ետքը սիրտդ Քահանային քու հօրդ սրտին մէջ պիտի չհեղու, ալ պիտի չլսես երբեք այն խօսքը, որ յանուն Յիսուսի կը զրուցէ. գնա՛, թողութիւնդ առիր։



Հրաժարէ Անարատ Գառին մարմինը ճաշակելէն, թէ՛ կենացդ եւ թէ՛ մահուանդ ատեն։ Աստուածային Հովիւը ալ պիտի չանուցանէ զքեզ երբեք իր մարմնովը, քու սիրտդ ալ պիտ'որ չբաբախէ երբեք Յիսուսի սրտին վրայ։ Գրէ՛. Կը հրաժարիմ։

Հրաժարէ քու Մօրդ Մարիամ Կուսին պաշտպանութենէն, զոր սիրեցիր եւ բարեխօս ունէիր խանձարուրէդ վեր։ Մինչեւ հիմա անոր պաշտպանութեանը տակն էիր, հրաժարէ հիմա անոր որդի ըլլալէն, եւ ըսէ անոր. թէ ալ փոյթդ չէ զինք քեզի Մայր ունենալ։ Գրէ, գրէ՛ առանց ձեռքդ դողդողալու, որ դուն կը հրաժարիս Մարիամ Կուսէն, թէ անկից ետքը երբեք զինք քեզի բարեխօսութեան չես կանչեր։

Հրաժարէ քու Պաշտպան Սուրբերէդ, ան Սուրբէն, որուն անունը կը կրես, քու ընտանեացդ՝ քու հայրենեացդ պաշտպան Սուրբէն, Պահապան հրեշտակէդ եւ ըսէ՛ իրենց, թէ անկից ետքը իրենց բարեխօսութիւնը չես ուզեր, թէ հոգդ չէ իրենց պաշտպանութիւնը, թէ հարկաւորութիւն չունիս։ Գրէ՛. Կը հրաժարիմ։

Հրաժարէ նաեւ քու ծնողքներէդ, ինչու որ՝ ալ չես ուզեր անոնց հետ հաղոր-

դակցութիւն ընել Հաւատքով։ Անոնց Աստուածը՝ ալ քու Աստուածդ պիտ՚որ չըլլայ։ Քու պաշտամունքդ ալ իրենց պաշտամունքը պիտի չըլլայ։ Դուն պիտի ծաղրես ինչ որ անոնք կը պատուեն, երբոր անոնք ալ քեզմէ պիտի զարշին նոր Կրօնքիդ համար։ Հրաժարէ ընտանեկան սիրոյն ամէն զգածմունքներէն, որովհետեւ ասոնք չեն կրնար տեղի ունենալ անոնց մէջ, ուրոնք մեկտեղ պիտի չմնան ի յաւիտեանս։ Գրէ. Կը հրաժարիմ։

Հրաժարէ ան ամէն օգնութիւններէն, որ կրնայիր ունենալ մահուանդ վայրկենին մէջ։

Հրաժարէ վերջին Օծմանէ, վասնզի Բողոքականներուն չի տրուիր. հրաժարէ Ս. Վարդարանի, Բարի Մահուան, Կարմեղեան օրհնութենէն. վասնզի Բողոքականները ասոնց հոգ չեն ըներ։

Հրաժարէ ամէն նպաստներէն, որ Ս. Եկեղեցին կու տայ ննջեցելոց, վասնզի Բողոքականները ասոր չեն հաւատար։

Հրաժարէ Եկեղեցւոյ քով, Ս. Խաչին հովանւոյն տակ, հօրդ, մօրդ, եղբարցդ, քերցդ քով թաղուելէն, վասնզի Բողոքականները դաշտի մը վրայ, եւ ոչ թէ օրհնեալ հողին մէջ կը թաղուին։

Ի՞նչ. կը դողա՞ս այսչափ հրաժարումներ ընելու։

Այո՛. դեռ ուրիշ բաներ պէտք է հրաժարիս։



Հրաժարէ քաջութեամբ նաեւ յԱստուծոյ Հօրէ, վասնզի Եկեղեցւոյ ընդհանուր վճիռն է, թէ զԱստուած իրեն Հայր չունի, ով որ իրեն Մայր չ՚ունենար Եկեղեցին, զորն որ դուն կը մերժես. ուստի Աստուած՝ ալ քու հայրդ պիտ՚որ չըլլայ. կ՚ըլլաս անոր արարածը, կ՚ըլլաս անոր ծառան, բայց ոչ երբեք իր որդին։

Հրաժարէ Յիսուսէն՝ անոր աստուածային որդիէն, ինչու որ Յիսուս կաթողիկէ Եկեղեցւոյ գլուխը, ոչ որ իրեն անդամ կը ճանչնայ որն որ ատ Եկեղեցւոյ անդամ չէ, եւ դուն Եկեղեցիէն հեռանալովդ, մնաս բարով ըսիր նաեւ Յիսուսի։

Հրաժարէ Հոգին Սուրբէն, որ երբեմն զքեզ սուրբ ըրաւ, բայց հիմա վշտանալով եւ մերժուելով քեզմէ, ալ զքեզ չի ճանչնար, վասնզի հաղորդութիւն չ՚ըներ անոր հետ որն որ Յիսուսի ծառայ չէ։

Հրաժարէ ուրեմն Ամենասուրբ Երրորդութենէ, ինչու որ Բողոքականներէն շատերը անոր չեն հաւատար, եւ Երրորդութեան հաւատքին հետ մեկտեղ մերժէ նաեւ Մարդեղութիւնը, վասնզի առիկա առանց անոր կարելի բան չէ։

Մերժէ ուրեմն ամէն խորհուրդները, ուրացիր ամէն ճշմարտութիւնները, որոնց մինչեւ հիմա հաւատացիր. ահաւասիկ ինչ է որ պիտի ընդունիս եւ գրկես։ Պիտի լսես այն ամէն հակասութիւնները, որ քու կեղծեալ ուսուցիչներդ քեզի պիտ՚որ

սրբեցրնեն, եւ դուն զամէնքն ալ իրրեւ զուտ ճշմարտութիւն պիտի ընդունիս ։ Պիտի փոխես քու հաստատելիքներդ ամէն քանուչորս ժամ, ինչու որ Բողոքականները եւ ոչ մէկ աղանդը երբեք հաստատուն մնաց մի եւ նոյն վարդապետութեան մէջ ։

Փոխանակ աստուածային կաթողիկէ վարդապետութեան, փոխանակ Հռոմայ Քահանայապետին՝ փոխանակ բոլոր տիեզերաց երեսը տարածուած Եպիսկոպոսներուն, պիտի հնազանդիս որմնադրի մը, դերձակի մը, վարսավիրայի մը, քու սեպհական կարծեացդ, եւ փոխանակ երկու հարիւր միլիոն կաթուղիկէ հաւատացելոց, եղբայր պիտ'որ ունենաս ափ մը հերետիկոսներ, որոնք մէկզմէկ կ'ուտեն միշտ, խնդրելով եւ երբեք չգտնելով ճշմարտութիւնը ։

Հաւատքդ ամուր բռնելու համար, ալ չես ունենար սուրբ Հոգւոյն իմաստուն վարդապետութիւնը՝ Եպիսկոպոսաց հովանաւորութեան տակ եւ Ս. Պետրոսի Աթոռին հաղորդութեան մէջ, որ երբեք ինկած չէ մոլորութեան մէջ, եւ երբեք պիտ'որ չինայ․ եւ բոլոր քու ապահովութիւնդ պիտի ըլլայ խանգարուած աստուածաշնչի մը վրայ, զոր չես հասկընար, եւ չես կրնար ալ հասկընալ, զորն որ ձեռքդ տուած են մարդիկ, զորոնք դուն չես ճանչնար, եւ որոնք ուրիշ ճոխութիւն



չունին՝ բայց եթէ ինչ որ իրենք իրենց յափշտակեր են․ եւ դուն այդ Աստուածաշունչը խելքիդ փչածին պէս պիտ'որ մեկնես, եւ յիմարութեամբ պիտի ըսես թէ Հոգւոյն սրբոյ ազդեցութիւնն է ։

Յոյսդ՝ իրեն քաջալերիչ պիտ'որ չունենայ Յիսուսի խոստմունքը, որ ըսաւ իր Եկեղեցւոյն, ինչու որ Բողոքականը կը համարի թէ ասիկա մոլորութեան մէջ ինկած է․ ոչ բարի գործքերը, վասնզի Բողոքականը զանոնք արդիւնաւոր չի գներ․ եւ ոչ ալ աստուածային օգնութիւնները, ինչու որ Բողոքականներուն մեծ մասը Կալվինի հետ կը կարծէ՝ թէ Աստուած առանց նկատման՝ սահմանած է ամէն մէկերնուս համար կամ փրկութիւն կամ դատապարտութիւն ։ Քեզի քաջալերութիւն պիտի ըլլայ սրբապիղծ մարդու մը ձայնը, որ իր խօսքին վրայ զքեզ պիտի ապահովցընէ թէ միայն հաւատքը զքեզ կը փրկէ ։

Աստուածային սէրը բորբոքելու հարկաւորութիւն պիտի չունենաս, վասնզի անիկա քու սրտիդ մէջ ալ չի բնակիր ։ Յիսուսի սիրոյն տեղ կ'ունենաս քիչ մը մարդասիրական զգածմունք, եւ այն մաքուր եւ ողջախոհ սիրոյն բորբոքման տեղ՝ ցուրտ զգաստութիւն մը ։

Ստոյգ է, որ ամէն բանի պիտի դատապարտէ զքեզ նոյն իսկ քու միտքդ, որն որ հազար անգամ քեզի պիտի յիշեցընէ

այն հակառակութիւնները, որոնց զոհ եղած ես. պիտի դատապարտէ զքեզ բնական առողջ մտածութիւնը, որն որ երեսդ պիտ'որ զարնէ այլանդակութիւնդ, որ ըրիր աւելի փառահանելով քու դատաստանիդ քան թէ ամբողջ Կաթուղիկէ Եկեղեցւոյն. ստոյգ է, որ պիտի դատապարտեն զքեզ երկուհարիւր միլիոն Ուղղափառներ, որ աշխարհքիս վրայ տարածուած են, եւ անցած հարիւր սերունդները, որոնց մէջ ամենէն խելացիները եւ ամենէն առաքինիները հաստատուն կեցան այն Հաւատքին վրայ, զորն որ դուն կ'ուզես մերժել. ստո՛յգ է, որ քու խիղճդ զքեզ չարաչար պիտի տանջէ միշտ աչքիդ առջեւը դնելով անօրէնութիւնդ, որով յանդգնեցար քու Աստուծմէդ, եւ քու մօրդ՝ Եկեղեցւոյ գրկէն հեռանալու. ստո՛յգ է, որ դուն քեզի խղճի խայթերով, անձկութիւններով, եւ յուսահատութեամբ լեցուն մահ մը կը պատրաստես. բայց ասոր փոխարէնն արդէն առած պիտ'որ ըլլաս տարիներով առանց Եկեղեցւոյ, Խորհրդոց, ծոմապահութեանց, եւ Կաթողիկէ պաշտամանց ծանրութիւնը կրելու ազատ ըլլալովդ. զքեզ բոլորովին քու կրքերուդ եւ հաճոյիցդ գերի ընելով։

Եթէ այս փոխարէնը քեզի բաւական կը համարիս, թէ այս ընթացքը քեզի հաճոյական է, ել գնա զքեզ Բողոքականներուն ձեռքը յանձնէ, հրաժարէ աներ-



կիւղ այն Հաւատքէն որ հեղաւ ի քեզ անմեղութեան շնորհքովը, այն Հաւատքէն որ զքեզ մխիթարեց մանկութեանդ ատեն, այն Հաւատքէն որ քու հօրդ եւ քու մօրդ վերջին արցունքները գթութեամբ սրբեց. եւ եղի՛ր Բողոքական, այսինքն է՝ առանց կրօնքի մը. վասնզի անոնք որոնք Կաթողիկէ Եկեղեցւոյ գրկէն կ'ելլեն Բողոքական կ'ըլլան, ամենեւին կրօնք մը չեն գործադրեր։ Եկեղեցին քու Մայրդ այս քու կործանմանդ վրայ արեան արցունքներ պիտի թափէ. բայց իր փեսան պիտ'որ սրբէ իր արցունքները, այն տեղը որմէն դուն զքեզ զրկեցիր, աղքատ վայրենւոյ մը շնորհելով, որ Ովկիանիայի, կամ Ամերիկայի, կամ ծովերու մէջ անտես անծանօթ կղզւոյ մը վրայ կը բնակի. իսկ դուն ընթացքդ պիտ'որ կատարես եւ դատապարտութեանդ պիտ'որ հասնիս։

Բայց եթէ կը զարհուրիս այս իմ առաջարկութենէս որ ըրի քեզի, եթէ Յիսուսի Քրիստոսի՝ քու Հօրդ սէրը, եթէ Մարիամ Կուսին՝ քու Մօրդ ջերմեռանդութիւնը, եթէ նախնեացդ՝ ծնողացդ յարգութիւնը, եթէ Ս. Եկեղեցւոյ արցունքը, եթէ քու փրկութեանդ մտածութիւնը, եթէ դժրախտ յաւիտենականութեան վախը հոգւոյդ վրայ ազդել կրնան, ան ատենը ել, հոգի՛ առ, եւ ազատէ զքեզ անօրէնութեան ուսուցիչներէն որ բոլորտիքդ պատեր են. եւ ըսէ անգամ

մը, թէ կաթուղիկեայ Ուղղափառ ծնած ես, կաթուղիկեայ Ուղղափառ կ'ուզես մեռնիլ, եւ թէ կ'ուզես հազար անգամ սիրտդ կուրծքէդ փրցընել տալ քան թէ Ս. Հաւատքը։

## ԳԼՈՒԽ Ե.

### Թէ ինչպէս գէշ են վարուել անոնց, որոնք Բողոքականներէն ամբողջ Խոստովանութիւններով կը դարձան։

Ցայտնեցինք մեծ չարիքը, որ Ուղղափառի մը գլուխը կու գայ, երբոր Ս. Հաւատոյ անգին պարգեւը անարգ բանի մը պէս դուրս նետելով կ'երթայ Բողոքականութիւնը կը գրկէ։ Հիմա քանի մը խօսք կը մնայ զրուցելու Ուղղափառաց, որոնք մոլորելու վտանգի մէջ կրնան գտնուիլ, կամ թէ դժբախտութեամբ արդէն մոլորութեան մէջ ինկած են։ Առաջին վտանգը՝ որուն մէջ կ'իյնան, մոլորութեան պաշտօնեաներուն կենդանի խօսակցութիւնն է. ինչու որ՝ սատանայական առաքելութիւնը, որ գրքերու եւ տակի միջոցով կ'ըլլայ, չի կրնար այնպէս յայտնի եւ ոչ ալ ամենուն հետ հաւասարապէս ի գործ դրուիլ, բայց խօսակցութիւնն ու համոզելը ամենուն հետ կ'ըլլայ. եւ ահաւասիկ ինչ եղանակաւ կը յառաջանան այն խաբեբաները։ Ի սկզբան մինակ կը փորձեն մէյմը անձին տրամադրութիւնը, որ տեսնեն թէ ինչ պատասխան կու տայ, եւ առէկ կը զգուշանան կրօնքի ամենէն պատկառելի եւ մեծարոյ ճշմարտութիւններուն չդպչելու, եւ այնպիսի բան մը չըսելու, որ կրնայ իբրեւ յայտնի ամբարշտութիւն դատապարտուիլ։ Ինչպէս բազէ մը, որ կ'ուզէ յափշտակել վառեակները՝ հեռուանց ընդարձակ շրջաններով նախ պտըտներ կ'ընէ եւ ետքը որսին վրայ կը յարձակի, այսպէս ասոնք ալ կ'ընեն։ Գոհ կ'ըլլան ի սկզբան, օրինակի համար, սրբազան պաշտօնեաներու վարքը փետտել, աչքի առջեւ դնել անոնց պակասութիւնները, որոնցմէ իբրեւ մարդ չեն կրնար բոլորովին ազատ ըլլալ. նոյն պակասութիւնները չափէ դուրս մեծցընել, ու հաստատել թէ ասոնք ամէն Քահանայից եւ Կրօնաւորաց վրայ ալ հաւասարապէս կը գտնուին։ Անկից կ'անցնին արտաքին պաշտաման արարողութիւնները, Եկեղեցիներուն մեծամեծ ծախքերը, սպասուց ու զարդերու հարըստութիւնը քննութեան առնելու, բարեպաշտութեան կրթութիւնները ծաղրելու, որոնք ջերմեռանդութիւնը կը սնուցանեն, եւ իբրեւ կեղծաւորեալ բարեպաշտներ կատակի առնել զանոնք, որոնք նոյներն ի գործ կը դնեն։ Միշտ բան մը կը գտնեն ըսելու Ս. Եկեղեցւոյ, իր իրաւունքներուն, եւ ինչպէս իրենք կ'ըսեն, Հռոմայ արքունեաց պահանջմունքներուն վրայ, զորն որ իբրեւ ինձ մը կը տեսնեն եւ անանկ ալ կը

խօսին. իբրեւ թէ այս գաղանը պատրաստ կեցեր է իշխանութեանց վրայ յարձակելու եւ յափշտակելու։ Ամէն բան որ կրօնի կը վերաբերի, իրենց համար կամ ձանձրանալի է կամ գայթակղական. եւ չեն կրնար տանիլ որ ուրիշ մէկը գովէ կամ բարձրացընէ բարեպաշտ եռանդեամբ քրիստոնէական բարեկարգութիւնները եւ Ս. Եկեղեցւոյ փառքն ու յաղթանակը։ Արդ՝ երբոր կը լսէք, որ մէկը այսպիսի եղանակաւ, չէ թէ մէկ կամ երկու, եւ կամ ցանցառ եւ ի կրից, այլ շատ անգամ եւ համարձակութեամբ կը խօսի, անիկա ձեզի ստոյգ նշան ըլլայ, որ այն անձը, գիտնալով կամ չգիտնալով, Բողոքականութեամբ տոգորուած է եւ մոլորութեան ուսուցիչ մըն է. ուստի հեռացէք փախէք անկից, եւ երբեք այնպիսւոյն հետ խօսակցութեան մէջ մի մտնէք, ինչու որ ժամանակ անցնելով զձեզ կ'ապականէ։

Իսկ եթէ այնպիսիններէն մէկն է, որոնք չէ թէ միայն Հաւատոյ ծառին ճիւղերը կը կտրեն, այլ բացարձակ ծառին արմատը կը փորեն, տարակուսի տակ ձգելով կամ դատապարտելով Հաւատոյ սուրբ վարդապետութիւնները, ինչպէս Պատարագի ճշմարտութիւնը, Խոստովանանքը, Ս. Հաղորդութիւնը, Ներողութեան արժէքը, Ս. Քահանայապետին իշխանութիւնը, եւ ասոնց նմանները, ան ատեն ամենեւին տարակուսելու բան չկայ, որ այնպիսին Հերետիկոս Բողոքական մըն է, եւ ահաւասիկ հոս է գարշելու եւ զզուելու առիթը։ Աստուծոյ Եկեղեցւոյն մէջ Սուրբ Առաքեալները մեզի կը սորվեցընեն, որ ամէն հերետիկոսէ, իբրեւ օձէ մը պէտք է փախչինք։ Հերձուածողը, մէկ կամ երկու անգամ խրատելէն ետքը, կ'ըսէ Ս. Պօղոս, փախի՛ր անկէն[1]։



Ս. Յովհաննէս՝ սիրոյ առաքեալը չուզեց մտնել բաղնիք մը, ուր հերետիկոս մը կար, վախնալով որ չըլլայ թէ ինքն ալ պղծուի։ Պողիկարպոս Ս. Եպիսկոպոսը օր մը Մարկիոն Հերետիկոսին դիմացն ելլելով հրապարակի մը վրայ, երբոր անիկա հարցուց իրեն թէ կը ճանչնա՞ս զիս, այո՛ ըսաւ Սուրբը համարձակ ձայնով. այո՛ կը ճանչնամ սատանայի անդրանիկը. այնչափ էր այն մեծ Սուրբին սոսկումը անոնցմէ, որոնք Ս. Հաւատքը կ'եղծանեն։

Եւ ոչ ալ այլազգ կը մտածէին եւ կը գործէին այս սուրբերէն կրթուած առաջին Հաւատացեալները։ Եկեղեցական պատմութեանց մէջ կը կարդացուի, որ Սուրբ տիկնայք չէին ուզեր ճանչնալ իրենց փեսաները երբոր անոնք Հաւատքնին ուրացած էին. նոյնպէս այրք ալ սոյն պատճառաւ իրենց կանայքը չէին ուզեր ճանչնալ. քորք կը հրաժարէին իրենց եղբայրներէն, որ չէին ճանչնար զՔրիստոս։ Ինչպէս ասոր ներհակ ալ Սրբուհի Զիչիլիա, ան ատեն

[1]. Տիտ. Գ. 10.

միայն ընդունեցաւ զՏիրուբատիոս իր տա-
գրը, երբոր ասիկա Յիսուսի Քրիստոսի
հաւատաց. այնչափ մեծ էր այն մեծամեծ
հոգիներուն սէրը սուրբ Հաւատքի վրայ,
որ չէին գիտեր եւ ոչ կրնային սիրել զա-
նոնք, որ չէին ճանչնար եւ չէին սիրեր սուրբ
Հաւատքը։

Ինչ ոչ այս սէրն այնչափ հազուագիւտ
բան մը, կամ քանի մը վեհ հոգիներու
սեփհական էր. ամբողջ Կաթողիկէ ժողո-
վուրդներ ամենեւին բան գործ չէին ուզեր
ունենալ Հերետիկոսաց հետ։ Թէոդորե-
տոս կը պատմէ, թէ Սամոսատացիք լռելով
թէ Եւնոմիոս Հերետիկոսը հրապարակա-
կան բաղնիքի մը մէջ լուացուեր էր, ալ
չուզեցին այն բաղնիքին մօտենալ, մինչեւ
որ նոյն բաղնիքին ջրերը չպարպեցին եւ
նորէն մաքուր ջրով չլեցուցին։ Մինչեւ
նաեւ ուղղափառ տղաք ալ կը զարհուրէին
հերետիկոսներէն, եւ Եկեղեցական Տարե-
գրութեանց մէջ կը կարդացուի, որ Սա-
մոսատիա քաղաքը, հրապարակի մը մէջ տը-
ղաք գնդակ խաղալու ատեննին, ձեռքեր-
նէն ցատքեց գնդակը եւ գնաց ձիուն ոտից
տակը մտաւ, որուն վրայ հեծած կ'երթար
Ղուկիոս հերետիկոսը. այն Կաթուղիկեայ
մանկունքը այնչափ սոսկում ունեցան աս
բանիս վրայ, մինչեւ չհամարձակեցան ձեռ-
քերնին առնել նոյն գնդակը՝ բայց եթէ
հրով մաքրելէն ետքը։ Յայտնի է որ նաեւ
Ս. Փրանկիսկոս տը Շանթալ դեռ. տղայու-



թեան փոքր հասակին մէջ կրակը նետեց
հերետիկոս պարոնէ մ'ընդունած պար-
գեւը, ըսելով ծանրութեամբ մը, այսպէս
պէտ՛ որ այրին անոնք որոնք չունին Յիսուսի
Քրիստոսի Հաւատքը։

Չեն պակսիր անձինք, որոնց աւելորդ
կ'երեւնայ այս սոսկումը, եւ կը կարծեն,
թէ այնչափ հաստատուն են Հաւատքներ-
նուն մէջ, որ կարող են խօսակցութեան
մէջ մտնել որուն հետ որ ըլլայ՝ առանց
վտանգի։ Եթէ կան ոմանք, որ սաստիկ կը
մտածեն, կը ցուցընեն ասով թէ չեն ճանչ-
նար մարդկային տկարութիւնը, եւ թէ
ինչպէս ճշմարիտ է, թէ ով որ ինք զինքը
վտանգի մէջ կը դնէ, վտանգին մէջ կը
կորսուի։ Ես մէկ օրինակ մինակ առջեւնիդ
դնեմ, թէ ինչպէս զօրաւոր է հրապու-
րանքը, որպէսզի ձեզի խրատ ըլլայ։ Մար-
գարիտա Վալուա Գաղղիայի Փրանկիսկոս
Ա. Թագաւորին քոյրը, ինչպէս կը գրէ
Ֆլէնդուր, բարձրագոյն հոգւոյ, հաստա-
տուն միտք ունէր, բարեսիրտ, եւ գործքե-
րուն մէջ աշխուրժ կին մըն էր։ Բողո-
քականները մտերնին հաստատուն դրած
էին զինքն իրենց կողմը ձգել, ամենայն
զգուշաւորութեամբ նախ՝ անոր պզտութենեաց
մէջ սպրդեցան մտան, առերեւոյթ՝ բանա-
սէրներու, գրագէտներու, փիլիսոփաներու
կերպարանք առնելով եւ միանգամայն
Կրօնքի մաքրութեան վրէժխնդիր կեղծաւո-
րելով, կամաց կամաց սկսան անոր սրտին

մէջ անչափ քննութիւններով Եկեղեցւոյ եւ անոր պաշտօնեաներուն յարգը նուաստցընել։ Անկէց ետքն իրենց խորամանկ խօսքերուն վրայ, այնչափ թունաւոր եւ զրօսեցուցիչ գրքոյկներ աւելցուցին, եւ անոր բոլորտիքը արդէն հրապուրուած զեղծ օրիորդներով այնպէս պաշարեցին, եւ անզգոյշ իշխանուհւոյն վրայ այնպիսի սաստիկ ազդեցութիւն մ՚ունեցան, որ քիչ ատենուան մէջ չէ թէ միայն զինք բոլորովին իրենց կողմը շահեցան, այլ նաեւ իրենց թիւր վարդապետութեանց նախանձայոյզ տարածիչն ու իրենց պաշտպանն ունեցան։ Աղէկ ճանչցաւ ասիկա Պէաւն, որ իշխանուհւոյն սիրոյն համար Եկեղեցւոյ դէմ ապստամբած էր, աղէկ ճանչցաւ նոյն իսկ բովանդակ Գաղղիա, որ անոր օգնութեամբը այնպէս չարաչար նոյն հերետիկոսութեամբ տոգորուած էր։

Ճշմարիտ է, որ մոլորութեան մէջ շատ տարիներ անցընելէն ետքը, իմանալով խաբէութիւնն որուն մէջ գլորած էր, ետ քաշուեցաւ, եւ դառն արտասուօք ողբաց իր անկումը։ Բայց իր արցունքները, եթէ Աստուծմէ գթութիւն ընդունելու կարող եղան, սակայն չկրցան ոչ այն մահաբեր հրդեհը մարել, որ գլխաւորաբար իր պատճառաւը Գաղղիայի մէջ բորբոքեցաւ, եւ ոչ ալ անոր ժանտ հետեւութիւնները դադրեցընել, որ են երեսուն տարուան անդուլ պատերազմները, չորս ահագին



ճակատամարտները, երեքհարիւր արիւնահեղ դաւաճանութիւնները, ազնուագոյն քաղաքներու աւերն ու ապստամբութիւնը, անհամար եկեղեցիներու, թագաւորաց եւ սրբոց գերեզմաններուն ապականութիւնն եւ մէկ միլիոնէն աւելի Գաղղիացւոց առանց դատաստանի փողոտումը[1]։

Գացէք հիմա, ապաւինեցէք դուք ձեր անձին, ով սիրելի հոգիք եթէ կրնաք, երբ այնպիսի մեծ մարդիկ կործանեցան։ Ո՛չ, ոչ, ով որ վտանգը կը սիրէ, անոր մէջ կը կորսուի, կ՚ըսէ Հոգին սուրբ, եւ օրըստօրական փորձառութիւնը նոյնը կը հաստատէ։ Զգո՛յշ կեցէք, որ ասոնց վրայ չաւելնայ ձեր անձանց տխուր օրինակն ալ։

## ԳԼՈՒԽ Զ.

Ինչպէս պէտք է խորշիլ անոնց, որ Բողոքականներէն կու գրուին կամ կը հրատարակուին։

Խօսակցութիւններէ զատ, կը գործածեն Բողոքականները նաեւ գրքերու միջոցը զձեզ մոլորութեան մէջ ձգելու։ Առջեւնիդ կը դնեն տեսակ մը զարդարուն գրքեր, ծայրէ ծայր թունով տոգորուած, եւ ձեզի ձրի ալ կու տան, այնչափ է իրենց սէրը։ Աս գրքերն են. նախ առաջին՝ Սուրբ Գիրքը աղաւաղ թարգմանութեամբ, ինչպէս արդէն զրուցած եմ, ետքն այլեւայլ Ուրացողներու՝ Տէ-Սանքթիսի, Պորելլայի եւ

[1] Փելլէքանի. Ընկերներ։

նմաններուն գրուածները, որոնք շատ տե-
սակ անօրէնութիւններ կը պարունակեն
Եկեղեցւոյ, Ս. Քահանայապետին, Քահա-
նայութեան եւ Խորհրդոց դէմ, եւ այլն։
Արդ՝ հետաքրքրութիւնը գիրքը կրնայ
զձեզ յորդորել ու գրգռել, որ գոնէ
ճանչնաք նոյն գրքերը, գոնէ մէյմը վրայէն
անցնիք։ Բայց յիշեցէք, որ ատոնք ոչ կըր-
նան կարդացուիլ եւ ոչ ալ քովերնիդ
պահուիլ։ Եթէ Եւա չուզէր հետա-
քրքրութեամբ կենալ ու զննել խնձորը,
ի վախճանի հրապուրանաց մէջ չէր իյնար,
ինչպէս որ եղաւ։

Չշարժեն զձեզ գրքերուն փառաւորու-
թիւնը, գեղեցկութիւնն ու պերճ անունը,
որոնցմով կը զարդարուին. վասնզի թոյն
են, եւ բաժակին ոսկի ըլլալը մէջը պա-
րունակուած թոյնին զօրութիւնը չի կարեր
եւ ոչ ալ կը տկարացընէ։

Այսպիսի գրքերը մինակ քովը պահելն
ալ մեղք է, աղէկ միտ դրէք. կարդալն
ալ ուրիշ մեղք մըն է, դարձեալ շատ մեղք
է ուրիշներուն ալ կարդալու տալը։ Ս.
Եկեղեցին, որ օրինաւոր իշխանութիւն ունի
ձեր վրայ, ծանր մեղաց պարտաւորութեամբ
զատոնք արգելած է, ուստի չեն կրնար
քովերնիդ պահուիլ։

Իսկ ըսելը՝ թէ Ս. Եկեղեցին չունի իշ-
խանութիւն արգելել, արդէն Բողոքական-
ներու մոլորութիւնն է։

Բայց վերջապէս աղէկ չէ՞ր ըլլար գիտ-



նալը, թէ ինչ կը զրուցեն Ս. Եկեղեցւոյ
թշնամիները։ Այսպէս կը գիտնայինք թէ՛
մէկը եւ թէ՛ մէկալը։ Եւ ոչ կաթողի-
կէ վարդապետութիւնը համեմատութենէ
պէտք է վախնայ։ Այս իմաստակութիւն-
ներուն ահաւասիկ իմ պատասխանս։

Եթէ կը համարիք թէ անիրաւութիւն է
ձեզի մոլորութիւնները ճանչնալ չթողուլը,
ինչո՞ւ չէք ըսեր թէ անիրաւութիւն է նաեւ
թոյնը ճաշակել չթողուլը։ Ի՞նչ։ Եթէ
մենք թոյն առնենք նէ, պատրաստ ունինք
նաեւ դեղթափը, կ՚ըսէք։ Բայց՝ կը թո-
ղո՞ւք արդեօք, որ կարիճ մը խածնէ զձեզ,
վասնզի տներնիդ ձէթ ունիք որ կը բժշ-
կէ։ Կամ կ՚ուտէ՞ք արդեօք մոլախինդի
աղցանը, գիտնալով որ տներնիդ ամենա-
բոյժ դեղն ունիք։ Զբօսանքի կամ զուար-
ճութեան համար ձեռքերնիդ մէկը կը վի-
րաւորէ՞ք, վասնզի ունիք բալասանը, որ
կրնար զձեզ բժշկել։ Ա՜հ, ատոնք խենթե-
րու առաջարկութիւններ են։ Ինչո՞ւ ու-
րեմն նոյնը չէք զրուցեր ձեր Հաւատքին
նկատմամբ ալ։ Եթէ Աստուծոյ ողորմու-
թեամբը հաւատքնիդ սրտերնուդ մէջ ամ-
բողջ ու մաքուր կեցած է, պէ՞տք էք թո-
ղուլ որ նոյնը վէրք ընդունի գէշ գրքեր
կարդալով, ատ պատճառանքով միայն, որ
ըսէք թէ՛ մէկ եւ թէ՛ մէկալ կողմը։ Ո՜վ
երբեք ըսաւ, որ առողջութեան մէջ աւելի
աղէկ կենալու համար հարկ է նաեւ հիւան-
դութիւնը փորձել։ Այսու ամենայնիւ

նկատմամբ հոգւոյ այսպէս կը զրուցուի։ Բայց՝ ինչ անխելքութիւն է։

Գուցէ մարմնոյ հիւանդութենէ աւելի հոգւոյ հիւանդութեան դեղ մը կարող ըլլաք գտնել. բայց՝ եթէ այն գրքերը կարդալու ըլլաք. գուցէ երբեք դեղ մը կարող պիտ՚որ չըլլաք ունենալ. ինչու որ. յայտնի խօսինք. այնչափ սորված կրթուած էք դուք. որ կարող ըլլաք դատաստան ընել խորհուրդներու վրայ, որ կը հաւատաք. հրամանական վարդապետութեանց վրայ, որ կը դաւանիք, եւ ամէն ճշմարտութիւններու վրայ. որ Ս. Եկեղեցին առջեւնիդ կը դնէ։ Ո՞ւր եւ ե՞րբ այնչափ ուսմունքը սորվեցաք։ Տղայութեան ատեն Քրիստոնէական վարդապետութիւնը քիչ մը սորվեցաք. մեծ ձանձրութեամբ եւ վեր ի վերոյ միտ դնելով։ Այսպէս առաջին Ս. Հաղորդութիւնն առնելէն ետքը. քանի մ՚անգամ Աւետարանի մեկնութիւնը երբեմն ալ քարոզ լսեցիք. կ՚ըսեմ քանի մ՚անգամ, երբեմն. վասնզի շատ անգամ եւ ոչ ալ ներկայ էիք. եւ արդէն բան մ՚ալ մտքերնիդ մնացած չէ. եւ այսպիսի գիտութեան նպաստովը կ՚ուզէք մոլորեցուցիչ գրքե՞րը կարդալ։

Բայց ի՞նչպէս կարող էք ան գրքերուն մէջ պարունակուած խաբէութիւններն ու ստութիւնները դուրս հանել առանց կաթողիկէ վարդապետութեան ընդարձակ գիտութիւնն ունենալու։ Զարնող ժամա-



ցոյցը ձեռքերնիդ առնելով միայն կը ճանչնա՞ք պատճառը. թէ ինչո՛ւ չի բանիր։ Հարկ է որ բոլոր անոր մեքենաներուն ծանօթ ըլլաք, որպէսզի կարող ըլլաք իմանալ, թէ ո՛ւր է պակասութիւնը։ Նոյնը պէտք է ըսել մեր խնդրոյն մէջ ալ։ Հարկ է գիտնաք Ս. Գիրքը բոլոր հիմամբ, որպէսզի շուտ մը իմանաք. թէ ո՞ւր ծածկուած են մոլորութիւնները որ այն գրքերը կը պարունակեն. եւ դուք երբեք այս ուսմունքին բրած չըլլալով. ինչ որ ատոնք ձեզի զրուցելու ըլլան, զամէնքն ալ խոշոր խոշոր պիտի կլլէք. ամէն իմաստակութիւնները ձեզի աղէկ պիտ՚որ երեւան, եւ մոլորութիւնները ճշմարտութեան տեղ պիտ՚որ ընդունիք, եւ ձեզի բոլորովին անկարելի բան մ՚ըլլալով այն մոլորեցուցիչներուն ամէն խաբէութիւնները, արհեստները եւ որոգայթները ճանչնալը. վերջապէս ողորմելութեամբ խաբուած պիտ՚որ մնաք։ Ահաւասիկ այսպէս պատահած է ուրիշներուն, այսպէս ալ ձեր գլուխը պիտ՚որ գայ։ Աս ալ վրան աւելցուցէք. կ՚ըսէք թէ դուք կ՚ուզէք ճանչնալ թէ՛ մէկը եւ թէ՛ մէկալը. բայց ասիկա գործքով ճշմարիտ չէ։ Յօժարութեամբ կը նստիք կը կարդաք իմաստակութիւնները. բայց ե՞րբ նաեւ ճշմարտութիւնները կարդացեր էք։ Նաեւ քաղաքներու մէջ, ուր գրքերու եւ կրթութեան աւելի դիւրութիւն կայ. փորձը կը ցուցնէ որ չեն

կարդացուիր ամենեւին այն գրքերը որ Ս. Հաւատքը կը մեկնեն, կը լուսաւորեն, կը պաշտպանեն, եւ անոր հաստատուն հիմունքը կը ցուցընեն. աս գրքերը չեն ճանչցուիր եւ ոչ ալ կ'ուզէ ճանչնալ, այնպէս որ՝ դատաստան կ'ընեն Ս. Հաւատոյ վրայ անոր թշնամիներուն խօսքերէն. բայց գրքերը չէ թէ միայն Կրօնական ուսում չկայ. վասնզի սորվելու ալ ժամանակ չկայ, այլ նաեւ կարելութիւն ալ չկայ. որովհետեւ պատշաճ գրքերը կը պակսին։ Ուստի եթէ մէկը թոյն խմելու ըլլայ, ամենեւին դեղթափ չի գտներ։

Աս կ'ըսենք առանց վիշտելու, թէ շատ անգամ կը պատահի, որ Աստուած Եկեղեցւոյ դէմ եղած անհնազանդութիւնը պատժելու համար, թող կու տայ որ իրենց անձանցը վրայ վստահանալով Եկեղեցւոյ արգելած գրքերը կարդացողները փորձով իրենց տկարութիւնը զգան մոլորութեան մէջ թաւալելով։ Եւ եթէ այս վերջին ծայրն ալ չհասնին, գոնէ Հաւատքնին կը տկարանայ, տարակոյսներ ու անձկութիւններ կը ծնանին, եւ այսպէս հոգին կամ շատ ժամանակ չարաչար կը տանջուի, եւ կամ մահաւիթ ճամբայ մը կը բացուի, որ կրնայ ժամանակաւ անհաւատութեան տանիլ։

Բայց ձեր՝ գրքերու նկատմամբ ընելու զգուշաւորութիւնը չէ թէ միայն անոնց վրայ պէտք է ըլլայ, որոնք յայտնապէս



անօրէնութեամբ գրուած են եւ անամօթաբար կը յարձակին Հաւատոյ դէմ, այլ նաեւ անոնց վրայ, որոնք գուցէ աւելի ազդեցութիւն ունին, աւելի գաղտնութեամբ գրուած ըլլալնուն համար։

Ասով կ'ուզեմ նշանակել Ռոմաններու անթիւ բազմութիւնը, որոնք անդադարար իրենց հարուածները Եկեղեցւոյ դէմ ա-գին անգին կը զարնեն. այն նենգաւոր պատմութիւնները, որոնք սուտ կերպարանք մը կու տան Հռոմայ Քահանայապետաց գործքերուն. այն անառակ պատմութիւնները, որոնք ծաղր ու ծանակ կ'ընեն Քահանաներն ու կրօնաւորները. այն չարագգած լրագիրները, որոնք իրենց յաւելուածներուն մէջ ամօթալից պատմութիւններով ինչ որ երկնից եւ երկրի վրայ յարգոյ եւ պատկառելի է, ամէն բան կ'անարգեն ու ոտքի տակ կ'առնեն. այս ամենայն ընթերցուածները կը վիրաւորեն եթէ ուղղակի չէ, գոնէ անուղղակի՝ Ս. Հաւատքը, եւ անոր կենդանութիւնը, պայծառութիւնը եւ փառաւորութիւնը որ պիտ'որ ունենար, կը պակսեցընեն։

Անոր համար աղէկ մտքերնիդ բերէք, յիշեցէք միշտ, որ խիստ պարտաւորութիւն ունիք այն մահաւիթ գրքերը մէկդի նետելու չընդունելու, քովերնիդ ալ չպահելու, չկարդալու եւ ուրիշին ալ չտալու որ կարդայ։ Եւ եթէ տանտէր էք, խանութի գլխաւոր էք, ընտանեաց հայր էք,

կամ եղանակաւ մը ուրիշներուն մեծն էք, չէք կրնար եւ պէտք չէ որ թող տաք ձեր որդւոցը, ձեր հպատակացը, ձեզի հնազանդողներուն, որ այն գրքերն ունենան կամ կարդան։ Գիտէ՞ք, ինչ կ՚ըսէ առակը. Ա՛յնչափ պատժապարտ է գողցողը, որչափ քսակը բռնողը. այնչափ պատժապարտ է բռնողը, որչափ թալլողը։ Եւ այս վճիռը պիտի տրուի թէ անդիի եւ թէ աս աշխարհքիս վրայ։

## ԳԼՈՒԽ Է.

Ի՛նչպէս պէտք է վարուիլ անոնց, որոնք բողոքականներէն ստակով կը գնուին։

Երբ որ ամէն նախընթաց խորամանկութիւնները բաւական չեն ըլլար ուղղափառ հոգին մոլորեցընելու, գիտէ՞ք, ինչ կ՚ընեն գլխաւորաբար աղքատներուն նկատմամբ։ Ամէն ամօթ երեսներնէն կը սրբեն, քանի մը փայլուն ոսկի դրամ կը շողացընեն եւ կը ջանան ստակով ապականել։ Կամաց կամաց քովերնին կը մօտենան, նախ ձեր որպիսութիւնը կը տեղեկանան, ձեր պիտոյքներուն վրայ ցաւակցութիւն մը կը ձեւացընեն, կը ցաւին որ ձեր Կրօնքը եւ ձեր Քահանաները ձեր վրայ հոգ չեն տանիր, վասնզի սէր ալ չունին։ Այս ամէն ցաւոց զգածմունքներէն եւ վշտակցութիւններէն ետքը կ՚աւելցընեն, թէ իրենք ձեզի համար պիտ՚որ խօսին եւ պիտ՚որ ը-



նեն ամէն բան. այսպէս առ այժմ ձեզի քանի մը դրամ կ՚երկնցընեն, ապագային համար ալ աւելի եւս կը խոստանան, թէ համձիք իրենցմէ ըլլալու։ Այս է արհեստը, որ շատ անգամ գործածեցին եւ այսօրուան օրս ալ կը գործածեն։

Արդ՝ ի՛նչ պէտք է ընել կաթողիկեայ մը, որ այսպիսի առաջարկութիւն մը կը լսէ։ Ես ձեզի ըսեմ, բայց միտ դրէք, որ աղէկ իմանաք։

Առաջին բանը, որ պէտք է ընէ ով որ այս եղանակաւ կը փորձուի. անմիջապէս զայրանալ բարկանալն է այնպիսի հրէշի մը դէմ, որ կը յանդգնի այդպիսի առաջարկութիւն ընելու։

Ինչու որ՝ ով որ այսպէս կը խօսի Ուղղափառի մը, այնպիսին խիստ ծանր թշնամանք կ՚ընէ անոր։ Մարդ մը, որ ուրիշ մարդու մը քով կը մօտենայ զանիկա ստակով գնելու համար, կը ցուցընէ թէ ամենեւին անոր վրայ համարում, յարգ չունի. եւ ով որ առջեւնիդ կ՚ելլէ եւ ձեր հաւատքն ու հոգին գնել կ՚ուզէ, կը ցուցընէ որ զձեզ անհաւատի եւ սրբապղծի տեղ դրեր է։ Նոյնը կ՚ընէ, ինչ որ Յուդայի ըրին Հրէից քահանայապետներն եւ ծերերը։ Կու տանք ձեզի այսչափ դրամ, եւ դուք ծախեցէք մեզի զՅիսուս։ Արդ՝ եթէ Ուղղափառի մը սիրտը չի խռովիր այսպիսի յանցանքի ընդունակ համարուելուն վրայ, ե՞րբ ուրեմն պիտ՚որ այլայլի եւ խռովի։

Ս. Պօղիկարպոս մարտիրոսը յարգելի էր իր սպիտակ ալեօքն եւ սրբութեամբը։ Ասիկա քաշկռտուած բերուած էր դատաւորին առջեւը Յիսուսի Քրիստոսի Ս. Հաւատքը խոստովանելուն համար. առջեւը դրին ոսկւոյ եւ արծաթի բլուր մը եւ կը հրապուրէին որ Ս. Հաւատքն ուրանայ։ Բայց Սուրբը Ծերունին այնպէս բարկացաւ այս առաջարկութեան վրայ, որ սրտին զարհուրանքէն եւ ոչ աչքն այն գանձերուն վրայ կը դարձնէր։ Արդ՝ այս զարհուրանքն եւ այս արհամարհութիւնն է, որ պիտի ունենայ Կաթողիկեայ մը, երբ որ մէկը իրեն այսպիսի առաջարկութիւն մը կ'ընէ իր Հաւատքը ստակով ծախելու։ Սակայն միայն սոսկումն ու սրդողիլը բաւական չէ, հարկաւոր է մէկդի վանտել այնպիսիները, որոնք ասանկ առաջարկութիւններ կ'ընեն։ Պէտք չէ իրենց ցաւակցութիւնն ընդունիլ, եւ պէտք չէ թող տալ որ մեր առջեւը մեր Մայրը՝ Սուրբ Եկեղեցին վար զարնեն, իբրեւ թէ քիչ սէր, քիչ գթութիւն ունի. հարկաւոր է իրենց յիշեցնել որ մենք այն մեծամեծ Հարց որդիքն ենք, որոնք յանձն առին սրի տակ երթալ, չարաչար տանջանքներով պատառ պատառ յօշոտիլ, արիւննին թափել, քան թէ զՅիսուս վշտացնել իր հաւատքն ուրանալով. հարկ է վկայել թէ պատրաստ ենք հազար անգամ մեռնիլ, քան թէ բերաննիս դնել պատառ մը հաց, որ



արժէ մեր հոգին, Հաւատքը, յաւիտենականութիւնը, Յիսուսի Քրիստոսի սէրը, եւ այսպիսի վեհանձն զգածմամբ համարձակ եւ աներկիւղ մերժելու ենք այնպիսիները։ Ահաւասիկ ինչ պէտք է ընենք։

Բայց կ'ըսեն ոմանք. Եթէ Ս. Հաւատքը չուրացայ, դեռ սրտիս մէջն է. միայն բողոքական կը ձեւանամ, որպէսզի այն օգնութիւնն առնում։ Ո՛հ, միայն կը ձեւանա՞ք։ Եւ կը կարծէք, թէ ասիկա արդարացում մըն է, որ զձեզ կ'ազատէ։ Եւ չէ՞ք գիտեր, թէ պարտաւոր ենք արտաքուստ խոստովանիլ, ինչ որ սրտերնուս մէջ կը հաւատանք։ Չէ՞ք գիտեր, որ Ս. Պօղոս կ'ըսէ, թէ Սրտիւ հաւատայ ի յարդարութիւն, եւ բերանով խոստովանի ի փրկութիւն[1]։ Մե՜ղք, որ այդ գեղեցիկ պատճառը Յիսուսի Քրիստոսի Սուրբ Մարտիրոսները չէին գիտեր։ Ոչ որ կը պահանջէր անոնցմէ, որ սրտերնուն մէջէն Ս. Հաւատքը մերժեն, կ'ուզէին միայն որ արտաքուստ նշան մը տան որ չեն հաւատար. եւ նոյն իսկ հալածիչներն էին, որոնք շատ անգամ խորհուրդ կու տային վայրկեան մը միայն արտաքուստ ձեւանալու, եւ այսպէս կեանքերնին ազատելու այնպիսի անագորոյն տանջանքներէն։ Բայց անոնք սոսկալով կը լսէին այսպիսի առաջարկութիւնները, երբեք չէին ընդունէր, եւ կը հաստատէին, թէ հազար անգամ մեռ-

[1] Հռոմ. Ժ. 10։

նիլ կ'ուզէին, քան թէ այն սրբապիղծ ձեւանալը յանձն առնուլ։ Թէեւ այն ձեւանալը կրնար աւելի տանելի երեւնալ, որովհետեւ ստակ շահելու համար չէր, այլ միայն առանց յանցանաց այնպիսի անողորմ մահուանէ ազատելու համար։ Այսու ամենայնիւ այս անօրէն պատճառներն երբեք ընդունելի չեղան։

Ի՞նչ պէտք է ըսել ուրեմն անոնց համար, որոնք չէ թէ կեանքերնին կորսնցընելու վախէն, հապա օրը մէկ երկու գահեկան շահելու համար հաւատքնին ծախելու կ'ըլլան։

Ի՞նչ կրնան պատասխան տալ այս վատ հոգիները Յիսուս Քրիստոսի, որն որ զմեզ ապահով ըրաւ, որ իր երկնաւոր Հօրն առջեւը պիտի չճանչնայ զանոնք, որոնք զինքը մարդկան առջեւը չճանչցան, երբոր գալու ըլլայ զիրենք դատելու։ Ի՞նչ պիտ'որ ըսեն, երբոր Յիսուս զիրենք, օրինակի համար, Ս. Ագնէսի մը. Ս. Չիչիլիայի մը. Ս. Ագաթայի մը, եւ ուրիշ այնչափ սուրբ կոյսանքներու հետ համեմատելու ըլլայ, որոնք իրենց հասակին ու սեռին յաղթելով, բռնաւորներուն առջեւն այնպիսի արիութեամբ կ'ելլէին, եւ յանձն կ'առնէին այնպիսի դառն տանջանքներով նահատակիլ, քան թէ Ս. Հաւատքն ուրանալ։ Ի՞նչ պիտ'որ ըսեն Ս. Իգնատիոսի, Ս. Պողիկարպոսի, եւ ուրիշ յարգելի ծերունիներուն առջեւը. որոնք ամէնքն ալ անոյժ կը



մխիթարուէին, որ կարող էին Յիսուսի իրենց հաւատարմութիւնը ցուցընել նաեւ կեանքերնին զոհելով։

Ի՞նչ պիտ'որ ըսեն Սրբուհի Փեղիկիտայի եւ անոր եօթն որդեակներուն առջեւը, որոնք իրենց ծաղկեայ հասակին մէջ, սրտերնուն ուրախութենէն կը խայտային սուրբ մօրերնուն հետ մեռնելնուն վրայ, Ս. Հաւատոյ վկայութեան համար։ Ա՜հ, կարծեմ թէ ատոնք իրենք իրենցմէ պիտ'որ փախչին երթան անդունդներու մէջ ծածկուելու, յառաջ քան Յիսուսին իրենց երեսը նետելն այն չորս ժանգոտած դրամները, որոնք իրենց ուրացութեանը գինն եղած էին։

Ինչու որ՝ իրենց դատապարտութեան վճիռը ի՞նչ պիտ'որ ըլլայ։ Այն, զորն որ Սիմոն Մոգ ունեցաւ արծաթով Հոգին Սուրբ գնել ուզելուն համար. Ս. Պետրոս Առաքեալն ըսաւ. Արծաթդ քեզի հետ մեկտեղ կորսուած է[1]։ Արդ՝ այս դատապարտութիւնը պիտ'որ ըլլայ անոնց ալ, զորն որ Յիսուս պիտ'որ տայ իրենց սեպհական հաւատքը ծախողներուն դէմ։ Յուդայ իր աստուածային վարդապետը վաճառելէն ետքը՝ ալ խղճի խայթերէն հանգիստ չունեցաւ, մինչեւ որ յուսահատութեամբ ինք զինքը կախեց, եւ հոգւով դժոխքին յատակը գլորեցաւ. այսպէս այս ուրացողներն ալ խղճերնուն խայթէն չարաչար տանջուելով՝

1 Գործ. Ը. 20։

երրեք հանգստութեամբ պիտի չվայելեն իրենց մեղաց պտուղը, եւ վերջապէս շուտ կամ ուշ աստուածային դատաստանին առջեւն ելլելէն ետքը, որուն հաւատքը ծախած էին, յաւիտենական դատապարտութեան վիհը պիտի նետուին։

## ԳԼՈՒԽ Ը.

Ի՛նչպէս պէտք է վարուիլ անոնց, որ քրիստոնէութենէն խաբուած մոլորած են։

Վերջապէս կրնայ պատահիլ այս դժբախտ դէպքը, որ մէկը կրակին քով շատ մօտեցած ըլլալով՝ ողորմելաբար այրած ըլլայ։ Կ՚ուզեմ ըսել, որ կամ հերետիկոսներուն հետ կենցաղավարելով եւ կամ անոնց գրքերը կարդալով ինք զինքը մոլորութեան մէջ ձգած ըլլայ, եւ ետքէն լռութեամբ հրաժարած ըլլայ իր դաւանութենէն, կամ աւելի եւս յայտնութեամբ, իր ուրացութիւնը կատարած ըլլայ, կամ Ս. Եկեղեցիէն հեռանալով, կամ Բողոքականներուն տաճարներն երթալով, եւ կամ աղանդի մը ընկեր գրուելով[1]։ Արդ՝ ասոր պատշա-

[1] Աս աղանդներուն մէջ ամենէն վտանգաւորն եւ ընդհանուրն է Ֆրան-մասոններու աղանդը, որ իր արտաքին մարդավար բայց կեղծաւորական վարմունքովը ամեն տեղ ամեն ընկերութեան մէջ կը մտնէ, կը թունաւորէ, ուր անզգոյշ մարդիկ եւ գլխաւորաբար երիտասարդներ կը գտնէ։ Աս աղանդը ուրիշ բան չէ գիտեր, բայց աշխարհքիս վրայէն ջնջել հաւատք, կրօնք, Եկեղեցի, եւ օրինաւոր իշխանութիւն։ Անկից



ճական դեղն ու դարմանը ի՞նչ է։ Ամեն բանէ յառաջ՝ այսպիսին պէտք է ինք իրեն գայ, չափէ մտաց աչքովը այն վիճակին բարձրութիւնը՝ որմէ ինկած է, եւ անդունդը՝ ուր գլորեր է։

Ով որ Ս. Հաւատքը կորսնցուցած է, այս անգին գանձին հետ կորսնցուցած է չէ թէ միայն սրբարար շնորհքը եւ արդիւնք վաստըկելու կարողութիւնը, այլ նաեւ արմատն եւ սկիզբն որով կրնար Տէրն մեր իր փրկութեան օգնութեան կանչել։ Այնպիսին չի կրնար ուրիշ բանի սպասել, բայց եթէ յանցանքներով ու խղճի խայթերով լեցուն կեանքի մը, վշտալից ու չարաչար մահուան մը, զայրագին ու դառն դատաստանի մը, եւ արտասուօք ու յուսահատութեամբ լի յաւիտենականութեան մը։

Այս ամենայն անոր համար, վասնզի թշնամի դարձեր է այն Աստուծոյ, որն որ Ս. Հաւատքն իրեն պարգեւելէն ետքն ուրիշ անթիւ շնորհքներ ալ պատրաստեր

աւելի փառաւոր բան կրնա՞յ ըլլալ։ Պիոս Թ. Ս. Քահանայապետը՝ թէպէտեւ ամեն առթի մէջ այս աղանդը մերժած էր, այսու ամենայնիւ տեսնելով անբաւ վնասները, որ կը հասցնէ Եկեղեցւոյ եւ Ընկերութեան, անցեալ տարի Ապր. 25ին Քահանայապետական խօսքով մ՚ալ հանդիսապէս կարդինալաց խորհրդեան մէջ նոյնը դատապարտեց։ Գիտնալով որ Քրիստոսի փոխանորդին՝ Եկեղեցւոյ գլխոյն ձայնին ամեն հաւատացելոց սրտին վրայ մեծ ազդեցութիւն ունի, պատշաճ համարեցանք նոյնը թարգմանել, եւ առանձին յաւելուածով հրատարակել սա մատենիս վերջը։

էր զինքը մինչեւ երկնից վերջին բարձրութիւնը հանելու համար։ Արդ՝ այսպէս համեմատելով կորսնցուցածը գտածին հետ, ի հարկէ կը ստիպուի այն դժբախտ հոգին ինք իրեն գալ, իր սրտին խորութեան մէջ մտնել, եւ ամենայն դժուարութեանց յաղթելով՝ բրած աւերը նորոգել եւ առջի վիճակին դառնալ։

Այս վեհանձն որոշումն ընելէն ետքը, պատշաճ է անմիջապէս ձեռքը գործքի զարնել։ Սրբուհի Թերեսիա իմաստութեամբ կը խորհրդածէ, թէ ուրիշ մեղաւորներուն, եւ անոնց մէջ որոնք Հաւատքը կորսնցուցեր են, այն տարբերութիւնը կայ, որն որ ամբողջ բայց աղտոտ ապակւոյ եւ կոտրած ապակւոյ մը մէջ կը տեսնուի։ Աղտոտ՝ բայց ամբողջ ապակին, այսինքն է հասարակ մեղաւորը, կըրնայ ապաշխարութեամբ մաքրուիլ, սըրբուիլ ու յստակուիլ. կոտրած ապակին՝ այսինքն է ուրացողը, հարկ է որ նախ փուռն մէջ երթայ. ըսել կ'ուզէ թէ նախ Ս. Հաւատքը պէտք է նորոգէ, որպէսզի ետքէն կարող ըլլայ օգտակար ապաշխարութիւն ընել։ Ուստի մոլորութեան մէջ ինկողէն կը պահանջուի, որ ամբարիշտներուն ընկերութենէն ետ քաշուի, կարէ անոնց հետ կենցաղավարութիւնն ու հաղորդակցութիւնը. ետքը ինք զինքը Աստուծոյ առջեւը դնելով, ի ներքուստ եւ սոսկալով՝ մերժէ իր ամէն անցեալ անհաւա-



տութիւններն, եւ ամենայն անկեղծութեամբ Աստուծոյ այն ինկած հաւատոյ ներգործութիւններն ընէ եւ հաստատէ, թէ կը հաւատայ այն ամենայն ինչ որ Ս. Եկեղեցին կը հաւատայ, թէ կը մերժէ այն ամենայն ինչ որ Ս. Եկեղեցին կը մերժէ, եւ թէ սա հաւատքին մէջ Աստուծոյ շնորհօքը կ'ուզէ ապրիլ ու մեռնիլ։ Դարձեալ պէտք է հազար ու հազար անգամ թողութիւն խնդրէ իր ամէն անհաւատութիւններուն համար։

Այս տրամադրութեամբ երթայ իմաստուն եւ խոհեմ խոստովանահօր մը եւ յայտնէ անոր ամենայն անկեղծութեամբ իր բրածները, որպէսզի անոր գթութենէն օգնութիւն առնու, եւ ճանչնայ թէ ինչ կը մնայ իրեն ընելու Աստուծոյ եւ Ս. Եկեղեցւոյ հետ հաշտուելու, տուած գայթակղութեան դարման մ'ընելու, եւ ապագային մէջ վտանգներէն ապահով ըլլալու համար։

Բայց ասիկա անձնասիրութեան շատ ծանր կ'արժէ, պիտ'որ ըսէ մէկը։ Արժէ ինչ որ կ'ուզէ. բայց աւելի եւս կ'արժէ դժոխքի հրոյն տանջանաց յաւիտենականութիւնը։ Ետքէն վրաս պիտի ծիծաղին անոնք, որ իմ մոլորութեանս ընկերներն էին։ Այո. տակաւին պիտ'որ գովեն եւ գըրկեն զքեզ անոնց տեղը քու կաթուղիկեայ եղբայրներդ։ Գուցէ թէ զիս կը հալածեն եւ չարիք կը հասցնեն ինծի անոնք.

որոնցմէ կը հեռանամ. անանկ ըլլայ, բայց՝ եթէ նաեւ ամէն մարդիկ եւ ամէն սատանաները միկտեղ ժողվելով վրաս չարիքներ հասցընելու ալ ըլլան, չեն կրնար այնպիսի մեծ չարիք մ՚ընել քեզի, ինչպէս որ դուն քեզի կ՚ընես Կաթողիկէ Հաւատքէն օտարանալովդ։

Սակայն՝ գոնէ կրնամ՝ ապահով ըլլալ, որ եթէ այս ամենայն ընելու ըլլամ, Աստուած զիս կ՚ընդունի, եւ իմ ծանր անկմանս թողութիւն կու տայ։ Կրնամ կասկածիլ Յիսուսի գթութեան վրայ, որ այնչափ սիրով ընդունեցաւ զՍ. Պետրոս, որ զինքն ուրացած էր, ընդունեցաւ նաեւ այնչափները որոնք հալածանաց ատեն ինկած էին, ու մինչեւ մեր ատեններս ալ այնպիսիները կ՚ընդունի աղեգորով գթով։ Աս ալ ըսեմ քեզի, չէ թէ միայն զքեզ պիտ՚որ գրկէ, այլ նաեւ եթէ այս անկմանէդ առիթ առնելով զքեզ խոնարհեցընելու ըլլաս աւելի ապաշխարութիւն ընելու եւ զինք աւելի եռանդով սիրելու, կրնաս նաեւ մեծ առաքինութեան, կատարելութեան եւ սրբութեան վիճակի հասնիլ։

Բայց հոս, անոնց՝ որոնք այս չարեաց փոսին մէջ ինկեր են, քաջալերութիւն մը տալու համար, որ Աստուծոյ ողորմութեանը ապաւինին, յիշատակեմ՝ ձեզի մեր օրերը պատահած դէպք մը, ինչպէս կը պատմեն երկու ամենահաւատարիմ եւ միանգամայն կենդանի մատենագիրներ, Հ.



Շթէօկէր եւ Հ. Փերրոնէ։ Գաւառի մը մէջ, կ՚ըսեն անոնք, որ սահմանակից է Հիւսիսային Գերմանիայի, քառասուն յիսուն տարի կայ, քահանայ մը կ՚ապրէր, որ բոլորովին իր վիճակին սրբութիւնն ու պարտաւորութիւնները մոռցեր էր։ Մեղքէ մեղք գլորելով հոն հասաւ, որ թողուց իր հայրենիքը, փախաւ գնաց ուրացաւ հաւատքը եւ Բողոքական եղաւ, վերջապէս Բողոքական հովուի պաշտօն մ՚ալ առաւ, եւ այսպէս ճշմարտութեան քարոզչէն եղաւ ուսուցիչ մոլորութեան։ Խել մը տարի անցուց ողորմելին Աստուծոյ հետ թշնամութեան վիճակի մէջ։ Օր մը՝ մեծ քաղքի քարոզչի մը քով ճաշելու հրաւիրուեցաւ, ուր որ մերձաւոր բողոքական գաւառներէն ուրիշ բողոքական հովիւներ ալ կանչուած էին։ Ուտելու խմելու ուրախութեան մէջ եղած ատեննին՝ լուր հասաւ Հովիւ տանտիրոջ, թէ աղքատ մարդ մը մեռնելու վրայ է, որն որ կ՚երեւար թէ հոգեւոր օգնութեան շատ կարօտութիւն ունի։ Չեմ գիտեր ինչ արգելք կար, որ տանտէր Հովիւը չգնաց ողորմելի հիւանդին օգնութեան հասնելու, եւ ան ատեն այս մեր յիշած ուրացողը ինք զինքն ընծայեց անոր տեղ հիւանդը տեսնալու։ Ընդունուեցաւ առաջարկութիւնը, եւ տարին զինքը գձուձ եւ խեղճ խցկան մը մէջ, ուր վերջին աղքատութեամբ յարդէ անկողնոյ վրայ պառկած

էր ծեր մը՝ հոգին աւանդելու վրայ։ Հովիւը Ս. Գրքին մէջէն քանի մը խօսք զրուցեց անկողնոյն քով. բայց հոգեվարը ուրիշ բան պատասխան չէր տար, բայց եթէ՝ Ես կորսուած եմ, վա՜յ ինծի, ես դատապարտուած եմ։ Կը քաջալերէր զինքը այն Հովիւը ու սիրտ կու տար որ վստահութիւն ունենայ։ Ո՛չ ոչ, ըսաւ հոգեվարը, ոչ ոք կրնայ ինծի օգնութիւն ընել, չեմ կրնար երկինք երթալ, շատ ահագին են մեղքերս, պէտք է որ դատապարտուիմ։ Բայց Աստուծոյ սիրոյն համար, ինչո՞ւ ասանկ պիտ'որ ըլլայ. ինչ բանէ այսպէս սիրտդ ծանրացեր է։ Հոգեվարը միշտ յուսահատութեան խօսքեր կը զրուցէր։ Վերջապէս գիջաւ Հովուին ջերմ աղաչանացը եւ ըսաւ. Ահա՛ ըսեմ քեզի ինչու համար ինծի ոչ փրկութիւն եւ ոչ երանութիւն կայ. ես ուրացող Ուղղափառ Քահանայ մըն եմ, եւ ամէն մեղքերս որ աս ուրացութեան կապուած են, իմ հակառակելս Աստուծոյ շնորհաց կոչմանը, եւ Աստուծոյ անչափ ողորմութիւնը մերժելս....։ Աղէ՛. աս իմ մեղքերս շատ մեծ են, չեմ կրնար արքայութիւն գտնել, ես կորսուած եմ, ոչ ոք կրնայ ինծի օգնել, այո՛, չեմ կրնար օգնութիւն գտնել մէկէ մը։ Այս պատմութիւնը շատ ճմլեց՝ տրտմեցուց Հովուին սիրտը, որն որ ասով իր հոգւոյն վիճակը աչքին առջեւը նկարուած կը տեսնէր. որուն մէջ հին



դաւանանքը արթընցաւ. մինչեւ իր խղճին մէջ այն աստուածային կարողութիւնը, որ Յիսուսի Եկեղեցւոյն մէջ տրուած է տկար մարդու մը, որ Քահանայ կը կոչուի, եւ զուարթութեամբ ըսաւ հոգեվարին. իմ բարեկամս, իմ եղբայրս. կենդանի՛ է Աստուած, ես, ե՛ս կարող եմ քեզի օգնել, ես կրնամ քեզի նպաստել. ահաւասիկ ես կաթողիկեայ քահանայ եմ։ Այո՛, այս ճշմարիտ է, ես ալ ուրացող մըն եմ. ես ալ նզովեալ եմ, բայց իմ քահանայական իշխանութեամբս, կրնամ հոգեվարի մը երկնից դռները բանալ։ Ան բոպէին ծեր հիւանդին վրայ այնպիսի զգացում մ'եղաւ, իբրեւ թէ վերէն հրեշտակ մը իջեր իր քովը կեցեր էր, իրեն փրկութիւն բերելու։ Այսպէս Աստուծոյ ողորմութենէն յաղթուելով, որն որ մինչեւ իր կենացը վերջին բոպէն իրեն թողութիւն եւ հաշտութիւն կը մատուցանէր, եւ կը խոստանար երկինք եւ յաւիտենական կեանք, ներքին ցաւով ու սրտանց՝ զղջման եկաւ, խոստովանեցաւ իր մեղքերը, արձակումն առաւ, եւ.... մեռաւ Աստուծոյ սիրոյն ու բարեկամութեան մէջ։ Այս Աստուծոյ սիրոյն յաղթանակը, որ երանելի կ'ուզէ ընել ամէն մարդիկ, եւ ամէնէն զեղծ ու ապականեալներն ալ մինչեւ կեանքերնուն վերջին շունչը կը փնտռէ իբրեւ գորովալից մայր մը, այնպէս շարժեց ու գրաւեց ան Հովուին հոգին, եւ յան-

կարծակի անոր սիրտն այնպէս փոխուեցաւ շնորհաց ամենակարող զօրութեամբը, որ այն րոպէին մէջ իւր զինքն որոշեց Աստուծոյ դառնալու։ Անմիջապէս եկաւ իր ընկերակիցներուն եւ ամենք խօսեցաւ անոնց հետ. Մնաք բարով, իմ Տեարքս, ես կը դառնամ իմ Կաթողիկէ Եկեղեցւոյս գիրկը, զոր այնպիսի նենգութեամբ թողուցի։ Աստուծոյ ողորմութիւնը զիս կը կանչէ ապաշխարութեան, իրեն հետ հաշտուելու. եւ..... այնչափ գթած է ինծի Աստուած, որ նաեւ երկնից արքայութեան կը հրաւիրէ։

Ինկողներէն զատ, կան նաեւ այնպիսիներ ալ որոնք կ'երերան, կը կաղան, եւ մեծ վտանգի մէջ են այսպիսի անօրէնութեան մէջ գլորելու։ Արդ՝ ի՞նչ ըսեմ անոնց։ Երեւակայեն թէ հորի մը, մանաւանդ թէ ահաւոր անդունդի մը եզերքը կեցեր են, եւ սատանան եկեր, ականջներնէն վար կը զրուցէ, որ իրենք զիրենք այն վիհին մէջ ձգեն։ Ի՞նչ պատասխան կուտային արդեօք ան ատենը։ Հիմա, նոյնը թող ըսեն գժոխային թշնամւոյն, ամէն առաքինական զօրութիւններն սրտերնին ժողվեն, ինչպէս սովոր են մարդիկ ընելու վերահաս ծանր վտանգներու մէջ, մանաւանդ մէյմը Վերջինքները, որ կը սպասեն մեզի, բարիքներն որ պիտ'որ կորսնցընեն, եւ մեծ զայրացմամբ մերժեն ամէն տարակոյս, որ սատանան միտքերնին կը ձգէ, հազար



անգամ վկայելով սրտերնուն մէջ թէ երբեք չեն ուզեր Կաթողիկէ ճշմարտութենէ հեռանալ։ Յիշեն, որ մեր Ս. Հաւատքը հիմնուած է Նահապետներուն, Մարգարէներուն, Առաքեալներուն եւ Մարտիրոսներուն վրայ, հիմնուած է անհամար պանծելիքներու, ամենայն Վարդապետաց գիտութեանն եւ երկնից յայտնի պաշտպանութեանը վրայ, զորն որ նոյն իսկ սատանաներն ակամայ կամօք շատ անգամ հաստատեցին։ Այսպիսի ընդհանուր խորհրդածութիւններով, առանց վիճելու իրենց մտացն եւ սատանային հրապուրանացը հետ, պէտք են մերժել ամէն խորհրդածութիւն, որ կամ կրքերն եւ կամ սատանան առջեւնին կը հանեն։

Բայց որովհետեւ այս ամէն Հաւատքի վրայ ծագած տարակոյսները մէկդի ձգելու համար, հարկ է անոնց պատճառը, արմատներն եւ ակիզբը հեռացընել, ասոր համար անոնց վրայ յետագայ գլուխներուն մէջ կը խօսինք։

## Գ Լ Ո Ւ Խ Թ.

Առաջին զգուշութիւն հաւատքը կորսընցընելու համար, այսինքն է՝ հալածել ամբարտաւանութիւնը։

Ով որ մեծագին գանձ մ'ունի, չի շատանար անով միայն, որ նոյնը չգողցուի, այլ նաեւ ամէն կարելի միջոցներն ի գործ կը դնէ, որ մէկը զարան մտնելու ալ կա-

բող չըլլայ։ Այսպէս պէտք էին ընել Ուղղափառ Ս. Հաւատքին նկատմամբ, որուն երբեք ինչպէս արժան է չենք կրնար յարգը ճանչնալ։ Ուստի ամենայն կարելի զգուշութիւնները պէտք է ի գործ դնեն, այս վախճանին հասնելու։ Ասոր համար հոս քանի մը խիստ ազդու միջոցներն որչափ ինծի կ'երեւան, ձեզի ցուցընեմ՝։

Առաջինն է, մօրերնուդ մէջէն հալածել տգիտութիւնը։ Ինչու որ՝ շատ մատենագիրներ այս խորհրդածութիւնն ըրած են, որ Ս. Եկեղեցւոյ առաջին դարերէն սկսելով, անոնք ամէնքը, որոնք աւելի ճանչցան մեր Սուրբ Կրօնքը, անոնք աւելի եւս խորունկ իմացան զանիկա, աւելի եւս պընդութեամբ կապուեցան, աւելի եւս սիրեցին, աւելի եւս եռանդեամբ ի գործ դրին։ Ասիկա իրեն ճշմարտութեանը մէկ ցոյցն ըլլալէն ետքը, նաեւ եղանակը կամ՝ կերպը մեզի կը ցուցընէ, որով սրտերնուս մէջ նոյնը կրնանք պահել։

Իրօք ալ՝ ո՛վ աւելի խորունկ ճանչցաւ Կրօնքը քան Ս. Յուստինոս, Ս. Կիպրիանոս, Ս. Եպիփան, Ս. Օգոստինոս, Ս. Յովհաննէս Ոսկեբերան, Ս. Գրիգոր, Ս. Աթանաս, Ս. Թովմաս, քան Ս. Եկեղեցւոյ ամէն Հայրքն եւ Վարդապետները, ըսենք նաեւ քան մեր Ս. Լուսաւորիչը, որոնք ամէնքն ո՛րչափ անոր վրայ մտածեցին՝ այնչա՛փ ալ կրեցին ու գրեցին։ Եւ որովհետեւ այնպէս խորունկ ճանչցած էին,



անոր համար ալ այնչափ կը յարգէին ու կը սիրէին Կրօնքը։ Ուստի՝ եթէ մեր օրերն այնչափները բանի տեղ չեն դներ նոյն Կրօնքն ու կ'անարգեն եւ մինչեւ նաեւ ուրանալու փորձութիւնն ալ կ'ունենան, ի՞նչ է ասոր պատճառը։ Ո՛հ, շատ անգամ՝ աս կը պատահի, որ նոյնը չեն ճանչնար բոլորովին, եւ կամ՝ սխալ կը տեսնեն, մտքերնուն մէջ երեւակայելով ան՝ որ չէ։ Ես մէկ անգամէն աւելի հանդիպեցայ ոմանց, որոնք խիստ վար կը զարնէին քանի մը վարդապետութիւններ, զորոնք կ'ըսէին թէ ամբարշտութեամբ Եկեղեցին կ'ուսուցանէ. բայց՝ իրենց ձեռքով շօշափել տուի, որ Եկեղեցին երբեք այնպիսի վարդապետութիւն չէր երազած, եւ իրենք ապշեցան կեցան։ Եթէ ասոնք Կրօնքը ճանչնային, ստուգիւ չէին հայհոյեր, ինչպէս կը գրուցէ Ս. Յուդա, ան բանն որ չեն գիտեր։

Ալ կ'իմանային, թէ Կաթողիկէ Եկեղեցին աստուածային է իր հիմնադրութեամբը, աստուածային է իր տարածմամբը, աստուածային է իր պահպանութեամբը. եւ թէ իր մեզի առաջարկած հաւատալի ճշմարտութեանց, հրամանական վարդապետութեանց եւ խորհրդոց մէջ այնչափ բարձր գեղութիւններ կը բովանդակէ, այնչափ խորութիւն, այնչափ միաբանութիւն եւ ներդաշնակութիւն ունի, որ ով որ անգամ՝ մը զինք քիչ մ'ալ ճանչցած ըլլայ, չի կրնար իր զարմանքն եւ մնաց

յափշտակութիւնը ծածկել։ Իր վարդապետութիւնը բարուց նկատմամբ այնպէս մաքուր, այնպէս անարատ է, որ ամէն թշնամիներն, որչափ կ՚ուզեն ալ, չեն կըրնար վար զարնելու բան մը գտնել։ Իր պաշտամանցը վրայ ամենեւին չեմ խօսիր, որն որ թէ Աստուծոյ մեծվայելչութեանը, եւ թէ մեր տկարութեանն ու խեղճութեանը հաւասարապէս կը պատշաճի։

Չեմ զրուցեր նաեւ իրեն ծէսերուն, իրեն արարողութիւններուն վրայ, որոնք լի են այնպիսի խորունկ խորհուրդներով եւ սուրբ նշանակութիւններով, որ ստուգիւ զարմանք կը պատճառեն։ Չեմ խօսիր նաեւ իր պաշտելի սահմանադրութեանը, սրբազան հովիւներուն նուիրապետութեանը, իր վարդապետութեանց ստուգութեանը, իր Խորհրդոց մէջ պարունակուած գանձերուն վրայ, եւ ոչ ալ այն միաբանութեան վրայ, որով ողորմութիւնն արդարութեան հետ, Աստուծոյ մեծվայելչութիւնը՝ մարդկան ողորմելութեան հետ, երկինք երկրիս հետ կը կապէ, եւ մեր հոգեւոր եւ յաւիտենական երջանկութիւնը կը միացնէ այն ժամանակաւոր բարիքներուն հետ, զորոնք կարող ենք վայելել հոս աս աշխարհքիս վրայ։

Բայց՝ պարզ հաւատացելոց մէջէն ո՞վ կարող է մտադիր ըլլալ այնչափ գերագոյն խորութեանց, այնչափ ներքին պարգեւաց եւ շնորհաց, այնչափ երկնաւոր



բարիքներուն, այնպէս որ իրեն մտքին մէջ ասոնց վրայ պայծառ տեսութիւն մ՚ունենայ. եւ այսպէս ինք իրեն համար տայ ամէն բաներու վրայ, որոնց կը հաւատայ, որոնց կը յուսայ եւ որոնց վրայ իր սէրը դրած է։

Հարկ էր ճանչնալ, թէ որպիսի հաստատութեամբ հիմնուած է Կաթուղիկէ Եկեղեցին, ինչպէս Սուրբ Գրոց, եւ աւանդութեան վրայ յեցած է, եւ ինչպէս անոր նպաստաւոր են՝ միայն իր տրամաբանութեամբն եւ իմաստունք իրենց ճոխութեամբը։

Հարկ էր ճանչնալ, թէ ասոր ներհակ ինչպէս անմաքուր աղտոտ են Ուղղափառ Եկեղեցիէն բաժնուած աղանդները։

Ինչպէս իրենց աղանդի սկզբնաւորութիւնները, զիրենք ամէն տեսակ հակառակախօսութիւններու մէջ տարին ձգեցին, ինչպէս իրենք իրենց մէջ բաժնուեցան, փեռեկտեցան, բզըկտեցան եւ իրար նզովեցին, ինչպէս իրենց դաւանանքներուն մէջ ամենեւին ստոյգ, ճշմարիտ եւ հաստատուն բան մը չունին, որովհետեւ զրկուած են բոլորովին Աստուծոյ անգին շնորհքներէն, անոր պաշտպանութենէն, անոր սըրբութեան նաեւ արտաքին պարգեւներէն, ինչպէս են մարգարէութիւնները, հրաշքները, հիւանդաց բժշկութիւնները, Ս. Գրոց մեկնութիւնը, եւ ասոնց նմանները։

Հարկ էր ճանչնալ, թէ որպիսի ակար հի-

մահ վրայ գրուած է Բողոքականութեան բոլոր շինուածքը եւ թէ որչափ դիւրին բան է լուծելն իր ամէն իմաստակութիւնները, որոնցմով զինուորեր է եւ դեռ կը պահէ։

Այս ամէն տեղեկութիւններով Ուղղափառ մը ներքուստ այնպէս կը լուսաւորուի, այնպէս կը զօրանայ, որ իր Հաւատքին խնդրոյ տակ ձգուիլը լսած ատենը տոկուն մը կը զգայ եւ բարկութիւնը կը բորբոքի։

Ասոր տեղ ի՞նչ կ'ընէ Քրիստոնէից մեծ մասը, ի՞նչ կ'ընէք դուք։ Մեծ մասը չեն գիտեր ամենեւին աս ճշմարտութիւնները, եւ ոչ ատոնց վրայ յիշատակութիւն մ'ունեցեր են։ Կրօնքի վրայ՝ եթէ այն քիչ, անկատար, վեր ի վերոյ տեղեկութիւնները վերցընելու ըլլաս, բան մը չեն գիտեր։ Ըսէք ճշմարտութիւնը, ձեր որպիսութիւնն ալ ասիկա չէ՞։ Նաեւ ի՞նչ զարմանք է, եթէ ամէն մէկ թեթեւ դժուարութեան մէջ, որ առջեւնիդ կ'ելլէ, չէք գիտեր ինչ պատասխան տալ, եւ երբեմն ան աստիճանի կը հասնիք, որ կը կարծէք թէ Կաթողիկէ Կրօնքը ատոնց հանած դժուարութիւններուն ալ տալու պատասխան չունի։ Ո՛հ, եթէ կ'ուզէք աւելի հաստատուն, աւելի անդրդուելի ըլլալ Հաւատքներնուդ մէջ, ջանացէք որ քիչ մը աւելի նոյնը ճանչնաք։ Մի՛ ամչնաք Եկեղեցին երթալու Քրիստոնէական վարդապետու-



թեան եւ Աւետարանի մեկնութիւնը լսելու, եւ փոխանակ այն գարշելի գրքերը կարդալու, որոնք ծածուկ ծածուկ ձեռքերնիդ կու տան, հոգացէք ձեզի քանի մը բարեպաշտական գրքեր, որ ձեր հոգւոյն կրթութիւն տան եւ ձեր սրտին սնունդ։

Բայց երբեմն գիւղական ժողովրդեան մեծագոյն գայթակղութեան պատճառն ան է, որ Կաթողիկէ Կրօնքը վար զարնողներուն մէջ քաղաքացիներ ալ կը գտնուին, որոնք գիտնականի անուն առած են, վանքի ուսում առնելու գացեր են։ Իմ՛ սիրելիքս, կ'ուզէ՞ք որ անկեղծութեամբ խօսիմ։ Մտի՛կ ըրէք։ Չէ՞ թէ ամէն քաղաքացիները, որ ձեր մօտերը գիւղագնացութեան կու գան, ձեզմէ շատ աւելի բան գիտեն Կրօնքի նկատմամբ։ Ստուգիւ կան որ ձեզմէ շատ աւելի գիտեն, բայց ատոնք Կրօնքը չեն արհամարհեր. մանաւանդ որ՝ թէ՛ իրենք սրտանց կը յարգեն եւ թէ՛ իրենց ձեռաց տակը եղողներուն յարգել կու տան։ Ատոնք կը ջանան նաեւ մատուռներ շինել եւ Եկեղեցիները պահպանել, որպէսզի ամէնքն ալ դիւրութիւն ունենան իրենց հոգեւոր օգուտը քաղելու։ Բայց՝ եթէ այսպիսիներ կան, կան նաեւ ուրիշ շատերը, որոնց գլուխը՝ որչափ թեթեւ, ըղեղը որչափ դատարկ եւ սիրտը՝ որչափ ապականած է, չի կրնար ըսուիլ. ատոնք ամենեւին ձեզմէ աւելի սորված չեն, անխրատ եւ անկրօն Տէարք են, որոնք կ'երեւայ թէ

երկրիս վրայ չեն ապրիր՝ բայց եթէ ուտելու, խմելու, պտըտելու, դրամը ընելու եւ վայելելու նաեւ անմաքրութեանց մէջ. Թեթեւամիտ երիտասարդներ՝ լի ամէն տեսակ ազատութեամբ, որոնք որ անարգ հաճոյք մը կատարելու համար պատրաստ են ուրանալու Հայր, իշխան, երկիր եւ երկինք. Ըսանցմէ ոմանք, թէ կ՚ուզէք, նաեւ Համալսարաններու մէջ գտնուած են, սորված են երակին շարժումը գննել, արիւն առնել, ապեղանի շինել ու գնել, վէրք մը կտրել, եւ այլն. բայց աս բաներէն զուրս զորոնք շատ անգամ քիչ եւ գէշ սորված են, իրենց ժամանակը կորսնցուցած են սրճարաններու, կերուխումի, հայհոյելու, խաղալու խնտալու, թէատրոններու եւ ուրիշ չարագոյն գէշութիւններու. իսկ Կրօնքի նայելով՝ ձեզի պէս տգէտ են, գուցէ նաեւ ձեզմէ ալ չարագոյն. բայց տգիտութեան վրայ մոլորութիւնն ալ կ՚աւելցընեն, զորն որ ծծած են հազար ու մէկ գարշ եւ անկրօն գրքերու մէջէն. Մի զարմանաք ուրեմն, եթէ ատոնք այսպէս կը խօսին, գայթակղութիւն մ՚առնուք, իբրեւ թէ գիտուն անձինքներ են, որ Կրօնքի դէմ կը խօսին, ինչու որ՝ ամենեւին բան չեն գիտեր. Երանի՛ թէ ճշմարիտ վարդապետութիւնն ունենային, երանի՛ թէ Կրօնքը հիմանց ճանչնային, ան ատեն ուրիշ բան չէին կրնար ընել, բայց եթէ ինչ որ միշտ ըրին ճշմարիտ գիտունները, այս-



ինչն է յարգել, սիրել ու ի գործ դնել Սուրբ Կաթողիկէ Կրօնքը. Համբաւաւոր Լահարփ ի սկզբան ամբարիշտ, անկրօն եւ Բողոքականներէ գէշ մէկն էր. վերջերը դարձաւ եւ եղաւ եռանդուն հետեւող Ս. Ուղղափառ Եկեղեցւոյ. Աս պատճառաւ ամբարշտին մէկը, որ երբեմն իրեն ընկերն էր, օր մը սկսաւ զինքը ծաղրել, բայց Լահարփ աս ազդու խօսքերով պատասխանը տուաւ. Ես ալ ատեն մը գժբախտութեամբ Կրօնքը կը ծաղրէի, բայց ետքէն աղէկ սորվեցայ, ճանչցայ, եւ ա՛լ չեմ կրնար չսիրել. Դուն ալ նոյնը աղէկ մը սորվէ, եւ կը տեսնես թէ անկից ետքը սիրտ կրնա՞ս ունենալ զանիկա ծաղրելու, եւ զօրութիւն անոր դէմ հակառակելու. Ուրեմն մեր Հաւատքին առաջին զգուշութիւնն ըլլայ անոր գիտութիւնը.

## ԳԼՈՒԽ Ժ.

### Երկրորդ՝ Հաւատքը պահելու զգուշութիւնը. հնազանդութիւնը Պապին՝

Ինչպէս ծնաւ Բողոքականութիւնը. ինչպէս ուրիշ հերետիկոսութիւնները՝ հպարտութեան մեծ ներգործութենէ մը.

Երբոր բովանդակ Ս. Կաթուղիկէ Եկեղեցին մի եւ նոյն եղանակաւ կը հաւատար, մի եւ նոյն եղանակաւ ալ Կրօնքը կ՚իմանար. եւ այս մի եւ նոյն եղանակաւ հաւատալուն եւ իմանալուն վրայ միաբան

էին հարիւրաւոր սերունդներ իրենց եպիսկոպոսներուն, առաջնորդներուն, Քահանայապետներովը, Վարդապետներուն եւ Սուրբերովը, յանկարծ կ'ելլայ մարդ մը եւ կ'ըսէ. այ, ո՞վ էք դուք, կեցէք ամէնքնիդ ալ, դուք ամէնքնիդ ալ ինծի մտիկ ըրէք. ես ձեզի կը ծանուցանեմ, որ դուք ամէնքնիդ ալ մոլորութեան մէջ էք, ամենեւին Սուրբ Հաւատքին ծանօթ չէք, սուրբ Գիրքը չէք իմանար եւ չէք գիտեր ինչ կ'ընէք. ես, ես միմիայն ամէն բան իմացայ, ամէն բան ճանչցայ, ես եմ ուսուցիչ ամէն ուսուցիչներու, ես եմ վարդապետ ամէն վարդապետներու. ոչ ոք զիս դատէ, հապա ամէնքը ինծի հնազանդին, եւ ինչ որ ես կը սորվեցընեմ, ինչ որ ես կ'առաջարկեմ, ան միայն ատկից ետքը ճշմարտութիւնն ըլլայ։ Աս սատանայական ներգործութեամբ կը սկսին ամենայն հերետիկոսութիւններն, այսպիսի պայծառ, յայտնի եւ կերպական ներգործութեամբ ալ յանձն Լուտերի սկսաւ Բողոքականութիւնը։

Իմ սիրելիքս, կրնա՞յ ատկից աւելի սատանայական հպարտութեան ներգործութիւն մը գտնուիլ։ Արդ՝ ինչպէս հպարտութենէ ծնած է Բողոքականութիւնը, այսպէս միշտ ալ հպարտութեամբ կեցած է։ Եւ յայտնի կ'երեւայ ատկից, թէ ինչպէս Լուտեր հպարտութեամբ Ս. Եկեղեցիէն ապստամբեցաւ, այսպէս Բողոքական-



ներն՝ իր հետեւողներն ալ հպարտութեան համար իրմէ ապստամբեցան։ Ասոնց յաջորդներն ալ նոյնն ըրին իրենց նախորդներուն, այսպէս հետզհետէ մինչեւ մեր օրերը, եւ մենք կը տեսնենք եւ կը վկայենք որ ասոնք ալ նոյն հոգին ունենալով՝ երբեք չեն դադրիր իրարմէ ապստամբելէն նոր հերձուածներով եւ նոր բաժանումներով։

Աս ատանկ ըլլալով, որն որ չի կրնար ուրացուիլ, որն է հարկաւոր զգուշութիւնը այն անդունդին մէջ չիյնալու, ուր որ անոնք կը գտնուին։ Բոլորովին հակառակ հոգի մ'ունենալն է, այսինքն Յիսուսի հոգին։ Իրենք կորստեան մէջ են վասնզի իրենց հպարտութեամբը Եկեղեցիէն ապըստամբեցան. մենք կը փրկուինք խորին խոնարհութեամբ Ս. Եկեղեցւոյ հպատակելով։ Դուք վերը կարդացիք. թէ Ս. Եկեղեցին Հոգւոյն սրբոյ ներկայութեամբը չի կրնար սխալիլ, եւ թէ ինչ որ ինք կը սորվեցընէ՝ ճշմարտութիւն է. ուրեմն մենք հանգչելով իր մայրական ծոցը՝ կ'ապրինք ամենայն ապահովութեամբ եւ վստահութեամբ, առանց ուրիշ բան մը մտածելու, բայց եթէ իրեն հպատակ եւ հնազանդ որդիքն ըլլալ։

Ուստի երբ որ քովերնիդ կը մտնեն այն ներղացուցիչներն եւ ձեզի կը հարցընեն. ինչո՞ւ այս հաւատոյ հրամանական վարդապետութիւնը, ինչո՞ւ այն մէկալը կը հաւատաք։ Դուք անոնց պատասխան տուէք

շուտով առանց յապաղելու. Վասնզի ասանկ ինծի սորվեցուց Ս. Եկեղեցին: — Բայց՝ ան Եկեղեցւոյ ըսածը չի կրնար ըլլալ, պիտո՛ր ըսեն ձեզի: Իսկ դուք հաստատուն եւ անդրդուելի, նորէն պատասխան տուէք. Եթէ չի կրնար ըլլալ՝ ըսէք Եկեղեցւոյ: Երբոր Եկեղեցին դաւանանքը կը փոխէ, ես ալ կը փոխեմ: Յիսուս ինծի ըսաւ որ Եկեղեցւոյ լսեմ, չէ թէ ձեզի. եթէ Եկեղեցւոյ չլսեմ, Յիսուս կ՚ուզէ որ հեթանոսի մը մաքսաւորի մը տեղ դրուիմ, որով կ՚ուզէ ըսել, թէ ալ իրեններէն մէկը պիտո՛ր չըլլամ. բայց՝ եթէ զձեզ մտիկ չեմ ըներ, ինծի ամենեւին չարիք մը չպատահար: Բաց աստի Յիսուս զիս ապահով ըրաւ թէ, ով որ Ս. Եկեղեցւոյ հովիւներուն կը լսէ, իբրեւ թէ Իրեն լսած կ՚ըլլայ, եւ ով որ զանոնք կ՚անարգէ, զիս եւ իր Հայրը կ՚անարգէ, որ զինքը խրկեց: Ապահով եմ ուրեմն, որ ցորչափ որ Եկեղեցիէն եւ իմ Հովիւներէս չեմ հեռանար, ամենեւին վտանգի մէջ չեմ հոգիս կորսնցնելու:

Ուրիշ մէկ պատճառը, որուն համար հպարտները Հաւատոյ վտանգի մէջ են, ան է, որ աս Հաւատքը այնպիսի երկիր կը պահանջէ, որ իրեն համաձայն ըլլայ: Բայց դուք ըսէք ինծի, դուք որ երկրագործութենէ կը հասկընաք, ինչո՞ւ յարմար երկիր կ՚ընտրէք զանազան տեսակ տնկեր ու սերմեր ցանելու եւ տնկելու համար. ինչո՞ւ ցած ու խոնաւ տեղուանք չէք տնկեր որթը,



ինչո՞ւ բլրակներու եւ քարուտներու վրայ շաղգամ ու հազար չէք տնկեր. վասնզի յառաջ չեն գար, եւ ամէն տունկ իրեն յարմար երկիր կ՚ուզէ: Նոյն բանը հաւատոյ նկատմամբ ալ, որ չ՚արմատանար չի բուսնիր ամէն սրտի մէջ, բայց միայն ուր սուրբ խոնարհութիւնը կը բնակի: Ասկից ահաւասիկ կրնաք իմանալ շատերուն անհաւատութեան սկիզբը: Ս. Հաւատքը ամենուն ալ մի եւ նոյն դաւանանքը, մի եւ նոյն պարտաւորութիւնները կ՚առաջարկէ, ինչպէս վեհապետին՝ ասանկ ալ փիլիսոփային, ինչպէս արհեստաւորին՝ անանկ ալ հողագործին: Ասոր վրայ կը նեղանան կը զայրանան հպարտ հոգիները ու կ՚ըսեն. ո՜հ, ինչպէ՞ս, ես որ այնչափ բան գիտեմ, այնչափ բան կարդացեր եմ, այնչափ սորվեր եմ, պիտո՛ր հաւատա՞մ նոյն բանը ինչ որ կը հաւատայ տնանկը, տգէտը, ցած կնիկ մը: Ես ալ նոյն աղօթքները պիտո՛ր ընեմ, նոյն պաշտամանց պիտո՛ր ներկայ ըլլամ, նոյն եղանակաւ պիտո՛ր խոստովանիմ, նոյն կրթութիւնները պիտո՛ր ընեմ: Քա՛ւ լիցի, քա՛ւ լիցի: Այսպէս սրտերնին կը բարձրանայ, հպարտութիւնը զիրենք կը զայրացընէ, եւ կը հրաժարին հպատակելու ան ամէն բանի, որ կը հաւատայ Հաւատացելոց հասարակութիւնը, եւ կը մերժեն հասարակաց բարեպաշտական կրթութիւնները: Մանաւանդ թէ կը կարծեն, որ այնչափ աւելի բարձր համարում կը ստա-

նան, որչափ աւելի հասարակաց կարգէ դուրս կ'ելլեն, որչափ աւելի քիչ հաւատալ կը ցուցընեն, որչափ աւելի առանձին համոզումներ ունենալ կը ձեւանան. ահաւասիկ ուսկից շատերուն վրայ անկրօնութիւնն եւ Հաւատոյ պակասութիւնը կը ծագի։ Ո՛վ գժբախտ մարդիկ։ Քիչ մը ունայնասիրութեան համար գահավէժ կը կործանին։ Այսպէս Արուսեակին կը նմանին, որ նոյնպէս չուզեց ընել ինչ որ մէկալ Հրեշտակներն' իր ընկերներն ըրին, Աստուծոյ հպատակութեան մէջ մնալ։ Բայց յայտնի է որ անոր պատժապարտութեան ետեւէն ալ պիտ'որ երթան։ Ինչպէս անիկա Արքայութիւնը կորսնցուց, այսպէս ասոնք ալ կը կորսնցընեն հիմա երկրաւոր դրախտին' Եկեղեցւոյ բարիքները, որպէսզի ետքէն իր ժամանակին ամէն չարեաց վիհը կործանին' որ է դժոխք։

Բռնենք կենանք ուրեմն Ս. Խոնարհութիւնը։ Ս. Փրանկիսկոս Ասիզացին լսելով մէկուն կործանման պատմութիւնը, որն որ ժամանակաւ իր ընկերն էր, բայց ետքէն ողորմելաբար Ս. Եկեղեցիէն օտարացեր էր, մեծ եռանդով երեսի վրայ փռուեցաւ եւ ամէն զօրութեամբը երկիրը գրկել կ'ուզէր։ Հարցուցին, թէ ի՛նչ էր ըրածը, ըսաւ. Ո՛հ, զիս շատ եւ շատ խոնարհեցընել կ'ուզեմ, վասնզի այն ողորմելին Հաւատքը կորսնցուց իր հպարտութեանը համար։ Երանի՜ թէ չպատահէր



մէջն ալ այսպիսի արտասուալից դժբախտութիւն մը։

## ԳԼՈՒԽ ԺԸ.

### Երրորդ զգուշութիւն. հեռու կենալ անառակութենէ։

Ցոփութիւնն ու հպարտութիւնը, այո՛, ճամբայ կը բանայ Հաւատքը կորսնցընելու. բայց աւելի եւս կը մղէ առ այն խառնագնաց անմաքուր կեանքը։ Դիտեցէք, կ'ըսէր Ս. Հերոնիմոս իր ատենէն, դիտեցէք զանոնք ամէնքն ալ, որոնք Ս. Եկեղեցւոյ մէջ հերետիկոսութիւններ հանեցին, դիտեցէք եւ կը տեսնէք որ եւ ոչ մէկը ողջախոհ կեանք ունեցաւ։ Եւ մէկիկ մէկիկ կը համրէ Սիմոն Մոգէն սկսելով մինչեւ իր ժամանակները, եւ կը ցուցընէ թէ ամէնքն ալ անարգ կրքերու մէջ շաղուած էին։

Իսկ Բողոքականութիւնն անանկ անուն մը հանած է աս նիւթիս մէջ, որ բոլոր հին հերետիկոսութիւնները կը գերազանցէ։ Բողոքականներուն ախոյեանը արդէն անառակութեան դրօշը բացած էր, սրբապղծութեամբ կուսանի մը հետ կարգուելով։ Իր հետեւողները, անմիջապէս իրեն նմանեցան։ Նոյն աղանդին առաջին գըլխաւորները' ամէնքն ալ կուսանաց վանքերու վրայ կը յարձակէին եւ որչափ կրնային կանայք կը յափշտակէին եւ կը հրապուրէին։

Այն աստուածարաններուն առաջին եւ հանդիսաւոր ժողովքները, այլ եւ այլ գինետուններու մէջ կ'ըլլային. Գարեջրոյ փրփուրին եւ խաչանցի խորտիկներուն ծուխին հետ ամօթալից խօսակցութիւնները խառնելով, որոնք կ'ամչցնէին արգելք պարկեշտ զօրական մը։ Իսկ պղծութեան եւ անառակութեան կողմանէ Նորոգութիւնը (Բողոքականաց) այնպիսի լրբութեամբ չափն ու սահմանը անցուց, որ շատերուն, որոնք ի սկզբան անոր գտնուած էին իրենց հրապուրանաց ետեւէն երթալու, բաւական եղաւ աս թշուառ տեսիլը զիրենք նորէն Ուղղափառ Եկեղեցւոյ գոգը դարձընելու։

Եւ ճշդիւ այս անսանձ անառակութիւնն էր, զոր որ աւելի թոյլ տուաւ քան թէ հնարեց երկրիս վրայ Բողոքականութիւնը, որով իր հետեւողաց թիւը շատցաւ։ Ինչու որ՝ անպարկեշտ մը ի՛նչ բանի կը բաղձայ։ Կ'ուզէ ամէն զգայական վայելմունքներն ունենալ, եւ անոնցմով կշտանալ առանց խղճի անհանգստութիւն ունենալու։ Արդ՝ Բողոքականութիւնը ասոր բոլորովին յարմար էր։ Լուտեր բարի գործքերու հարկաւորութիւնն ուրանալով, ժուժկալութեան անկարելութիւնը հրատարակելով, եւ սորվեցընելով թէ որպիսի՛ եւ իցէ մեղքով հոգւոյն փրկութիւնը չէր կրնար կորսուիլ, բաւական որ մէկը Յիսուսի հաւատայ, ատով միայն ամէն



մարդու ազատութիւն տուաւ ինչպէս որ կ'ուզէ հեշտութեան մէջ լողալու։ Խոստովանանքը ջնջելով, վերցուց նաեւ այն տաղտկութիւնը Քահանայի մը առջեւը ամօթ կրելու. հատուցիչ գործքերը ջնջելով, վերցուց ապաշխարանք ընելու հարկաւորութիւնը՛ Այսպիսի հեշտական վարդապետութեան մէջ ամէն զգայասէր իր գիւրութիւնը կը գտնէ. ուստի եւ շատերը անսանձ՝ մէջը նետուեցան։

Արդ՝ ինչ որ անցած ժամանակները պատահեցաւ, կրնայ հիմա ալ նոյնը պատահիլ։ Որո՞ւն քմացը այս վարդապետութիւնները քաղցր կու գան, որո՞ւն սէրը կը գրգռի նոյնը գրկելու։ Անոնց ամենուն որոնց ցանկալի է ամօթալից ազատութիւնը։ Եւ եթէ ինծի հարցընելու ըլլայիք, որո՞նք են որ ապականութեան մեծագոյն վտանգի մէջ են. ահաւասիկ, ինչ պատասխան կրնայի տալ։

Քաղաքներու մէջ մեծագոյն վտանգի մէջ են այն երիտասարդները, որոնք ամէն սանձ ցնցելով, եւ աստուածային երկիւղը մերժելով, օրերնին զեղխութեան մէջ կ'անցընեն, որոնց միտքն ու երեւակայութիւնը անդադար պիղծ ցնորքներով կը զուարճանայ, որոնց շրթունքը միշտ կը պղծին անմաքուր խօսակցութիւններով, որոնց սիրտը միշտ կը սնանի անարժան հաճոյքներով եւ զգայմունքներով։ Այսպիսի անառակներն, որ իրենց անսանձական ցան-

կութիւնը կշտացընելու կը փափաքին, կը բաղձան ստուգիւ վրաններէն նետել Կաթուղիկէ կրօնքը։

Դարձեալ անոր համար աս կը բաղձան, վասնզի ուր որ Ուղղափառութիւնը կամ Կաթուղիկէականութիւնը կը պատուի, հոն շատ արգելքներ կը գտնեն իրենց անառակ ցանկութեանցը։ Լսա՞ծ էք երբեմն ձեր ագարակներու մէջն ալ տուած քարոզներնին, թէ աղէկ բան չէ Կաթուղիկէականութիւնը, եւայլն։ Գիտէ՞ք պատճառը։ Վասնզի իրենց նեղութիւն կուտայ։ Գիտեն, թէ ցորչափ որ ձեր ամուսիններն ու ձեր օրիորդները անարատ կը պահեն իրենց Ս. Հաւատքին սէրը, շատ զգուշութեամբ ալ սուրբ պարկեշտութիւնը կը պահպանեն։ Ասիկա իրենց հաճոյական չէ։ Կ'ուզեն որ քիչ մը աւելի դիւրամատոյց ըլլային, քիչ մը վայրենի չըլլային..... հասկըցա՞ք զիս։ Ահաւասիկ ասուտի կը ծնանին տեսակ մը մեծ համոզումները Բողոքականութեան վրայ։ Ո՜վ ամօթ մարդկային բնութեան։

Քաղաքներու մէջ նաեւ վտանգի մէջ են արհեստաւորները, որոնք յօժարութիւն չունին գործելու, բայց հազարումէկ անարգ միջոցներ ունին մնուցանելու, ուտել խմելը կ'ուզեն յառաջ տանիլ, այս կամ այն կնոջ ախորժակները գոհ ընել, իրենց ընտանիքէն կը գողնան, որպէս զի մսխեն, ուր, Աստուած գիտէ. ա-



սոնք ալ Հաւատոյ մեծ վտանգի մէջ են. ինչու որ ասոնց ալ շատ հեշտական է Եկեղեցի չերթալ, խոստովանանք չըլլալ, բարեպաշտութեան գործքեր չկատարել։

Ձեր քովը գիւղերու մէջ, որո՞նք են, որ մոլորելու վտանգի մէջ կ'ապրին։ Ան բարի գեղացինե՞րը, ընտանեաց հայրե՞րը, որոնք ամենայն զգաստութեամբ կ'ապրին, եւ իրենց որդւոց ու դստերաց վրայ կը հսկեն, եւ կամ այն պարկեշտ երիտասարդնե՞րը որոնք մոլութենէ կը փախչին, եւ Աստուծոյ երկիւղիւը լեցուած կը սպասեն ժամանակին, որ կարող ըլլան պարկեշտ ամուսնութիւն մ'ընել։ Ա՜հ, ոչ ամենեւին։ Ասոնք իրենց Կրօնքը կը սիրեն, կը յարգեն, ի գործ կը դնեն, եւ Բողոքականներու խօսակցութեանց ակումբներու մէջ չեն մտներ։ Հաւատոյ վտանգի մէջ են տեսակ մը մարդիկ, որ ժողովրդապետութեան գայթակղութիւնն ու ժանտամահն են, եւ կամ անոնք են, որ անարժան վատ սիրով կապուած՝ ամօթալից գործքերու մէջ կը գտնուին, անոնք են որոնց աղտեղի բերանները միշտ անառակավայել խօսքերով լեցուն են, եւ որոնք հետեւաբար աստուածային բաներէն եւ աստուածպաշտութենէ ճաշակ մը չեն առներ, եւ Զատկական Հաղորդութիւնն ընդունելու համար աքացի եւ բռնցի մէջել հարկ կ'ըլլայ. անոնք են, որոնք ամբողջ Ս. Պատարագին ատենը նստարանի մը վրայ անշնորհք նստած

կամ կաթընած՝ կ՚անցընեն, եւ բաց ա- կից Եկեղեցւոյ մէջ մտնող կամ դուրս ելլող կանայքը կը թշնամանեն։ Այո՛, այո՛, ասոնք աղէկ պատառներ են նոր կրօնքին համար։ Անգամ մը ես ականջովս ասանկ մէկէն լսեցի, որ յայտնի կը զրուցէր. Նո- [illegible] Անոնց ազատութիւնն է, որ ամէն մոլիներուն ախորժակը կը բանայ։

Կը հաւատա՞ք արդեօք։ Մինչեւ քանի մը Եկեղեցականներ, քանի մը Կրօնաւոր- ներ ալ, աս ճամբով Հաւատքնին կորսն- ցընելու համար։ Ա՜հ, ասիկա իրաւցընէ գայթակղութիւն մըն է. պիտ՚որ ըսէք։ Ամենեւին ոչ. ասիկա աւելի ցոյց մըն է ի նպաստ Կաթուղիկէ Հաւատոյ, որն որ այնչափ մաքուր է, այնչափ անարատ է, որ չի կրնար երկար ատեն եւ ոչ Եկեղեցա- կաններն իր ծոցը պահել, երբոր բոլորովին կը մոռնան իրենց վիճակին սրբութիւնը։ Բողոքականութեան առջի ժամանակները ամէն Կրօնաւորք եւ Քահանայք որ ուրա- ցան Ս. Հաւատքը, ամէնքն ալ այսպէս կ՚ընէին՝ սրբապղծութեամբ մէյմէկ կին առնելու համար. այնպէս որ ան ատենը երբոր ասանկ մէկը կը տեսնուէր, որ ա- զատ, թափառական, անզուսպ, անզգաստ վարքով կը պտըտէր, անմիջապէս կը զրու- ցէին, թէ մօտ է Ճինեվրա երթալու եւ հաւատքը փոխելու. եւ ան ատենուան



զուարճախօս մատենագիր մը գրեց, թէ Բողոքականաց նորոգութեան գործողու- թիւնը, իբրեւ կատակերգութիւն մը միշտ կարգուելով կը լմննայ։

Նոյնն է մեր ժամանակներն ալ։ Ան- գղիա եւ Ամերիկա կան մեզմէ փախած քանի մը Եկեղեցականներ, որոնք Հաւա- տքն ուրացած են։ Իրենց մեծ պատճառն ինչ էր։ Մեր երկիրները պղծութիւննե- րով գայթակղեցընելէն ետքը, Բողոքա- կաններուն մէջ գացին մտան կին առնե- լու համար։

Ասոր վկաներն են Տէ-Սանքթիս, Ա- ջիլլի, Պոնամիչի եւ ուրիշները, եւ ամենք անոնցմէ, որոնք լաւագոյն խղճմտանքէ զարթնուելով զգաստացան եւ դարձան երե- սէ ձգած մօրերնուն Կաթողիկէ Եկեղե- ցւոյ գիրկը, խոստովանեցան որ չէ թէ համոզմամբ, այլ կիրքերնին շատացընելու համար իրենք զիրենք գահավէժ փոսին մէջ ձգած էին։

Արդ՝ եթէ անպարկեշտութեան մոլու- թիւնը այն աստիճանի կը հասցընէ, որ նաեւ Քահանան ալ Կրօնաւորն ալ ա- պականութեան մէջ կը ձգէ, որպիսի՛ վտան- գի մէջ չի ձգեր անկիրթն ու տգէտը, որն որ եւ ոչ իսկ գիտէ թէ ո՞ր հաստատուն հիման վրայ դրուած է Ս. Հաւատքը։ Որ- պիսի՞ վտանգի մէջ չի ձգեր երիտասարդ մը, որ իր բոլոր կեանքը զբօսանքներու մէջ անցուցեր է, եւ իր սիրտը մոլութիւննե-

րէն հաշեր մաշեր է։ Որովհետեւ վտանգի մէջ չի ձգեր կին մը, երիտասարդուհի մը, որոնք աւելի երեւակայութեամբ եւ զգայութեամբ կ՚ապրին քան թէ բանաւորութեամբ, երբ որ մոլութեան մէջ թաղուած կորսուած են։ Ո՛չ, ամենուն ապահովութիւն չունի այնպիսին, որն որ ինք զինքը անժուժկալութեան եւ անպարկեշտութեան տուած է։

Դրանք մատենագիրները արդէն այս խորհրդածութիւնն ըրած են, թէ ամենաստոյգ պատճառն որուն համար վեշտասաներորդ դարուն մէջ Բողոքական Նորոգութիւնն այնչափ երկիրներու մէջ ընդունելի եղաւ, ուրիշ բան չէր, բայց եթէ այն միայն, ինչ որ մինչեւ հիմա գրուեցեցինք։ Մարդկան բաղդը շատ թուլցեր էր, սրտերնին մեղկացեր էր, եւ մեծապէս հաճելի կ՚ըլլար այն Կրօնքը, որ կը վերցնէր սանձն անոնցմէ, որոնք ակամայ կամք նոյնը կը կրէին, եւ Աստուած այն ողորմելի ազգերը պատժելու համար թոյլ տուաւ, որ Ս. Հաւատքն իրենցմէ վերցուի.

Ինչ որ ուրիշ անգամներ պատահած է, կրնայ նորէն պատահիլ։ Աստուած պահէ՛ զմեզ այսպիսի պատժէ մը, որն որ մինչեւ հիմա իր արդարութեան ձեռքէն եղած պատուհասներէն ամենէն սոսկալին է. բայց որպէսզի Աստուած զմեզ այս պատժէն պահպանէ, պահենք մենք անարատ այս գեղեցիկ եւ սուրբ պարկեշտութիւնը։



## ԳԼՈՒԽ ԺԲ.

Չորրորդ դիտողութիւն. Ճշմարիտ է թուրք դնել Կաթողիկէ Կրօնքը։

Մինչեւ հիմա ցուցուցած զգուշութիւններս գլխաւորաբար զմեզ հակառակորդներուն հարուածներէն ազատելու համար էր, վերջինն որ հիմա ձեզի կը ծանուցանեմ, եւ որն որ ամէն իմաստնոց վճռովը ամենէն ազդու զգուշութիւնն է, զմեզ անվրիպաւորելի պիտ՚որ ընէ անոնց թունաւոր նետերէն։ Նաեւ ո՞րն է աս զգուշութիւնը, եռանդեամբ ի գործ դնելն այն ամէն բան որ կը վերաբերի Կաթողիկէ Կրօնքին։ Ինչու որ այս ամէն կրթութիւնները զմեզ Բողոքականութենէ կը հեռացընեն, ինչպէս անոնց պակասութիւնը զմեզ Բողոքականութեան կը տանի։

Ոմանք կը զարմանան երբ կը լսեն ոմանց ելնալը քանի մը երկիրներու մէջ, ուր ոմանք Ս. Հաւատքը ուրացան։ Արդ՝ այս զարմանքը տեղի չունի, ինչու որ (սոսկալի՛ բայց ստոյգ է) զարմանալու բանն ան էր, եթէ ոմանք ի մոլորութենէ պահպանուէին, Տեսակ մը Ուղղափառներու վրայ, Կաթուղիկէ Կրօնքէն ալ ի՞նչ մնացեր է։ Ոչինչ եւ ոչինչ։ Չէ՛ մնացեր վրանին ոչ աղօթք ընելու հոգի, ոչ ջերմեռանդութիւն եւ ոչ բարեպաշտութիւն։ Ս. խորհուրդներուն չեն յաճախեր ամենեւին, եւ եթէ տարին

անգամ մը Զատկի տօնէն մերձենալու ըլլան, այնպիսի անտարբերութեամբ եւ չուզենալով մը, որ չի կրնար մտածուիլ. եւ Աստուած տայ որ սովորութեան համար սրբապղծութեամբ ալ կատարած չըլլան։ Վարքերնուն վրայ բան մը չի տեսնուիր, որ զիրենք կաթուղիկեայ ցուցընէ։ Կ՚ամբչնան խօսքերնուն մէջ, ծոմապահութեանց ու բոլոր Հաւատոյ արտաքին գործքերուն մէջ այնպիսի երեւնալու։ Իրենց մէջ չկայ ամենեւին՝ ոչ ուղղափառի ժրութիւն մը, ոչ վարուց մաքրութիւն, ո՛չ պարկեշտ կենցաղավարութիւն, եւ ոչինչ ուղղափառական կենաց որպիսութիւն եւ զգացմունք։ Կրօնքը՝ սահմաներ են տօնի օրերը վերջին Պատարագը բազմամարդ Եկեղեցւոյ մը մէջ տեսնելու, եթէ կանայք են՝ իրենց զարդարանքը ցուցընելու, եթէ այր են ուրիշներու բարեպաշտութիւնն ու ջերմեռանդութիւնը խափանելու եւ չփոթելու։

Հիմա. ա՞ս է ուղղափառական վարքը։ Բայց ասոնք ոչինչ են. Այսպիսիները կրնային Աշխարհագրական Ուղղափառք անուանուիլ. այսինքն է Ուղղափառք՝ չէ թէ Յիսուսի Քրիստոսի հաւատքը եւ Ս. Եկեղեցւոյ հպատակութիւնը ճանչնալնուն, չէ թէ՝ աս երկուքն ի գործ դնելնուն համար, հապա Ուղղափառք են՝ վասնզի ծնած են այսչափ աշխարհագրական լայնութեան՝ այսչափ երկայնութեան մէջ, այսինքն է



այնպիսի երկիր մը, որ կաթողիկէ Հաւատքը կը դաւանի. բայց սրտերնուն մէջ պատրաստ են հերձուածողներու հետ հերձուածող, Տաճկաց հետ տաճիկ ըլլալու, եթէ Բեւեռէն կամ Հասարակածէն քիչ շատ աստիճաններով հեռու ծնած ըլլային։

Անձինք՝ որ այսպիսի վիճակի մէջ են, չունին դժուարութիւն Բողոքականութիւնը գրկելու։ Կը գրկեն նոյնը, վասնզի նոյն իսկ Բողոքականութիւնը բողոք մըն է կաթողիկէ Եկեղեցւոյ կրթութիւններուն դէմ, զորոնք կ՚անարգեն, եւ վասնզի եթէ մէկը իրենց բռնած ճամբան յանդիմանելու ըլլայ՝ իրենք զիրենք կարող են ջատագովել, թէ զանց կ՚ընեն իրենց համոզմանը համար այն բանը, զորն որ ծուլութեան ու չարութեան համար չեն ուզեր կատարել։ Կը գրկեն, վասնզի Բողոքականութիւնը Ուղղափառութենէ ան կողմը անցնողներուն համար որպիսի եւ իցէ կրօնական պաշտամանց ծանրութենէ ազատ ըլլալու միջոց մըն է։ Հոս մեծ զանազանութիւն կայ. բուն Բողոքականութեան մէջ ծնածներուն եւ կաթուղիկէ կրօնքն ուրացողներուն մէջ։ Ինչու որ որոնք այնպէս ծնած են, շատ անգամ՝ ի բարի հաւատս կ՚ապրին անոր մէջ։ Անտարակոյս չեն կատարեր ամէն բան, որ պարտական էին, բայց գոնէ կ՚ընեն այնչափ, որչափ գիտեն։ Կը պահեն այն փոքր կրթութիւնները, զորոնք իրենց

Հարքը հետերնին տարին երբոր Ուղղափառ Եկեղեցիէն բաժնուեցան, ունէին եղանակ մը մեկտեղ ժողվուելու, աղօթելու, արարողութեան եւ ծիսի։ Նաեւ որովհետեւ, թէ ոչ բովանդակ, գոնէ ըստ մասին կը կարդան Ս. Գիրքը. ասկից. գըխաւորաբար Անգղիականները՝ որոնք բոլորովին իրենք զիրենք առանձնական մեկնութեան չեն տուած, կը քաղեն նաեւ մոլորութեանց հետ խառն ճշմարտութիւններ ալ։ Ասոր ներհակ ուրացող Ուղղափառները, որովհետեւ չեն եւ ոչ կրնան ըլլալ ի բարի հաւատս, այսպէս չեն կրնար ամենեւին կրօնքի մը հպատակ ըլլալ։

Զուրկին Կաթուղիկէ Կրօնքը, վասնզի ուրացան զանիկա. չունին Բողոքական դաւանանքը, վասնզի երբեք կարող պիտ'որ չըլլան անոր յարգութիւն մը տալ սրտերնուն մէջ. այսպէս ամենեւին բանի մը չեն կապուիր, եւ կ'ապրին ամենայն ազատութեամբ։ Այս ապրելու եղանակը ստուգիւ այնպէս համաձայն է մարդկան բնածին ապականութեան, անոր թիւր բերմանցը, անոր կրքերուն, որ զարմանալի բան չ'երեւար եթէ յօժարութեամբ անոր ետեւէն կ'երթան։ Ասոր համար ամենաստոյգ է ան որ կ'ըսեն, թէ ով որ առանց Կրօնքի պահպանութեան կ'ապրի, անոր համար ամենէն դիւրին անցքը Բողոքականութեան մէջ նետուիլն է։ Օրէնք մը չպահպանելն եւ



նոյն օրէնքը գէշ գտնելը իրարմէ քայլ մը հեռու են։

Ուրիշ պատճառ մ'ալ, որուն համար ժրութեամբ Կաթողիկէ Կրօնքը ի գործ չդնելը կորստեան ճամբայ կը բանայ, ան է, որ ով որ նոյնը գէշ կը պահպանէ, մինակ ծանրութիւնը կ'ունենայ. քաղցրութիւնը չի զգար. ուստի ասոր համար ժամանակին երկարութեամբը վրան տաղտկութիւն եւ յոգնածութիւն կու գայ եւ այսպէս լուծը վրայէն կը նետէ։

Կաթուղիկէ Հաւատքն երբ աղէկ կը պահուի՝ զարմանալի քաղցրութիւն եւ օծութիւն մ'ունի, բայց հարկ է՝ որ պահպանուի, որպէսզի քաղցրութիւնն ու օծութիւնը զգացուի։ Ինչու որ ճշմարիտ հաւատքը չ'եղծաներ մարդկային բնութիւնը, թէպէտեւ զայն կը բժշկէ եւ կը զօրացընէ։ Կը թողու թիւր բերմունքները, յանցաւոր յօժարութիւնները, սատանայէն թելադրութիւնները, աշխարհքիս հրապուրանքները, թէպէտեւ մի եւ նոյն ատեն, զանոնք կը մեղմէ, կը նուաճէ, զօրութիւն կու տայ պատերազմելու, եւ բերկրութիւն յաղթելէն ետքը։

Ասկից է, որ Ուղղափառը զօրաւոր է, երբ կ'աղօթէ, երբ զԱստուած կ'աղաչէ, երբ ջերմեռանդութեան շնորհք կ'ընդունի, երբ կը հաստատուի ապաշխարութեան Խորհրդով, երբ ամէն բանէն աւելի՝ Սուրբ Հաղորդութեամբ կը սնանի։ Աս

օգնութիւններով կը գտնէ զօրութիւն, որ հարկաւոր է Կաթուղիկէ Օրէնքը պահելու համար· բայց առանց աստնց անոր ծանրութիւնն ունի, եւ զօրութիւն չունի տանելու։ Ուստի բնաւ տակ կը տառապի, եւ կը փորձուի ընդունելու Բողոքականութիւնը, Աստուածեանց աղանդն եւ ուրիշ ինչ որ կ'ուզես, բաւական որ ազատութիւն ունենայ։

Այսր ներհակ Ուղղափառը, որ փոյթ էն Հաւատքնին գործքով կատարելու, այս եռանդներնուն մէջ կը գտնեն ապահով երջանկութիւն մը։ Կը գտնեն ասիկա, վասնզի իրենց վրայ Յիսուսի Քրիստոսի Խորհուրդներուն, եւ Ս. Եկեղեցւոյ քաղցր խնամքը ծանօթութիւնը միշտ աւելի կը կենդանանայ, եւ որչափ աւելի կը ճանչնան՝ թէ՛ առաքիններնը եւ թէ՛ եղբօրնը, այնչափ աւելի սիրով կը կապուին։

Նոյն երջանկութիւնը կը գտնեն, վասնզի առով կը սկսին ներքուստ վայելել այն քաղցրութիւնը եւ մխիթարութիւնը որ կ'ունենան աղօթքի մէջ սրտերնին Աստուծոյ առջեւը բանալով, Խոստովանութեան Խորհուրդին մէջ խղճերնին մեղաց ծանրութենէն թեթեւցնելով, Յիսուսի հետ Ս. Հաղորդութեամբ սերտ միանալով, բարի խղճմտանքի ներքին վկայութիւնն ունենալով, գիտնալով միանգամայն որ ամենասուրբ Կոյսն ու Սուրբերը իրենց համար բարեխօս են Աստուծոյ առջեւը, եւ



թէ՛ ի հաղորդութեան սրբոց են, թէ՛ անոնց որ երկրիս վրայ են, եւ թէ՛ անոնց որ երկինքը կը թագաւորեն. եւ այսպէս միշտ սիրտ կ'առնեն յարգելու այս բարիքները եւ կը ջանան որ չկորսնցնեն։

Կը գտնեն նոյն երջանկութիւնը, վասն զի Կաթողիկէ բարեպաշտական Կրթութիւնները զարմանալի ազդեցութիւն մ'ունին բոլոր կեանքերնիս քրիստոնէաբար վարելու. այսինքն է՝ ընտանեաց խնամոտ հայր, գորովական որդի, խոհեմ եւ գթած տէր, հնազանդ եւ հաւատարիմ ծառայ, հաւատարիմ եւ աշխատասէր գիւղական, խոնարհ եւ արդար մեծատուն ըլլալու։ Նոյն վստահութիւնը կը գտնեն, վասնզի բարի Ուղղափառը այն կրթութիւններուն մէջ զօրութիւն կ'առնու իր կրքերուն յաղթելու, իր ամէն թշնամիները ներելու, իր ամէն աշխատութիւնները սիրով տանելու, իր դժբախտութիւններէն եւ ոչ մէկուն մէջ վհատելու, եւ հաստատուն քայլով աստուածային պատուիրաններուն ճամբուն վրայ յառաջ երթալու։ Ասկից չի կրնար ըլլալ, որչափ միշտ աւելի կը կապուի իր Կրօնքին հետ, որ զինք այնչափ բարիքներով կը լեցնէ։

Վերջապէս նոյն երջանկութիւնը կը գտնեն, վասնզի Հաւատոյ գործադրութեան մէջ գրուած է մխիթարական աճում մը Հաւատոյ, որն որ ներքուստ զգացին կը

լուսաւորէ, եւ նոյնը միշտ գոհ եւ հանգիստ կ'ընէ իր վիճակին վրայ, եւ փարատելով նաեւ ամենափոքր տարակոյսները՝ միշտ աւելի եւս զինք կ'ապահովցընէ։ Կենդանի հաւատոյ հետ կը միանայ հաստատուն յոյսը որ մը այն յաւիտենական բարիքներուն հասնելու, որոնց պայծառ տեսութեամբ մը կը նայինք եւ վստահութեամբ կը սպասենք, որն որ աս աշխարհքիս մէջ ամենէն մեծ մխիթարութիւննիս է։ Վերջապէս կենդանի հաւատքը եւ հաստատուն յոյսը բորբոքեալ սէր մը կը բխեն, որն որ հալածելով զերկիւղը, ինչպէս որ գրուած է, վստահութիւն կու տայ մեզի Աստուծոյ առջին ելլելու, զինքը ողջագուրելու սիրով, եւ աս արտասուաց ձորին մէջ եղանակաւ մը յառաջագոյն կը սկսինք վայելել այն բարութիւնները, որ կը յուսանք ստանալու երկինքը ի յաւիտեան, իբրեւ մեր հաւատոյ վերջին, լի եւ հասունացեալ պտուղը։

Ասոր համար ով որ կը բաղձայ հեռու կենալ որպիսի եւ իցէ վտանգէ հաւատոյ անպատմելի գանձը կորսնցընելու, որն որ իրեն այնչափ բարիք աս աշխարհքիս վրայ եւ ի հանդերձեալն կը պատրաստէ, ես այնպիսւոյն վերջապէս հոստեղս համառօտելով ըսածներս, եւ սրտիս խանդակաթ սիրովը այս խորհուրդը կու տամ, որ եռանդուն Ուղղափառի մը կեանք անցընէ։ Մի վիճէք. կրօնական խնդիրներուն մէջ



մի մտնէք. թող մի տաք, որ ուրիշներն ալ՝ որպիսի պատճառանքով որ ըլլայ, ձեր ետեւէն իյնան ձեզի բան սորվեցընելու, այլ պատասխան տուէք անոնց ընդդիմութեանցը եւ դժուարութեանցը՝ ձեր հաստատուն, բարեպաշտ եւ կրօնական գործքերովը։ Եթէ Աստուծոյ տունը կ'անարգեն, դուք աւելի ստէպ գացէք. եթէ կը ծաղրեն խոստովանանքը եւ Ս. Հաղորդութիւնը, դուք որչափ կրնաք աւելի եւս փութով եւ շատ անգամ մօտիկցէք. անոնք ձեր առջեւը ծոմն ու պահքը ծաղր կ'ընեն, դուք նոյները պահեցէք առանց ծածկելու ձեր ծոմապահութիւնը. անոնք ձեր առջեւը կը հայհոյեն Եկեղեցւոյ եւ Քահանայապետին դէմ, դուք մի ամչնաք զիրենք գովելու եւ զձեզ իրենց կողմը ցուցընելու. անոնք ձեր առջեւը Քահանաներն ու Կրօնաւորները կը թշնամանեն, դուք մի քաշուիք զիրենք պաշտպանելու եւ յայտնելու որ դուք անոնց պէս չէք մտածեր։ Մէկ խօսքով՝ անոնք կը խօսին, դուք ըրէք, եւ այս եղանակաւ պատասխան տալով՝ ձեր հաւատքը վտանգի մէջ չ'իյնար։

Ձեր այսպիսի վարմունքը շուտով մը ամէն բարիներուն հաճելի եւ ընդունելի կ'ըլլայ, եւ ասոնց հաճելի եւ սիրելի ըլլալը պատուականագոյն է. քիչ մը ժամանակ ետքը չարերու զարմանքն ալ կ'ունենաք, որոնք որ (անհաւատալի, բայց ստոյգ բան է) անոնց վրայ յարգ կ'ունենան որոնք զի-

րենք ոտքի տակ կ՚առնեն. բայց սակայն՝ եթէ ուրիշ ամէն բանն ալ ձեզի պակսելու ըլլայ ։ պիտ՚որ ունենաք անոր սէրը, որ զձեզ քիչ առենէն պիտի գտնէ՝ Յիսուս Քրիստոս ։

Աշխարհք կ՚անցնի եւ անոր հետ իր ստութիւնները, իր ունայնութիւնները, իր ծուռ դատաստանները, իր կրքերը ։ Կ՚անցնին նաեւ ամէն աղանդները, որ Ս. Եկեղեցին չարչարեցին ։ Ինչպէս մենք կը տեսնենք աներեւոյթ ըլլալը Եբիոնեանց, Կերինթեանց, Արիոսեանց, Եւտիքեանց, եւ այլն, եւայլն. այսպէս աներեւոյթ պիտ՚որ ըլլան նաեւ Բողոքականները. ան որ երբեք պիտ՚որ չանցնի, Յիսուսի Քրիստոսի Եկեղեցին է ։ Անիկա անշարժ ժայռի մը վրայ հաստատուած՝ ունի զՅիսուս Քրիստոս, որ զինք կը կառավարէ. եւ պիտ՚որ տեւէ մինչեւ ի վախճան ժամանակաց ։ Եւ ոչ ան առենն ալ պիտ՚որ պակսի, այլ այս արտասուաց եւ պատերազմներու ձորէն պիտի փոխադրուի, եւ ամէն մրցութիւնները դադրելէն ետքը, փառօք եւ յաղթանակաւ պիտ՚որ թագաւորէ յերկինս յաւիտեանս յաւիտենից ։

Երանի՜ անոնց, որոնք Ս. Եկեղեցւոյ մէջ ըլլողներուն կարգը պիտ՚որ գտնուին ոչ անուամբ միայն, այլ նաեւ գործքով ։ Ազնիւ ընթերցող, ես հոգւոյս ամենայն գթովը եւ ցանկութեամբը կը մաղթեմ քեզի այս գեղեցիկ վիճակը, ինչպէս



սրտիս եռանդովը ինծի կը բաղձամ ։ Փոփոխակի աղօթք ընենք մեր աստուածային Փրկչին, որ թող չտայ մեր կիրքը, որ մեր մտաց դատաստանը նսեմացընեն, որ մեր սիրտը ապականեն, որ զմեզ Ս. Եկեղեցւոյ մէջէն դուրս յափշտակեն, որպէս զի երջանիկ յաւիտենականութեան յաղթանակը չկորսընցընենք. Ամէն ։

# ՅԱՒԵԼՈՒԱԾ

## ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՑ

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹԵԱՄԲ

## ՊԻՈՍԻ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ Թ.

## ԽՕՍՔ

ԶՈՐ ԽՕՍԵՑԱՒ Ի ԳԱՂՏՆԻ ԽՈՐՀՐԴԵԱՆ
Ի ԻԵ ԱՒՈՒՐ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ
1865

ԲԱԶՄԱՏԵՍԱԿ դաւաճանութեանց եւ նենգութեանց մէջ, որոնցմով՝ քրիստոնէութեան թշնամիները, զուր ջանքով Աստուծոյ Եկեղեցւոյն վրայ յարձակիլ, զանիկա կործանել ու ջնջել կը յանդգնին, իրաւցընէ Յարգելի Եղբարք, պէտք է համարինք այն՝ ամբարիշտ մարդկան ընկերութիւնը, որ ռամկօրէն Ֆրան-մասոնական (Ազատ-որմնադրական) ընկերութիւն կը կոչուի, որն որ իսկզբան գաղտնի ու խաւարի մէջ ծածկուած էր, բայց ետքէն ի հասարակաց վնաս կրօնքի եւ մարդկային ընկերութեան դուրս ժայթքեց։ Հռոմայ Քահանայապետները՝ Մեր նախորդները՝ այն ընկերութեան դարանակալութիւններն ու խա-

բէութիւնները իմանալնուն պէս, յիշելով
իրենց հովուական պաշտօնը, ամենեւին
չզանգազեցան այն աղանդը, որ անօրէ-
նութիւն կը բխէ եւ ամէն սրբազան եւ
քաղաքական ընկերութիւն եղծանել եւ
ապականել կը ջանայ, իրենց ճոխութեամբը
զսպել, եւ դատապարտութեան վճռովն
իբրեւ ուղղով խոցոտել եւ նուաճել:
Կղեմէս ԺԲ Մեր Նախորդն' իր Առաքե-
լական Թղթովը այն աղանդը տարագրեց,
մերժեց եւ ընդհանուր ամէն հաւատա-
ցեալները զգուշացուց' չէ թէ միայն անոր
մէջ չմտնելու, այլ նաեւ որպիսի եղանա-
կաւ ըլլայ նոյնը չյառաջացընելու եւ չօգ-
նելու, նոյն ծործով նզովքի տակ իյնալու
պատիժ սահմանելով, որմէ միայն Հռոմայ
Քահանայապետը կրնայ արձակել: Այս
դատապարտութեան արդար եւ արժանի
վճիռը Բենեդիկտոս ԺԴ Սահմանադրու-
թեամբ մը հաստատեց, եւ ուղղափառ ե-
րեւելի Իշխանները յորդորելէն ետ չկեցաւ,
որ ամենայն զօրութեամբ ամենաժանտ ա-
ղանդը խլելու, եւ հասարակաց վտանգը
հեռացընելու ջանան: Երանի թէ նոյն
Իշխանները Մեր Նախորդին ձայնին ականջ
դրած ըլլային. երանի թէ այսպիսի ծանր
խնդրոյ մէջ թուլութեամբ վարուած չըլ-
լային, ան ատեն ստուգիւ երբեք ոչ մեր եւ
ոչ մեր հարց ժամանակները, այնչափ ապըս-
տամբութեանց խռովութիւնները, այնչափ
պատերազմներու հրդեհները չէին ողբա-



ցուէր, որոնց պատճառաւ բոլոր Եւրոպա կը
հեծէր. եւ ոչ ալ այնչափ չարիքներու դառ-
նութիւնը կը զգայինք, որոնցմով տառա-
պեցաւ ու դեռ կը տառապի Եկեղեցին:
Նոյնպէս երբոր անօրինաց մոլեգնութիւնը
ամենեւին չհանդարտելով' նորէն Քարպօ-
նարիներուն աղանդը' գլխաւորաբար Իտա-
լիայի մէջ' ամէն կողմ տարածուեցաւ,
Պիոս Է Մեր Նախորդը զանիկայ ալ նզովեց.
Լեւոն ԺԲ Քահանայապետն ալ այսպիսի
հոգւոյ եռանդով բորբոքած թէ՛ վերը յի-
շուած գաղտնի ընկերութիւնները, եւ թէ՛
ուրիշ որպիսի եւ իցէ անունով կոչուած
ընկերութիւնները, որ Եկեղեցւոյ ու քա-
ղաքական իշխանութեան դէմ դաւակցու-
թեան մէջ են, իր Առաքելական Թղթովը
դատապարտեց, եւ սաստիկ նզովքի պատ-
ժով ամէն հաւատացելոց արգելեց անոնց
մասնակից ըլլալ: Բայց Առաքելական Գա-
հին այս ամէն ջանքերը յուսացուած ելքը
չունեցան: Վասն զի երբեք չնուաճեցաւ եւ
ոչ զսպուեցաւ այս Ֆրան-Մասոնական ա-
ղանդը, այլ այնպէս ամէն կողմ տարա-
ծուեցաւ, որ այս դառն ատեններս ամէն
տեղ անպատիժ գլուխ վերցուցած է, եւ
ալ աւելի յանդգնագոյն կը խրոխտայ: Ա-
սիկայ Մենք ըստ մեծի մասին անկից յա-
ռաջ եկած կը համարինք, որ շատերուն
մտքերը, գուցէ անտեղեակ ըլլալով անօրէն
խորհուրդներուն' որ գաղտնի ակումբներ-
նուն մէջ կը յուզուին, այս սուտ կարծի-

քով տոգորուած են, թէ ասիկա անձնաս ընկերութեան տեսակ մըն է, հիմնադրութիւն մը, որ մի միայն մարդկան օգնելու, եւ անոնց խեղճութիւնները թեթեւցընելու կը նայի. ուստի ասկից Աստուծոյ Եկեղեցւոյն ձեռս հասնելու ամենեւին վախ չկայ: Բայց թէ ասիկա՝ ճշմարտութենէ որչափ հեռու է, ո՞վ չ'իմանար: Ինչու որ՝ ի՞նչ կ'ուզէ ըսել այդ՝ որ եւ իցէ կրօնքէ՝ որ եւ իցէ հաւատքէ՝ մարդիկներու խառն ընտրութիւնը: Ի՞նչ կ'ուզեն ըսել այդ գաղտնի ժողովակները: Ի՞նչ, այն սաստիկ երդումը որ կ'ընեն աս աղանդին գրուողները, որ ամենեւին ասոր վերաբերած բան մը պիտ'որ չյայտնեն: Վերջապէս ինչու՞ համար է այն անլուր պատուհասներու դժնդակութիւնը, որ յանձն կ'առնուն, եթէ երդումնին չպահելու ըլլան: Ստուգիւ, անօրէն եւ ժանտ պէտք է ըլլայ այն ընկերութիւնը, որ այդչափ լուռէն ու տուընքենէ կը սոսկայ. ով որ չար կը գործէ, կ'ըսէ Առաքեալը, լոյսը կ'ատէ: Իրաւցընէ՝ որչափ ասոր աննման են հաւատացելոց բարեպաշտ Ընկերութիւնները, որոնք Կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ կը ծաղկին: Անոնց մէջ ծածուկ եւ պատրուակեալ բան չկայ, ամենուն յայտնի են իրենց կանոնները, որոնցմով կը կառավարուին, յայտնի են սիրոյ գործքերը որ ըստ Աւետարանական վարդապետութեան ի գործ կը դրուին: Բայց ցաւով կը տեսնենք, որ



այս ուղղափառ Միաբանութիւնները, որոնք այնչափ օգտակար, այնչափ պիտանի են աստուածպաշտութիւնը աճեցընելու եւ աղքատները մխիթարելու, տեղ տեղ հակառակութիւն կը կրեն ու կը ջնջուին, երբ ասոր ներհակ՝ Ֆրան-մասոնական խաւարային ընկերութիւնը՝ թշնամի Աստուծոյ Եկեղեցւոյն, եւ վտանգաւոր թագաւորութեանց ապահովութեանը՝ նպաստաւորութիւն կամ գոնէ ներողութիւն կը գտնէ: Բայց այս աւելի Մեզի ծանր ու դառն կու գայ, Յարգելի՛ Եղբարք, որ ոմանք անփոյթ են Մեր Նախորդաց Սահմանադրութիւններուն համեմատ աս դատապարտելի աղանդը մերժելու, եւ իբրեւ թէ թմրած կը տեսնուին անոնք որոնցմէ այսպիսի ծանր նիւթի մէջ, իրենց յանձնուած պաշտօնն ու պարտաւորութիւնը շատ աւելի եռանդ եւ փոյթ կը պահանջէր: Եթէ կան ոմանք, որ կը կարծեն, թէ գաղտնի աղանդներուն, եւ անոնց հետեւողներուն ու նպաստաւորներուն դէմ՝ նզովքի պատժով տրուած Առաքելական Սահմանադրութիւնները զօրութիւն չունին այն երկիրներուն մէջ, ուր որ նոյն աղանդները քաղաքական իշխանութենէ թոյլ տրուած են, այնպիսինները մեծապէս կը սխալին. եւ Մենք՝ աս թիւր վարդապետութեան հնարքը, ուրիշ անգամ, Յարգելի՛ Եղբարք, մերժած ենք, եւ նորէն այսօր կը մերժենք ու կը դատապարտենք: Միթէ կարելի՞ է,

որ տէրութեական ընդհանուր հօտը արածելու եւ կառավարելու գերագոյն իշխանութիւնը, զորն որ յանձին Երանելւոյն Պետրոսի Հռոմայ Քահանայապետները ի Քրիստոսէ Տեառնէ ընդունեցան, նոյնպէս աս իշխանութենէ յառաջ եկած վարդապետութեան պաշտօնը որ Եկեղեցւոյ մէջն է, քաղաքական իշխանութենէ կախուած ըլլան, կամ եղանակաւ մը արգելուին ու չափաւորուին։ Աս ասանկ ըլլալով, որպէս զի չըլլայ թէ անզգոյշ մարդիկ՝ աւելի եւս երիտասարդները՝ խաբէութեան մէջ իյնան, եւ որպէս զի Մեր լռութենէն՝ մոլորութիւնը պաշտպանելու առիթ չառնուի, որոշեցինք, Յարգելի Եղբարք, Առաքելական ձայներնիս բարձրացընել. եւ հոս ձեր խորհրդեան առջեւը վերոյիշեալ Մեր Նախորդներուն Սահմանադրութիւնները հաստատելով, այն Փրան-մասոնական, եւ ուրիշ աս տեսակ Ընկերութիւնները, որ արտաքուստ միայն կը տարբերին, եւ օրէ օր իրարու հետ կը միաբանին Եկեղեցւոյ կամ օրինաւոր իշխանութեանց դէմ, կամ յայտնի կամ ծածուկ դաւաճանութիւն ընելու. Մեր Առաքելական ճոխութեամբը կը մերժենք ու կը դատապարտենք. եւ կ'ուզենք նաեւ, որ ամենայն հաւատացեալք Քրիստոսի, ո՛ր վիճակի կամ ո՛ր աստիճանի եւ արժանաւորութեան մէջ եւ աշխարհքիս ո՛ր կողմն ալ որ գտնուին, նոյն աղանդները Մեզմէ տարագրուած ու դատապարտուած ճանչ-



նան՝ մի եւ նոյն պատիժներով, որոնք Մեր Նախորդներուն Սահմանադրութիւններուն մէջ կը պարունակուին։ Հիմայ ուրիշ բան չի մնար, բայց եթէ Մեր հայրական գթովը յորդորել ու քաջալերել հաւատացեալները, որ եթէ ըստ պատահման աս տեսակ աղանդներու գրուած են, խելքերնին ժողվեն՝ բարին մտածեն, եւ այն դժնդակ ընկերութիւններէն եւ ժողովակներէն հեռանան, որպէս զի յաւիտենական կործանման անդունդը չգլորին։ Իսկ մնացեալ ամէն հաւատացեալներուն՝ Մեր հոգւոյ խնամակալութենէն շարժեալ՝ ամենայն փութով յորդոր կը մատուցանենք, որ աս աղանդաւորներուն խաբեբայ շրթունքներէն զգոյշ կենան, որոնք որ համեստ կերպարանք մը ցուցընելով՝ Քրիստոսի կրօնքին եւ օրինաւոր իշխանութեանց վրայ բորբոքեալ ատելութիւննին կը թափեն. այս միայն կը փնտռեն ու կը ջանան, որ թէ՛ աստուածային եւ թէ՛ մարդկային իրաւունքները ոտքի տակ առնուն։ Գիտնան որ աս աղանդաւորները գայլեր են, որոնց համար Քրիստոս Տէրն մեր յառաջագոյն գուշակեց, թէ ոչխարի մորթով ծածկուած՝ պիտ'որ գան ի կորուստ հօտին. գիտնան թէ այնպիսիները անոնց թիւը պէտք է դնեն, որոնց կենակցութիւնն ու միաբանութիւնն այնպէս Մեզի արգելեց Առաքեալը, որ յայտնապէս կը պատուիրէր այնպիսիներուն ողջոյն ալ չտալ։ Աստուած

առատ ողորմութեամբ՝ լսէ մեր ամենուն աղաչանացը. որ իր շնորհաց օգնութեամբը անզգաստներուն սրտերը շարժէն յուղղութիւն, մոլորեալները արդարութեան ճամբան դառնան. ճնշուի ամբարիշտ մարդկանց մոլեգնութիւնը, որոնք վերը յիշուած ընկերութիւններուն ձեռքով անօրէնութիւն եւ ապիրատութիւն կը նիւթեն, որպէս զի այնչափ այնչափ հնացեալ չարիքներէն կարող ըլլան քիչ մը հոգի առնուլ՝ թէ Եկեղեցին եւ թէ մարդկային Ընկերութիւնը։ Բայց՝ որպէս զի այս ամենայն ուխտից մերոց յաջողի, ամենազօրութն Աստուծոյ առջեւը բարեխօս ունենանք իր Մայրն ի սկզբանէ անարատ եւ ամենասուրբ Կոյսը, որուն շնորհեալ է Եկեղեցւոյ թշնամիները եւ Մոլորութեանց այլանդակութիւնները հարստահարել ու ջախջախել, նոյնպէս խնդրենք նաեւ Երանելի Առաքելոց Պետրոսի եւ Պօղոսի բարեխօսութիւնը, որոնց յաղթական արեամբը այս նուիրական քաղաքը սրբուած է։ Անոնց գործակցութեամբն ու օգնութեամբը, ինչ որ Աստուածային բարութենէ կը խնդրենք, ապահովութեամբ կը յուսանք ընդունիլ։

# ՑԱՆԿ

Յառաջաբան . . . . . . . . . . . . 5

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

### Ստութիւն Բողոքականութեան։

Գլ. Ա. Բողոքականութեան ստութիւնը կը ցուցուի իր հիմնադիրներուն անձանց որպիսութենէն . . . . . 11

Գլ. Բ. Բողոքականութեան ստութիւնը կը ցուցուի զանիկայ տարածող անձանց որպիսութենէն . . . . 17

Գլ. Գ. Բողոքականութեան ստութիւնը կը ցուցուի, նոյնը ընդունողներուն եւ նոյնը ձգողներուն անձանց որպիսութենէն . . . . . . . . 26

Գլ. Դ. Բողոքականութեան ստութիւնը անկից կը ցուցուի, որ Բողոքականները ամենեւին առաքելութիւն չունին . . . . . . . . . . . 35

Գլ. Ե. Բողոքականութիւնը սուտ է, վասն զի նոր է . . . . . . . . . 42

Գլ. Զ. Սուտ է բողոքականութիւնը, վասն զի միութիւն չունի . . . . 50

Գլ. Է. Բողոքականութիւնը սուտ է, վասն զի կը համարի, թէ Ճշմարիտ Եկեղեցին կրնայ սխալիլ . . . . 56

Գլ. Ը. Բողոքականութիւնը սուտ կը ցուցուի, վասն զի կաթողիկէ կամ ընդհանրական չէ . . . . . . . 63

Գլ. Թ. Բողոքականութիւնը սուտ կը ցուցուի անկից, որ հրաշքներու մէջ ճշմարիտ սրբութիւն չունի . . . . 69

Գլ. Ժ. Սուտ է բողոքականութիւնը, վասն զի իր սկզբունքովը փրկութիւնը անկարելի կ'ընէ . . . . . . 78

Գլ. ԺԱ. Բողոքականութիւնը սուտ կը ցուցուի, վասն զի վերնագոյն գլուխ մը չունի . . . . . . . . . . . . . 97
Գլ. ԺԲ. Բողոքականութիւնը սուտ կը ցուցուի, վասն զի խոստովանանքը մէջէն կը վերցընէ . . . . . . . . 103
Գլ. ԺԳ. Բողոքականութիւնը սուտ կը ցուցուի, վասն զի չունի Ս. Հաղորդութեան բարիքը . . . . . . . . 111
Գլ. ԺԴ. Սուտ է Բողոքականութիւնը, վասն զի Պատարագ չունի . . 118
Գլ. ԺԵ. Սուտ է Բողոքականութիւնը, վասն զի աւանդութիւն չունի . 128
Գլ. ԺԶ. Սուտ է Բողոքականութիւնը, վասն զի կը դատապարտէ ծոմ ու պահքը . . . . . . . . . . 139
Գլ. ԺԷ. Սուտ է Բողոքականութիւնը, վասն զի վերջին ժամուն մէջ անյոյս կը վհատի . . . . . . . . . . 145

## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Խաբէութիւնք, որոնցմով ներս կը մտնէ Բողոքականութիւնը:

Գլ. Ա. Առաջին խաբէութիւն. Առաքինութիւն ու սրբութիւն կեղծաւորել . . . . . . . . . . . . . . 153
Գլ. Բ. Երկրորդ խաբէութիւն. Հաւատքը բաւական է փրկուելու համար 160
Գլ. Գ. Երրորդ խաբէութիւն. Մէկդի ձգել հաւատոյ ամէն արտաքին գործքերը . . . . . . . . . . . . . 166
Գլ. Դ. Չորրորդ խաբէութիւն. Ամէն մասնաւոր մարդ հաւատոյ դատաւոր ընել . . . . . . . . . . . . . 180
Գլ. Ե. Հինգերորդ խաբէութիւն. Ըսել թէ Ս. Եկեղեցին Աստուածաշունչ կարդալը կ'արգելէ . . . . . 184
Գլ. Զ. Վեցերորդ խաբէութիւն. Ս. Եկեղեցւոյ վրայ կռապաշտութեան կեղտը դնել . . . . . . . . . 192
Գլ. Է. Եօթներորդ խաբէութիւն. Պատկերներն ու մասունքները կռապաշտութեան առիթներ են . . . 202
Գլ. Ը. Ութերորդ խաբէութիւն. Քահանայութիւնը արհամարհելի ցուցնել . . . . . . . . . . . 218
Գլ. Թ. Իններորդ խաբէութիւն. Քահանայապետներու, եւ Ս. Եկեղեցւոյ առաջնորդներու շքեղութիւնը . . 229
Գլ. Ժ. Տասներորդ խաբէութիւն. Ներողութեան վաճառականութիւն . . 250
Գլ. ԺԱ. Մետասաներորդ խաբէութիւն. Տնօրինմանց վաճառքը եւ այլն . . 274
Գլ. ԺԲ. Երկոտասաներորդ խաբէութիւն. Թէ Քաւարանը Քահանաներէն հնարուած է շահասիրութեան համար . . . . . . . . . . . . 285

## ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Ս. Հաւատքը խոստովանելու հետեւութիւնները, եւ անոնց առջեւն առնելու եղանակները:

Գլ. Ա. Որպիսի հոգեւոր բարիքներէ կը զրկէ զմեզ բողոքականութիւնը . . 297
Գլ. Բ. Ուրիշ բարիքներն, որոնցմէ ալ կ'ուզեն զրկել զմեզ Բողոքականները 305
Գլ. Գ. Բողոքականները զմեզ նաեւ ժամանակաւոր բարիքներէ կը զրկեն. 309
Գլ. Դ. Ինչ զարհուրելի մեղք է կաթողիկէ սուրբ Եկեղեցին ուրանալը. 315
Գլ. Ե. Թէ ինչպէս պէտք են վարուիլ անոնք, որոնք Բողոքականներէն ամբարիշտ խօսակցութիւններով կը փորձուին . . . . . . . . . 326
Գլ. Զ. Ինչպէս պէտք են վարուիլ ա-

նանք, որ Բողոքականներէն գէշ գըր-
քերով կը հրապուրուին . . . . . 333
Գլ. Է. Ինչպէս պէտք է վարուին ա-
նանք որոնք Բողոքականներէն ստա-
կով կը փորձուին . . . . . . . . 340
Գլ. Ը. Ինչպէս պէտք է վարուին ա-
նանք, որ գժբախտութեամբ խա-
բուած մոլորած են . . . . . . . 346
Գլ. Թ. Առաջին զգուշութիւն հաւատ-
քը չկորսնցնելու համար, այսինքն
է՝ հալածել տգիտութիւնը . . . . 355
Գլ. Ժ. Երկրորդ՝ Հաւատքը պահելու
զգուշութիւնը, հպարտութիւնը մեր-
ժել . . . . . . . . . . . . . . 363
Գլ. ԺԱ. Երրորդ զգուշութիւն, հեռու
կենալ անառակութենէ . . . . . 369
Գլ. ԺԲ. Չորրորդ զգուշութիւն՝ ճըշ-
դիւ ի գործ դնել կաթուղիկէ կրօն-
քը . . . . . . . . . . . . . . 377
Ցանկլուած . . . . . . . . . . . 389

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. библиотека
Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0793755